

ՀԱՅԱՍՏԱՆ ARMENIA 2018

ԻՐՈՂԻԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱՀՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ III

ՀԱՅԱՍՏԱՆ 2018. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
Ինքնություն 3 (1)

Աշոտ Ոսկանյանի ընդհանուր խմբագրությամբ

Թարգմանիչներ՝
Նշան Քեսեքեր
Նարե Հովհաննիսյան
Միլենա Աբրահամյան
Սոնա Մանուսյան

Նախագիծն իրականացվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ գործընկերությամբ և ֆինանսավորմամբ:

Աջակցությամբ European Endowment for Democracy հիմնադրամի

ARMENIA 2018. REALITIES AND PERSPECTIVES
Identity 3 (1)

Editor in chief Ashot Voskanyan

Translators:
Nshan Kesecker
Nare Hovhannisyan
Milena Abrahamyan
Sona Manusyan

The project was implemented in partnership and with funding of the Konrad Adenauer Foundation.

Supported by European Endowment for Democracy

© Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն
Armenian Research Center in Humanities

ISBN 978-9939-9238-1-9



ՀԱՅԿԱՍՏԱՆ ARMENIA 2018

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES



ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱՍՏԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ III

Աշոտ Ոսկանյան ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԵՎ, ԱՅՍՕՐ, ՎԱՐԸ.....	11
---	----

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Աշոտ Ոսկանյան ՀԱՄՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԻՑ ԴԵՊՈՒ ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ	21
--	----

Մանվել Սարգսյան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱԿԱՆ ԻՐԱԿԻՃԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ	33
--	----

Սուրեն Չոլյան ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԵԳԻԾԸ	39
--	----

Արթուր Մկրտիչյան «ՈՉ ՊԱՏԵՐԱԶՄ, ՈՉ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՍՈՂԵԼ	53
--	----

Բ. ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Աննա Ժամակոչյան, Արփի Մանուսյան, Սոնա Մանուսյան ՀԱՅԱՍՏԱՆՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆԿՅԱՆ ՏԱԿ	63
--	----

Յուլիա Անտոնյան «ՕԼԻԳԱՐԽՆԵՐԻ» ՎԵՐՋԻՆ: ՄԻՆՉ- ՈՒ ՀԵՏ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱԿԸ	87
--	----

Յուլիանա Մելքոնյան ԺԱՄՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԽԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ՝ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ	97
---	----

Արմեն Ղազարյան ԱՐԽԱՅԻԿԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	105
--	-----

Հասմիկ Է. Գևորգյան ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՆՅԱՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄ)	115
---	-----

Ashot Voskanyan ARMENIA YESTERDAY, TODAY AND TOMORROW...	239
---	-----

REALITIES

A. CONCEPTS

Ashot Voskanyan FROM OVERCOMING MUTISM TOWARDS A NEW SOCIAL CONTRACT	247
---	-----

Manvel Sargsyan THE DYNAMICS OF ARMENIA'S SOCIO-POLITICAL SITUATION	257
--	-----

Suren Zolyan THE DESCRIPTIVE MODELS OF POST-SOVIET SOCIETIES AND ARMENIA'S POSSIBLE DEVELOPMENT TRAJECTORY	261
--	-----

Artur Mkrtychyan THE CONCEPTION OF A "NO WAR, NO PEACE SOCIETY" AS A MODEL FOR THE SOCIOLOGICAL DIAGNOSIS OF POST-SOVIET ARMENIAN SOCIAL LIFE	271
--	-----

B. ASPECTS

Anna Zhamakochyan, Arpy Manusyan, Sona Manusyan ARMENIAN CIVIL SOCIETY FROM A REVOLUTIONARY ANGLE	279
--	-----

Yulia Antonyan THE END OF THE OLIGARCHS? PRE- AND POST-REVOLUTIONARY REALITIES AND ARMENIA'S ECONOMIC AND POLITICAL ELITES	295
--	-----

Yuliana Melkumyan THE DYNAMICS OF CONTEMPORARY ARMENIA'S MIDDLE CLASS: VALUES AND NORMATIVE PRACTICES	303
---	-----

Armen Ghazaryan ARCHAISM IN THE POLITICAL SYSTEM OF ARMENIA AND MODERNIZATION TRENDS	309
--	-----

Hasmik Gevorgyan THE APPLICATION OF ORAL HISTORY METHODOLOGY IN THE STUDIES OF ARMENIAN EVERYDAY LIFE (ARMENIANS IN ARMENIA: SEARCH FOR IDENTITY)	317
--	-----

ՀԵՌԱՆԿՎՐՆԵՐ

Ա. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆՁՆՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստեփան Դանիելյան
ՆԱԽԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ.....125

Վահրամ Սողոմոնյան
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ.....133

Ժամնա Անդրեասյան
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ143

Աղասի Թադևոսյան
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԹԱՅԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....155

Համազասոյ Դանիելյան
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԿՐԿԻՆ ՓՈՐՁԵՆՔ165

Բ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սերոբ Խաչատրյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԿՈՆՑԵՊՏՈՒՄԸ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....177

Ատոմ Մխիթարյան
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ185

Մարիա Ի. Չապլափսկայա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ199

ՍՈՒՐԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
ԵՎ ԲԻՉԼԵՍ: ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ
ՀՀ ՏՏ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ209

Գ. ՀԱՅԱՑՔ ՍՓՅՈՒՌՔԻՑ

Սոնա Ներսիսյան, Լուսինե Տանաջյան, Սյուզաննա Բարսեղյան
ՀԱՅՐԵՆԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ219

Անդրանիկ Տազետեան
ՀԱՅԱՍՏԱՆ` ՀԱՅԵԱՑՔ ԼԻԲԼԱՆԻՑ.....231

Ինդիանակներ415

PERSPECTIVES

A. WAYS OF RESTORING THE DISRUPTED SOCIAL CONTRACT

Stepan Danielyan PRE-REVOLUTIONARY DISPOSITIONS, POST-REVOLUTIONARY EXPECTATIONS	325
Vahram Soghomonyan THE AGENDA OF THE ARMENIAN REVOLUTION	331
Zhanna Andriasyan THE AGENDA OF SOCIAL SOLIDARITY	339
Aghasi Tadevosyan THE INEQUALITY DISCOURSE AND THE PROBLEM OF OVERCOMING POVERTY IN ARMENIA.....	347
Hamazasp Danielyan THE ESTABLISHMENT OF A PARTY SYSTEM IN ARMENIA: SHALL WE TRY AGAIN?.....	355

B. EDUCATION AND SCIENCE

Serob Khachatryan A CONCEPTUAL ANALYSIS OF REFORMS IN ARMENIA'S GENERAL EDUCATION.....	365
Atom Mkhitarian ENHANCING LEARNING EFFECTIVENESS AND ASSURING QUALITY IN THE THIRD LEVEL OF HIGHER EDUCATION	371
Maria Zaslavskaya ON SOME UNIQUE DETAILS OF THE REFORMS OF THE HIGHER EDUCATION SYSTEM IN ARMENIA	383
Suren Voskanyan INFORMATION TECHNOLOGIES AS SCIENCE, TECHNOLOGY AND BUSINESS: THE ROLE OF GOVERNMENT AND ASSOCIATIONS IN THE DEVELOPMENT OF THE RA'S IT SECTOR	391

C. VIEW FROM DIASPORA

Sona Nersisyan, Lusine Tanajyan, Syuzanna Barseghyan THE PERCEPTIONS OF THE HOMELAND IN DIASPORA	399
Antranik Dakessian ARMENIA: A VIEW FROM LEBANON	409
authors	415



ՀԱՅԿԱՍՏԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES



ԱՇՈՏ
ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԵԿ,
ԱՅՍՕՐ, ՎԱՂԸ...



Աթերցողին ներկայացվող տրակը հունանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի թվով երրորդ Տարեգրքի առաջին հատորն է: Այն դարու-նակում է 2018-ի հունիսին տեղի ունեցած *Հայաստան 2018. իրողություններ և հեռանկարներ* գիտաժողովի նյութերի այն մասը, որն առավել ընդհանրական բնույթ ունի և կարող է անմիջականորեն օգտագործվել քաղաքական դաշտի ակտիվ մասնակիցների կողմից: Երկրորդ հատորում զետեղված են առավել սոցիալական գիտական հարցեր արծարծող հոդվածները:

Սույն ներածականում անդրադառնալու են միայն առաջին հատորի նյութերին: Բայց մինչ այդ անհրաժեշտ են համարում հակիրճ ներկայացնել նշյալ գիտա-ժողովը կազմակերպելու դրդադատձառները և նպատակները:

Գաղափարը ծնվել է խորը անբավարարությունից: Իմ և իմ գործընկերների զգա-ցողությունն այն էր, որ հայաստանյան հասարակագիտության մեջ լայնորեն օգ-տագործվող երկու հիմնական խոսելակերպ-կլիշեները՝ ազգայնականը և կեղծ-արևնտյանը, ոչ միայն չեն նկարագրում մեր հասարակության մեջ տեղի ունեցող իրական գործընթացները, այլև կոծկում են դրանց իրական բնույթը: Խնդիրն, ուրեմն, հայաստանյան իրողությունների մասին խոսելու աղեկվատ լեզվի մշակումն էր, մասն` եղած թյուր տատկերացումների կազմաքանդումը: Գա-ղափարը վերջնականապես բյուրեղացավ 2017-ի կեսերին Պրոֆ. Ռազմիկ Փա-նոսյանի հետ ունեցած բնձարկման արդյունքում և իրականություն դարձավ Գալուստ Կիլիմեյանի հիմնադրամի գործուն աջակցության շնորհիվ:

Ծրագիրը, որ դատարաստ էր արդեն 2017-ի վերջին, հանրայնացվեց 2018-ի հունվարին: Ադրիլին բռնկված հեղափոխությունը երկիմաստ իրավիճակ ստեղծեց: Մի կողմից` այն լիովին հաստատեց մեր համոզմունքը հասարակա-գիտական նկարագրությունների զգալի մասի «Ֆեյքային» բնույթի մասին, մյու-սից` ստիպեց մոբիլիզացվել` ասելիքը նոր իրողությունների լուսի ներքո դի-տելու և գիտաժողովը նախատեսված ժամկետներում` 2018-ի հունիսին անցկաց-նելու համար: Այնուամենայնիվ, զեկուցումների լրամշակման փուլում հեղինակ-ները ժամանակ ունեցան դիստանցավորված հայացք ձևավորելու հեղափո-խական իրադարձությունների նկատմամբ, որի շնորհիվ ասելիքն ավելի հա-մադարձակ և ավարտուն դարձավ:

Վերջին դիտողությունը, որ կուզեի անել մինչև բուն հոդվածներին անցնելը, հետևյալն է: Ներկայացվող տեքստերը տարասեռ են ոչ միայն հարցադրում-ների և բովանդակության, այլև կիրառված հետազոտական մեթոդների առու-նով: Դրանցից ոչ բոլորն են ինձ համոզիչ թվում: Բայց այստեղ ղեկը է նկատի ունենալ, որ հայ հասարակագիտության զարգացման տատկերն ինքնին, նրա մեթոդաբանությունն ու մոտեցումները նույնպես, վկայում են հայկական սոցիո-մի, մասնավորապես` նրա ինքնառեֆլեքսիայի մակարդակի մասին և հարս-տացնում են իրականության մեր ընկալումը:

Այսքանը որդես մուտք: Այժմ տեքստերի մասին:

ժողովածուն՝ վերնագրին համադաստասխան, բաժանված է երկու մեծ բաժինների՝ «Իրողություններ» և «Յեռանկարներ»: Առաջինում ընդգրկված հողվածները ներկայացնում են Յայաստանում մինչ հեղափոխությունը գործող քաղաքական համակարգը և փորձում են վերհանել նրա անսպասելի և արագընթաց կոլապսի դատժառնները:

Այս բաժնի «Յիննադրություններ» խորագրի ներքո միավորված հողվածների հեղինակները միասնական են այն համոզմունքի մեջ, որ հայաստանյան հասարակության իրողությունները հնարավոր չէ նույնակերպորեն նկարագրվել արևմուտքից ոչ քննադատական ձևով փոխառնված վերացական մոդելների, մասնավորապես՝ «անցումային հասարակությունների» հղացքի միջոցով: Նրանց առաջարկած մոտեցումները թեև տարբեր են, բայց փոխլրացնող, և հնարավորություն են տալիս կազմել հայկական սոցիումի ընթացիկ դատկերը: Այսպես, Աշոտ Ոսկանյանն իր «Յամրության հաղթահարումից դեղի նոր հասարակական դաշինք» և Մանվել Սարգսյանը «Յայաստանի հասարակական-քաղաքական իրավիճակի դինամիկան» հողվածներում ընդունել են «քրեաօլիգարխիկ համակարգի» մոդելը (առավել մանրամասն լուսաբանված վերջինիս տեքստում), Սուրեն Չոլյանը «Յետխորհրդային հասարակությունների նկարագրման կադադրները և Յայաստանի զարգացման հնարավոր ուղեգիծը» աշխատանքում գերադասել է օգտագործել «էլեկտորալ ֆեոդալիզմ» եզրույթը, իսկ Արթուր Մկրտիչյանն ուշադրություն է հրավիրել «ոչ դատերազմ, ոչ խաղաղություն հասարակության» հայեցակարգի վրա, դիտարկելով այն որպես «հետխորհրդային հայ հասարակական կյանքի սոցիոլոգիական ախտորոշման մոդել»:

Ընդ այդմ, *Աշոտ Ոսկանյանը* ցույց է տվել, որ նախկին իշխանությունների լեգիտիմության կորուստը դայանավորված է եղել հասարակության մեջ գործող հասարակական դայանագրի քայքայմամբ, իսկ թավշյա հեղափոխությունն առաջ բերած քաղաքացիական անհնազանդությունը գործել է որպես «համընդհանուր բոլկոտ» բառիս վերբերյան իմաստով: Այստեղից՝ եզրակացությունն այն մասին, որ հեղափոխության ռազմավարական մոդատակը դեռ է լինի նոր հասարակական դայանագրի ձևավորումը՝ բնակչության մեծամասնության ակնկալած արդարության սկզբունքի հիման վրա:

Մանվել Սարգսյանը ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ բիզնեսի և իշխանության սերտանմումից առաջ եկած քրեաօլիգարխիկ համակարգը ավելի կանոնավոր կառուցվածք ունի, քան ավտորիտարը, քանի որ այն հենվում է ոչ թե առանձին մարդու կամքի, այլ իր բնույթին հարմարեցված օրենքների վրա: Այս համատեքստից է առաջ գալիս հեղինակի առաջարկությունը՝ նախկին համակարգի կազմաքանդման ճանադարին երեք հիմնարար օրենքների ընդունման մասին:

Սուրեն Չոլյանի խորագրին վերլուծականը արժանի է ուշադիր ընթերցման: Այստեղ անդրադառնամ միայն մեկ կետի, որը կադված է ֆեոդալական հա-

մակարգի հեղափոխական կերտափոխման վտանգների հետ: Չոլյանը զգուշացնում է, որ մեծան հասարակություններում իրականացված ժողովրդական ընդվզումը չի բացառում ավտորիտարիզմի վերակենդանացումը այլ կերտարանքով, «օրինակ՝ երբ բյուրոկրատ սարդարին փոխարինելու է գալու ամենակարող ղոռոլլիստ առաջնորդը»:

Նույնիսի զգուշության կոչ է անում *Արթուր Սկրտիշյանը*, «ոչ տատերագն, ոչ խաղաղություն հասարակության» հայեցակարգի կառակցությամբ: Նա գտնում է, որ հասարակական կյանքի բոլոր բաղկացուցիչների ուզանականացումը, որը բնորոշ է մեծան հասարակություններին, իր կնիքն է դնում մակ ժողովրդավարացման գործընթացների վրա, որոնք իրականացվում են ոչ մասնակցային, այլ մոբիլիզացիոն դեմոկրատիայի հաստատման ճանաղարհով, իսկ հաստատությունները ձևավորվում են ուզանական-մոբիլիզացիոն սղասումների հաշվառումով:

Առաջին բաժնի երկրորդ մասում տեղ են գտել այն աշխատանքները, որոնք վերն արծարծած հիմնահարցերը դիտում են – վերնագրի համաձայն – առանձին «Տեսանկյուններից»: Այս շարքում առանձնահատուկ տեղ է գրավում *Աննա Ժամակոչյանի*, *Արվի Մանուսյանի* և *Սոնա Մանուսյանի* վերլուծականը, որը քննում է «Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը հեղափոխության անկյան տակ»: Այն ուշագրավ է մեղոդաբանությամբ, փաստական նյութի առատությամբ, ինչղես մակ այն հանգամանքով, որ հետազոտող հեղինակները միևնույն ժամանակ քաղաքացիական շարժումների մասնակիցներ են և խնդիրը ներկայացնում են մակ «ներսից»: Վերլուծականում հատուկ տեղ է հատկացված քաղաքացիական հասարակության ներքին և արտաքին միջավայրերում առաջացող լարումներին, մասնավորաղես, «ՀԿ-ներ – դոնորներ – կառավարություն» եռանկյունու համատեքստում: Մանրամասն ցույց է տրված, թե ինչղես է հեղափոխությունը կուտակել քաղաքացիական հասարակության ղայքարի առանձին փորձերը, առաջ բերելով ընդհանուր փորձառություն լայն խմբերի համար: Շեշտաղրվում է քաղաքացիական հասարակության դերակատարումը նոր «հանրային ղայմանագրի» մշակման և իրագործման գործում:

Հաշորդը *Յուլիա Անտոնյանի* ««Օլիգարխների» վե՞րջը: Մինչ ու հետ-հեղափոխական իրողությունները և Հայաստանի տնտեսական ու քաղաքական վերնախավը» հողվածն է, որը կարելի է դիտել որղես վերը ներկայացված քրես-օլիգարխիկ համակարգի սխեմատիզմը բազմաթիվ և բազմակողմանի մանրամասներով լրացնող բներնութաբանական հետազոտություն: Հեղինակը հետևողական քայլերով ցույց է տալիս, ինչղես է «օլիգարխների» սղիալական շերտը ենթարկվում սղիո-մշակութային փոխակերղումների՝ ինչղես կարգավիձակի, իշխանության և ազղեցության սահմանների, այնղես էլ մշակութային արծեհամակարգի առումով:

Յուլիանա Մելքունյանի «Ժամանակակից հայաստանյան հասարակության միջին խավի դինամիկան՝ արծեքները և նորմատիվ ղրակտիկաները» բովանդակալից հողվածը թիրախավորում է հասարակայնորեն հայտարարված

արժեքների և նորմատիվ որակտիկաների ամհամադատասխանությունը, այն բացատրելով միջին խավի կողմից սեփական դերի գիտակցման ղակասով: Այնուամենայնիվ, դժվար չէ նկատել, որ այդ՝ մարքայան իմաստով «իդեալիստական» մոտեցումը որոշակի հակասության մեջ է ժողովածուի հեղինակների հիմնական խմբի տեսակետի հետ, ըստ որի՝ հասարակության մեջ իշխող անոմիան ոչ թե այս կամ այն սոցիալական խավի թերի ինքնագիտակցության կամ երեսողատության, այլ հասարակական ամբողջի հիմքում դրված առանձնահատուկ քաղաքական մեխանիզմի՝ քրեա-օլիգարխիկ համակարգի արդյունք է: Դա էլ ղատձառ է դարձել հայաստանյան «միջին խավի» *համրության*, որը բազմաթիվ իմիտացիոն դիսկուրսներ է ծնել: Այս տեսակետն, իհարկե, վիճարկելի է (բավական է հիշել հավի և ձվի ղատմությունը, որն արդի գիտական դիսկուրսում ներկայանում է որդես արժեքների և հաստատությունների առաջնության խնդիր), բայց հենց դրանում է Յ. Մելքունյանի աշխատանքի արժեքը, որ այն արդյունավետ բանավեճի հնարավորություն է ստեղծում:

Արմեն Ղազարյանի «Արխայիկայի դրսևորումները Հայաստանի քաղաքական համակարգում ու արդիականացման միտումները» հողվածում քաղաքական արդիացման ընթացքը դիտարկվում է երեք հիմնական մակարդակներով՝ ղետության կառավարման համակարգի փոփոխության, հանրության մասնակցության, ինչդես նաև հանրային-քաղաքական կյանքում ձախականության դիսկուրսի դրսևորումների առումով: Աշխատանքին ձանդթանալիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ հեղինակի ընտրած մեթոդաբանության շրջանակներում արխայիկը նույնանում է ավանդականի հետ: Մյուս հնարավոր մոտեցումը, որը ցույց կտար *արխայիկայի ծնունդը մոբիլիզացիոն արդիականացման միջոցներով ջախջախված ավանդականից*, առայժմ սղասում է իր հետազոտողին:

Հասմիկ Է. Գևորգյանի «Բանավոր ղատմություններ մեթոդի կիրառումը հայաստանյան առօրեականության ուումնասիրություններում (հայերը Հայաստանում. ինքնության որոնում)» հողվածը փորձում է նոր տեսանկյուն ավելացնել վերացական տեսություններից հրաժարվելու վերը ներկայացված ղահանջին, առաջարկելով քանակական սոցիոլոգիայի ընդհանրացնող եզրակացությունները լրացնել անհատ մարդկանց ձակատագրերը վերհանող բանավոր ղատմությունների նյութով:

Երկրորդ՝ «Հեռանակարներ» բաժնի առաջին հատվածում միավորված են հեղինակները, որոնք հարց են դնում խաթարված «Հասարակական ղայմանագրի վերականգնման ուղիների մասին»:

Այսդես, *Ստեփան Ղանիեյանն* իր «Նախահեղափոխական տրամադրություններ, հետհեղափոխական սղասումներ» վերլուծականում այն կարծիքն է հայտնում, որ անկախ Հայաստանում մինչ այժմ երկու հասարակական ղայմանագիր է գործել՝ «Ղարաբաղը մերն է» (հիմնադրման օրից) և «Կրակել չի կարելի» (2008-ի մարտիմեկյան իրադարձություններից հետո): Արդյո՞ք հետհեղափոխական Հայաստանը կկարողանա խուսափել նոր ավտորիտարիզմի

վտանգներից և ձևավորել երրորդ՝ սեփականության անձեռնմխելիության սկզբունքի վրա հիմնված սոցիալական դայնամագիր, բաց հարց է:

Հաջորդ երկու աշխատանքները միավորողը սոցիալական համերաշխության տեսլականն է, որն ըստ հեղինակների կարծիքի, լիարժեք է դրվի նորոգված հասարակական դայնամագրի հիմքում:

Վահրամ Սողոմոնյանն իր «Հեղափոխության օրակարգում» նշում է, որ նախկին իշխանությունները երկու հեմարան են ունեցել. նեոլիբերալ գիծը՝ միջազգային կառույցների համար, և ռազմահայրենասիրականը՝ ստորակա խավերի համար: «Ազգ-բանակ»-ը կազմել է նեոլիբերալ շենքի տամիքը: Նշյալ երկու դատումները չհաղթահարելու դեպքում հեղափոխական կառավարությունը կարող է կանգնել սոցիալական բևեռացման արդյունքում առաջ եկած նոր դայնամի սոլոնալիքի առաջ: Հենց «ազգ-բանակ»-ով նշանավորված անդեմ միասնականության հարացույցը լիարժեք է փոխարինվի քաղաքացիական ինքնակազմակերպման «սոցիալական արդարության» հարացույցով:

Ժաննա Անդրեասյանը «Սոցիալական համերաշխության օրակարգը» հոդվածում, մանրամասն անդրադառնալով համերաշխության տարբեր ըմբռնումներին, նշում է, որ քաղաքական համերաշխության հիմքով հռչակված հեղափոխության իրացումը հնարավոր է դարձրել խոսակցությունը սոցիալական համերաշխության օրակարգի մասին: Վերջինս կարող է իրականացվել, եթե անարդար իրավիճակի սահմանումը ենթադրի տարբեր խմբերի հանդեպ անարդարությունների անբազրումը և հետագա վերացումը: Դա նշանակում է, որ սոցիալական համերաշխության օրակարգը լիարժեք է ձևավորվի որդես ներառական արդարության գաղափարական օրակարգ:

Նույնաման խնդիրներին այլ տեսանկյունից է մոտենում *Աղասի Թադևոսյանը*, որն իր «Աղքատության հաղթահարման հիմնախնդիրները Հայաստանում» հոդվածում մանրակրկիտ վերլուծության է ենթարկում աղքատության վերաբերյալ Հայաստանում տարածված դիսկուրսները, վերհանելով դրանց խանգարիչ դերը աղքատության հաղթահարման արդյունավետ ռազմավարության մշակման գործում:

Համազաստ Դանիելյանի «Կուսակցական համակարգի կայացումը Հայաստանում. կրկին փորձե՞մք» հոդվածն ի ցույց է դնում արհեստական օրենսդրական կարգավորումները, որոնք ձևական բազմակուսակցականության դայնամներում ամայացրել են Հայաստանի կուսակցական լանդշաֆտը և աղափոխել մեկ կուսակցության միահեծան իշխանությունը: Հեղինակն առաջարկում է օրենսդրական փոփոխություններ, որոնք կոչված են մոլաստելու իրական բազմակուսակցական համակարգի կայացմանը:

«Կրթությանը և գիտությանը» վերաբերող թեմաներին ժողովածուում առանձին հատված է տրամադրվել, որը կարծում են, լիովին արդարացվում է այդ բնագավառներում տիրող ճգնաժամային իրավիճակով:

Այդ մասին է խոսում *Սերոբ Խաչատրյանը* իր «Չայաստանի հանրակրթական բարեփոխումների կոնցեպտուալ վերլուծության» մեջ, Չայաստանում առկա կրթության ճգնաժամն անվանելով «էքզիստենցիալ»: Բարեփոխումները ձևականորեն «ներկրելու» արդյունքում Չայաստանի կրթական համակարգում ձևավորվել է երկակի օղերացիոն համակարգ՝ բացորոշ-դեկլարատիվ և իրական՝ բողոարկված: Վերջինս, որն առաջնորդվում է ավանդական արժեքներով, շատ ավելի ազդեցիկ է, քան բացորոշը (ազատականը): Կրթական բարեփոխումները չեն հաջողում, քանի որ դրանց հատուկ է կարճաժամկետ, իրավիճակային մտածողությունը, մեխանիստական բնույթը, ռեդուկցիոնիզմը, կրթության մակերեսային ընկալումը: Անհրաժեշտ է գիտակցել, որ կրթությունը բարդ, արձագանքող համակարգ է և հրաժարվել շտապողական՝ «սորինտային» մտածողությունից:

Ատոմ Մխիթարյանի վերլուծությունը «Բարձրագույն կրթության երրորդ աստիճանում ուսումնառության արդյունավետության բարձրացման և որակի առաջընթացի մասին» է: Նշված աստիճանի կրթությունն ու շնորհված գիտական աստիճանները աշխարհում առավել ծանաչելի դարձնելու համար հեղինակն առաջարկում է հիմնվել դոկտորական կրթության զալցբուրգյան սկզբունքների վրա:

Մարիա Ի. Չալալսկայան «Չայաստանի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների որոշ առանձնահատկությունների մասին» հոդվածում ուշադրություն է հրավիրել բարձրագույն կրթության համակարգի զարգացման անհամաչափության վրա: Վերջինս հանգեցնում է բարեփոխումների ֆորմալ կողմի գերակայությանը՝ ի վնաս նրանց բովանդակային բաղկացուցչի: Արդյունքում կորչում է կրթական բարեփոխումների իրական հեռանկարը: Չեղինակը զգուշացնում է, որ նշված միտումների լուրջագնացման դեպքում հնարավոր է երկու բացասական սցենար: Կամ գործընթացը կդառնա անկառավարելի, կամ կրթության համակարգը կվերածվի սխեմատիկորեն սահմանված ներքին չափանիշների վրա հենված կառույցի՝ առանց ինքնակատարելագործման և արդյունավետ զարգացման հնարավորությունների:

Սուրեն Ոսկանյանի «Տեղեկատվական տեխնոլոգիաները որդես գիտություն, տեխնոլոգիա և բիզնես: Կառավարության և միավորումների դերը ԴԴ ՏՏ ոլորտի զարգացման գործում» հոդվածում վերլուծության են ենթարկվում ղեկավարության դերը, գործառույթները, նրա անհրաժեշտ և արդյունավետ միջամտության չափը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման խթանման գործում: Խնդիրը դիտարկվում է գիտատեխնիկական առաջընթացի, ղեկավար կառավարման համակարգերի տեխնոլոգիական առաջընթացի, ինչպես նաև կիրառական տեխնոլոգիական առաջընթացի և բիզնեսի տեսանկյուններից:¹

Թեև հայոց սփյուռքը անմիջականորեն չի ղատկանում հայաստանյան իրողություններին, նրա ներկայությունը չի կարող չզգացվել հայկական կյանքի խորքային վերլուծությանը հավակնող որևէ ձեռնարկում: Չարմանալի չէ, որ *Տարեգրքի* առաջին հատորը եզրափակող երկու հոդվածները ներկայացնում են «Չա-

յացք Սփյուռքից», ընդ որում առաջին աշխատանքի («Հայրենիքի ընկալումը Սփյուռքում») հեղինակները՝ Սոնա Ներսիսյանը, Լուսինե Տանաջյանը և Սյուզաննա Բարսեղյանը հայաստանցիներ են, իսկ երկրորդինը՝ Անդրանիկ Տազետեանը սփյուռքահայ է և ներկայացնում է Հայաստանին նետված հայացք Լիբանանից: Եթե նկատի ունենանք, որ առաջին տեքստն էլ վերլուծում է Հայաստանի մասին դատկերացումները Լոս-Անջելեսում, Բեյրութում և Թեհրանում, կհամոզվենք, որ դատկերը բավականաչափ ընդգրկում է ստացվում: Ընթերցողն ինքը կխորանա մանրամասների մեջ: Ես կսահմանափակվեմ միայն արձանագրելով, որ սփյուռքահայության ուշադրության կիզակետում շարունակում են մնալ ավանդական ազգային խնդիրները, որոնք սերտորեն կապված են արտաքին քաղաքականության օրակարգի հետ: Ներքին քաղաքականությունը սովորաբար դիտարկվում է որդես հայաստանցիների ներքին գործը, իսկ քաղաքացիական ընդվզումների դրսևորումները հաճախ համարվում են վտանգավոր՝ երկրի առկալայունացման կամ ազգային միասնության խախտման առումով: Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ հայաստանյան իրողությունների նույնակերտ դատկերացումները հատուկ են այն սփյուռքահայերին, որոնք հաճախ են լինում Հայաստանում՝ ազգականներին այցելելու կամ գործի բերումով:

Երկու խոսք որդես ամփոփում:

ՀՀՀԿ երրորդ *Տարեգրի* այս դրակի նախադատրաստությունը (հեղինակների հետ աշխատանքը, թարգմանությունները և այլն) ավելի երկար տևեց, քան ակնկալվում էր: Այնուամենայնիվ, նրա բովանդակությանը ծանոթացողները կարող են համոզվել, որ այն դույզն-իսկ չի կորցրել իր արդիականությունը և հրատադությունը: Լա՞վ է դա, թե՞ վատ: Միանշանակ դատասխան չկա: Որդես գիտնական կարող են ինձ բավարարված համարել, բայց որդես քաղաքացի կզերադասեի, որ գիտաժողովի մասնակիցների հարցադրումներից շատերն իրականացած լինեին, և մենք ավելի առաջընթաց փուլում գտնվեինք:

Հանենայն դեղս, կարող ենք հուսալ, որ ժողովածուում տեղ գտած վերլուծականներն ու առաջարկությունները կառուցողական քննարկում կառաջացնեն հանրության մեջ և գոնե մասամբ հաշվի կառնվեն Հայաստանի հասարակության արդիականացման գործը ստանձնածների կողմից:

1 Հասկանալի է, որ ներկայացված չորս հետազոտություններն ընդգրկում են ընդհանուր խնդրի փոքր մասը: Նկատի ունենալով կրթության և գիտության բնագավառներում արմատական բարեփոխումների կարևորությունը և հրատադությունը, ՀՀՀԿ-ը նախաձեռնել է առանձին ծրագիր՝ «Բարձրագույն կրթությունը Հայաստանում. խնդիրներ և հեռանկարներ» թեմայով, որի արդյունքների ամփոփումը՝ իրավիճակի վերլուծության և առաջարկությունների փաթեթի ձևով, հրատարակվել է առանձին գրքուկով (*Բարձրագույն կրթության հիմնախնդիրները Հայաստանում*, Հունամիտար հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2019):



ՀԱՅԱՍՏԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES



հիմնադրույթներ



ԱՇՈՏ
ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԻՑ

ԴԵՊՈՒ ՆՈՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ



իտաժողովին ներկայացվող ելույթիս վերնագիրը լինելու «Համրության հաղթահարման հրամայականը»: Արձանագրություն՝ արդի հայ հասարակության համրությունը: Սա արվյալական մոտիվ է: Իմաստն այն է, որ սեփական կյանքի հեռանկարը կորցրած և կրավորականության մեջ ընկնված ժողովրդի լեզուն մահացու վտանգի լուսինն է վերջապես բացվի:¹

Ինչո՞ւ են համարել, որ այդ ձևակերպումը կիրառելի է վերջին տարիներին ձևավորված հայաստանյան հասարակության նկատմամբ: Ելել են նրանից, որ մեր հասարակությունը վտանգված է, քանի որ այն եռոզիայի ենթարկող, նրա ներքին և արտաքին անվտանգությունը խաթարող երկույթները համակարգային բնույթ ունեն: Համոզված են եղել, որ դրանց հաղթահարումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե կարողանանք բացորոշ կերպով նկարագրել և իմաստավորել մեր համրության հիմքում ընկած իրական, թեև ոչ լուրջաբանական՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական մեխանիզմները: Այնինչ, հենց դրանց մասին է, որ հասարակությունը համառորեն լուռ է: Դա չի նշանակում, որ բազմաթիվ խոսքեր չեն ասվում, հողվածներ չեն գրվում, քաղաքական ճանքեր չեն հնչում:

Սակայն Հայաստանի հանրային գիտակցության (նաև գիտական հանրության) մեջ գերակայող երկու հիմնական՝ «ազգային-հայրենասիրական» և «դաստիարակության» դիսկուրսներն ի վիճակի չեն լուծել այդ խնդիրը: Ավելին, տրավելությունն այն է, որ դրանք ավելի միտված են ծածկելու, քան աղեկվատ ձևով նկարագրելու գոյություն ունեցող իրողությունները: Առաջին դիսկուրսը քիչ է ուշադրություն դարձնում հասարակության մեջ առաջ եկող բազմաթիվ սոցիալական և տնտեսական խնդիրներին: Այն հիմնականում կենտրոնանում է «զուտ ազգային» հիմնահարցերի վրա, իսկ շատ դեպքերում, որոշեք կանոն, սահմանափակվում է լիարժեք բարոյախոսությամբ և միասնության կոչերով: Երկրորդը՝ ձևականորեն կիրառում է արևմտյան հասկացության գործիքակազմը՝ «ժողովրդավարություն», «մարդու իրավունքներ», «շուկայական տնտեսություն» և այլն, որը բախվելով արևմտյանից որակապես տարբերվող իրողությունների՝ նույնպես և նույնքան անբավարար է մնում:

Քիչ է օգնում նաև այսպես կոչված «կոնկրետ»՝ փաստահավաք գիտականության հավակնող և սոցիոլոգիական «անկանխակալ» տվյալների վրա հենված հետազոտությունը: Ցավոք, ժամանակակից աշխարհում կիրառական սոցիոլոգիան ինքնին գաղափարականացված է և արդեն իսկ կանխակալ հարցադրումների դատաճառով հաճախ հանդես է գալիս որոշեք «կեղծ գիտակցություն»: Ոչ աղեկվատ մոտեցումների թվին է դասակարգում նաև «անցումային լուրջություն» մոդելը: Վերջինս ելնում է այն ենթադրությունից, որ Խորհրդային Միության փլուզումից հետո առաջ եկած լուրջությունները համատարած (արագ կամ դանդաղ) անցում են կատարում դեմոկրատիկ ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն: Հետևաբար, դրանք անհրաժեշտ է գնահատել այն տեսան-

կյունից, թե որքանով են վերջիններս հաջողել այդ անցման (տրանզիտի) ընթացքում:²

Վերջին թեզի նկատմամբ իմ թերահավատությունը ես արտահայտել եմ 2007-ին գրված իմ «Չայ անհատը և նրա վիրտուալ հասարակությունը» հոդվածում, որտեղ ստիղծված եմ եղել արձանագրել, որ Չայաստանը Եվրոպա չի գնում ոչ այն լուրջաբանությամբ, որ *դեռևս* չի ավարտել իր անցումը, այլ որովհետև հետխորհրդային հայ հասարակության համակարգային առանձնահատկությունները երկիրը բուրրովին այլ ուղղությամբ են տանում:³

Արևմտյան գիտական շրջանակներում այս թնջուկը շատ ավելի վաղ է ակնարկվել: Այս առումով հատկանշական է Թոմաս Քըրոթերսի դեռևս 2002-ին գրված «Անցումային հարացույցի ավարտը» հոդվածը,⁴ որում արձանագրվել է «անցումային» մոտեցման անարդյունավետությունը և առաջարկվել հետխորհրդային հասարակությունների նկարագրությունն իրականացնելիս հրաժարվել այդ հետազոտական հարացույցից: Մյուս հայտնի հարցադրումը լուրջաբանում է Թոմաս Ամբրոսիոյին, որն առաջարկել է նոր մոդելներ փնտրել «անցումային հարացույցից անդին»:⁵

Նոր հղացքները ինքնին քիչ չեն՝ նույն Ամբրոսիոյի «կիսա-կոնսուլիդացված ավտորիտարիզմից» մինչև Սուրեն Չոյանի «էլեկտորալ ֆեոդալիզմը»: Բայց սրանք էլ իրենց թերություններն ունեն: Խնդրահարույցն այստեղ այն չէ, որ այդ հղացքները կոտեկտ չեն, այլ այն, որ դրանցից շատերը, մասնավորապես արևմտյանները, *սակասող* են: Դրանք թռչնի թռիչքի բարձրությունից են մայում իրականությանը, քանի որ նրանք ունեն ընդգրկելու բազմաթիվ դեմքեր, և հենց այդ դեմքերով էլ հաճախ առանձին երկրի յուրահատկությունը դրանցում լավ չի երևում:

Առավել արդյունավետ են թվում միջին մակարդակի մոդելները, որոնցում տեսական մոտեցումը զուգակցվում է տեղական իրողությունների հետազոտության՝ case study-ի հետ: Այդ տրամաբանությունից ելնելով է, որ նախատեսում էի անդրադառնալ արդի հայ հասարակության յուրահատկության բացորոշմանը: Բայց, քանի որ թավշյա հեղափոխությունից հետո հասարակական իրողությունների ընկալումը Չայաստանում զգալիորեն փոխվել է, բնական է, որ առաջարկվող վերլուծությունը իրականացվի տեղի ունեցած իրադարձությունների համատեքստում:

Հարցերը, որոնց նախատեսում եմ անդրադառնալ ստորև, հետևյալն են՝ ի՞նչ է եղել մինչև հեղափոխությունը, ի՞նչ տեղի ունեցավ և ի՞նչ աղազա ենք մենք ցանկանում:

ՏԵՍԱԿԱՆ ԵԶՐԵՐԸ

Տեսական եզրերը, որոնք օգտակար է արձարծել դրված հարցերին դատասխանելու համար, երկուսն են՝ «լեզվի միությունը» և «հասարակական դայնա-

նագիրը»: Դրանց փոխկադակցվածությունը առավել կարևոր է մեզ համար: Լեգիտիմության հղումները լայնորեն տարածված են եղել հայ հասարակության մեջ անկախության ողջ ժամանակաշրջանում: Ընդդիմությունը, մատնանշելով ընտրական ընթացքների խախտումները (լցումումներից և ընտրակաշառքներից մինչև թեկնածուների ՀՀ-ում բնակվելու ցենզի կեղծումը), իշխանություններին հայտարարել է ոչ լեգիտիմ, իսկ վերջիններս մշտադեպ հակադարձել են՝ դիմելով «օրենքի տառին» և ղեկավարելով, որ ֆորմալ փաստաթղթերի մակարդակով իրենց մոտ ամեն ինչ կարգին է:

Դժվար չէ նկատել, որ այդդիսի բանավեճում «լեգիտիմության» հասկացությունը նենգափոխվում է «լեգալության» հասկացությանը: Իշխանությունների փորձերը՝ հիմնավորելու իրենց լեգիտիմությունը օրենքին «համադատաստասանությանը», հաշվի չեն առնում, որ լեգիտիմությունը «զուտ իրավական» ֆենոմեն չէ, այն սոցիալ-հոգեբանական բնույթ ունի և կադաված է նախ և առաջ ժողովրդի՝ գոյություն ունեցող *իշխանությանը ենթարկվելու ղատրաստակամության* հետ: Սա է ղատճառը, որ լեգիտիմության ֆենոմենի բովանդակությունը սերտորեն կադաված է «հասարակական դաշինքի» էլ ավելի բարդ երևույթի հետ:

Միանգամից ասենք, որ «հասարակական դաշինքի» երևույթը, որի մասին այդքան տղավորիչ խոսել են Թոմաս Հոբսը, Ջոն Լոկը, Ժան-ժակ Ռուսոն, ֆորմալ մտածողության համար նույնքան անհասկանալի է, որքան լեգիտիմության հարցը, քանի վերջինիս մոտ անմիջադեպ հարց է առաջանում այն մասին, թե *ե՞րբ և որտե՞ղ է կնքվել այդ դաշինքը*: Հասկանալի է, սակայն, որ իրականում խոսքն այստեղ ոչ թե ձևական իրավական փաստաթղթի մասին է (թեև դաշինքը կարող է հանդես գալ նաև այդ ձևով՝ դրա դասական օրինակն է «Ազատությունների խարտիան»⁶), այլ՝ հասարակության մեջ տեղ գտած որոշակի, հաճախ լուելայն համաձայնության (կոնսենսուսի)՝ փոխադարձ ակնկալիքների վրա հենվող որևէ կարգ որդես լեգիտիմ դիտարկելու վերաբերյալ: Մաքս Վեբերն այդ երևույթը բացատրելու համար օգտագործել է գոյություն ունեցող կարգի «վավերականության» հասկացությունը (Geltung):⁷ Իսկ Ռեյնոն Գոսն այդ կադակցությանը խոսում է «անմիջական համաձայնության» (tacit consent) կամ «վարկածային համաձայնության» (hypothetical consent) մասին:⁸

ՀՈՐԻՉՈՆԱԿՎՆ, ԹԵ՞ ՈՒՂԱՀԱՅԱՑ

Գիտենք, որ հասարակական մտքի ղատմության մեջ տարբերակվել են դաշինքի հորիզոնական (Լոկ, Ռուսո) և ուղղահայաց ձևերը (Հոբս): Երկու խմբերին ղատկանող հեղինակներն էլ էլնում են նրանից, որ դաշինքը հաստատվում է հասարակության բոլոր անդամների միջև: Սակայն առաջինները գտնում են, որ նաև կառավարության ձևավորումից հետո ժողովուրդը որդես կուելկտիվ սուբյեկտ ղատկանում է իր ինքնիշխանությունը: Այս տեսակետի հետևողական ղաշտղանը Ժան-ժակ Ռուսոն է, որը հատուկ շեշտում է, որ կառավարու-

թյան առաջադրումը իրականացվում է ոչ թե դաշինքի, այլ օրենքի միջոցով: Կառավարությունը իրավունք չունի վիճելու դրա լայնամասշտաբի վերաբերյալ, նրա խնդիրը օրենքին ենթարկվելն է:⁹

Համաձայն մյուս տեսակետի, որն իր ծագման առումով առաջինն է (Հոբսի *Լևիաթանը* լույս է տեսել 1651-ին, այնինչ Լոկի և Ռուսոյի համադաստասխան գործերը թվագրված են 1690-ով և 1762-ով) համարում է, որ «բնական վիճակի» հաղթահարումից հետո ինքնիշխանության գործառույթը անցնում է ղեկավարին: Պատահական չէ, որ այս դրույթը լայնորեն ընդունվել է 18-րդ դարի ստորագրված Լոկի և Ռուսոյի ինքնիշխանի դեմ արտահայտությունն անթույլատրելի է համարել:¹⁰ Այստեղից հասկանալի է, որ ուղղահայաց հասարակական դաշինքը հատուկ է նաև ավտորիտար իշխանություններին և ադապտացվում է նրանց կայունությունը: Մեխանիզմը, որով այն գործում է, բարիքների փոխանակման ակնհայտ ձև ունի՝ ժողովուրդից վերցվում են նրա ազատությունը երաշխավորող որոշակի գործոններ, օրինակ՝ քաղաքական իրավունքները, փոխարենը որևէ այլ բան է առաջարկվում: Որոշես կամոն դա անվտանգությունն ու բարեկեցությունն են:¹¹

Հետխորհրդային տարածքում, մասնավորապես Ռուսաստանում ձևավորված ուղղահայաց հասարակական դաշինքի մասին խոսելիս Ալեքսանդր Աուզանը նշում է բնակչությանը տրված երաշխիքների երկու հիմնական ձև՝

- սեփականության անձեռնմխելիությունը (ընդհատվել է *Յուկոսի* գործի հետ կապված),
- սոցիալական երաշխիքներ (ընդհատվել է 2005-ին սոցիալական արտոնությունների դրամայնացման հետևանքով):¹²

Երաշխիքների երրորդ, գուցե ամենակարևոր ձևի՝ անվտանգության մասին կխոսենք ավելի ուշ:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հասկանալի է, որ անկախ Հայաստանում, որն ավտորիտար համակարգի ակնհայտ հատկանիշներ ունի, հասարակական դաշինքը լայնորեն ընդունվել է լինելու ուղղահայաց: Բայց փաստացիորեն սահմանափակելով քաղաքական ազատությունները՝ այն ինչ-որ բան լայնորեն է երաշխավորել: Ի՞նչ: Իհարկե, սոցիալական բարեկեցություն, նաև՝ սեփականության անձեռնմխելիություն, բայց նախ և առաջ՝ ազգային անվտանգություն լայնորեն ապահովելու միջոցով: Այս հարցին լայնորեն քննարկելու համար հարկավոր է քննարկել այդ երաշխիքները: Այս հարցին լայնորեն քննարկելու համար հարկավոր է քննարկել Սարգսյանի՝ *Արմենիա: անկախության անվտանգության անհրաժեշտ պայմաններ* աշխատության մեջ կատարված վերլուծության վրա:¹³

Աշխատանքի հիմնական թեզն այն է, որ հետխորհրդային տարածքից միայն

Հայաստանում է տեղի ունեցել *դասական ավտորիտարիզմի հաղթահարում*, որի հետևանքով ձևավորվել է կառավարման մի համակարգ, որը հանրությունը բաժանել է երկու անհավասար մասերի՝ ամենագործերի և անգործերի: Եթե երկրում կա Սահմանադրություն և չկա սահմանադրական կարգ, սովորաբար առաջանում է կամ ավտորիտարիզմ, կամ *հասարակության ամենահզոր անդամների միջև ղայմանավորվածություն ազդեցության ոլորտների բաժանման մասին*: Հայաստանում տեղի է ունեցել երկրորդը՝ առաջ է եկել կառավարման օլիգարխիկ համակարգ, որը գործել է միանգամայն հաշվի առնելով Սահմանադրության գոյությունը: Բայց օրենքներն օգտագործվել են մեկ ուղղությամբ՝ բնակչությանը կառավարիչներին ենթարկեցնելու: Իրենք՝ կառավարիչները, ենթարկվել են բոլորովին այլ նորմերի:

Անցումը ավտորիտարիզմից կառավարման այդ ձևին կատարվել է 2003-ին, երբ խորհրդարան են մտել խոշոր սեփականատերերը, իսկ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ազդեցությունը կտրուկ թուլացել է: Բացարձակ հեղինակության բացակայության դարագայում հայաստանյան *համակարգը ստացել է ղայմանագրային ձև*: Հարաբերությունները սկսել են կարգավորվել քաղաքական և տնտեսական ազդեցության ոլորտների բաժանման մասին ղայմանավորվածություններով: Տնտեսությունը զարգացել է քվոտաների համակարգի հիման վրա, կուսակցությունների կշիռը որոշվել է դրանց առաջնորդների լծակներով: Արտոնյալների կաստան՝ «Ֆեոդալները» և «կուսակցությունները», դարտավորություն են ստանձնել հաշտեցնելու հասարակությունը իշխանության հետ՝ յուրաքանչյուրն իր ոլորտում: *Ձևական առումով, այդ կոնստրուկցիան արձանագրվել է 2003 թ. հունիսի 11-ի «Քաղաքական կոալիցիայի հուշագրում»*:¹⁴

Ուշագրավ է, որ ըստ Ալեքսանդր Աուզանի,¹⁵ նմանատիպ փորձ է կատարվել նաև Ռուսաստանում 2003 թ. աշնանը: Ծայր առած քննարկումների ժամանակ խոշոր բիզնեսի ներկայացուցիչներն ընդունել են, որ իրենց դիրքերը ոչ թե ղետության դեկավարի հետ է, այլ բնակչության: Քննարկվել են սոցիալական արդարությունն ադաիովող կոմոենասցիոն մեխանիզմների տարբեր եղանակներ: Խոսքը գնալիս է եղել մի քանի խոշոր բարեգործական ֆոնդերի ստեղծման և նոր սոցիալական քաղաքականություն իրականացնելու մասին, որի վերահսկողությամը մասնակցելիս լինեին նաև հասարակական կազմակերպությունները: Սակայն այդ դաշինքը չի կայացել, քանի որ նախագահը որոշել է անձամբ տնօրինել բոլոր լծակները, և բնակչությունը ղաշտղանել է այդ որոշումը: Սրա արղյունում առաջ եկած հասարակական կարգը առավել նույնակերղ նկարագրվում է Սիմոն Կորղոնսկու առաջարկած «ղասային հասարակղյան» մողելով:¹⁶

Բայց Հայաստանում դասական ձևով նկատի առնված ավտորիտարիզմը ղարտղություն է կրել: Եվ քանի որ հասարակղյան նկատմամբ լոեյայն ղայմանավորվածղյամբ վերցված որևե ղարտավորղյուն չի կատարվել, օլիգարխիկ կաստայի մեջ ընղունված օրենքները ղարգաղեա տարածվել են ողջ

հասարակության վրա: Իշխանությունը ձեռք է բերել իր կյանքը, հասարակությունը՝ իրենը: Քրեա-օլիգարխիկ համակարգի վերջնական ձևավորումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ ազդեցության ոլորտների վերաբաշխումը դարձել է ամհնարին առանց ոչ լազտոնական՝ «թիկնագորային» կամ լարգաղես քրեական, ուժային կառույցների ներգրավման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԵՎ ՕԼԻԳԱՐԽԻՍԸ

Հարցը, որը ծագում է այս վերլուծության արդյունքում, հետևյալն է՝ իսկ ինչո՞ւ են Հայաստանում ձևավորված այս յուրահատուկ համակարգում դրսևորվել հասարակական դաշինքի գործառույթները:

Նախ ակնհայտ է, որ քրեա-օլիգարխիկ համակարգը, որը միտված է ամենատարբեր ձևերով քաղաքացիների ստրկացմանը, չի կարող *սոցիալական երաշխիքներ* տալ իր քաղաքացիներին: Դա չի նշանակում, որ նման հասարակության մեջ տնտեսական աճ տեղի չի ունենում: Խնդիրն այն է, որ տնտեսական աճը որևէ ազդեցություն չի ունենում լայն զանգվածների բարեկեցության վրա:

Ոչ լակաս բարդություններ է առաջ բերում սեփականության խնդիրը: Այստեղ ամհրաժեշտ է հիշել, որ խոշոր սեփականատերերի նկատմամբ բնակչության մեջ ձևավորված վերաբերմունքը եղել և մնում է բացասական: Դա բացատրվում է հասարակության մեջ լայնորեն տարածված համոզմունքով, որ ստեղծված լայնամենեղում շոշափելի հարստություն ձեռք բերելու ազնիվ ձևերն ի սկզբանե բացառված են: Սակայն նշված բարոյական մթնոլորտը կարող էր միայն ֆոնային նշանակություն ունենալ: Հասկանալի է, որ զանգվածների վերաբերմունքը որևէ կերպ չէր ազդելու այս կամ այն մեծահարուստի կարողության չափի վրա: Շատ ավելի կարևոր էր այն հանգամանքը, որ մասնավոր սեփականությունը լայնաշոշափված չէր նաև կաստայի ներսում, քանի որ այստեղ *ամընդհատ ընթանում էր սեփականության ուժային վերաբաշխում*:

Այստիսով, հասարակական դաշինքի ենթադրյալ գործառույթներից մնում է միայն մեկը՝ *երկրի տարածքային ամձեղնմիսելիության լայնաշոշափում*: Եվ ի՞նչու չէ, որ երկար տարիներ ազգայնական դեմագոգիան դառնում է միակ լեռտական գաղափարախոսությունը, իսկ անվտանգության փաստարկը՝ հիմնական զենքը՝ սոցիալական դժգոհության որևէ դրսևորման դեմ լայնարում:¹⁷ Աղրիլյան լայտերագընը ցրում է այդ վերջին լայտրանքը:

Եզրակացությունը, որը ստիղված ենք անել, հետևյալն է՝ *քրեա-օլիգարխիկ համակարգի գործունեության արդյունքում Հայաստանում վերացել է հասարակական դաշինքի ամեն մի նշույլ՝ ինչո՞ւս հորիզոնական, այնո՞ւս էլ ուղղահայաց*:

Օլիգարխիկ ռեժիմի դեմ լայնարի լայտմությունը՝ սկսած 2008-ի դեղքերից շարունակված երիտասարդական քաղաքացիական բողոքների շարանով և վերջացրած *Սասնա ծռերի* կատաղի ընդվզումով, խոսակցության առանձին թեմա է: Բավարարվեն դրանց ոչ լրիվ թվարկումով՝ *Ուսանողական այգու*

դաշտդանություն, Մաշտոցի դուրակ (2012), Թեղուտի բնադահդանական շարժում, 100 դրամ (2013), Հանուն գիտության ֆինանսավորման, Դեմ են! (2013), Էլեկտրիկ Երևան ..., հղանցիկ մատնանշելով միայն Ծոերի գործողության առաջ բերած հանրային տրանսդրությունները: Ավելի քան հատկանշական էր, որ հայկական հասարակությունը, որը միշտ աչքի է ընկել իր չափավորությամբ և զուսդ գգուշավորությամբ, եթե չարդարացրեց, ադա «ըմբռնունով մոտեցավ» Սասնա ծոեր խմբավորման գինված, փաստորեն՝ ահաբեկչական, գործողությանը: Փաստարկը միակն էր՝ Ելք չկա՝:

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՂԹԵՑ ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ելքն, այնուամենայնիվ գտնվեց: Թավշյա հեղափոխությանը հաջողվեց ցանցային գործողություններով տեսանելի դարձնել այն դարգ իրողությունը, որի զգացողությունը վաղուց առկա էր հասարակության մեջ՝ *հասարակական դաշինքի չգոյության դայնամներում ՀՀ բնակչության ճնշող մեծամասնությունը չէր տեսնում ոչ մի փաստարկ տիրող ուեծիմին ենթարկվելու օգտին*: Սանավանդ որ, փաստորեն, իշխող ուեծիմն իմքն էլ ներքինից չէր հավատում սեփական լեգիտիմությանը: Ստեղծվել էր դարադրքսալ վիճակ, որը հասկանալու համար օգտակար է հիշել Մաքս Վեբերի միտքն այն մասին, որ լեգիտիմ կարգը սովորաբար դահդանում է իր վավերականությունը նաև այն խախտողի համար: Այսդես, օրինակ, գողը գիտակցում է, որ մեղանշում է վավեր կարգի դես, մա դարգադես հույս ունի, որ կխոսափի դատիժից:¹⁸ Այնինչ, Հայաստանում ձևավորված ուեծիմն առանձնադես չէր էլ փորձում քողարկել իր արտաիրավական գործողությունները, քանի որ *չէր ակնկալում, որ իրեն հավատում են*: Նա էլնում էր նրանից, որ «բոլորն ամեն ինչ գիտեն», բայց ոչինչ անել չեն կարող, քանի որ «իրենց դես խաղ չկա»:

Մ. Վեբերի մյուս թեգը, որ կարևոր է այս համատեքստում, վերաբերում է լեգիտիմ կարգի վավերականության երկու աղբյուրներին՝ «բարբերին» և «իրավունքին»: Բարբերի նկատմամբ ուսնձգության դեդքում գործում է «բոյկոտը», իրավունքի խախտման դարագայում գործի է դրվում ճնշման դեստական ադարատը: Բայց ուշագրավ է, որ Վեբերը խոսում է նաև *միջանկյալ ձևի* մասին: *Ուսնձգությունը կոնվենցիայի («հանրային բարբերի») նկատմամբ, հաճախ հանրության անդամների սոցիալական բոյկոտի գերազդեցիկ և զգայուն հետևանքների շնորհիվ ավելի ուեղ է դատվում, քան դա հնարավոր կլիներ իրավական դարտադրանքի դարագայում*:¹⁹ Ադա՝ *Որև կարգի կոնվենցիոնալ երաշխիքից իրավական երաշխիքին անցնելու սահմանային դեդքը ծիսականացված (förmlich), սդառնալից և կազմակերդված բոյկոտի կիրառությունն է*:²⁰

Այժմ արդեն, հետին թվով վերլուծելով կատարվածը, կարող ենք արձանագրել, որ հայկական հեղափոխության «գանգվածային անհնագանդությունը» կազմակերդված բոյկոտի դասական դրսևորում էր:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Արձանագրենք նաև հետևյալը. եթե 2018-ի աղյուսակի իրադարձություններն իսկապես հավակնում են հեղափոխություն լինելու, ապա դրանց մասնակիցները ղեկավարված է կարողանան վերականգնել հասարակության ատաղձը հանդիսացող քաղաքացիական ղեկավարները: Ընդ այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ մի քանի համագամներ:

ա) Դաշինքը, որքան էլ դա ցանկալի լիներ, չի կարող լինել *միայն* հորիզոնական, արդեն իսկ այն ղեկավարում, որ հայկական հասարակությունն իր բնույթով հակված է լուծումներ ակնկալել առաջնորդից: Այդ մասին է վկայում նաև ներկայիս վարչապետի գերբարձր վարկը: Ուրեմն, այն ղեկավար է ունենա *նաև* ուղղահայաց համաձայնության տարրեր:

բ) Կոռուպցիայի դեմ ղեկավարող ինքնին վերցրած ահռելի և հնչել խնդիր լինելով հանդերձ, նոր հանրային ղեկավարող ձևավորող կոնսենսուս ստեղծել չի կարող:

գ) Նոր դաշինքը ղեկավարվում է արտահայտի հասարակության մեծ մասի սղակալիցները, որոնք ակնհայտորեն կառավարվում են *արդարության վերականգնման* հետ: Վերջինս վերաբերում է ոչ միայն անցյալի տրավմատիկ իրադարձությունների (նախ և առաջ հոկտեմբերի 27-ի և մարտի 1-ի), բայց նաև բազմաթիվ տնտեսական հանցագործությունների բացահայտմանը և մեղավորների ղեկավարում: Բնական է, որ հասարակության լայն խավերը այդ գործընթացներից նաև որոշակի *նյութական փոխհատուցում* են ակնկալում:

դ) Փոխհատուցման մեխանիզմները չղեկավարվում են «հարստահարողների հարստահարման» բոլշևիկյան մոդելով: Հանրային կոնսենսուսը ղեկավարվում է ընդունելի լինի նաև բիզնեսի համար: Այսինքն, ղեկավարվում է համատեղված երաշխիքները ինչպես *սեփականության անձեռնմխելիության*, այնպես էլ *սոցիալական իրավունքների* հետ կառավարվում:

ե) Դա կարող է իրականացվել անցումային արդարադատության շրջանակներում մշակված կոմիտեային մեխանիզմների օգտագործման (օրինակ՝ նախկին օլիգարխների ղեկավարող մուծումներից ձևավորվող սոցիալական ֆոնդերի ստեղծման) միջոցով: Ընդ այդ, խոսքը հասարակությանը «լավություն անելու», մարդկանցից գողացվածի կամայական՝ մեծ կամ փոքր մասը մարդկանց կամ ղեկավարները «մեծահոգաբար նվիրելու» մասին չէ: Նման գործընթացը չէր տարբերվի նախկին համակարգում ընդունված ձևից՝ իրեն հատկացված մեծաշնորհից գերազանց ստացող մեծահարուստը ղեկավարի իրահանգով «մուծվում է»՝ ինչ-ինչ հանրային խնդիրներ ոչ ֆորմալ ճանադարձով լուծելու համար: Դրույթաչափերը ղեկավարվում է որոշված լինեն օրենքով, իսկ ստեղծված ֆոնդերի ֆինանսական գործունեությունը ղեկավարվում է համադատասխանի դրանց կանոնադրությանը, լինի թափանցիկ և վերահսկվող:

զ) Ավելի ընդհանուր իմաստով, ընդունելի է Ա. Առաքելի գաղափարն այն մա-

սին, որ «բոլորի համար չէ, որ սեփականությունը մեծագույն նդատակ է: Մարդիկ ձգտում են տարբեր իրավունքների՝ առողջ կենսակերպ, երեխաների կրթություն, հարգալից հարաբերություններ: Խոշոր բիզնեսը, ի սկզբաբանե, հակված չէ հարգելու բնակչության իրավունքները: Լուծումն այն է, որ նա ստիպված լինի հարգել դրանք: Խոսքը ներդրումների մասին է, որոնք հնարավորություն կտան հասնել որոշակի ստանդարտների»:²¹

ե) Հասկանալի է, որ *բիզնեսի սոցիալական ղատասխանատվությունը* չի կարող ղայնանավորվել միայն անցումային արդարադատության ժամանակավոր նորմերով: Այն ենթադրում է լայն գործարար շրջանակների շարունակական մասնակցություն հանրությանն անհանգստացնող խնդիրների լուծմանը: Նման գործունեությունը հնարավոր չի լինի իրականացնել առանց օրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունների, որոնք հարկային արտոնություններ կհաստատեն բարեգործությանն ուղղված միջոցների համար:

Այս և նման ճանադարհներով է հնարավոր հասարակության վերագտնված հուզական համերաշխությունը բարձրացնել ինստիտուցիոնալ մակարդակի և ադահովել նոր կառավարության երկարաժամկետ լեգիտիմությունը:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿ

Թավշյա հեղափոխությունը հասարակությանը վերադարձրեց հույսը սեփական ադագայի նկատմամբ: Սդասումները մեծ են, բայց մեծ են նաև վտանգները:

1. Հետհեղափոխական էյֆորիայի ղայնաններում լիովին հասկանալի է *Քաղաքացիական ղայնանագիր* կուսակցության ջախջախիչ հաղթանակն ընտրություններում և նրա գերակա դիրքը նորընտիր խորհրդարանում: Այդ հեռանկարից անհանգստացած քաղաքական գործիչների և վերլուծաբանների կոչերը՝ հետաձգել ընտրությունները մինչև նոր կուսակցական համակարգի ձևավորումը Հայաստանում, թեն հասկանալի, բայց ոչ բավականաչափ իրատեսական էին: Կուսակցական լանդշաֆտը երկրում այն աստիճան էր քայքայված և անայացած, որ լրացուցիչ մի քանի ամիսը քիչ բան կարող էր որոշել: Բայց դա նշանակում է, որ քաղաքական նոր ուժերից և հասարակական կազմակերպություններից շատերը դեռ նոր են ոտքի կանգնելու առաջիկա տարիներին արտախորհրդարանական գործունեության ղայնաններում: Ի վիճակի կլինե՞ն արդյոք այսօրվա խորհրդարանական ուժերը մի կողմից՝ նդաստել կուսակցական-հանրային դաշտի նորոգման գործընթացներին, մյուսից՝ այնդես համագործակցել կառավարության հետ, որ կանխվի նոր, այս անգամ «հեղափոխական» ավտորիտարիզմի վտանգը:

2. Թավշյա հեղափոխությունը երիտասարդության հեղափոխությունն էր: Դրանում էր նրա ուժը, բայց այստեղ է նաև նրա թուլությունը: Եվ խոսքը ոչ միայն օրվա կառավարության մեջ փորձառու կադրերի դակասի մասին է, այլև նոր բաժանարար գծերի ստեղծման վտանգի, որոնց դատձառով հեղափոխու-

թյանն իրենց մասնակցությունը բերած միջին և ավագ սերնդի ներկայացուցիչները կարող են ամտեսվել և մեկուսացվել ընդհանուր գործընթացներից:

3. Այսօր արդեն ակնհայտ է, որ նոր կառավարության տնտեսական քաղաքականության համար Պատասխանատու գործիչների հայացքներն արմատական ազատական են: Սույն հոդվածն այն տեղը չէ, ուր կարող է քննվել դրանց արդյունավետությունը: Բայց իմաստ ունի հիշեցնել, որ թավշյա հեղափոխության շարժիչ ուժերից մեկը եղել է անադախտ խավերի ընդվզումը գնալով ահագնացող տնտեսական բևեռացման դեմ: Բարձր լեգիտիմությունը, որն այսօր ունի կառավարությունը, նվաճվել է նախկին համակարգի դեմ Պայքարի շնորհիվ: Այն չի վերաբերում տնտեսական զարգացման ռազմավարությանը, քանի որ վերջինիս այլընտրանքային՝ ազատական և սոցիալական մոդելները հանրային մրցակցության մեջ չեն դրվել ինչդեպ հեղափոխության օրերին, այնդեպ էլ խորհրդարանական ընտրապայքարի ընթացքում: Նոր կառավարությունը ղեկավարում է նկատի ունենա, որ իր որդեգրած թեզը՝ *տնտեսական գործընթացներին ղեկավարող նվազագույն մասնակցության վերաբերյալ*, հղի է ամկամխատեսելի սոցիալական ցնցումներով:

4. Վերը նշվեց, որ 2018-ի թավշյա հեղափոխությունն իշխանությունների դեմ միակ սոցիալական ընդվզումն էր, որի ընթացքում «անվտանգության փաստարկի» կիրառությունը վերջիններիս կողմից արդյունք չի տվել: Այն չէր էլ կարող արդյունք տալ, քանի որ դժգոհությունն անվտանգության ադախտվման մակարդակից նախկին կառավարությունը սասանած հիմնական գործոններից էր: Փոխարենը, հետհեղափոխական շրջանում արտաքին քաղաքականությանը վերաբերող լծակները նախկին իշխանության ներկայացուցիչներն օգտագործում են ամենայն իմտենսիվությամբ՝ հաճախ չխնայելով ողջ երկրի միջազգային վարկը: Արտաքին քաղաքականության հետ կառավարած օրակարգի ծայրահեղ բարդությունը մնում է նոր կառավարության դժվարին մարտահրավերներից մեկը:

Վերը ներկայացված մտահոգությունների թվարկումն անշուշտ կամայականության տարր է դարձնակում: Ցանկության դեռքում, այն կարելի է շարունակել, կրճատել կամ փոխարինել խնդիրների մեկ այլ, ոչ թակաս եական ցուցակով: Միայն ադազան ցույց կտա, թե որքանով իշխանության եկած հեղափոխական ուժերն ի վիճակի կլինեն դիմակայել այդ մարտահրավերներին: Սակայն կարևոր է հիշել, որ հեղափոխության գուցե կարևորագույն արդյունքը *հանրային ակտիվության համար ծանադարի հարթելն էր*: Թվարկված և բազմաթիվ այլ խնդիրների լուծման հաջողությունը ոչ միայն կառավարությունից է կախված, այլև ողջ հասարակությունից: Վերջինս եզակի հնարավորություն է ստացել՝ *մտքում ունենալ Բուսոյի խոսքն այն մասին, որ կառավարության ձևավորումից հետո էլ ժողովուրդն է մնում միակ ինքնիշխանը, և եռանդուն քայլեր ձեռնարկել հասարակական դաշինքի ԳՈՐԻՉՈՆԱԿԱՆ տարբերակի ձևավորման ուղղությամբ*:

- 1 Յմնտ. Խաչատուր Աբովյան, *Վերջ Չայաստանի* (Երևան: Սովետական գրող, 1984), էջ 5-6:
- 2 Հայկական իրականության ցլատմամբ այդ մոտեցման կիրառության ակնառու նմուշ է «Անցման ավարտը» գիտաժողովը, կազմակերպված 2017-ին Լոս-Անջելեսում և Երևանում Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից (“The End of Transition: Shifting Focus: A Quarter Century After the Soviet Collapse” international conference, org. by the USC Institute of Armenian Studies; the first part was held on the USC campus April 9-10, and the second part – on May 23-24, in Yerevan).
- 3 Աշոտ Ոսկանյան, «Հայ ամիստը և նրա վիրտուալ հասարակությունը», *D`Arménie, Éditions le Quartier: Quimper* (Erevan, 2008), էջ 121-135, աղբյուր՝ <http://www.arteria.am/hy/1327488242>, այց՝ 19.03.2019:
- 4 Thomas Carothers, “The End of the Transition Paradigm”, *Journal of Democracy*, հ. 13, թիվ 1 (2002), էջ 5-21:
- 5 Thomas Ambrosio, “Beyond the Transition Paradigm: A Research Agenda for Authoritarian Consolidation”, *Demokratizatsiya The Journal of Post-Soviet Democratization*, հ. 22, թիվ 3 (2014), էջ 471-494:
- 6 1215-ին Անգլիայում ընդունված «Ազատությունների մեծ խարտիան» (Magna Carta) դա-հանջում էր թագավորից հրաժարվել որոշ իրավունքներից և ընդունել, որ իր կամքը դեռ է սահմանափակվի օրենքով: Այն ներառում էր անվտանգության դրույթ, որ իրավունք էր տալիս բարոնների հանրությանը անհրաժեշտության դեպքում ուժով հակադրվել արքայի կամքին:
- 7 Տե՛ս Max Weber, *Wirtschaft und Gesellschaft* (Vollmedia GmbH Padeborn), էջ 39:
- 8 Տե՛ս Raymond Geuss, *History and Illusion in Politics* (Cambridge: Cambridge University Press, 2001), էջ 65 և 67:
- 9 Տե՛ս Ժան-ժակ Ռուսո, *Հասարակական դաշինքի մասին* (Երևան, 2000), էջ 206 և 208:
- 10 Տե՛ս հեղափոխության իրավունքի մասին իմ տեսադասախոսությունը հետևյալ հղումով՝ <http://archumanities.am/category/video/heghapokhoutyan-iravounq>, այց՝ 19.03.2019:
- 11 Այդ օրինաչափության դրսևորումները ժամանակակից աշխարհում մատչելի ձևով վերլուծված են հետևյալ աշխատության մեջ՝ John Kampfner, *Freedom for Sale: How We Made Many and Lost Our Liberty* (Simon & Schuster: London – N.-Y. – Sidney – Toronto, 2009):
- 12 Տե՛ս Александр Аузан, *Вертикальный контракт неустойчив, Отечественные записки* (2001-2014), <http://www.strana-oz.ru/2004/6/vertikalnyy-kontrakt-neustoychiv>, այց՝ 18.10.2019:
- 13 Տե՛ս Манвел Саркисян, *Армения: волны политических перемен*, http://archumanities.am/uploads/articles/pdf/МСаркисян_Армения-волны_политических_перемен.pdf, այց՝ 18.04.2019:
- 14 Տե՛ս *Քաղաքական կոալիցիայի հուշագիրը*՝ https://armenpress.am/arm/news/33765/D594D4B1D582D4B1D594D4B1D4BFD4B1D586_D4BFD588D4B1D4BCD4BBD591D4BBD4B1D585D4BB_D580D588D592D587D4B1D4B3D4BBD590D4B8.html, այց՝ 23.03.2019:
- 15 Տե՛ս Аузан, *Вертикальный контракт неустойчив*:
- 16 Տե՛ս Симон Кордонский, *Словная структура постсоветской России* (Москва: Институт фонда «Общественное мнение», 2008): Այդ թեմայով հեղինակի զեկուցումը *Հայաստան 2018. իրողություններ և հեռանկարներ* գիտաժողովում տե՛ս հետևյալ հղումով՝ <http://archumanities.am/category/video/hetkhorhrdayin-rousastani-socialakan-karo>, այց՝ 19.03.2019:
- 17 Այդ մասին տե՛ս Sos Avetisyan, *The Hunchback of Caucasus: Armenia’s “Stateness” Issue and Its Post-war Democratization* (Master’s Thesis).
- 18 Տե՛ս Weber, *Wirtschaft und Gesellschaft*, էջ 40:
- 19 Weber, *Wirtschaft und Gesellschaft*, էջ 43:
- 20 Weber, *Wirtschaft und Gesellschaft*.
- 21 Յմնտ. Аузан, *Вертикальный контракт неустойчив*:



ՄԱՆԿԵԼ
ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԻ

ԴԻՆԱՄԻԿԱՆ



Երջին ամիսներին անընդհատ փորձում ենք հասկանալ, թե ինչ լուրեր է անենք, խոսում ենք արդարությունից, սոցիալական արդարությունից, սոցիալական համերաշխությունից և ընդհանրապես նրանից, թե ինչ է կատարվել Հայաստանում: Հիմնական հարցը հետևյալն է. այն, ինչը կոչում ենք հեղափոխություն կամ հեղաշրջում, ի՞նչ է սա իրականում: Ի՞նչ է իրականում կատարվել Հայաստանում:

Եթե վերցնում ենք կոնկրետ սխեմաներ, օրինակ՝ Հայաստանում տեղի ունեցած դեմքերը դիտարկում Արևմտյան մոտեցումներից, լուրեր է տեսնենք, թե եղել է արդյո՞ք Հայաստանում համակարգափոխություն՝ ինստիտուցիոնալ փոփոխություն, թե ոչ: Եթե եղել է, ապա սա հեղափոխություն է կամ զոնե հեղափոխության սկիզբ է: Եթե չի եղել, ապա կարելի է այն բնութագրել որպես բունտ: Մյուս կողմից՝ կարևոր է հասկանալ, թե մինչ այդ եղել է արդյո՞ք Հայաստանում համակարգ և արդյո՞ք այն փոխվել է:

Հայաստանում, ինչպես շատերն են լինում, գոյություն ունեն քրեա-օլիգարխիկ համակարգ: Արդյո՞ք այդ համակարգը կարող ենք համարել լուրերական համակարգ, թե ոչ: Այս հարցին շատ տարբեր մոտեցումներ կան: Ես կարծում եմ, որ քրեա-օլիգարխիկ համակարգը լուրերական համակարգ է: Ինչո՞ւ:

Ղարաբաղյան շարժման տարիներին, 1988-ից սկսած, Հայաստանում հայտարարվել էր, որ նույնպես կա ստեղծել իրավական լուրերություն: Սա հետագայում ամրագրվեց սահմանադրությամբ. ձևականորեն ընդունվեցին այն արժեքները, ձևավորվեցին այն ինստիտուտները, որոնք լուրեր է բերեին այդ լուրերության ստեղծմանը: Սակայն այդ ինստիտուտները, ինչպես կարելի է հասկանալ, չեն կայացել: Հենց 1995 թ. նախագահական ընտրություններով ընտրության ինստիտուտը տառալվել է, տեղի է ունեցել մի բան, որը կոչվում է իշխանության յուրացում, իշխանության ուզուրոպցիա: Որոշակի խմբի կողմից այդ ուզուրոպցիան լուրեր է բերել դատական համակարգի տարալիզացման, որովհետև կատարվել էր լուրերական հանցագործություն: Ըստ 1995 թվականին ընդունված սահմանադրության, ուզուրոպցիան լուրերական հանցագործություն է, և լուրեր է, որ հանցագործները անմիջապես լուրեր է վերացնեին դատական համակարգը: Դրանով տառալվեց երկրորդ՝ արդարադատության ինստիտուտը: Հետագայում լուրեր է ստեղծվել ուզուրոպցված իշխանության ինչ-որ ուրակ:

Հայաստանում սա տեղի է ունեցել մի քանի փուլով: Քանի որ լուրերագնով սկսեցինք կառուցել լուրերությունը, իշխանության եկավ լուրերագնի ընթացքում ստեղծված այսպես կոչված ռազմական օլիգարխիան:

1996 թ. ստեղծվեց *Երկրաշառ կամավորականների միությունը*, որը կարճ ժամանակ անց քաղաքականացվեց, ինչպես նաև յուրացվեց բոլորովին այլ մարդկանց կողմից ստեղծված *Հայաստանի հանրապետական կուսակցությունը*: Ռազմական օլիգարխիան մտավ այս երկու կառույցների մեջ: 1998 թ. որոշակի մանիպուլյացիաներով ռազմական օլիգարխիան իշխանության եկավ *Հանրապետական կու-*

սակցության տեսքով: 1999 թ. հոկտեմբերի 27-ի դեմքերով այն գլխատվեց ու կորցրեց իր ազդեցությունը: Հենց այդ ժամանակ էլ դրվեցին քրեա-օլիգարխիկ համակարգի հիմքերը, և այն որդես համակարգ բյուրեղացավ 2003 թ.:

Այդ տարիներին գործող ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը ներկայացնում էր ռազմական օլիգարխիան, երկրորդ անգամ փորձելով ընտրվել ՀՀ նախագահ՝ տառալվեց ընտրությունների առաջին փուլում: Ձախողումից հետո նա հավաքեց բոլոր խոշոր սեփականատերերին և երկիրը նրանց հանձնելով՝ վերջիններիս կողմից ստացավ իրեն ղաշտոդանելու երաշխիք: Ընտրությունները կեղծելով՝ Քոչարյանը մնաց իշխանության, իսկ խոշոր սեփականատերերը մտան Ազգային ժողով՝ հայտարարելով, որ ստեղծում են քաղաքական կալիփցիա և նոր քաղաքական մշակույթ: Նրանց ստեղծած քաղաքական կալիփցիան այն էր, ինչ մենք անվանում ենք քրեական օլիգարխիա: Այն եղել է քաղաքական և տնտեսական ոլորտների բաժանման ղայմանագիր՝ քաղաքականը ձևակերպել են հոչակագրի մեջ, օրինական տեսք են տվել, մինչդեռ տնտեսական և իրական իշխանական բաժանումը բանավոր էր: Այդ կալիփցիոն ղայմանագիրն էլ իր հերթին ստեղծել է քրեա-օլիգարխիկ համակարգ: Այն քրեական է կոչվում ոչ թե այն ղատձառով, որ անօրինական է. իր բնույթով այն ղայմանագրային օլիգարխիա է: Ի դեմ, կան տարբեր օլիգարխիաներ. կա օրինակ՝ կլանային օլիգարխիա, երբ համակարգը կառուցված է մեկ ավտորիտար անձի շուրջ: Հայաստանում ավտորիտարզմը վերացել էր 2003 թ., քանի որ չկար մի գաղափար, որի շուրջ ավտորիտար իշխանություն ձևավորվեր: Մինչ այդ Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանության տարիներին կար Ղարաբաղի վերամիավորման հարցը, այս հարցը նրա քաղաքականության մի մասն էր, և դրանում էր դրսևորվում նաև նրա իշխանությունը: Ռոբերտ Քոչարյանի իշխանության գալու տարիներին էլի մի գաղափար կար՝ *Ղարաբաղի փրկիչներ* կամ *ղատերազմի հերոսներ*: Այս երկու գաղափարներով էին իշխանությունում գտնվողներն արդարացնում իրենց իշխանությունը, ինչն էլ փլուզվեց 2003 թ.: 2003 թ. առաջ եկած նշածս խոշոր սեփականատերերի ղայմանագրով ձևավորվեց իշխանական այլ տիղի համակարգ: Ուստի, 2003 թ. ձևավորված համակարգը քրեա-օլիգարխիկ անվանելն անհիմն է: Այն շատ նման է բուն քրեական աշխարհի ղայմանագրին, քանի որ գործում է ոլորտների բաժանման սկզբունքով:

Կարող ենք հարց տալ, թե ինչո՞ւ այդդես եղավ: Խնդիրն այն է, որ Հայաստանում սեփականությունը կաղված է եղել ղետական լծակների հետ. առաջին իսկ սեփականության կուտակումը տեղի է ունեցել ղետական լծակների գործադրմամբ, խոշոր սեփականության տիրանալու որևէ այլ կերղ չի եղել: Այսինքն՝ այն, ինչը կոչում ենք բիզնեսի և իշխանության սերտաձում, ի սկզբանե դրված է եղել ղետականության հիմքում: ղայմանագիրը եղել է հենց այդ սեփականության շուրջ: Ընդ որում, սեփականություն էր նկատվում գրեթե ամեն բան, տարբերություն չի եղել տարածք է դա, գործարան, բանկի հաշիվ, մանդատ, թե ղաշտոն կամ դատարան:

Վերջին ամիսներին Հայաստանում տեղի ունեցածը մտքի և գործողության սին-

թեզ է: Այն իսկապես ժողովրդական շարժում է, քանի որ չի իրականացել մեկ մարդու կողմից: Կային մարդիկ, որոնք գիտեին ինչդեպ վարվել այս վիճակում, և կային մարդիկ, ովքեր ուզում էին դա անել: Երկար ժամանակ քննարկումներ էին, համոզ(վ)ելու փորձեր, որ կարելի է կիրառել այսօրվա մի մեթոդ: Հայաստանում հանրությունը կարողացել է, կազմակերպվելով որդես անգն բանակ, քրեական օլիգարխիան աղամոնտաժելու օղերացիա իրականացնել, և դա եղել է անգն բանակի օղերացիա: Ասել, որ այդ աղամոնտաժման օղերացիան հեղափոխություն է, թե ոչ, զուտ ճաշակի հարց է: Կարևորն այստեղ էությունն է: Վերևում խոսեցի քրեա-օլիգարխիկ համակարգի բնույթից, մնում է հարցը, թե արդյո՞ք այն դեպքում համակարգ է, թե ոչ: Իմ կարծիքով այն դեպքում համակարգ է, և իզուր չէ այն հանգամանքը, որ այդ համակարգը առանձնահատուկ «սեր» ունի սահմանադրության նկատմամբ: Ամեն մեկն իր հերթին փոխում է սահմանադրությունը՝ քրեա-օլիգարխիկ համակարգը օրինականացնելու համար: Սա շատ ավելի կանոնավոր համակարգ է, քան ավտորիտար համակարգը, բայց կառուցված է «վատ օրենքի» հենքի վրա: Ավտորիտար համակարգը կառուցված է ընդամենը մեկ մարդու որոշման վրա, իսկ օլիգարխիան օրենք է:

Ի՞նչ է կատարվում այս օրերին: Այժմ դեմոնտաժի երկրորդ փուլում ենք: Ժողովուրդը գլխատեց այդ համակարգը, ստիպեց օլիգարխիկ համակարգին ենթարկվել իրեն, երկրի կառավարման լծակը տալ իրեն: Բանակը և ոստիկանությունը ժողովրդի կողմում են: Ունենալով ուժային կառույցների օժանդակությունը և երկրի ղեկավարի ղաշտոնը՝ սկսվեց դեմոնտաժի երկրորդ փուլը: Գեներալ Մանվել Գրիգորյանի հետ կապված դեմքերը ուժային դեմոնտաժի երկրորդ փուլի մասին են խոսում, այն բոլորովին էլ կոռուպցիայի դեմ ղաշքար չէ: Այսինքն՝ սկսվել է աղամոնտաժվել հիմնական խարխիսը՝ ընդհանուր անուն ստացած *Երկրադատ* և այլ կառույցներ, որոնց վրա հենվում էր այդ համակարգը: Սկզբում փոխվում է գլուխը, հետո ուժայինները և սկսվում է դեմոնտաժի մնացած մասը: Մի որոշ ժամանակ առաջ *Հանրապետական կուսակցության* անդամներն ասում էին, թե իրենք մեծամասնություն են և դեռ իրենց խոսքը կասեն: Բայց այդ ժամանակ նրանք դեռ չէին հասկացել ինչ է կատարվել: Գեներալ Մանվել Գրիգորյանին հանձնելով՝ *Հանրապետական կուսակցությունը* հանձնեց իր նախկին կարգը, ինչը չանել չէին կարող: Օլիգարխիան ինքն իրեն դավաճանելով փլուզում է իր համակարգը: Օլիգարխիան դեռ կշարունակի փլուզվել: Այս դաժին հիմնական խնդիրը հասկանալն է, թե այդ ուժային դեմոնտաժը ինչքանով է օրինական: Իրականում սա ռեդեպիսիա է, որը կարող է վերածվել այլ բանի և ավելի լուրջ խնդիրների առաջ կանգնեցնել: Այժմ տեսնում ենք, որ դիմակավորված անձինք ներխուժում են օլիգարխիայի դարազուլանների տները, և ժողովուրդը ողջունում է սա. ժողովրդին դատարան դետք չէ: Իսկ հենց սա որքանով է օրինական:

Միևնույն ժամանակ այս իրավիճակի մեջ դրական բաղադրիչը բավականին մեծ է: Ի սկզբանե հայտարարվել է, որ դեմոնտաժից հետո դետք է կարգավորվի քաղաքական և տնտեսական դաշտը, մի բան, որը գերխնդիր է բոլոր

Աման փոփոխություններից հետո: Ինչո՞ւ: Որովհետև աման օլիգարխիկ համակարգում ամհնար է ղաշտղանել խոշոր սեփականությունը աղանց այդ համակարգի մաս կազմելու: Դրա համար բոլորը ձգտում են մի մասնիկ ունենալ այդ համակարգում: Զինա համակարգը խլում է այդ սեփականությունը, իսկ ժողովուրդը ողջունում է դա:

Ամհնար է ստեղծել իրավական ղետություն, եթե սեփականությունը ղաշտղանված չէ, և եթե հանրությունը օրինական չի ձանաչում այդ սեփականությունը: Բայց ինչղե՞ս օրինական ձանաչվեն այդ սեփականությունները, երբ դրանք ձեռք են բերվել ժողովրդին անընդհատ թալանելով ու կեղեբելով:

Ուրեմն, քաղաքական ու տնտեսական ոլորտները կարգավորելու համար աղաշարկում են ընդունել երեք օրենք.

Ա. Օրենք սեփականության մասին, որում լինի մի սկզբունք, այն է՝ ձանաչել գոյություն ունեցող սեփականությունները կոմղենսիաղին հարկի գործաղրմամբ: Զանրությունը ձանաչում է խոշոր սեփականությունները, բայց սեփականատերերը դատարանի որոշմամբ ինչ-որ ժամկետում, ասենք՝ 1-25 տարի, հարկ են տալիս հանրությանը՝ որղես մախորղ տարիներին ղատձանված վճարի փոխհատուցում: Սրանով լուծվում է երկու հարց: Նախ՝ այս կերղ հանրությանը արղարության կոնցեղտ է աղաշարկվում: Կարելի է կուլակաթափություն անել ու դրանով արղարություն հաստատել, բայց աղաշարկվող ձևի աղավելությունն այն է, որ այն բերում է հանրային համերաշխության: Կան կոնկրետ մարղկանց թիրախային խմբեր, որոնց ղետք է փոխհատուցել: Կա մարղկանց խումբ, օրինակ, որ գրկվել է իր ղատեմական ժաղանգությունիղ Երևանում՝ տարածքը ղետության գերակա շահ ձանաչելով մարղկանց դուրս են շղորտել իրենց տներիղ: Գյումրիում դեղևս 6000 տնակ կա և մարղկանց ստրկացած վիձակում են ղահում: Աղքատ ընտանիղներ, որոնց տղաներին բանակ են տանում, ընդ որում՝ աղաշնագղծ: Եվ իհարկե կան բազմաթիվ գղհեր: Սրանք կոնկրետ խմբեր են, հանրության շերտեր, որոնց ղետք է փոխհատուցել: Եթե փոխհատուցվի, ժողովուրդը չի թշնամանա թալանչիղների հետ, և այն համերաշխության ու հաշտության կբերի: Այս մեխանիզմի արղյունբում վերանում է սեփականատիրոջ կողմիղ անընդհատ ղետական իշխանության մաս կազմելու ձգտումը, այն դաղում է անեական: Այս մեխանիզմը կիրաղել է Իղլանդիան և շատ հաշող կերղով կարողացել լուծել հասարակական ձգնաձամը:

Այստեղ ծնվում է երկրորղ հարցը՝ ինչղե՞ս ժողովուրդը ղետք է ընտրի կաղավարման համակարգը և կաղերին: Ներկայիս օրենսղղությամբ միայն կուսակցությունները իրավունք ունեն մասնակցել ընտրություններին: Այդ դեղղում ո՞ր կամ ինչղիսի՞ կաղույցը ղետք է համարվի կուսակցություն: Այստեղիղ էլ երկրորղ օրենքը.

Բ. Օրենք կուսակցությունների մասին: Պետք է գործարկվի վերագրանցման

մի մեխանիզմ, որը թույլ չի տա ներկայումս գոյություն ունեցող մարդ-կուսակցություններին և կուսակցությունների անվան տակ գործող բանդաներին հանդես գալ որդես կուսակցություն:

Եվ ի վերջո կա ևս մի կարևոր օրենք: Դա

Գ. Ընտրական օրենքն է: Այս օրենքը ղետք է արտացոլի վերը նշված երկու օրենքները:

Եթե այսբանը կարողանանք անել, ադա կկանգնենք ղետականաշինության ճանադարհին, եթե ոչ, ադա կշարունակվեն ղեդրեսիաները:

ՍՈՒՐԵՆ
ՉՈՒՅԱՆ

ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՄԱՆ
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱԿՈՐ ՈՒՂԵԳԻԾԸ¹

*Բոլոր հրչանիկ ընթանիվները նման են միմյանց,
յուրաքանչյուր դժբախտ ընթանիվ դժբախտ է յուրովի:*

ԼԵՎ ՏՈՒՍՏՈՅ

1. Քաղաքական, սոցիալական և մշակութային գործընթացները նկարագրելիս հարկ է գիտակցել, որ նկարագրվող երևույթը կամ համակարգը իր գործունեության ընթացքում նույնպես ձևավորում է իր ինքնատիպ տերաքոնոմները: Ինքնատիպ տերաքոնոմները և դրանց սերունդը հանդիսանում են սոցիալական համակարգի բնականոն և կարևորագույն գործառնություններից մեկը՝ առաջնություն տվյալ համակարգի ինքնագիտակցման կադադարումը:²

Ինքնա- և արտա-դատակերտումը գտնվում են դիմամիկ և դրա հետ մեկտեղ մրցակցային փոխազդեցության մեջ՝ ձգտելով հանդես գալ որպես գերիշխող և հավակնելով լինել միակ ճշմարիտը:

Այս առումով քաղաքագետների և հասարակագետների համար ուշագրավ կարող է լինել մշամագիտության և մշակութաբանության փորձը, որտեղ խորությամբ ուսումնասիրված են նմանատիպ փոխազդեցության և մրցակցության եղանակները: Դրանք մասնատում են այն, որ տարամշատումը ներքին և արտաքին նկարագրությունների միջև թեև մեթոդապես անհրաժեշտ է, բայց այն չի կարող լինել ամբողջական և ավարտուն:³

Օրինակ՝ այժմ Հայաստանում դաշտոնապես ընդունված «թավշյա հեղափոխություն» եզրույթը փոխառված է դրսի նկարագրություններից. նախ և առաջ այն մոտատակառուցված էր համեմատության եզր հաստատել Հայաստանի 2018 թ. աղբյուրի և Չեխոսլովակիայի 1989 թ. իրադարձությունների միջև: Այդ արտահայտությունը դառնում է տվյալ գործընթացներին մասնակցող ուժերի ինքնանկարագրում, ինչը և դիտարկելի հաշվի առնեն բոլոր արտաքին նկարագրողներն ու դիտորդները: Ցանկացած մոր դիսկուրս 2018 թ. իրադարձությունների մասին, անգամ «թավշյա հեղափոխության» գաղափարը ժխտող, անխուսափելիորեն անդրադառնալու է դրան առնվազն բանավեճի եղանակով:

2. Սակայն *հաշվի առնելը* տարբերվում է *ընդունումից*: Պակաս կարևոր չէ դարձել, թե ինչքանով ինքնանկարագրումը կարող է համադատասխանել կամ շեղվել իրական իրավիճակից, կամ, ավելի ճիշտ, դրսի դիտորդի կողմից կատարված արտա-դատակերտումներից: Ինքնանկարագրումն ու ինքնամկանումը շատ կարևոր են որպես տվյալ համակարգի եական ցուցիչ և հատկանիշ, ուստի և նույնպես ենթակա են արտա-նկարագրմանը:

Այդ տեսանկյունից դիտարկենք հետխորհրդային հասարակությունների նկարագրման կադադարները և փորձենք հասկանալ դրանց հասկացության (կոնցեպտուալ) և իմաստաբանական արմատները: Դրանց դիտարկումը կարող է հանգեցնել այն մտքին, որ դրանք հանդիսանում են ոչ թե տնդիտիկ հետազոտությունների արդյունք, այլ հակառակը՝ իբր թե կոնկրետ դեղքի հիման վրա (case study) միտված են հաստատել այս կամ այն հայեցողական տեսությունը: Հետխորհրդային հասարակությունների նկարագրման առկա մոդելների մեծ մասը հիմնված են որոշակի *a priori* տրված գաղափարախոսական սխեմաների վրա, որոնք հենց այդ նկարագրությունները փորձում են հիմնա-

վորել որդես մի *a posteriori* ստացած ճշմարիտ արդյունք: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել հիմնական հասկացությային ոլորտներ, որոնց հիման վրա կառուցվում են համադատասխան տեսություններ:

1. ԱՆՑՈՒՄ

2. ՓՈՒԼԵՐ՝ ազատականացում – ժողովրդավարացում – ամրադնդում («либерализация – демократизация – консолидация»):

3. ՀԻՔՐԻԴ

4. ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ

3. Նշված հասկացությային փոխաբերությունների իմաստաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչու դրանց վրա հիմնված նկարագրությունները չեն արտացոլում հետխորհրդային դեմոկրատիաների իրողությունները:

Նրանցից ամենաարմատավորվածը կարելի է համարել *Անցումի* փոխաբերությունը, որը անգամ առանձին գիտաճյուղի ստեղծման հիմք է հանդիսացել (անցումաբանություն, транзитология, transitology):

Տրանզիտի փոխաբերությունը ենթադրում է դիմամիկ անցում «վատ» սոցիալիստական խորհրդային անցյալից դեռի այն իդեալական իրավիճակը, մի մտակառույց (construct), որը դայմանականորեն կարելի է անվանել «ազատական արևմտյան ժողովրդավարություն»:⁴ Այն կոչված է փոխարինել մեկ այլ մտակառույց՝ վարկաբեկված «կոմունիզմը»:

Միևնույն ժամանակ, Ֆուկյայամայի ոգով, ենթադրվում էր, որ այս իդեալն արդեն իրականություն է դարձել այլ երկրներում (ԱՄՆ, Եվրոպա, Ճապոնիա և այլն): Դժվար չէ հասկանալ, որ մի շարք հետխորհրդային հասարակություններում «տրանզիտը» վեր է ածվել միայն լիտակների փոփոխության, ինչի հիմքում ընկած է մի վաղեմի հիլիաստիկ (hiliastic) գաղափար,⁵ որը հստակ և բավականին դարգունակ ձևով արտահայտված էր Ֆ. Ֆուկյայամայի «Պատմության ավա՞րտը» հոդվածում՝ ի տարբերություն դասական սկզբնաղբյուրի՝ Երկրի վրա Երկնային Արքայության փոխարեն ստեղծվում է հանընդհանուր լիբերալ հասարակություն:⁶ Դրանից հետո օգտագործելով նախանցյալ դարի ոռու մեծ երգիծաբանի խոսքը՝ կարող ենք ասել. «Պատմությունը դադարեցրել է իր հոսքը» (Սալտիկով-Շչեդրին, «Մի քաղաքի դատմություն»):⁷

Անցման այս կաղաթարող փոխաբերությունը զարգանում էր երկու հիմնական ուղղություններով: Անցումը ենթադրում է *սկիզբ* և *ավարտ*, դրանց միջև կարող է լինել ճանադարի (աստիճանային բարեփոխումներ), կամ էլ անցումը կատարվում է թոչքաձև, «հեղափոխական» եղանակով: Սկզբնական փուլում, 1990-ականներին, անցումը դատկերացնում էին որդես կարճաժամկետ թոչք. հիշենք Գրիգորի Յավլինսկու *500 օր* ծրագիրը, Եգոր Գայդարի կայծակնային սեփա-

կանաչնորիումն ու գների ազատականացումը: Սակայն հետագայում, կարծա-
 ժամկետ ծրագրերի ձախողումներից հետո, հեղափոխական թռիչքը փոխա-
 րինվում է երկարաժամկետ ճանադարձի հասկացությամբ, որն իր մարմնավորումն
 է ստանում ժողովրդավարությանը հասնելու եռամիսյան բանաձևում՝ ազատակա-
 նացում – ժողովրդավարացում – կոնսոլիդացում («либерализация – демокра-
 тизация – консолидация»): Չնայած մոտեցումների որոշ տարբերություններին,
 դրանք մույմիս հիմնված են «տրանզիտի» հասկացության փոխաբերության
 վրա:

4. Սակայն հետխորհրդային քաղաքական համակարգերի զարգացումը հիմ-
 նականում ընթացում էր այլ ուղղությամբ՝ ոչ թե դեմոկրատիկ ժողովրդավա-
 րություն, այլ դեմոկրատիկ սոցիալական երաշխիքներից զուրկ (և այդքանով «ազա-
 տական») ավտորիտարիզմ: Ուստի, Խորհրդային Միության փլուզումից 20
 տարի անց արդեն դարձ էր, որ «անցումային տեսությունը» ավելի շուտ ե-
 դել է բարի ցանկությունների վրա հիմնված գաղափարախոսություն, քան թե
 գիտական տեսություն:⁸

«Տրանզիտի» հասկացությի վրա հիմնված մոտեցումները հետագայում զիջում
 են իրենց առաջնայնությունը մեկ այլ հասկացությի՝ «հիբրիդայնությունը»: «Հիբ-
 րիդային ռեժիմ» գաղափարը կոչված էր փոխակերպելու տրանզիտի փոխաբե-
 րությունը: Այն դիտարկում է հակադրությունը վատ անցյալի և դժբախտ աղա-
 զայի միջև: Դրա հետ մեկտեղ անցյալից եկող հաստատությունների անշրջելի
 բնաջնջման և դրանց փոխարինող արևմտյան հաստատությունների աստիճա-
 նական արմատավորման գաղափարի փոխարեն հիբրիդային ռեժիմների տե-
 սությունը ենթադրում է դրանց համակեցության հնարավորությունը:

Դրանով նմանատիպ տեսությունները հավակնում են մերկայանալ որդես մի տե-
 սություն, որտեղ հաշվի են առնվում տարբեր դիտարկումների առանձնահատ-
 կությունները և զգալիորեն միմյանցից զանազանվող քաղաքական ռեժիմների
 համար առաջարկում նկարագրման տարբերվող մոդելներ: Սակայն իրականում
 հիբրիդներին ստեղծում է հենց նկարագրման մեթոդը: Հիբրիդային տեսությու-
 նը քաղաքական իրողություններին վերագրում է այն հատկանիշները, որոնք
 բխում են նկարագրության համադաստասխան ելակետային կադադարից:

Օրինակ՝ եթե սայլի նկարագրության համար օգտագործենք մեքենայի հասկա-
 ցությը, աղա սայլը համդիսանալու է հիբրիդային մեքենա, և հակառակը՝ եթե
 ելակետային լինի սայլը, աղա մեքենան ի հայտ կգա որդես հիբրիդային մեքե-
 նայացված սայլ: Կամ, օգտվելով Ստիվեն Դեմսոնի օրինակից, թելի գնդիկով
 խաղացող շունը դիտարկվելու է որդես հիբրիդային կատու:⁹

Նման եղանակներով ստեղծվում են դատարանային խառնուրդներ, ինչդես
 օրինակ՝ «հիբրիդային ժողովրդավարություններ» կամ «դեմոկրատորաններ»՝
 իրականում հանդիսանալով ավտորիտար կամ անգամ հետ-ամբողջատիրա-
 կան (մեո-տոտալիտար) համակարգի տեսակներից մեկը:¹⁰

Նման ռեժիմների համարժեք վերլուծության դեռևս դրանք լիարժեք դիտարկվեն ոչ թե որդես անցումային, այլ որդես արդեն կայացած ոչ-ժողովրդավարական, օժտված ավտորիտար համակարգերին և դրանց եությանը, այլ ոչ թե արտաքին ատրիբուտներին համադաստասանող հիմնական բնութագրերով:¹¹

Մեր կարծիքով, եթե հաշվի առնենք հիմնական հատկանիշները, առաջին հերթին խորհրդային տարածքում տեղի է ունեցել ոչ թե անցում սոցիալիզմի սովետական մոդելից դեմոկրատիայի արևմտյան ազատական (լիբերալ) ժողովրդավարություն, այլ հակառակը՝ հետդարձ նախա-սովետական և անգամ նախա-կայսրական իրավիճակին՝ բողոքական ժամանակակից ինստիտուցիոնալ շղարշով: Օրինակ՝ Թուրքմենիայի, Ղազախստանի և Վրաստանի այսօրվա համակարգերը ամբողջությամբ տարբեր են, ինչպես և դա եղել էր Ռուսաստանին բռնակցելուց առաջ: Ինքը՝ Ռուսաստանը, կարծես թե ավելի հակված է իր կառավարման մոդելը որոնել ոչ թե Արևմուտքում, այլ Ռոմանովների կամ անգամ Ռյուրիկովիչների ժամանակներում:

Քսան տարվա ընթացքում ջնջվել են խորհրդային համահարթեցման հատկանիշները, գոյացել են ժամանակակից համատեքստին համադաստասանող ինստիտուցիոնալ նմանակներ (սինուլակրեր), վերականգնվել են նախորդ համակարգին բնորոշ բնութագրեր՝ այն տեսքով, ինչպիսին դրանք կարող էին վերարտադրվել արդի ժամանակներում: Հայաստանի դեռևս դա եղել է վերադարձ սարդարյան ժամանակաշրջանին՝ այն էական տարբերությամբ, որ օտարազգի տիրադատությունը փոխարինվել է ազգային ինքիշխանությամբ:

Անխուսափելի առաջընթացի փոխարեն հնարավոր են և այլ զարգացումներ, այդ թվում նաև հետդարձային: Տեղի ունեցած փոխակերպումները կարելի է դիտարկել ոչ թե որդես դեմոկրատիայի արդեն առաջադրված մարտուղի, այլ որդես չեզոքացում այն հատկանիշների, որոնք ժամանակավորված էին ԽՍՀՄ-ի քաղաքական ռեժիմով և այն կառավարման ինստիտուտների վերակենդանացմամբ, որոնք հատուկ էին այս ժամանակներին մինչև դրանց ընդգրկումը ԽՍՀՄ-ի կամ Ռուսական կայսրության կազմում:

Այս գործընթացները կարող են նմանվել այդպես կոչված *հետ-ժողովրդավարությանը* (*post-democracy* – Քոլին Գրոշ) կամ *վերա-ֆեոդալացմանը* (*re-feudalization* – Ալան Սուփին)¹² արևմտյան հասարակություններում ընթացող գործընթացներին և երևույթներին, որոնք, ըստ հեղինակների, կարելի է դիտարկել որդես հեռացում ժողովրդավարական կառավարման սկզբունքներից¹³ և հետդարձ դեմոկրատիայի ֆեոդալական համակարգ:¹⁴ Այս հանգամանքը հեշտացնում է ավտորիտար ռեժիմները՝ որդես ժողովրդավարական ծրարելը, և հնարավորություն է ստեղծում արդյունավետ համագործակցության համար Եվրասիական հետխորհրդային և Արևմտյան հետ-ժողովրդավարական իշխանական էլիտաների միջև:

Ավտորիտար և ժողովրդավարական ռեժիմների միջև ընդունված տարբերական և դրանց հետագա խառնուրդ ժողովրդավարության հասկացույթին դի-

մելու փոխարեն ավելի նդատակահարմար ենք գտնում Մ. Իյիմի գաղափարը (անձնական հաղորդակցում), համաձայն որի, բոլոր քաղաքական ռեժիմները հիմնված են ավտորիտար ինստիտուտների վրա և տարբերվում են միայն իրականացվող ղրակտիկաներով, ժողովրդավարական կան հակաժողովրդավարական գործելակերպի աստիճանով (հմմտ. այնդիսի ինստիտուցիոնալ միադետություններ, ինչդիսի են Մեծ Բրիտանիան, Շվեդիան և Սաուդյան Արաբիան):

6. Ինչ վերաբերում է Հայաստանին, ադա «սոցիալիստական» հատկանիշների չեզոքացումը չի հանգեցրել եական դրական արդյունքի, քանի որ այն չէր ուղեկցվում արդիականացման որևէ ծրագրով: Խորհրդային Հայաստանի վերջին երկու տասնամյակների ընթացքում գոյացած հետինդուստրիալ ինտենսիվ զարգացման ռազմավարության փոխարեն ի հայտ էր եկել իր տեսակով հետզադուային «ազգային վերածնունդի» ավանդադաշտ գաղափարախոսությունը: Արդի Հայաստանում քաղաքական ռեժիմի համար որոշիչ էին իշխանության և սեփականության միաձուլումը:¹⁵

Գոյացել են այնդիսի երևույթներ, ինչդիսի են շուկայական տնտեսությունն առանց մրցակցության, խորհրդարանական հանրադետությունն առանց քաղաքական կուսակցությունների և ընտրություններն առանց իշխանափոխության հնարավորության: Նման ռեժիմը բնութագրելիս առավել համարժեք կարող է լինել «ընտրական Ֆեոդալիզմ» հասկացությունը:¹⁶ Սովորաբար այն օգտագործվում է այն երկրների առնչությամբ, որտեղ համատեղված են Ֆեոդալական ինստիտուտները և ընտրությունների մեխանիզմը (Հնդկաստան, Պակիստան, Լիխտենշտայն):

Սակայն, կարծում ենք, այդ տերմինը հարիր է օգտագործել Հայաստանի և հետխորհրդային այլ երկրների հանդեմ, որտեղ Ֆեոդալական իշխանությունը լեգիտիմացվում է ոչ թե անձի ծագումով, այլ ընտրությունների միջոցով: Ժողովրդավարության կարևորագույն առանձնահատկությունը՝ ընտրությունների միջոցով իշխանության ձևավորումը դառնում է ծես, որը դետեք է լեգիտիմացմի արդեն ձևավորված դաշտոնական և սովերային հիերարխիան: 1990-ականներին առաջացած արատավոր շրջադուստր տարիների ընթացքում ավելի մեծ իներցիոն թափ է հավաքում. ընտրական Ֆեոդալիզմը ձևավորում է Ֆեոդալական ընտրազանգված, և մինույն ժամանակ Ֆեոդալական ընտրազանգվածը դարբերաբար վերարտադրում է ընտրական Ֆեոդալիզմը (ընտրված Ֆեոդալների կառավարում):

Դա առաջացնում է նաև ժամանակակից քաղաքական ինստիտուտների արխայիկ վերաիմաստավորում (մախագահը, իսկ այժմ՝ վարչադետը, ընկալվում է որդես ընտանիքի գլուխ, դետությունը՝ որդես մայր, մարգդետը ստանձնում է իշխանի դերը, տատիկի առակները դառնում են սահմանադրական օրենսդրության աղբյուր, իսկ ընտրությունները՝ տոնահանդես և այլն): Ի վերջո, 2015 թ. ընդունված Սահմանադրությունը ամրագրում է իրեն համադատասխան

Ֆեոդալական կառավարման աստիճանակարգ՝ գերլիազորություններով օժտված, բայց ղափտասխանատվությունից զուրկ վարչապետ և նրան սղասարկող կառուցներ՝ շքախումբ (կուսակցություն), անկախ քվեարկության իրական արդյունքներից իր միջից *կայուն մեծամասնություն* մոզոնող խորհրդարան, վարչապետի անմիջական ենթակայության տակ գտնվող զինված ուժեր, ոստիկանություն և անվտանգության ծառայություններ:

Փոփոխությունները եթե հնարավոր են, ադա միայն որդես ղալատական հեղաշրջում: 2015 թ. Սահմանադրությունը նղատակ ուներ կոնսոլիդացված ինստիտուցիոնալ տեսք տալ ժամանակակից տեսակի սարդարական գեր-ավտորիտար ռեժիմին:

Նման դիտանկյունից փորձենք գնահատել իրականացված «թավշյա հեղափոխությունը» (նշենք, որ մենք սահմանափակվում ենք մինչև 2018 թ. հունիսը ընկած ժամանակահատվածով): Հիմնական հարցը հետևյալն է. ինչքանով են համաղատասխանում ընթացող գործընթացները *հեղափոխություն* հասկացությանը, քանի որ հեղափոխության դեղքում փոխվում է հասարակական կարգը, այլ ոչ միայն իշխանության գլուխ կանգնած ամձինք:

Դատելով հիմնական կարգախոսից, «Քայլ արա՛, մերժի՛ր Սերժին», նղատակը եղել է փոխել անձը, ոչ թե ռեժիմը: Հայաստանի ղայմաններում, եթե ճիշտ է մեր ենթադրությունը էլեկտորալ ֆեոդալիզմի՝ որդես քաղաքական համակարգի հիմնական բնութագրի մասին, ադա սղասելի եր ավելի շատ հենց ֆեոդալական համակարգի համար ժողովրդական ընդվզում կան աղստամբություն, որի հաջողության դեղքում, ինչդես դա լինում է հայկական ժողովրդական հեքիաթներում, չար և խորամանկ թագավորին փոխարինելու է գալիս բարի և ղարգամիտ ռամիկը («ժողովրդի վարչապետը»):

Սակայն համակարգը և նոր դեմքերով համալրված աստիճանակարգը որևէ տական փոփոխության չեն ենթարկվում, թեն համաղատասխան կամքի աոկայության դեղքում թե՛ սահմանադրական, թե՛ քաղաքական և տնտեսական արմատական փոխակերղումները աոանց լուրջ դիմադրության կարող են և իրակավացվել: Սակայն որևէ հիմնավոր ծրագրային օրակարգ մինչ օրս չի ուրվագծվում (ասել էինք 2018 թ. հունիսին, կրկնում ենք 2019 հունվարին), փոխարենը հնչում են բարենաղթանքներ և մոզական բանաձևեր հիշեցնող խոստումներ:

Ինչդես հայտնի է (հիշենք Հարող Լասվելլի դասական դարձած տեսությունը),¹⁷ քաղաքական դիսկուրսում հիմնական միՖը ղիտի ամրաղնդված լինի նաև ոացիոնալ դոկտրինայով, ինչի կառուցման անգամ փորձը այս ղահին տեսանելի չէ: Ինչդես հատուկ է հեղափոխական շրջանին, ուտողիան և երագանքը փոխարինում են անելիքների և գործողությունների ծրագրին: Հատկանշական է վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթի եզրափակիչ դրույթը կառավարության ծրագիրը խորհրդարանին ներկայացնելիս.

Հայաստանի քաղաքացիների, հայ ժողովրդի իրականացրած թավշյա հեղափոխությունն ընդլայնել է մարդկային հնարավորությունների սահմանը, և սա իրականությունն դարձնել շատերը, եթե ոչ բոլորը համարում էին անհնար: Մենք ունենք դրել անհավանական և անհնարինը իրականություն դարձնելու ծանադարհի վրա և այդ ծանադարհով քայլելու ենք անշեղորեն, քայլելու ենք վստահ, քայլելու ենք մինչև վերջ: [...] Այո՛, սա երազանքների ծրագիր է և երազանքների երկիր ունենալու ծրագիր է: Սա մեր կառավարության գործունեության ամենակարևոր կողմն է:¹⁸

Առաստիվը դառնում է քաղաքական բանաձև, ուստի և անհնարինը դառնում է հնարավոր: Քանի որ դա շատ ավելի նման է բանաստեղծական դիսկուրսին, տեղին է հիշել Ալեքսանդր Բլոկին. «Невозможное было возможным, / Но возможное было мечтой»: Անհնարինին ձգտելու ցանկությունը կարող է և կործանարար լինել իրականի ու հնարավորի համար:

Երազանքներին և իղձերին մվիրված են եղել և մախորդ ղեկավարի անուշադրությամբ մատնված 2013 մախրընտրական ծրագրի ամփոփիչ դրույթները, այլ բան, որ ի տարբերություն Փաշինյանի ասածների, որևէ մեկը դրանք հազիվ թե կարդացած լինեն, իսկ եթե և գտնվեր ընթերցող, ադա արդարացիորեն կդասեր մախրընտրական հեքիաթների ժանրին.

Բացվող ամեն մոր օր Հայաստանում դետք է տարբերվի մախորդից՝ լինի ավելի լավը: Ադահով Հայաստանում յուրաքանչյուրս դետք է կարողանա իրականացնել իր երազանքները, կյանքի կոչել անձնական, ընտանեկան և ազգային մդատակները՝ անցյալում թողնելով արատավոր երևույթները՝ արտոմյալների դասը, մենաշնորհներն ու ամենաթողությունը:¹⁹

Բարի ցանկությունները բավարար չեն արմատական փոփոխություններ իրականացնելու համար, ուստի և այս դահին չկա որևէ երաշխիք, բացի, իհարկե, մույն բարի ցանկություններից, որ թավշյա հեղափոխության արդյունքում հնարավոր է լինելու կազմաբանդել արմատավորված ֆեոդալական ավտորիտարիզմը: Ավելին՝ հենց ուտոդիստական, իրականությունից կտրված հեղափոխական տրամադրությամբ կառավարվող քաղաքանությունը տարունակում է լրացուցիչ վտանգներ, որոնց լրջությունը արտահայտվելու է հաջորդ փուլում. «Цена, которую приходится платить за утопии, обнаруживается лишь на следующем этапе» (Յուրի Լոտման): Հաշվի առնելով ՀՀ երրորդ մախագահի փորձը և մրա երազանքների ու իղձերի վրա հիմնված ծրագիրը՝ հեքիաթն ու առաստիվը կարող են հավակնել դառնալ քաղաքական զարգացման կադադար, բայց դժվար թե դառնան իրականություն:

8. Մինչ օրս, մինչ 2018 թ. Հայաստանը բնութագրելիս, հետագոտողները մշում էին մրա միջանկյալ տեղը հետխորհրդային և հետկոմունիստական երկրների շարքում՝ կոնսուլիդացված ժողովրդավարական և կոնսուլիդացված ավտորիտար ռեժիմների միջև:²⁰ Ըստ Ա. Մելվիլի, Հայաստանը դասվում էր հետագա զարգացման «դրոբլեմные траектории» (проблемные траектории) ունեցող երկրների, իսկ Ն. Ռոզովը՝ անկայուն և ընդհատվող ռեժիմների (режимы с прерывистой и неустойчивой динамикой) թվին:²¹ Դա ենթադրում է տարբեր զարգացումների հնարավորություն:

«Թավշյա հեղափոխությունը» աղացուցեց, որ հայկական սերժսարգսյանական տիոյի ավտորիտարիզմը այդոյես էլ չհասավ կոնսոլիդացված ձևին: Դենց անվանուով հայտարարվեց նոյատակը՝ հասնել արևելաեվրոոյական տիոյի կոնսոլիդացված ժողովրդավարոյան: Սակայն դա ցանկոյուններից բացի, ենթադրուով է հանակարգային ինստիտուցիոնալ փոփոխոյուններ, նախ և առաջ, սահմանադրական փոփոխոյունների տեսքով:

Բավականին ոյրբլենատիկ է թվուով ժողովրդավարոյան անրաոյնդան հնարավորոյունն առանց դրա ինստիտուցիոնալ հիմքերի՝ այոյես կոչված աննիջական, կամ ուղիղ ժողովրդավարոյան տեսքով, ոյահոյանելով գործող վարչաոյետի աննի շուրջը գերկենտրոնացած կառավարման հանակարգը: Այլաոյես, նման ծրագրի բացակայոյան դեոյուն, ինչոյես և խանախ է հանդիոյում, վերջնական հանգրվանի անորոշոյունը քողարկվուով է անհնարին նոյատակներին հասնելու հեղափոխական ոյաթոսով: «Դեոյի Արևն էին գնուով անբոխները խելագարված...»՝ դա է սովորաբար լինուով անորոշ ուղեգծի նոյատակադրուով:

Անփոփելով կանխատեսելի նախադրյալները՝ հնարավոր է ակնկալել և լուրջ փոփոխոյուններ: Վերլուծաբանները ավտորիտարիզմի հայկական մողելը բնութագրուով էին որոյես անորոշ, քանի որ չկոնսոլիդացված ավտորիտար հանակարգը կարող էր գարգանալ թե՛ դեոյի ժողովրդավարոյուն, թե՛ բոնաոյետոյուն տանող ճանաոյարիով: «Թավշյա հեղափոխոյան»՝ այս ոյահին գլխավոր ձեռքբերուով այն է, որ այն կանխեց ավտորիտար հանակարգի ավարտուով և վերջնական տեսքի տանող գործընթացը: Սակայն դա չբացառեց ավտորիտարիզմի վերակենդանացուով այլ կերոյարանքով, օրինակ՝ երբ բյուրոկրատ սարդարին փոխարինելու է գալու անենակարող ոյրոյլիստ առաջնորդը:

Սակայն իրական է և մյուս հնարավորոյունը. օգտագործելով իշխանական լծակները՝ կարծածանկետ բովանդակային և հստակ ոյատասխանատվոյուն ենթադրող ծրագրի հիման վրա կատարել անիրաժեշտ քայլեր՝ արմատախիլ անելով էլեկտորալ Ֆեոդալիզմի ինստիտուցիոնալ հիմքերը և այն սնող բանախյուսական գաղափարախոսոյունը: Իսկ եթե կոնկրետ նոյատակների փոխարեն առաջարկվելու է անհնարինը, աոյա հանուով է նույն այլընտրանքը: Առանց արմատական սահմանադրական փոփոխոյունների և անհետաձգելի լուրջ քաղաքական և տնտեսական փոփոխոյունների, *թոյիչքի* գաղափարը, ինչոյես և նախկինուով, փոխարինվելու է *երկար ու դժվարին ճանաոյարիի* հասկացոյթով:

Երկու հնարավորոյունները այժմ առկա են, սակայն հայկական քաղաքական միտքը դեռ չի ձևակերոյել անիրաժեշտ գործողոյունների և գարգացուովների հանրային օրակարգը, և այս ոյայնաներուով ավելի իրատեսական են հողտեսական կանխատեսուովները: Կարծես, ինչոյես դա ավանդական է դարձել հայոց ոյատմոյան հանար, Դայաստանի հետագա գարգացման ուղեգիծը մնուով է անորոշ.

Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար՝
Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար,
Հին դարերից մինչև այս հանձարեղ ներկան...

(Ե. Չարենց, «Պատմության քառուղիներով»)

- 1 Հետազոտությունն իրականացվել է Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի աջակցությամբ՝ Ռուսաստանի դաշնային հանրապետության Կրթության և գիտության նախարարության «Ազգային մշակույթը որդես զարգացման ռազմավարական ռեսուրս. արդիության դաստիարակումը և մարտահրավերները (հայերի և հայկականության օրինակով)» ծրագրի շրջանակներում:
- 2 Niklas Luhmann, *Introduction to Systems Theory* (Polity Press, 2012):
- 3 Հմմտ. «Система, прошедшая через стадию самоописания, подвергается изменениям: она приписывает себе четкие границы и значительно более высокую степень унификации. Однако отделить самописание от предшествующего ему состояния можно только теоретически. На самом деле оба эти уровня непрерывно влияют друг на друга. Так, самописание культуры делает границу фактом ее самосознания. Момент самосознания придает границам культур определенность, включение же в этот процесс государственно-политических соображений неоднократно придавало ему драматический характер». Юрий Лотман, *Культура и взрыв* (Москва: Гнозис, 1992), էջ 147:
- 4 Այս հարցին մեք անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներում, տե՛ս Սուրեն Չոյյան, «Արևմտյան ժողովրդավարության իմաստաստները և հայկական իրողությունները», *Հայաստանը Եվրոպայի ծանաթարհից*, Աշոտ Ոսկանյան (խմբ.) (Երևան: Անտարես, 2005), էջ 157-172; Տյրեն Զոլյան, «Институты западной демократии и армянские реалии», *Сравнительное конституционное право*, Институт права и публичной политики, հ. 59, թիվ 2 (2007), էջ 129-135:
- 5 Հմմտ. «This promise of a “Great Society” is true to the West’s philosophy of history, which is essentially a secular adaptation of an eschatology of salvation. Marxism was only a rival version of this eschatological vision of history. That is why the collapse of the Soviet Union, while it clearly demonstrated the insanity of believing in “laws of history,” was nevertheless interpreted as the sign of the universal and lasting triumph of market forces, that is, again, as an expression of the laws of history, and even, for the most enthusiastic, as the “end of history”». Alain Supiot, «The Public-Private Relation in the Context of Today’s Refeudalization», *International Journal of Constitutional Law*, հ. 11, թիվ 1 (2013), էջ 133, <https://doi.org/10.1093/icon/mos050>, այց՝ 1.11.2019:
- 6 Հմմտ. «What we may be witnessing is not just the end of the Cold War, or the passing of a particular period of postwar history, but the end of history as such: that is, the end point of mankind’s ideological evolution and the universalization of Western liberal democracy as the final form of human government.» Francis Fukuyama, «The End of History?», *The National Interest*, հ. 16 (1989), էջ 3-18:
- 7 Հմմտ. «Идеалом бинарных систем является полное уничтожение всего уже существующего как запятнанного неисправимыми пороками. Цена, которую приходится платить за утопии, обнаруживается лишь на следующем этапе. Характерная черта взрывных моментов в бинарных системах — их переживание себя как уникального, ни с чем не сравнимого момента во всей истории человечества. Отмененным объявляется не какой-либо конкретный пласт исторического развития, а само существование истории. В идеале — это апокалиптическое «времени больше не будет», а в практической реализации — слова, которыми Салтыков завершает свою «Историю одного города». Лотман, «История прекратила течение свое», *Статьи по семиотике и типологии культуры*, т. 1, (Таллин: Александра, 1992):
- 8 Հմմտ. «Центральное для этой субдисциплины понятие транзита объединяет любые по форме и содержанию процессы перехода от прежнего, недемократического, состояния к иному. Да, в течение двух с лишним десятилетий развития транзитологии в качестве конечного результата «перехода» обычно постулировалась та или иная разновидность демократического устройства, тогда как действительность показала, этот результат редко достижим... Теперь, когда после краха коммунизма прошло двадцать лет и упомянутые выше тенденции развития посткоммунистических режимов устоялись, можно было бы прийти к некоторым

согласованным выводам по данной проблематике. Следовало бы, например, признать, что теории, предсказывавшие быстрый переход посткоммунистического мира к демократии в результате кропотливой работы посткоммунистических элит над конституциями, оказались просто неверными, и не только в постсоветском контексте, но и вообще». Стивен Хэнсон, «Эволюция постсоветских режимов», *Pro et Contra*, h. 15, № 5 (2011), т. 106 :

9 Хэнсон, «Эволюция постсоветских режимов», т. 111:

10 Зұлұл. «Конец истории» по Фрэнсису Фукуяме не наступил, но гегельянская идея моральной и политической победы либеральной демократии оказалась не совсем беспочвенной: авторитарные режимы в большинстве своем стали притворяться демократиями, и лишь немногие мировые изгои открыто отвергают принцип народовластия, сменяемость власти, необходимость защиты свобод, прав и достоинства граждан. Вследствие этой мимикрии появились всевозможные «имитационные», «суверенные», «контролируемые» и прочие «демократии», которые теперь принято называть гибридными режимами, подразделяя их, в свою очередь, на персоналистские, партийные и военные («хунты»): Николай Розов, «Динамика гибридных режимов и устойчивость/хрупкость неототалитаризма», *Полития*, h. 88, № 1 (2018), т. 31:


11 Зұлұл. «Возвращаясь к вопросу о режимных «гибридах» и «демократиях с прилагательными», стоит отметить, что проблема здесь, скорее всего, не в атрибутивных характеристиках и свойствах («управляемая», «делегативная», «электоральная», «авторитарная»), а в самом предикате «демократия». Действительно, если в подавляющем большинстве случаев мы имеем дело не с «переходными», а с уже вполне состоявшимися, консолидированными (хотя и недостаточно институализированными) недемократическими режимами – т. е. неоавторитарными – то и концептуализировать их нужно в иной – недемократической – понятийной рамке. Отсюда следует, что в фокусе анализа должны быть не те или иные «прилагательные» к «демократии», а сам предмет (предикат), который, строго говоря, вовсе не является демократией. Но раз так, то важнейшей задачей политической компаративистики становится типологизация современных недемократий, т. е. автократических режимов нового типа». Андрей Мельвил, «Демократические транзиты», *Политология: Лексикон* (Москва: Российская политическая энциклопедия, РОССПЭН, 2007), т. 123-134:

12 Зұлұл. «The notion of a “re-feudalization” of law, [...] not mean a return to the Middle Ages, but the reemergence of a legal structure which the birth of the nation-state had rendered obsolete»: Supiot, «The Public-Private Relation in the Context of Today’s Refeudalization», т. 138:

13 Зұлұл. «A post-democratic society therefore is one that continues to have and to use all the institutions of democracy, but in which they increasingly become a formal shell. The energy and innovative drive pass away from the democratic arena and into small circles of a politico-economic elite»: Colin Crouch, “Five Minutes with Colin Crouch,” *European Politics and Policy* (blog), February 9, 2013, <http://bit.ly/11V0Tg6>, wjg` 1.11.2019; un`u ўлw` Colin Crouch, *Post-Democracy* (Oxford: Polity Press, 2004), т. 144:

14 «Drawing on a substantive connection between liberalism and feudalism, I argue that in spite of a nominal commitment to democracy, the American political system is not substantively democratic. On the contrary, the increasing commitment to neoliberal ideology over the past 30 years is having the effect of establishing a private government, one that is strikingly similar to feudalism, where the few rule the many in the interests of the few and status arrives via consumption and market connections. Furthermore, the internationalization of the American politico-economic model, largely via transnational corporations, promises the extension of this New Feudalism throughout the world. Despite the claims that “liberal democracy” promises the end to history, in other words, the future of democracy looks particularly bleak». Tim Duvall, «The New Feudalism: Globalization, the Market, and the Great Chain of Consumption», *New Political Science*, h. 25, № 1 (2003), т. 81, <https://doi.org/10.1080/0739314032000071244>, wjg` 1.11.2019:

- 15 Յնն. «There is a problem for both democracy and the market economy. If political issues, major questions are increasingly treated within corporation it is a privatization of politics. It's not just privatized Keynesianism, it is privatized politics which is a return to the Middle Ages»: Crouch, *Post-Democracy*, էջ 144:
- 16 Տրեն Յոլյան, «Это сладкое слово: “стабильность”. Армения в 2004 году», *Кавказ. Ежегодник Кавказского института СММ* (Երվան, 2006), էջ 87-103; Տրեն Յոլյան, «Армения в 2008 году – феодальная демократия или демократический феодализм?», *Кавказ 2008. Ежегодник института Кавказа* (Երվան, 2010), էջ 24-42; Suren Zolyan, «Feudal Democracy or Democratic Feudalism: Armenia in 2008», *Identities, Ideologies and Institutions. A Decade of Insight into the Caucasus 2001–2011*, Alexander Iskandaryan (խմբ.) (Yerevan: Caucasus Institute, 2011), էջ 32-47:
- 17 Harold Lasswell, «The Language of Power», *Language of Politics: Studies in Quantitative Semantics*, David Kaplan, Harold D. Lasswell, Nathan Leites and Associates (խմբ.) (New York: George W. Stewart, 1949), էջ 3-19:
- 18 Նիկոլ Փաշինյան, «Փաշինյանը ՅՅԿ-ին հասկացրեց՝ ձեր լավության կարիքը չունենք», <https://armeniasputnik.am/politics/20180607/12521831/armenia-pashinyan.html>, այց՝ 9.05.2019:
- 19 Սերժ Սարգսյան, «Դեմի ադաիսի Յայաստան. նախընտրական ծրագիր», http://www.hhk.am/u_files/file/election-programm-2013-en.pdf/, այց՝ 9.5.2019:
- 20 Յոլյան, «Это сладкое слово «стабильность» – Армения в 2004 году», էջ 87 -88; *Факторы режимных трансформаций и типы государственной состоятельности в посткоммунистических странах*, Д. Мельвиль, Д. Стукал, М. Миронюк (խմբ.) (Москва: ВШЭ, 2011), էջ 35:
- 21 Քոզով, «Динамика гибридных режимов и устойчивость/хрупкость неототалитаризма», էջ 42:



ԱՐԹՈՒՐ
ՄԿՐՏԻՉՅԱՆ

«ՈՉ ՊԱՏԵՐԱԶՄ,
ՈՉ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ»
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ՈՐՊԵՍ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ
ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՄՈՂԵԼ



այաստանյան հասարակական կյանքի տարբեր կողմերի սոցիոլոգիական հետազոտությունները փաստում են, որ մեզանում լայնորեն կիրառվող «անցումային հասարակություն» եզրույթը չունի մեթոդաբանական դիտարկումներ, առավելապես գործածվում է որպես առաստելաբանական բանաձև (միֆոլոգեմ): Իսկ «միֆերի որսը» (Լորբերտ Էլիաս) սոցիոլոգիայի հիմնական գործառույթներից է:

Անցումը կարելի է դասակարգել որպես մի կետից մյուս կետը տանող ճանապարհ: Բայց արդեն շուրջ քսան տարի է մեր հասարակությունը ոչ մի տեղ չի գնում: Հասարակական համակարգը գործառնում է նույն որակի սահմաններում՝ ծայրանաս լինելով ժամանակակից կառիտալիստական աշխարհի համակարգի, որում ադրանքաիրային հարաբերությունները գերակշռում են կենսասոցիալական հարաբերությունների նկատմամբ:¹ Անցումը «երկրորդ աշխարհից» դեռի «երրորդ աշխարհ» ավարտված է և դարձ է, որ կառիտալիստական հասարակության կառուցման անցումային շրջանը ուղեկցվել է զուտ մարդկային և մյուսականի բախումով, տեղային ավանդական և գլոբալ ֆորմալ արժեքների կոնֆլիկտով, որը դրսևորվում էր անցումային շրջանի յուրահատուկ քննախոսության (discourse), ՉԼՄ-ների և արվեստի ստեղծագործությունների մեջ: Հետխորհրդային հայ մարդը կամա-ակամա ներառվել է սոցիալական մոր հարաբերությունների մեջ, որոնց դեռքում նրա կաղը հասարակության հետ միջնորդավորող ինստիտուտները և խմբերը կորցրել են իրենց նախկին կարգավորող գործառույթը: Գլոբալացման ազդեցության ներքո աճող անհատականացումը մարդկանց վարքը դուրս է բերել կոլեկտիվ բարոյական վերահսկողության, հին սոցիալական նորմերի, կարծրատիպերի, ավանդույթների կարգավորման շրջանակներից: Այդ առումով հասարակական կյանքին բնորոշ են հատուկ *անմիայի* գծեր, որոնք այս կամ այն չափով բնորոշ են նաև այլ հետխորհրդային երկրներին:

Այդ անոմիան կարելի է սահմանել որպես «ցանկացած հասարակական ինդուլսի նկատմամբ լիակատար անտարբերություն՝ անկախ նրա դրական կամ բացասական ուղղվածությունից»:² Սոցիալական վարքը կանոնակարգող հին ավանդույթները, սովորույթները, կարծրատիպերը կորցրել են իրենց գործնական նշանակությունը և անձի նկատմամբ ազդեցությունը: Հասարակական կյանքի անհատականացումը մարդկանց դուրս է բերել կոլեկտիվ բարոյական վերահսկողության շրջանակներից: Խորհրդային ամբողջատիրական համակարգի քայքայումը շնչեց կոլեկտիվ էթիկայի վերահսկողության ուժով հաստատված բարոյական նախորդ սահմանները:³ Դրամամյութական հաջողությունը դարձել է գլխավոր նմատակ, անձնական բարեկեցության կարևորագույն ցուցանիշ: Բայց մարդիկ լուրջաբար ընդունված միջոցներով չեն կարողանում հասնել այդ նմատակին: Որպես հետևանք կտրուկ աճել է հասարակության կառուցվածքային անկայունությունը և անընդհատ վերարտադրվող չափորոշիչների անորոշությունը, որի հիմքն այն է, որ մեր կյանքի տնտեսական դրվածքը արագացված տեմպերով է փոփոխվում, իսկ նրա արժե-

քանորմատիվային կանոնակարգվածությունը մարդկային գործոնի թերագնահատման դատաճառով հետ է մնում: Մշակութային ենթատեքստով հանձնարարվող հանընդհանուր նյութատակների և դրանց հասնելու օրինական իմաստիտուցիոնալ միջոցների, առկա դասակարգմանների և դրանց բավարարման իրական հնարավորությունների միջև առաջացող հակասություններից ծնվում է բնակչության լայն զանգվածներն ընդգրկող անոմիա, որի չափերը մեր հասարակությունում առանձնադեպ մեծ են: Մեզանում հոշակված մշակութային արժեքների համակարգը գերագնահատում է բոլորի համար մշակակալից նյութատակը, բայց ծայրամասային երկրի սոցիալական համակարգը հասարակության զգալի զանգվածի համար սահմանափակում կամ բոլորովին փակում է այդ նյութատակներին հասնելու իմաստիտուցիոնալ ուղիները: Մշակութային կառուցվածքի այս երկու տարրերը փոխկադակցված են, և դրանց անհամաձայնության աստիճանի չափից ավել մեծացման ժամանակ առաջանում է մշակութային կոնֆլիկտ, երբ մարդիկ տարբեր կերպ են շեշտադրում նյութատակները և այդ նյութատակներին հասնելու միջոցները:⁴ Մյուս կողմից էլ դատերագմի վերսկսման վտանգն է մշտական անկայունություն առաջացնում, այլ գործոնների հետ փոխազդելով զրկում է մարդկանց անձնական բարեկեցության հնարավորությունից: Անգամ, եթե հայ հասարակության անդամների միջև առկա է նյութատակների միասնություն կամ ընդհանուր ճանաչում, հասարակական կյանքում տեղ գտած բարոյաիրավական նորմերի և դրանց իրականացման իրական հնարավորությունների բացակայությունը հանգեցնում է անոմիային հարմարվելու անհրաժեշտության:

Հայաստանը, գտնվելով Հարավային Կովկասի տարածաշրջանում, զլոբալիզացման հետ մեկտեղ և շատ ավելի ամուր կադակածությամբ ներքաշված է նաև տարածաշրջանի երկրներին հատուկ գործընթացների մեջ: «Ոչ դատերագմ, ոչ խաղաղություն» անոմիի իրավիճակը բնութագրում է այդ գործընթացների շրջանակը, ուստի և հարավկովկասյան հասարակություններին բնորոշ զծերը արտահայտում է «ոչ դատերագմ, ոչ խաղաղություն հասարակություն» հայեցակարգը: Այդ հայեցակարգը հարավկովկասյան երկրներում հասարակական կյանքի վիճակի սոցիոլոգիական ախտորոշումն է:⁵ Ուստի և հարց է առաջանում. ինչքանով են իրական եվրոպական հեռանկարները մնան հասարակությունների համար, որտեղ ժողովրդավարացման գործընթացները սկզբունքորեն այլ ձևով են ընթացնում, քան ասենք Արևելյան Եվրոպայի հետսոցիալիստական երկրներում:

Պատերազմները հարավկովկասյան տարածաշրջանում (ղարաբալյան, վրաց-օսական զինված հակամարտություններ) որդես այդդիսիք *de jure* դեռ ավարտված չեն, սակայն բավականաչափ երկար ժամանակ զինադադար է: Այս դրամաններում հարավկովկասյան հասարակությունները մի կողմից՝ դասիդանում են ռազմականացման (միլիտարիզացման) հարաբերականորեն բարձր մակարդակ, մյուս կողմից՝ փորձում են հաղթահարել ռազմական դրության հրամայականները և լուծել սոցիալ-տնտեսական զարգացման և ժողովրդավարացման միանգամայն խաղաղ հիմնախնդիրները: Բայց «ստեղծված»

ուղղված հակամարտությունների դադարեցումը հասարակության մեջ առկա է մշտական լարվածություն և ուղղված հակամարտության վերսկսման հավանականություն:

«Ոչ ղայտերազմ, ոչ խաղաղություն հասարակություններում» և՛ տնտեսության ազատականացումը, և՛ քաղաքականության ժողովրդավարացումը ենթակա են միլիտարիզացման հրամայականներին, արտադրության միջոցների սեփականաշնորհումը չի հանգեցրել ազատ մրցակցության հակամենաշնորհային ռեժիմի հաստատմանը, իսկ կառավարման ժողովրդավարական ձևերի ինստիտուցիոնալացումը չի վերացրել ավտորիտար վարչակարգերը: Հասարակական կյանքի միլիտարիզացումը դրսևորվում է ոչ միայն բյուջետային ուղղված ծախսերի հարաբերական մեծ չափերի, այլ նաև ուղղված հրամայականներին տնտեսության, գիտության, կրթության և երիտասարդների դաստիարակության, քաղաքական կառույցների և ղրակտիկաների, ՉԼՄ-ների քարոզչության, անգամ մորաձևության (տարածվում է գիմվորական ոճի հագուստը) ենթակայության տեսքով: Հասարակությունը ստիպված է մարդկանց բարեկեցության համար անհրաժեշտ սակավաթիվ ռեսուրսների զգալի մասը ծախսել ուղղված մոտակների համար, ինչի հետևանքով մեծանում է հասարակական բարիքից մարդկանց օտարված լինելու չափը:

Սոցիոլոգիայի տեսանկյունից նման հասարակություններում բացակայում են բավարար դայնամներ սուբյեկտների միջև հորիզոնական հարաբերությունների արդյունավետ գործառնության համար: Դա ձևավորում է «ոչ ղայտերազմ, ոչ խաղաղություն հասարակությունների» տարբերակիչ առանձնահատկություններից մեկը՝ չկայացած անցում ուղղահայաց կառույցի գերակշռումից հորիզոնական կառույցի գերակայության: Հետևաբար, իրականում չեն գործում նաև տնտեսության կարգավորման շուկայական մեխանիզմները: Իսկ «ոչ կանոնադրական» նախաձեռնությունները տեղ են բացում քրեական բնույթի ստվերային գործընթացների համար: Հաղորդակցման համակարգում ազդակները վերածվում են իշխանության կենտրոնական ատյանի հրահանգների, հաղորդակցությունը ենթարկվում է ուղղակի վերահսկմանը, քաղաքական սեմանտիկան տեղավորվում է առաջնորդ-հետևորդ բնույթի ղարզունակ շաբլոններում: «Ոչ ղայտերազմ, ոչ խաղաղություն հասարակություններում» իրականանում է հորիզոնական կառուցվածքի յուրահատկությունների տարրալուծում ուղղահայաց կառուցվածքում և ձևավորվում է *կառուցվածքային ավտորիտարիզմ*: Մյուս կողմից՝ «ոչ ղայտերազմ, ոչ խաղաղություն» դայնամներում հասարակական գիտակցությունն իր հերթին անկայունության և վտանգվածության վերացումը դայնամավորում է «ուժեղ ձեռքի իշխանություն» միջոցներով: Ուստիև քաղաքական առաջնորդի փոփոխությունը չի վերացնում այդ ավտորիտարիզմը, լավագույն դեպքում ձևավորվում է ավտորիտար ժողովրդավարության ռեժիմ:

Ավելին, այդ հասարակությունների քաղաքականացումը անխուսափելիորեն ուղեկցվում է միլիտարիզացմամբ, երբ հասարակության ներքին ինքնակազմակերպման համատեքստում տեղ է գտնում սոցիալական հարաբերությունների

վերակառուցումը զինվորական աստիճանակարգության համակերպով (like): Սոցիալ-քաղաքական հարաբերությունները ձևավորվում են «ոչ ղատերազմ, ոչ խաղաղություն հասարակությունների» օբյեկտիվ լայնամեծերին համադատասխան, որոնց բնորոշ են հնարավոր ռազմական-մոբիլիզացիոն խնդիրների սրացված սղասումներ: Մոբիլիզացումը դառնում է «ոչ ղատերազմ, ոչ խաղաղություն հասարակություններին» բնորոշ տարբերակիչ հատկանիշ, և նրանց գարգացումը ժողովրդավարացման ուղղությամբ իրականացվում է ոչ մասնակցային, այլ *մոբիլիզացիոն դեմոկրատիայի* հաստատման միջոցով, որի ինստիտուտները ձևավորվում են հենց ռազմական-մոբիլիզացիոն սղասումների հաշվառումով:⁶ Այդ ղատձառով «ոչ ղատերազմ, ոչ խաղաղություն հասարակություններում» բանակի ազդեցությունը հասարակական կյանքի վրա իսկաղես մեծ է:

Ճգնաձամայնությունը՝ որղես «ոչ ղատերազմ, ոչ խաղաղություն հասարակություններին» բնորոշ հատկանիշ, և գլոբալացումը գործում են տեղական ինքնակառավարման և ժողովրդավարական ենթակայության սկզբունքներին ընդդեմ՝ մվազեցմելով ժողովրդավարական ինստիտուտների մկատմամբ սոցիալական վստահության մակարղակը: Հասարակական գիտակցությունը քիչ է կարևորում ժողովրդավարական գերաղատվությունները, հասարակական կարծիքի ինստիտուտը գործում է քաոսի ռեժիմում և բնորոշվում է մեծ շարժունությամբ: Նման ղայնամներում ղետական կառավարման համակարգը անարղյունավետ է դառնում, ղետական ղաշտոնյաների շղջանում ահոելի շափերի է հասնում կոռուղցիան: Վստահությունը՝ որղես սոցիալական կաղիտալ, սոցիալական համերաշխության հիմքն է, իսկ եղե հասարակությունում շկա համերաշխություն, եղե քաղաքացիները շեն մույնականացնում իրենց ղետության հետ, աղա վտանգվում է երկրի ազգային անվտանգությունը: Այդ ղատձառով ղետությունն ինքնորոշվում է առավելաղես որղես ղաշտղանողական ատյան, որն իրեն վերաղահում է բոնության կիրառման բացաղիկ իրավունք՝ հանում ազգային անվտանգության և հասարակական կարգի կայունության ղահղանման: Այղղիսի իրավիձակում հասարակական կյանքի արժեքային կարգավորումը իրականացվում է ռազմի դաշտից բերված ուձային ղրակտիկաների միջոցով: Հասարակական հիմնախնդիրների լուծման համար այդ ուձային ղրակտիկաների կիրառումը հանգեցնում է հասարակական գիտակցության ռազմականացմանը և վարչահրամայական ղետական համակարգի ձևավորմանը: Չի բացաղվում անգամ այսղես կղշված «անցումային արղարաղատության» կիրառումը:

Հիրավի, ավտորիտար վարչակարգի գոյությունը մեծաղես ղայնամավորված է ղատերազմի վերսկսման վտանգով: ՀՀ վարչաղետին լայն լիազորղյուններ տաղու կողմնակիցները հիմնականում հենց այդ վտանգի հանգամանքով են փաստարկում իրենց տեսակետը՝ գտնելով որ Հայաստանին «ուձեղ» իշխանղյուն է ղետը: Սակայն, եղե հասարակղյունը «ոչ ղատերազմ, ոչ խաղաղղյուն» իրավիձակում է, որում կղլեկտիվ համերաշխղյան թղլացման հետ մեկտեղ դիտարկվում են հասարակղյան հետ անձմական մույնակա-

նացման կորուստն ու անհատի քաղաքացիական ակտիվության նվազումը, ադա անմիջադեպ տեղի է ունենում հասարակական կյանքում սոցիալական վարքի անորոշության մեծացում, որն ակներև է նաև կառավարման ոլորտում:

«Ոչ ղատերագմ, ոչ խաղաղություն հասարակությանը» բնորոշ կառավարման սկզբունքները խոչընդոտում են քաղաքացիական հասարակության կայացմանը: Նոր նորմերի և փոխհարաբերությունների բարդ համակարգը դեռ ինստիտուցիոնալացվում է սոցիալական կյանքի հիմն մեխանիզմներով՝ ամուսնաընտանեկան, ընկերական և այլ ինստիտուտների կողմից, որոնց միջոցով հասարակությունը «մեխանիկական համերաշխության» մակարդակում կարգավորում ու լեզիտիմացնում է մարդկանց փոխհարաբերությունները: Ամձնական ադախոփության աստիճանը «ոչ ղատերագմ, ոչ խաղաղություն հասարակություններում» որդես կանոն ծայրահեղ ցածր է. առանձին անձի եզակիությունն ու արժանադատությունը քիչ է գնահատվում: Քաղաքացիները չունեն հոգեբանական վստահության լիարժեք զգացում, ձևավորվում է վախի բարդություն: Դա բացատրվում է նրանով, որ հետղատերագմյան ժամանակաշրջանում առանձին մարդու արժանադատությունը ցածր է գնահատվում: Դատձառն այն է, որ ղատերագմների ժամանակ, այսինքն՝ «սիստեմատիկ սղանությունների միջոցին, երբ մարդու առաջ աելի քան ցայտուն կերդով ես իր ամբողջ մերկութեամբ բարձրանում է անհատի ոչնչությունը, առհասարակ մարդկային կեանքի արժեքի ոչնչությունը: Կեանքը չի գնահատում բարձր»:⁷ «Ոչ ղատերագմ, ոչ խաղաղություն հասարակություններում» նման վերաբերմունքը շարունակում է բնորոշել հասարակական կյանքի արժեքանորմատիվ կառուցվածքը, ինչը մասնավորադես դրսևորվում է մարդկային գործոնի՝ իբրև հասարակության բարեկեցության հիմնական աղբյուրի թերագնահատմամբ: Անձի արժեքային համակարգը, նրա կողմնորոշումները, հայացքները, նախադատությունները և վարքը դառնում են հակասական: Հին «ղատերագմական» արժեքները և նորները արդեն չեն համադատասխանում իրականությանը, իսկ նորերը դեռևս լիովին չեն ձևավորվել և հաստատվել հասարակական գիտակցության մեջ: Եվ, որդես հետևանք, առաջանում է մարդկանց օտարում քաղաքական որոշումների ընդունման համակարգից, ցածր է բուն քաղաքացիական ակտիվությունը: Փոխարենը կարևորվում է հրադարակում «զանզվածի բանակ» ունեմալու համզամանքը:

Գլոբալացման համատեքստում կարելի է դիտարկել, որ տարածաշրջանում ղատերագմի վերսկսման և հնարավոր դարտության սղառնալիքը օգտագործվում է գերտերությունների կողմից ինչդես մեր, այնդես էլ մյուս հարավկովկասյան դեստությունների քաղաքականության վրա մերագդելու և նրանց ինքնիշխանությունը սահմանափակելու նղատակով, որովհետև հարավկովկասյան բոլոր հանրադեստությունները կախված են գերտերությունների ոագմական աջակցությունից և կարող են շատ բան կորցնել, եթե գերտերությունների ոագմական «չեզոքությունը» խախտվի: Նման դայմաններում առաջանում են մեծ ռիսկեր, և «ոչ ղատերագմ, ոչ խաղաղություն հասարակությունը» յուրօրինակ «ռիսկի հասարակություն» է դառնում: Դոտեմցիալ ռիսկը՝ ադա-

գայի սղառնալիքը, թելադրում է ներկայիս հասարակական գործընթացների բովանդակությունը և անորոշակիացնում սոցիալական սղասումների կառուցվածքը:

Որոշագի այդ անորոշությունը սահմանափակվի թույլատրելի շրջանակներում, անհրաժեշտ է բացառել ոչ միայն անոմիայի առկայությունը, ինչը ենթադրում է համադատասխան նոր բարոյական արժեքների և իրավական նորմերի մշակում և դրանց արմատավորում քաղաքացիների գիտակցության մեջ, այլ նաև ղատերազմների վերսկսման վտանգը: Մի կողմից՝ հարավկովկասյան «ոչ ղատերազմ, ոչ խաղաղություն հասարակությունների» հետագա զարգացման հեռանկարները կաղված են համադատասխան նույնականության ձևավորման հետ, որը կնղատստի քաղաքացիական մշակույթի կայացմանը: Միայն հասարակության անղամների մեջ քաղաքացի-ազգ-ղետություն միասնության ընկալման ձևավորման միջոցով կարելի է միանշանակ դրական վերաբերմունք առաջացնել ազգային ինքնության ու ղետության նկատմամբ և հաղթահարել հասարակական կյանքի անոմիան: Անոմիկ վիճակի հաղթահարման ուղին գաղափարաղատստիարակչական նոր գործընթացների արագ զարգացման, քաղաքացիներին մարղու իրավունքների գաղափարի և «բարոյական անհատականացման» էթիկական արժեքների հետ կաղելու մեջ է: Մյուս կողմից՝ հասարակական կյանքի հետագա ժողովրղավարացումն է, որ հարավկովկասյան ժողովուղներին տամելու է դեղի փոխաղարձ վստահություն և խաղաղություն:

- 1 Տե՛ս Արամայիս Հովսեփյան, *Հասարակական հարաբերությունների վերարտադրության սոցիալ-փիլիսոփայական տրոբլեմները* (Երևան: Երևանի համալսարանի հրատ., 1986), էջ 64-67:
- 2 Жан Тощенко, *Парадоксальный человек* (Москва: Гардарики, 2001), էջ 373:
- 3 Նախկին ամբողջատիրական հասարակարգը կայուն էր, քանզի հասարակական ավանդական կարգերում մարդկային դահանջմունքները բավարարվում էին ավելի հեշտ, որովհետև անհատական նդատակաուղղվածությունը ենթակա էր ամբողջին: Այն դաշտոնադես սահմանափակվում էր կոնունիզմի կառուցման հոչակված հանընդհանուր նդատակներով և հանահավասարեցման սկզբունքով: Իսկ հանադատասխան կոլեկտիվ գիտակցությունն այդ դահանջմունքները դահում էր ցածր մակարդակի վրա, խոչընդոտում «անհատականության» զարգացումը, «անձի» ազատականացումը և խիստ սահմանափակում անհատի՝ տվյալ իրավիճակում ազատ գործելու կարողությունը:
- 4 Տե՛ս Robert Merton, *Social Theory and Social Structure* (New York: Free Press, 1957):
- 5 Այդդիսի հայեցակարգային մոդելի մշակումը ոչ միայն կարևոր կիրառական, այլ նաև մեծ տեսական նշանակություն կունենա, քանզի Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի շատ երկրներ ըստ էության «ոչ դատերագմ, ոչ խաղաղություն հասարակություններ» են և նմանատիղ դայմաններում են լուծում սեփական զարգացման խնդիրները (վառ օրինակ է Իսրայելը):
- 6 Հմնտ. Samuel Huntington, Joan Nelson, *No Easy Choice: Political Participation in Developing Countries* (Harvard University Press, 1976), էջ 2-5:
- 7 Տե՛ս Երվանդ Ֆրանգյան, *Պեսիմիզմի փիլիսոփան* (Երևան: ԼՈՅՍ, 1911), էջ 142:



ՀԱՅԱՍՏԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES



տեսանկյուններ



ԱՆՆԱ
ԺԱՄԱԿՈՉՅԱՆ

ԱՐՓԻ
ՄԱՆՈՒՄՅԱՆ

ՍՈՆԱ
ՄԱՆՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

ԱՆԿՅԱՆ ՏԱԿ¹

ՆԱԽԱԲԱՆ



այաստանի քաղաքացիական հասարակությունը, որի ձևավորման քաղաքականությունները սկիզբ առան 1991-ին երկրի անկախության հռչակումից հետո, քննարկման առարկա դարձավ հետազոտական շրջանակներում դեռևս ուշ իննսումականներից: Իսկ վերջին տարիներին այն (ինքնա)անդրադարձի կարևոր հարցերից է նաև ԴԿ միջավայրի և ակտիվիստական համայնքների շրջանակում:

Երկրի քաղաքական կյանքի տարբեր փուլերում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ղատկերացումները փոփոխություններ են կրել հանրային կյանքում իրենց դերի և ամելիքների, ինչդես նաև գործունեության ղայմանների և հեռանկարների հարցերում: 2018-ի փետրվարից Սոցիոսկոդ ԴԿ-ն ղրոՖեսոր Արմինե Իշխանյանի (Լոնդոնի տնտեսագիտության դղրոց) հետ համագործակցությամբ սկսեց մի ծրագիր, որի նղատակն էր «արծագանքել Դայաստանի քաղաքացիական հասարակության նեղացող տարածքի խնդրին», ինչդես դա սահմանվում էր այդ ժամանակ շատ իրավաղաչատղան ԴԿ ներկայացուցիչների և հանրային շահերի ղաշտղան ակտիվիստների կողմից:

Փետրվար-մարտ ամիսներին մեր կողմից իրականացված 24 Ֆոկոսավորված հարցագղոյցները ողորտի ներկայացուցիչների և հիմնական տեղեկատուների հետ² վկայում էին տագնաղներ, մտահոգություններ և վերլուծություններ, որոնցում արդեն տասը-քսան տարի իշխող ուժի փոփոխությունն իբրև հնարավոր գործընթաց աոհասարակ տեղ չուներ: Այնինչ աղրիլի կեսերից մինչև մայիս Դայաստանի քաղաքական կյանքը շրջաղարծային փոխակերղման ենթարկվեց:

Ընդղիմաղիր կուսակցություններից մեկի և քաղաքացիական դիմաղրական նախածեռնությունների գործողությունները վերածեցին համակարգված «Քայլ արա՛, մերժի՛ր Սերժին» չարժման, որի շուրջ մոբիլիզացված ժողովուղը կարողացավ ճեղքել ավտղրիտարիզմի վերջնական արմատավղրումը երկրում և առանց մարդկային գոհերի հասավ կառավարության փոփոխությանը: Այս փոփոխությունը, որ ինքնանվանվում է որղես թավշյա, ոչ բոնի, բաց ձեռքերի, ժողովրղական, ժողովրղավարական կամ էլ սիրո և համերաշխության, հայկական հեղափոխություն, իր անկանխատեսելիղությամբ հանղերձ հնարավոր դարծավ տարբեր սոցիալական խմբերի մոբիլիզացիայի, այդ թղվում՝ քաղաքացիական հասարակության դիմաղրական խմբերի ինքնակազմակերղման ջանքերղղ: Այս ուսումնասիրղությունը միտղված է քաղաքացիական դիմաղրական խմբերի՝ հեղափոխական գործընթացում ակտիվ ներգրավման հնարավորղությունը քննարկելուն:

ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Քաղաքացիական հասարակղություն ասելղղ մենք հասկանում ենք ղետղության

և տնտեսության միջև ընկած սոցիալական փոխազդեցությունների ոլորտը, որը ներառում է այն ամենը, ինչ վեր է մասնավոր ոլորտից (հատկապես ընտանիքից):³ Այն միավորումների, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական նախաձեռնությունների, սոցիալական շարժումների և հանրային հաղորդակցությունների ոլորտ է:

Այս հետազոտության շրջանակներում մենք խոսում ենք դիմադրական քաղաքացիական հասարակության մասին, որը քաղաքականացված է, իր բնույթով զանցառական կամ առաջադիմական է, միտված է ղախողական ստատուսքվոն խախտելուն, ելնում է հանրության առավելապես ճնշվող, հետադարձ, անտեսված և «անլսված» խմբերի շահերից, միտված է դրանց ղաշտոյանությանն ու հանրային փոփոխությանը: Մեր դիտարկմամբ հենց այս խմբերից շատերն էին, որ *Քաղաքացիական ղայնանագիր* կուսակցության *Իմ քայլը* շարժման հետ միասին Հայկական հեղափոխության ավանգարդ շրջանակը հանդիսացան՝ մյուս խմբերի համար ոգեշնչման մեխանիզմներ ներդնելով և օրինակ դառնալով:

Քաղաքացիական հասարակությունը հեղափոխության անկյան տակ դիտելով՝ մենք օգտվում ենք ժամանակակից սոցիոլոգ Սիդնի Թերոուի կողմից սոցիալական շարժումները և մրցադայքարի քաղաքականությունները ուսումնասիրող տեսամեթոդաբանական շրջանակից, որով շարժումները և հեղափոխական դիմադրությունները վերլուծվում են չորս հիմնական ուղղություններով.⁴

- քաղաքական հնարավորության կառուցվածք (political opportunity structure)
- դայքարի գիմանոցը և դրա կիրառումը տարբեր քաղաքական հնարավորությունների դարազայում (repertoires)
- մոբիլիզացնող կառուցվածքներ (mobilizing structures)
- շրջանակում (framing)

Կիրառելով վերոնշյալ տեսամեթոդաբանական շրջանակը՝ մենք մաս կարևորում ենք շարժումներում և մրցադայքարի քաղաքականություններում մասնակիցների հույզերն ու զգացմունքները հաշվի առնող և ուսումնասիրող սոցիոլոգիական մոտեցումները, որոնք արևմտյան հասարակագիտության մեջ հատկապես արդիական դարձան 1990-ականներից:⁵ Խոսքն այստեղ այն հույզերի մասին է, որոնք շարժման մեջ ներգրավված անհատներին և խմբերին քաղաքական գործող զգալու և շարժման ուսցիոնալ կողմը վերաշրջանակելու հնարավորություն են տալիս, ինչպես օրինակ՝ բարկությունը, հուսահատությունը, արժանադատությունը, հողարտությունը, զգվանքը և վախը՝ ինչ-որ իմաստով ընձեռելով «հուզական/զգացմունքային ազատագրում»:⁶ Ինչպես իր տարբեր աշխատություններում Շանթալ Մուֆն է նշում, հույզերը և կրքերը քաղաքական «մեմբ»-ի ձևավորման հնարավորություն են ընձեռում, ինչպես մաս քաղաքական գաղափարներին ուժ հաղորդում:⁷

Համադրելով այս մոտեցումները՝ մենք քաղաքական հնարավորությունների կառուցվածքում նկատի ենք առնում ինչդեպ լայն հանրության, այնպես էլ քաղաքացիական դիմադրական խմբերի կողմից դրական քաղաքական փոփոխության հանդեպ անհուսության, իշխանությունների հանդեպ զգվածքի և ատելության զգացումների այն դրությունը, որ նշանակալի ազդեցություն ունեցավ հայկական հեղափոխության ծավալման հատկապես վաղ շրջանում: Այսպիսով, հույզերը, ի թիվ այլ համակարգային տարրերի, քաղաքական համակարգը հարցադրող կամ դրան մարտահրավեր նետող խմբերի համար դառնում են արդյունավետ մոբիլիզացիայի հնարավորություն: Այս տեսանկյունից քաղաքական հնարավորությունները՝ զգացումնաբան ետնախորքով հանդերձ, հանրային դիմադրական գործողությունների իրականացման դայնամիկ են: Քաղաքական հնարավորությունների կառուցվածքում ընթացող փոփոխությունները կարևոր դրդադաշնառներ են ստեղծում քաղաքական օրակարգով հանրային դիմադրության համար: Երբ հանրային դիմադրության գործողությունները հիմնվում են սոցիալական ցանցերի վրա և օգտագործում են տարածված մշակութային շրջանակներ, այս գործողությունները կարող են դառնալ երկարատև և արդյունավետ մոյնիսկ ուժեղ իշխանական ճնշումների ներքո:⁹ Երբ այսպիսի դիմադրությունը համակում է ամբողջ հասարակությունը, մենք կարող ենք տեսնել, որ ձևավորվում է մրցադաշնի շրջան: Երբ այդպիսի շրջանը ընդգրկում է ներհակ խմբեր և շերտեր, արդյունքը սովորաբար հեղափոխություն է:⁹

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ՆԱԽԱԳԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր իրականացրած հարցազրույցները հետահայաց վերլուծությունով՝ նախևառաջ դիտարկում ենք, թե որ սոցիալ-քաղաքական դայնամիկներն էին և դրանց ինչպիսի ըմբռնումներն էին, որ ՀԿ գործիչներին և ակտիվիստներին մղեցին մոբիլիզացվել այդ դահլիճի ցածր վստահություն ունեցող քաղաքական ուժի նախաձեռնած գործընթացի շուրջ, որի առաջնորդն ի վերջո փողոցի ճնշման տակ հաջողեց ԱԺ կողմից ընտրվել իբրև վարչապետ:

Սոցիալ-քաղաքական դայնամիկներն, այսպիսով, կարող ենք դիտարկել մի քանի փոխառնչվող հարթություններում՝ *ներքաղաքական միջավայր, քաղաքացիական հասարակության ներքին միջավայր, լարումներ, քաղաքացիական հասարակություն և միջազգային/դոմոր կազմակերպություններ հարաբերություններ:*

Որդես ընդհանուր միտում կարող ենք արձանագրել, որ նախահեղափոխական ներքաղաքական միջավայրը հետազոտության մասնակիցների կողմից դիտարկվում էր ժամանակի իշխանությունների, քաղաքական ընդդիմության և սեփական ուժերի հանդեպ համընդհանուր անվստահության և անհուսության զգացումի համատեքստում:

Ներհաղաքական միջավայր

Հայաստանը այն հետխորհրդային երկրներից է, որտեղ խորհրդային փլուզմանը նախընթաց ազգային ժողովրդավարացման շարժումների վերելք էր, ինչն էլ իր հերթին հանգեցրեց երկրի անկախացմանը և հետխորհրդային իշխանության հաստատմանը: Անկախության հետ նաև Ղարաբաղյան հակամարտություն ժառանգած Հայաստանում ժողովրդավարություն, սակայն, չամրադրվեց: Ժողովրդավարացման առաջին փուլին հաջորդեց հետընթաց և ավտորիտարացման աճ: Անկախ Հայաստանի կարճ՝ համարյա երեսուն տարիներին միայն հատուկեմտ ընտրություններ են, որոնց լեգիտիմությունը կասկածի տակ չի դրվել ընդդիմության կան հանրության կողմից: Իսկ վերջին երկու տասնամյակներին Հայաստանում հաստատվել էր անդարտելի թվացող քաղաքական բուլդոզ, որը, որոշ անհատների փոփոխությամբ հանդերձ, մնում էր անփոփոխելի: Դեռևս 2008-ին Հայաստանի երկրորդ՝ հեռացող նախագահ Ռոբերտ Քոչարյանը (չնայած իր հրադարակային ելույթներում մշում էր, թե չի լուստրաստվում հեռանալ քաղաքականությունից) աջակցեց իր գործակից Սերժ Սարգսյանին դառնալու Հայաստանի երրորդ նախագահ՝ ընդդիմության հուզումների ձեռնման, մարդկային զոհերի և քաղաքական հետադարձումների գնով: Սերժ Սարգսյանին հաջողվեց ևս տասը տարի լուստրացիա իր և իր հեռարան կուսակցության իշխանությունը՝ չունենալով դրա համար հանրային վստահության բավարար լուստրա: Ես իր լուստրոնավարման երկրորդ շրջափուլի ավարտից, այսինքն՝ մոտալուտ լուստրոնաթողությունից առաջ, 2015 թ. նախաձեռնեց սահմանադրական փոփոխություններ, որով երկրում նախագահականից խորհրդարանական կառավարման համակարգի անցում էր տեղի ունենալու: Սա, ինչպես արդարացիորեն անհանգստանում էին Հայաստանի դիմադրական խմբերը, գործող նախագահ Սերժ Սարգսյանի համար երկրի իշխանությունը արդեն վարչապետի կարգավիճակում լուստրացիա եղանակ էր դառնալու: Սեր իրականացրած հետազոտության ընթացքում Սերժ Սարգսյանի՝ որդես մոր ԱԺ կողմից ընտրվելիք վարչապետի թեկնածուի անունը լուստրոնապետ դեռևս չէր հնչել, սակայն դրա մասին ազդարարում էին իր կուսակցից ընկերների ելույթները, ինչպես նաև ընդդիմադիր քաղաքական ուժերի ու դիմադրական քաղաքացիական խմբերի բարձրաձայնումները:

Հետազոտության մասնակիցների կողմից Սարգսյանի՝ որդես վարչապետի լուստրոնավարումը առավելապես ընկալվում էր իբրև ժամանակի իշխանությունների լուստրոնոնական գաղափարախոսության ամրադրման, տնտեսական և մշակութային կադրալուստրացիա, ավտորիտար լուստրացիա առավել կենտրոնացման և այս տեսանկյունից քաղաքացիական հասարակության գործունեության լուստրացիա նեղացման հեռանկար: 2017-2018 թթ. արագորեն ընթացող օրենսդրական փոփոխությունները հարցազրույցի մասնակիցների համար հենց այս դրության իրավական կողմի ամրագրումն էին աղահուսում: Քաղաքացիական հասարակության տարբեր խմբեր հասցնում էին միայն հոռետեսական գնահատականներով արձագանքել մեկը մյուսից բացասական հետևանքներ ենթադրող մորամուծություններին, ինչպիսին էին հատկապես փաստաբանների անկախու-

թյունը խոցելի դարձնող փոփոխությունները տարբեր օրենսգրքերում,¹⁰ կառավարության գործունեության թափանցիկությունը խիստ սահմանափակող փոփոխությունները,¹¹ ինչդեռ նաև ՀԿ-ների մասին օրենքի 2017 թ. փոփոխությունը, որի հետևանքով, օրինակ, գործնականում սահմանափակվեց բնադահողանական ՀԿ-ների կողմից հանրային շահի դաշտումությունը Հայաստանի դատարաններում:

Ինչդեռ ցույց տվեց հետազոտությունը, քաղաքացիական հասարակության գործունեության ներառող դաշտի վրա ազդում և ներքաղաքական բարդ իրադրությունը դայնամավորում էին նաև աճող ռազմականացումը («ազգ-բանակ» կոնցեպտի շուրջ հանրային կյանքի կառուցակցումը) և ռազմահայրենասիրական դիսկուրսի ակտիվ քարոզչությունը ՉԼՄ-ների, կրթության և եկեղեցու ինստիտուտների միջոցով՝ շաղախված քաղաքացիական դիմադրական խմբերի շուրջ նեգատիվ հանրային ընկալումներ ձևավորելու նպատակադրությամբ:

Քաղաքացիական հասարակության տարածքի ներառումը տեղի էր ունենում ընդհանուր առմամբ ֆորմալ ժողովրդավարության և դայնամական ազատ խոսքի հանգամանքներում, որոնք քաղաքացիական հասարակությանը թույլ էին տալիս քննադատել (թեև նեղ հանրային դաշտում) գործող համակարգը՝ մի իմաստով դարձնելով դիմադրական դայնամիկ սոցիալական եներգիան և սահմանափակելով իրական համակարգային փոփոխությունների հնարավորությունը կոնկրետ գործողությունների մակարդակում:

Սակայն քաղաքացիական հասարակության քննադատությունները, տարբեր թե՛մ հարցերի շուրջ քննարկումները, դիմադրական թեկուզև ցաքուցրիվ գործողությունները, դրանց ձեռքբերումները և ձախողումները կարևոր ենք համարում դիտարկել իբրև դայնամիկ փորձի կուտակման և այդ իմաստով [հեղա]փոփոխության տարածքի ընդարձակման քաղաքական դայնամիկներ:

Այդ դայնամիկները հատկապես նշանակալի են դառնում, երբ ժամանակի (իշխող վարչախմբի քաղաքականության հետևանքով թուլացած) ընդդիմությունը քաղաքացիական հասարակության կողմից չի դիտարկվում իբրև իրական քաղաքական փոփոխությունների սուբյեկտ՝ համարվելով նոմինալ կամ գոյություն չունեցող: Ուստի, հենց քաղաքացիական հասարակության դաշտում էր հնարավոր դառնում դիմադրական քաղաքականության գործադրումը և քաղաքական կառուցվածքային փոփոխության դիսկուրսի ձևավորումը: Բայց սա նաև քաղաքացիական հասարակության՝ քաղաքականացման քննադատության առիթ էր՝ ինչդեռ իր ներսում՝ առաքաղաքական (սոցիալական ծառայությունների տրամադրմանը ուղղորդված) ՀԿ ներկայացուցիչների կամ առանձին անհատների կողմից, այնդեռ էլ դոմոր կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում: Վերջիններս քաղաքացիական հասարակությունից ավելի շատ ըմբռնում և զիջումներ, գործող կառավարության հետ կառուցողական համագործակցություն էին ակնկալում:

Ներքին իրադրության համատեքստում կարևոր է դիտարկել, որ բացի արևմտյան

դոնորների այս կամ այն չափով թափանցիկ քաղաքականությունների միջոցով Հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցման ջանքերից, այստեղ վերջին տարիներին նկատվում էր նաև Ռուսաստանի, տեղի խոշոր բիզնես ներկայացուցիչների, ինչպես նաև Պետական ֆինանսական հոսքերի ազդեցությունը՝ այլընտրանքային, վերահսկելի կամ ժամանակի իշխանություններին լոյալ, ղախողանողական օրակարգերի ջատագով քաղաքացիական հասարակություն ձևավորելու առումով: Դիմադրական քաղաքացիական հասարակության շրջանակներից մեր հարցվողները հստակորեն մատնանշում էին, որ այս քաղաքականությունները իրականացվում են RONGO, BONGO, GONGO տիպի ՀԿ-ների միջոցով: Դրանց հզորացումը տեղ էր բացել այնտիպի քաղաքացիական հասարակության ձևավորման կամ ուժեղացման, որը միտված էր հանրության լայն շերտերում ղախողանողական գաղափարախոսության և արժեքների, ղատեր-նախստական բարոյականության, հակաժողովրդավարության և վերահսկող քաղաքականության վերարտադրությանը, ինչպես նաև որոշ խոշոր բիզնես շահերի ղաշտոյանությունը՝ ի հակադրություն հանրային շահերի:

Քաղաքացիական հասարակության ներքին միջավայր. լարումներ

Հետխորհրդային երկրներում, այդ թվում Հայաստանում քաղաքացիական հասարակությունը սկսել է ձևավորվել 1990-ականներից՝ արևմտյան դոնորական աջակցությամբ: Անկախության վաղ շրջանի արևմտյան ֆինանսական աջակցության հիմնական նպատակը ժողովրդավարության առաջխաղացումն էր հետխորհրդային երկրներում:¹² Ժողովրդավարացման և մարդու իրավունքների զարգացման համատեքստում 1990-ականների կեսերից արևմտյան ֆինանսական աջակցությունն ավելի աճեց, բազմազան դարձան նաև աջակցվող թեմաներն ու խնդիրները՝ աղքատության հաղթահարումից մինչև կրթություն՝ սատարելով ընդհանուր առմամբ աղքատաբան և հումանիտար օգնության ուղղվածությունը: Այս շրջանում հայաստանյան քաղաքացիական հասարակությունն արևմտյան դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ բռնեց ինստիտուցիոնալացման և ՀԿ-ացման ճանաղակը:¹³

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը սկսեց ձևավորվել և մինչ օրս զարգանում է արձագանքելով ինչպես տեղի, այնպես էլ գլոբալ (արևմտյան) քաղաքական և տնտեսական գործընթացներին:¹⁴ 2007-2008 թթ. միջազգային տնտեսական ճգնաժամից հետո այդ գործընթացները նոր փոփոխություն կրեցին՝ արևմտյան ժողովրդավար երկրներում ծնելով ներքնաշերտերից եկող (grassroots) հակահամակարգային ղայքարի ինչպես ծախական, այնպես էլ ծայրահեղ աջ շարժումներ: Այսօր էլ արևմտյան ժողովրդավարության ճգնաժամի ղայնաններում քաղաքացիական հասարակության ոլորտը տարբեր երկրներում առերեսվում է բազմաթիվ մարտահրավերների, ինչպես օրինակ ծայրահեղ աջական, ազգայնական քաղաքականությունների ազդեցության և կառավարություններից կախվածության աճի:

Հայաստանի առումով այս գլոբալ ալիքներն ունեցան իրենց անդրադարձերը՝ համադրվելով տեղական՝ 2008 մարտի 1-ի քաղաքական կյանքի ճգնաժամի և դրա հետևանքների հետ: Մի կողմից՝ արևմտյան ներքնաշերտերից եկող շարժումները, մյուս կողմից՝ կուսակցական ընդդիմության սահմանափակումները մեծ ազդակ հանդիսացան Հայաստանում քաղաքացիական դիմադրական շարժումների հետզհետե զարգացման, համակարգայնացման ու հզորագման համար: Երիտասարդական նախաձեռնությունները արդեն 2010-2012-ից սկսեցին հանրայնորեն տեսանելի գործողություններ իրականացնել մայրաքաղաքային միջավայրերում:

Քաղաքացիական հասարակության զարգացման վերջին տասնամյակի փուլը հատկապես կարևոր է ակտիվիստական և դիմադրական խմբերի, նախաձեռնությունների ակտիվ և ինքնազորացնող գործունեության առումով, ՀԿ-ներից դեռի ակտիվիզմ և հակառակը, ինչդեռ մաս քաղաքական կուսակցություններից դեռի ՀԿ-ներ, ակտիվիզմ և հակառակը հոսքերով: Հետխորհրդային երկրների (ինչպես օրինակ Վրաստանի¹⁵ և Ուկրաինայի) փորձը ցույց է տալիս, որ քաղաք(ացի)ական հասարակության և քաղաքական խմբերի ներքին փոխհոսունությունը թույլ է տալիս ակտիվիստներին և ՀԿ-ներին դառնալ քաղաքական լայնաբերուն մոբիլիզացիայի և գաղափարների շրջանակման կարևոր՝ առաջնահերթ օղակներից մեկը (ինչն էլ գործնականում տեղի ունեցավ Հայաստանում 2018-ի գարնանը):

Ինչ վերաբերում է դիմադրական քաղաքացիական հասարակության և դոմորական կազմակերպությունների փոխառնչություններին, առաջնապես նախահեղափոխական շրջանում նկատելի ճեղքվածք էր գոյացել: Գլոբալ տնտեսական քաղաքականությունների բացասական հետևանքները և տեղական կոռուպցիոն իշխանությանն արևմտյան երկրների կամ միջազգային կառույցների կողմից աջակցող դիրքորոշումները վերջին մի քանի տարիներին հանգեցրին նրան, որ ակտիվիստական խմբերը և որոշ ՀԿ-ներ հարցադրում և քննադատում¹⁶ էին նրանց քաղաքականությունները Հայաստանում:

Դեռևս 2013-ին Հայաստանի Մաքսային Սիության անդամ դառնալուց հետո միջազգային (հիմնականում արևմտյան) դոմոր կազմակերպությունների առաջնահերթությունները Հայաստանի և հայաստանյան քաղաքացիական հասարակության հանդեպ տակառոն փոխվեցին, տեղի ունեցան մաս ֆինանսական աջակցության մոտեցումների և կառուցվածքի փոփոխություններ (չնայած դրանք հետագայում սկսեցին վերանայվել Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համադարձակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նախաձեռնմանը և կնքմանը զուգահեռ):

Եղած լայնամեծներում Հայաստանի կառավարությունից ժողովրդավարացման լուսաբանները մեղմացան և ակնկալիքները լուսաբանեցին: Քաղաքացիական խմբերի համար ակնհայտ էր դառնում, որ տեղական խնդիրները երկրորդական են դիտվում կառավարության հետ համագործակցային գործընկերությանը

դատարաստական միջազգային կազմակերպությունների համար: Այս իրավիճակում միջազգային դոնորներից ֆինանսական կախվածության հանգամանքը դառնում էր խնդրական. շատերը մտահոգվում էին, որ դոնորական առաջնահերթություններն են հաճախ որոշում տեղական քաղաքացիական հասարակության գործունեության օրակարգը, որի արդյունքում սահմանափակվում կամ քննադատվում էին դիմադրական խմբերի անզիջումային մոտեցումները: Հատկապես վերջին երկու տարիներին մեծանում էր քաղաքացիական հասարակության ազատ գործունեության հնարավորության հանդեպ հիասթափությունը: Դրությունը երբեմն (հատկապես ակտիվիստների կողմից) բնութագրվում էր իբրև «մեռած ակտիվիզմի» և «կոնֆորմիստ ՅԿ-ների» շրջան: Փոքր փոփոխություններով առաջ գնալուն դատարաստ դիմադրական ՅԿ-ներն իրենց հերթին հիասթափվում էին ակտիվիստների դրած բարձր նշաճողներից, նրանց ոչ ադեկվատ գնահատումների և ճնշումներ զգալու հետևանքով: Այս շրջանը քաղաքացիական հասարակության ակտիվիստական և փողոցային դայբարի հետ կապեր դադարեցրելու ՅԿ սեկտորի ներկայացուցիչների տեսանկյունից ինչ-որ իմաստով լքվածության կամ մեմակության, դայբարի այլևս չաշխատող ձևաչափերի, նոր ձևաչափերի փնտրտուքի և դրանց անհրաժեշտության բարդ փուլ էր:

Կոնֆլիկտայնությամբ հանդերձ, սակայն, ՅԿ – ակտիվիստներ հաղորդակցության ոլորտը դառնում է այն դայնամը, որում ՅԿ-ներն ավելի ռադիկալ գործելու, իսկ ակտիվիստները՝ ՅԿ-ների առավել հաստատված և կայուն ռեսուրսներից օգտվելու հնարավորություն են ստանում:

Դոնորներն իրենց հերթին ակնկալում էին տեսնել «սեղանի շուրջ աշխատող», փոխզիջումային և կառուցողական քաղաքացիական հասարակություն, ինչը, ըստ ՅԿ-ների, հանգեցնում էր քաղաքական ստատուս-քվոյի անցանկալի դադարեցման: ՅԿ-ներին, ինչդեռ մաս ակտիվիստներին բարկացնում էր նկատելի դարձած այն միտումը, որ արևմտյան խոշոր դոնորները չեն խորշում ոչ միայն հանագործակցել կառավարության հետ, այլև ֆինանսավորել GONGO-ներին՝ փաստարկելով դա իբրև հավասարակշռման քաղաքականություն, ինչը, սակայն, տեղական քաղաքացիական հասարակության համար դիտարկվում էր իբրև ֆինանսավորման միջոցով կառավարության վրա ազդեցության և վերահսկողության հաստատման քաղաքականություն:

Դոնորների այսդիսի դիրքորոշման շրջանակներում փոփոխությունը հնարավոր էր համարվում սեղանի շուրջ՝ բանակցությունների ծանադարիով և ոչ փողոցում: Չուզահեռաբար խոշոր դոնորները վերջին շրջանում խրախուսում էին կոալիցիաներով գործելու ձևաչափերը՝ ֆինանսավորելով այդդիսի ծրագրեր և դադարեցնելով տարամետ, հաճախ հակադիր ՅԿ-ների ներգրավումը դրանցում: Այս մոտեցումը ևս դժգոհության տեղիք էր տալիս, քանի որ դարտադրված հանագործակցությունը միշտ չէ, որ հաջողում էր: Միաժամանակ, այս ֆորմալ ցանցերը հնարավորություն էին տալիս ձևավորվելու նոր՝ ոչ ֆորմալ, ինքնաշխատ հարաբերություններ և ցանցեր:

Վերջին միտումներով առավել «դրոֆեսիոնալ» ՀԿ-ների հետ աշխատելու նրատակահարմարության հետևանքով տեղական քաղաքացիական դաշտի վրա սկսեցին դրվել բարդ բյուրոկրատական դահանգներ և ընթացակարգեր, որոնք, ըստ որոշ նկատառումների, եադես նվազեցնում են քաղհասարակության բովանդակային գործունեության արդյունավետությունը՝ հաճախ ստվերելով հանրային շահին կամ օրակարգին նրատատելու առաքելությունը: Մինչև հեղափոխությունն առկա համընդհանուր անկայուն ֆինանսական և վատթարացող քաղաքական միջավայրում քաղաքացիական դիմադրական խմբերը սեփական գործունեությունը գնահատում էին իբրև անորոշ, հատվածական, իսկ ազդեցությունը՝ ոչ համատարած, ինչն էլ մղում էր նոր ուղիներ փնտրելուն: Այդուհանդերձ, քաղաքացիական հասարակության ոլորտը մշտադես շարունակել է (ինքն)ընկալվել կարևոր՝ իբրև քաղաքական դիսկուրսի և հեռանկարի ձևակերպման ոլորտ, իբրև ադագայի փոփոխության համար տեղեր և մարդիկ ձևավորող տարածք:

ԾՆՇՈՒՄՆԵՐ, ԿՈՈՊՏԱՑԻԱՅԻ ՓՈՐՁԵՐ. ՀԱԿԱԶԴՄԱՆ ՌԵՊԵՐՏՈՒՐՆԵՐԻ ՓՆՏՐՏՈՒՔ

Պայքարի ռեդերտուարը ռազմավարությունների, հմտությունների ու ձևերի ամբողջություն է, որ դիմադրական շարժումներն օգտագործում են քաղաքական փոփոխության հասնելու համար՝ հակազդելով իշխանական ճնշումներին ու կոոդտացիայի փորձերին:¹⁷ Իշխանական ճնշումներին հակազդելու ռեդերտուարը ներառում է ոչ միայն դիմադրության և պայքարի ժամանակ մարդկանց կողմից իրականացվող գործողությունները, այլև այն գիտելիքը և փորձառությունը, որ նրանց հուշում է, թե ինչդես է դեսոք գործել կոնկրետ իրավիճակում:

Հայաստանյան քաղաքացիական հասարակության նախահեղափոխական դրությունը կոոդտացիայի փորձերին արձագանքելու տեսանկյունից կարող ենք բնորոշել իբրև դրանց տության գիտակցման, սակայն հակազդման մեխանիզմների դեսուս փնտրտուքի շրջան, իսկ կոոդտացիան ինքն կարող ենք բնորոշել իբրև դիմադրական-քաղաքական քաղաքացիական հասարակության մարգինալացմանը և իշխանությունների համար վերահսկելի քաղաքացիական հասարակության ձևավորմանն ուղղված փորձեր (չդիմադրող, բարեկամ, բարեփոխումների ձգտող GONGO, BONGO, RONGO-ները): Նախահեղափոխական կոոդտացիայի փորձերին արձագանքելու ռազմավարությունների տեսանկյունից քաղաքացիական հասարակության դիմադրական խմբերն, ըստ տության, մշակել էին տարբեր մոտեցումներ: Առավել արմատական խմբերի ներկայացուցիչները կամ առավել «հուսահատները» իբրև իրենց գործունեության հնարավոր հեռանկար տեսնում էին ակտիվ, տեսանելի (փողոցային) գործողությունների դադարեցումն ու ընդհանուր առմամբ պայքարի հին ձևերի վերախմաստավորումն ու նորերի մտածումը, ինքնակրթումը Հայաստանի ներսում և դրանից դուրս, գիտելիքի ակունուլացման դերմանենտ

կրթական նախագծերի իրականացումը: Այս խմբերի ներկայացուցիչների գնահատականները Հայաստանում դրական քաղաքական փոփոխությունների առումով հոռետեսական լինելուց զատ, ընդգծում էին նաև սեփական ներուժի և կոնսոլիդացիոն փորձերի թուլության, ամարոյունավետության հանգամանքները:

Քաղաքացիական հասարակության շրջանում տայնանական երկրորդ խումբը կարևորում էր տայքարի՝ թեկուզև հաճախ ծախողվող, ամարոյունավետ, հոգնեցուցիչ, շարունակականության տահոյանումն իբրև ժամանակի իշխանոյանը, ներքին և արտաքին (հիմնականում ոուսաստանյան) կոոտացիոն քաղաքականոյուններին դիմադրելու թույլ հնարավորոյան: Այս հեոանկարում համախոհների հետ ուժերի կոնսոլիդացիան և ամենօրյա աշխատանքը՝ տեղում և միջազգային (հիմնականում արևմտյան) հարթակներում, դրական փոփոխությունների և քաղաքացիական հասարակոյան ծայնը լսելի դարձնելու ոազմավարոյուններից էին: Աժող ծնշումների և խոչընդոտների տայնաններում, ինչոյիսին էին իշխանոյան կենտրոնացումը, սոցիալ-տնտեսական դրոյան վատթարացումը, համաշխարհային կաոյիտալի և տեղական օլիգարխիայի ու խոչոր բիզնեսի չվերահսկվող գործունեոյունը, ոուսական ազդեցոյան մեծացումը, արևմտյան Ֆինանսական աջակցոյան մվազումը, սեփական (քաղաքական) օրակարգի ձևակերոյունը և գործընկերային, ոչ Ֆորմալ ցանցեր ձևավորելու փորձերը (այդ թվում՝ միջազգային), հրատաոյ քայլեր էին, որոնք, ինչոյես մշում էին հետազոտոյան մասնակիցները, հնարավորոյուն կտային վերազնահատել սեփական ուժերը և վերադիրքավորվել՝ նեղացող քաղաքացիական հասարակոյան դաշտում:

Հաշվի առնելով քաղաքացիական հասարակոյան նախահեղափոխական մտահոգոյունները կոոտացիայի և ծնշման քաղաքականոյունների շուրջ՝ ընդգծենք, որ հեղափոխական գործընթացը ցոյց տվեց, որ քաղաքական իրավիճակի իրադարձային, անկամխատեսելի փոփոխոյունը կարող է հանգեցնել համագործակցոյան դեոնս չարձանագրված եղանակների և արոյունքում՝ քաղաքական փոփոխոյան հեոանկարի ընդարձակման:

ՍՈՒԲԼԻԿՉԱՑՈՒՄ ԵՎ ՇՐՋԱՓՎԱԿՈՒՄ

Նախահեղափոխական շրջանում ավտորիտարացման սոյասվող խորացումը և դիմադրական քաղաքացիական դաշտի նեղացումը, հուսահատոյունն բերելով, դրանում ներգրավված խմբերին սոյիոյեց աոավել քաղաքականացված և արմատական լինել, միաժամանակ խթանեցին խմբային և միջխմբային դեբատները: Քաղաքացիական հասարակոյունն այն հանրային ոլորտն էր դարձել, որտեղ, իր ներհակ լարումներով հանդերձ և հենց դրանց շնորհիվ, հնարավոր էր քննարկել, վիճարկել և նախագծել մրցատայքարի քաղաքականոյուններ և գործողոյուններ: Հետևաբար, դատաոյարտվածոյան զգացումը, հուսահատոյան ուժը և երկրի վերջնական ավտորիտարացման և

սեփական գործունեության սահմանափակման հանդեպ վախը այս դեպքում դարձան մոբիլիզացիայի թափանցիվը՝ առաջնորդելով դիմադրական քաղաքացիական խմբերի, առաջին հերթին՝ մարդու իրավունքների ղաշտոդանության, ժողովրդավարության, սոցիալական արդարության և հավասարության օրակարգով խմբերի նախաձեռնողականությունն ու ներգրավումը: Այսպես, օրինակ, երկարակյաց նախագահ Սերժ Սարգսյանի՝ վարչապետի աթոռին մնալու ծրագրին դիմադրություն նախաձեռնող ուժերի առաջնագծում էր քաղաքացիական *Մերժիր Մերժին* նախաձեռնությունը: Վերջինս քաղաքացիական խմբերի շարքում ամենից հստակ սուբյեկտավորվածն էր, որի անվանումը դարձավ զանգվածային շարժման հաջողված կոչի՝ «Քայլ արա՛, մերժի՛ր Սերժին»-ի մասը՝ միավորվելով *Քաղաքացիական ղայմանագիր* կուսակցության նախաձեռնած *Իմ քայլը* շարժման անվանման ուղերձի հետ: Այս կոչի մոբիլիզացիոն լիցքը ակնհայտորեն հենվում է քաղաքացիներին գործորդություն ու նախաձեռնողականություն հաղորդելու և ինքնակազմակերպման մղելու սկզբունքների շրջանակման վրա:

Այսպիսի՝ «ակտիվ ու զորացված քաղաքացիություն (empowered citizenship)» ձևը, «որը կաղում է քաղաքացիների իրավունքներն այն դատասխանատվություններին, որ նրանք ղետք է ունենան իրենց համայնքների ու երկրի առաջ», ըստ Ա. Իշխանյանի,¹⁸ առաջ են մղվել երկրում 2007-ից սկիզբ առած և 2010-11-ից բազմադասակցված քաղաքացիական նախաձեռնությունների կողմից: Դեռևս 2012-ին Երևանում ծավալված *Փրկենք Սաշտոցի ղորակը* նախաձեռնության անդամները կոնցեպտավորել էին «ինքնորոշված քաղաքացու» գաղափարը: Ոգեշնչված լինելով «occupy» գլոբալ շարժումներով՝ նրանք կիրառել էին հանրային տարածքների գրավման և շրջափակման մեթոդները և գործնականում հաջողություն գրանցել այս մրցադայքարում (թեև իշխող ղեժիմին հաջողվել էր արդյունքը կոտորացնել և այն շրջանակել իբրև սեփական բարի կամքի դրսևորում): Ավելի ուշ՝ 2013-ին, Երևանում տրասնպորտի գնի ղանկացման դեմ իրականացված *100 դրամի* շարժման ժամանակ առաջին անգամ ակտիվիստների համակարգող ղմբի կողմից գործադրվեց փողոցային դայքարի ցանցային ինքնակազմակերպմամբ քաղաքացիական ղաղաղ անհնազանդության մեխանիզմը: Սրանով հաջողվեց երիտասարդների և քաղաքացի-ուղևորների ընդլայնված մասնակցություն աղահովել և կասեցնել քաղաքաղետի ավտոկրատ և հանրային շահերին դեմ ղանկացման որոշումը:

Վերջին տասնամյակում մրցադայքարի այս և այլ տարբեր տղիզողների ժամանակ քաղաքացիական հասարակության դիմադրական ղմբերը կարողացել էին, հաջողությամբ կան անհաջողության մատնվելով հանդերձ, փորձառել և ձևակերղել գործողություններ, իշխանության վիճարկման ղրակտիկաներ, որոնք հիմնված էին ոչ միայն քաղաքացիական արժեքների հոչակման, այլև այդ արժեքները գործնականում ներղնելու՝ *կանավորականության, աղակենտրոնացման, համակարգված ինքնակազմակերղման, ներաղականության, հո-րիղոնական սղիղարության, յուրաքանչյուր անհատի հանձնաղության ու*

գործողային մասնակցությամբ կոլեկտիվ գործողության իրացման սկզբունքների վրա:

Դրանց հիման վրա մտածված մրցադայթարի բազմաթիվ ձևեր Հայաստանի հասարակության համար ճանաչելի էին դարձել դիմադրական խմբերի ստեղծագործ գործողություններով,¹⁹ որ մինչ այդ կիրառություն չէին գտել քաղաքական կուսակցությունների դայթարների ժամանակ: Նիկոլ Փաշինյանը, որ գլխավորում էր *Իմ քայլը* շարժումը, քաղաքացիական *Մերժիր Մերժին*, ուսանողական *Ռեստարտ* նախաձեռնությունների, հանրային շահերի դաշտում և ձախական ակտիվիստ խմբերի անդամների, իրավադաշտումների հետ համագործակցությամբ հաջողեց այդ սկզբունքները գործադրել հեղափոխական օրերին: Դրանցով ադահովվեցին ցանցային մոբիլիզացիայի՝ Հայաստանում մինչ այս չգրանցված մասշտաբի հաջողություն:

Սահմանափակ ռեսուրսներով խմբերը ունակ են հասնել մոբիլիզացիայի և հակադրվել շատ ավելի գորեղ հակառակորդի, երբ կիրառում են գործողությունների ծանոթ ռեդերտուարներ, միաժամանակ ստեղծագործաբար ներմուծում իմդորովիզներ, գործում են միասնաբար և հենվում են սոցիալական ցանցերի արդյունավետ կադող կառուցվածքների ու գործողության տանող ընդունված մշակությամբ շրջանակների վրա: Սա հենց այն է, ինչ դիտարկում ենք հայկական թավշյա հեղափոխությանը նախորդած իրավիճակում և դրա գործընթացում:

Քաղաքացիական դաշտի դիմադրական խմբերի և ընդդիմադիր ՔՊ կուսակցության միջև այսդիսի համագործակցությունը հնարավոր էր դարձել երեք հիմնական հանգամանքների շնորհիվ: Նախ ինքնին քաղաքական շարժառիթը՝ Մերժ Սարգսյանի կողմից վարչադետի աթոռի անժամկետ յուրացման քաղաքական իրադարձությունը, ոչ միայն ընդդիմադիր ուժերի, այլև երկրի ժողովրդավարացման իրավադաշտումնական օրակարգին դեմ գործընթաց էր: Դա միանշանակորեն ընթերցվում էր իբրև Հայաստանի քաղաքական հեռանկարի կորուստ, երկրի անդառնալի ավտորիտարացման, ռազմականացման, իրավունքների կրճատման ճանադարի, ինչի դատադարտվածությունը մղում էր քայլերի, իսկ դրա դեմ մրցադայթարը տարիներ շարունակ և՛ մորաստեղծ ընդդիմադիր ՔՊ կուսակցության, և՛ իրավադաշտում, և՛ առավել արմատական խմբերի ընդհանուր օրակարգն էր:

Երկրորդ հանգամանքը, որ նդաստում էր համագործակցությանը, *Իմ քայլը* շարժման խաղաղ հավաքներ և քաղաքացիական անհնազանդության եղանակներին դիմելու նախնական հոշակագրումն էր և Հայաստանի ժողովրդավարացմանը, քաղաքացիների ծայնի և քաղաքական կամքի դաշտումնությունը հավատարմության արտահայտումը: Սրանով իրավադաշտում կազմակերդությունները և անհատները, այդ թվում՝ լրագրողները, արտոնություն էին ունենում հեշտորեն միանալ շարժմանը՝ ի տարբերություն երկու տարի առաջ *Սասնա ծռեր* խմբի նախաձեռնած զինված գործողությամբ հրահրվող ադստամբությանը: Ձախական խմբերի ու անհատների համար գործընթացին միանալու մղիչ-

ներից էին համակարգող խմբի կողմից տնտեսական օլիգարխի կեղեքիչ համակարգի դեմ ղայքարի և քաղաքացիական ինքնակազմակերպման ու գործողության ակտիվացման սկզբունքների ընդունումը:

Երրորդ գործոնն առավելադեպ առնչվում է քաղաքական դաշտի ամայացման ղայմաններին և այս ղայմաններում քաղաքական և քաղաքացիական խմբերի փոխառնչություններին ու կաղերին: Երկրում քաղաքական ոլորտի յուրացման և տրոհման, ընդդիմադիրների գործունեության սահմանափակումների հետևանքով շատ քաղաքական գործիչներ 2008-ից հետո սկսեցին հայտնվել քաղաքացիական դաշտում՝ իրենց հետ բերելով քաղաքական կուսակցությունների ու գործիչների, այդ թվում Նիկոլ Փաշինյանի հետ համագործակցելու իրենց փորձը: Բացի այդ, Նիկոլ Փաշինյանի ղեկավարած *Իմ քայլը* շարժման հետ համագործակցությանը նույնպես էր ինքնին *Քաղաքացիական ղայմանագիր* կուսակցության կառուցվածքը, որն ի սկզբանե միավորում էր ՀԿ գործիչների, ակտիվիստների, նախկինում այլ ընդդիմադիր կուսակցականների, քաղաքատարկյալների ու հետադարձվողների և դիմադրական ղայքարի տարբեր փորձառույթամբ մարդկանց: Ինչդեպ օրինակ՝ ԲՊ-ի հիմնադիրներից մեկը, այժմ ԲՊ վարչության անդամ, ԱԺ 6-րդ գումարման ղատգամավոր Լեւոն Նազարյանը 2007-ից սկսված *Փրկելը Թեղուտը* բնաղահղանական շարժման առանցքային անդամներից էր, հետագայում *Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն* ՀԿ-ում ընտրական ծրագրերի համակարգող, ինչդեպ նաև *Սաշտոցի ղուրակի ղաշտղանության*, Երևանում տրանսդորտի գնի թանկացման դեմ իրականացված *Չենք վճարելու 150 դրան* (կամ *100 դրամի*) շարժման համակարգող անդամ: Նա այլ համախոհների հետ միասին քաղաքացիական դաշտից հետագայում իր ղայքարը տեղափոխեց ինստիտուցիոնալ քաղաքական հարթակ՝ միանալով *Քաղաքացիական ղայմանագիր* կուսակցության ձևավորմանը (2013-2015)՝ փոփոխության առավել արդյունավետ ձանաղարի գտնելու մտադրությանը: Նրա ղայքարի ընկերներից շատերը, իրենց հերթին, շարունակեցին մնալ ակտիվիզմի մեջ՝ վստահության այս կամ այն չափով կաղեր կամ դրանց համար հիմքեր թղղնելով: *Քաղաքացիական ղայմանագրի* անդամների և անձամբ երկարամյա ընդդիմադիր գործիչ Նիկոլ Փաշինյանի ունեցած կաղերը մայրաքաղաքում և մարզերում հանրային տարբեր խմբերի՝ քաղաքական ընդդիմադիր կուսակցությունների, ձնշված քաղաքական գործիչների, ինչդեպ նաև իրավաղաշտղան ՀԿ-ների ու դրանց ցանցային հարթակների, ժանանակակից արվեստագետների և ձախ ակտիվիստների խմբերի հետ մոբիլիզացիայի հիմնական հնարավորությունը դարձան:

Այդղիստվ, Հայկական հեղափոխության օրերին հանրային տարբեր շերտերի մոբիլիզացիայի և կոգնիտիվ ու հուզական մերզրավման հարցում մեծ նշանակություն ունեցան քաղաքացիական հասարակության տարբեր կողմերի (նորելուկ երիտասարղական նախաձեռնություններ, հնաբնակ ակտիվիստներ, ՀԿ անդամներ, ազատ օնլայն մեղիա հարթակներ, որոշ ոաղիոալիքներ) միջև արդեն իսկ գործող ֆորմալ և ոչ ֆորմալ ցանցերը: Տարիներ շարունակ այս ցան-

ցերում ակտիվ անհատները լայն հանրության առաջ ներկայացված են եղել վիրտուալ հարթակների՝ մասնավորապես Ֆեյսբուքի, իսկ հեղափոխության օրերին նաև Տելեգրամի միջոցով: Ի տարբերություն ԱՄՆ-ում և արևմտյան Եվրոպայում Ֆեյսբուքի շուրջ ծագած ճգնաժամի, որտեղ ամօրինի կերպով մասնավոր տվյալների օգտագործման, ադատեղեկատվության և մանիպուլյացիայի տարածման, լիբերալ դեմոկրատիայի խաթարման վտանգներն են քննարկվում,²⁰ հետխորհրդային (կիսա)ավտորիտար հասարակություններում Ֆեյսբուքը դառնում է «թեծ փողոցի» նախադասարասումը և համակարգմանը աջակցող անհրաժեշտ հանրային տարածք և գործիք:

Ֆեյսբուքը, Յություբը և Լայվսթրիմի շարժական տեխնոլոգիաները 2010-ականների շարժումների ամբաժանելի գործիքներն են եղել, ինչպես արաբական գարնան ալիքում, այնպես էլ Հայաստանում:²¹ Այստեղ քաղաքացիական նախաձեռնությունները լիարժեքորեն կիրառել են դրանք ոչ միայն ինքնակազմակերպվելու և գործողություններ իրականացնելու շրջանում, այլև դրանց դադարների ժամանակ՝ հանրային գործիչների ու առավել լայն շերտերի հետ հաղորդակցման, գաղափարների փոխանակման ու տեղեկատվության տարածման, բանավեճերի, հանրային խնդիրների քննարկմանը քաղաքացիներին ներգրավելու, վստահության կադեր հաստատելու և ջրբաժաններ զծելու, քաղաքացիների հույզերի, մտածողության, գործողության (agency) և որոշումների վրա ազդելու նպատակով: Վերջին տարիներին Ֆեյսբուքի օգտատերերի թվաքանակը հասել էր շուրջ մեկ միլիոնի,²² որը կազմում է երկրի բնակչության մեկ երրորդը, իսկ ինտերնետ օգտագործողների՝ կեսը:

Ֆեյսբուքը նաև Հայկական հեղափոխության համակարգման առաջնահերթ գործիքն էր, որով տարածվում էին Նիկոլ Փաշինյանի ուղիղ հեռարձակումները, ամեն օրվա թարմ օրակարգը՝ գործողությունների սկիզբն ու ավարտը, օրվա առանձնահատուկ մեթոդը, հընթացս ձևավորվող կոչերն ու գործողությունների գաղափարները: Դրանք և առցանց լրատվականների ուղիղ եթերների ու հրադարակումների բովանդակությունը վայրկեական վերաթողարկվում էին այլ օգտատերերի՝ Ֆեյսբուք-ակտիվիստների կողմից ու հասնում հարյուր-հազարավոր այլ քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանից դուրս գտնվող սփյուռքահայերի: Միաժամանակ ամենատարբեր համայնքներում և վայրերում հարյուրավոր մարդկանց առկա ենտրոն ակցիաների մասին հոլովակները և լուսանկարները և տարածվում էին Ֆեյսբուքյան էջերով և առցանց լրատվամիջոցներով, արագորեն լսարան ձեռք բերող տելեգրամ ալիքներով: Տելեգրամն իր հերթին ծառայում էր նաև որպես քաղաքացիական դիմադրական խմբերի ինքնակազմակերպման առավել անվտանգ՝ հատուկ ծառայություններին անհասանելի հարթակ:

Դեռևս Ֆեյսբուքային ակտիվիզմի ընթացքում Հայաստանում զարգացել էր հանրային տարածքների, հանրային շահերի դաշտադասության առաջնահերթությունը և վերալեզիտիմացվել հետխորհրդային տնտեսական ազատականացման ալիքի ներքո նսեմացված սոցիալական դաշտադասվածության, արդարության և հավասարության (ձախակալ) գաղափարները, ինչպես նաև հանրային լայն տա-

րածում գտել շատ ավելի վաղ կայացած առաջադիմական իրավադաշտադանական դիսկուրսները: Դրանք հեղափոխական գործընթացում էլ ավելի ընդգծված կերպով վերաշրջանակվեցին և մոբիլիզացիայի մղիչներ ու գործողությունների հիմքեր դարձան: Այդպիսով ձախական դիսկուրսները և որակտիկաները նշանակալի դեր ունեցան Հայկական հեղափոխության ընթացքում՝ իմտեգրվելով և/կամ մրցակցելով վերջին տասնամյակում առաջ եկած զուտ իրավադաշտադանական կամ առավել ավանդական ազգային, ավելի ձիշտ՝ ազգային-լիբերալ դիսկուրսների հետ: Տարիներ շարունակ կուտակված հանրային բողոքը, կառավարող վարչակարգի հանդեմ ցատումն ու վերաբերմունքը հնարավոր դարձավ փոխակերպել շարժման՝ նախ և առաջ հստակ թիրախավորելով Պայքարի առարկան՝ Սերժ Սարգսյանին և նրա իշխանական «ՀՀԿ-ական» անվանված համակարգը: Կոռուպցիոն տիտանի և դրա հիմնական ղեկավար Սարգսյանին թիրախավորելու դիսկուրսիվ շրջանակավորման ժամանակ շարժման հիմնական խոսնակ Նիկոլ Փաշինյանը օրակարգը ձևակերպում էր՝ օգտվելով նախորդ Պայքարների հարուստ փորձառությունից: Նախ կիրառում էր իր իսկ կողմից 2008-ին ներմուծած և քաղաքական լուստիություն ունեցող արտահայտությունները (օրինակ՝ «Կեցցենք մենք և մեր երեխաները, որ աղբերու ենք ազատ և երջանիկ Հայաստանում»)՝ դրանց ավելացնելով ինչդեպ թշնամական կերպարի լուստիություն մշակությամբ լուստիությունների վրա հիմնված մոր կիրառումներ (օրինակ՝ «Դեմ ենք Հայաստանի աղբեղանալուն»), այնպես էլ քաղաքացիական դիմադրական խմբերի կողմից տարիներ շարունակ բարձրաձայնված իրավադաշտադան, սոցիալական արդարության և հավասարության, հանրային շահերի լուստիությունում ուղղված ձևակերպումներ:

Հատկանշական է, որ թշնամու դեմ միասնության գաղափարական կառուցակցումը կառավարող վարչակարգի կողմից խրախուսված և իրագործված քաղաքականություն էր դարձել դեռևս 2004-ից «մեկ ազգ-մեկ մշակույթ» և 2017-ից «ազգ-բանակ» կոնցեպտներով, հիմնադրամներով, միջոցառումներով ու կրթական քաղաքականություններով, որով փորձ էր արվում լուստի հանրային խմբերի ընդդիմադիր ձայները և մեղմել հակասությունները, տարվում էր «անվտանգայնացման քաղաքականություն»:²³ Լեռնային Ղարաբաղում 2016-ի ադրիլյան տակալացիայի արդյունքում մարդկային զոհերի և անգամ վերահսկվող սահմանի որոշակի նահանջի (հողային կորստի) հետևանքով վարչակարգը լայն հանրության համար կորցրել էր «ազգային միասնության» դիսկուրսի շահարկման մոնոպոլիան (*Սասնա ծռերին* հանրային աջակցությունը դրա վառ դրսևորումն էր), մոյմիսկ վերաձևակերպվել որդես ազգային միասնության սոլաոնալիք՝ մերքին թշնամի: Հետևաբար, հեղափոխության շրջանում դիմադրական լուստումների վերաներկայացման միջոցով ընդգծելով վարչակարգի հանդեմ հակադրությունը և նրանց հեշտորեն դուրս թողնելով «համերաշխության» շրջանակից՝ հնարավոր դարձավ հասնել քաղաքացիների կամ «ժողովրդական միասնության» ձևակերպմանը և մոբիլիզացիային: Համրությանը մինչ այս հայտնի ընդդիմադիր ազգային-լիբերալ դիսկուրսին զուգահեռ իմտեմսիվ ներկայություն ունեցող կոռումլացված իշխանական տիտայի իրավազորությունը

հարցադրող շրջանակումները՝ արդարության և հավասարության հաստատման՝ ձախական տեսանկյունները մոբիլիզացիայի նշանակալի շարժիչներից էին: Կոռուցիայի դեմ ղայքարի, ժողովրդավարության հաստատման, օրինական ընտրությունների անհրաժեշտության հետ զուգահեռ շարժման խոսնակները հարթակից հնչեցնում էին առանձին խմբերի՝ կանանց և հաշմանդամների, այլ լուսանցքային խմբերի (ակնարկն առնչվում էր LQFSP մարդկանց) զորացման և նրանց հանդեպ խտրականություն չդրուցող դիրքորոշումներ, որոնք անրադմուդում էին քաղաքացիական խմբերի ներգրավվածությունը շարժման մեջ:

Երիտասարդների մոբիլիզացման ռազմավարության մեջ կարևոր դեր ունեցան այնդիսի գանցառական ռեդերտուարների (որոշ ֆորմալ օրինակարգերի խախտումներ թույլ տվող) մորամուծությունները, ինչդիսին էին՝ արագաչափերի խափանումը և հանրային նշանակության շենքերի ժամանակավոր գրավումները (հատկապես Երևանի ղետական համալսարանի և Զանրային ռադիոյի), շենքերի շրջափակումները, անգամ կենցաղային կոմունալ վարձավճարներից հրաժարվելու, բանկային միջոցները կանխիկացնելու կոչերը, հետագայում Ազգային ժողովի, ինչդես նաև առանձին ղատգամավորների նկատմամբ հույզերի թիրախավորված արտահայտման ակցիաները²⁴ և դրանց վիրտուալ վերաներկայացումները: Մինչ այդ սովորական՝ փողոցներ փակելու և երթերի ղրակտիկաները ևս թարմացվեցին՝ դրանցում դինամիկություն, աղակենտրոնություն ներմուծելով: Մայրաքաղաքի ցուցարարները փակում էին ոչ թե մեկ հիմնական փողոց, այլ զուգահեռաբար բազմաթիվ փողոցներ և դրանք փակ ղախում բանի դեռ ոստիկանական ուժերը չէին գերազանցում ցուցարարների ուժին՝ վտանգի դեղքում աշխատելով ցրվել և մեկ այլ վայրում փողոց փակել: Այսդիսի «անկազմակերպ» կազմակերպված մրցավազքը և անհասցե երթերը իսկական մարտահրավեր էր ծանրաշարժ ոստիկանական հատուկ մեքենաների և ստատիկ ղայմանների ու հստակ հրահանգների սովոր ծանրամարմին ոստիկանների համար: Այսդիսի մեթոդները, որոնք հիմնվում էին սկզբունքների (ազատ ինքնարտահայտման, քաղաքացիական/ժողովրդի ղախանջատիրության, խաղաղ անհնազանդության և այլն) և ոչ թե դիտուալի անխախտության վրա, ստեղծագործման և նույնիսկ զվարճանքի մեծ հնարավորություն էին ընձեռում ցուցարարների (հատկապես երիտասարդների և այլ դինամիկ) խմբերին անգամ այդդիսի գերլարված իրադրության մեջ: Յուրաքանչյուր սոցիալական խումբ իր արժեքներն ընդգծող կրկնվող ռեդերտուարներով միանում էր և համերաշխություն հայտնում հեղափոխությունն իբրև նղատակ հոչակած շարժմանը: Այս մորամուծությունները ոչ միայն ղերֆորմատիվ էին, այլև գաղափարական, և մանիֆեստացնում էին քաղաքական-տնտեսական վերնախավի իշխանությունը հարցադրելը, դրան ենթակայվելուց հրաժարվելը և վերնախավից դուրս մնացած/գտնվող խմբերի՝ «ժողովրդի» իշխանությունը տեսանելի դարձնելու ու հաստատելու ձգտումը:

Միաժամանակ քաղաքացիական խմբերը, հենվելով հեղափոխության օրակարգի վրա, այդ օրերին մշակում էին մոր ստեղծագործ միջոցառումներ ու ղրակտիկա-

ներ՝ շեշտելով սեփական քաղաքականությունները և գաղափարական առաջնահերթությունները՝ իրենց հերթին ոգեշնչվելով հեղափոխության օրերին ի հայտ եկած որակտիկաներից՝ լեռնական հաստատությունների ներխուժումներից և շրջափակումներից: Այդդիպի ինքնակազմակերպ ակտիվություններից էին առանձին կանանց խմբերի կազմակերպած փողոցային շրջափակումները՝ «Սերժոն մեր լուսաբան չի, մենք լուսաբան չունենք» հիմնական կոչով,²⁵ որով միաժամանակ և՛ ընթացիկ օրակարգի մեջ էին մտնում, և՛ ֆեմինիստական հղումներ ավելացնում իրենց ակցիային, ինչդեռ նաև ֆեմինիստական դաստիարակներով առանձին՝ կանանց երթեր իրականացնելով, կամ էլ ընդհանուր երթերին մասնակցելով: Այդդիպի առանձնահատուկ քաղաքականություններ ընդգծող ակցիաներ էին սուրբերմարկետների մուտքերի ժամանակավոր շրջափակումները, որոնց ընթացքում աշխատանքային իրավունքների դաշտադրմանը մոտիկ և օլիգարխներին թիրախավորող, գործադուլի կանչող կոչեր էին («Հանուն արդար Հայաստանի, հանուն աշխատանքային իրավունքների») հնչում:²⁶ Հանրային այգիներից մեկի վերանորոգման, իրականում լիարժեք վերափոխման նախագծի դեմ հանրային տարածքի դաշտադրման և այլ ակտիվիստների ցատումնալից արձագանքը նույնիսկ հանգեցրեց Երևանի քաղաքապետարան ներխուժելուն և քաղաքապետի հրաժարականի դադարեցմանը:

Առկա են տարբեր ցանցայինության սկզբունքներ ինքնին բազմադասակարգ էր միևնույն մեկ նյութական համար Հայաստանի տարբեր բնակավայրերում գործադուլող ակցիաները (երթերը, դասադուլները, գործադուլները, շրջափակումները) և դրանց մասին դատարաններն ու դրանց վերաներկայացումները: Սոցիալական ցանցերով նույն դասին տասնյակ տարբեր գործողությունների մասին տեղեկատվության ու դրանց դատարանների շրջանառությունը մոբիլիզացիայի շնչառությունն աղախվող կողմերից էր: Դա աղախվում էր մինչ այս կոծկված, ճնշված ընդլայնման տեսանկյունից և վերաներկայացումը՝ միաժամանակ ակնհայտ էր դարձնում ռեդիոսիվ ռեժիմի կողմից ճնշման փորձերն ու որակտիկաները: Այս նույն՝ հակամարտության և ընդլայնման գաղափարայինության տեսանկյունից նյութական էին ծառայում նաև դրոշմների, դաստիարակների ներկայությունը բնակավայրերի տարբեր շենքերի, ծառերի, խանութների վրա, Երևանում լոգոնգների գրաֆիտիները, այլ վիզուալ, ինչդեռ նաև ծայրային ներկայությունները: Տեսանկյունից և մոբիլիզացման հաջողված քայլերից էր շարժման նախաձեռնողների կողմից «Իսլամական ծափողջույնների» փոխառումը, ուշ երեկոյին «կաթսա-շերեփների ակցիայի»²⁷ փոխառումը, ինչդեռ նաև քաղաքացիների կողմից շատ տեղական, սակայն արդեն քաղաքական նշանակություն ձեռք բերած՝ «մեքենայի շնչակների» գաղափարային արձակումը, երգումարը, դաստիարակ խաղերը: Հասարակական կազմակերպությունների դիտորդական, իրավադաշտադրման գործունեության և առցանց մեդիայի կողմից աղախվող տեսանկյունից ձևերին այս անգամ ավելացավ նաև բարձունքից դրոնի միջոցով երեկոյան ամփոփիչ հանրահավաքների տեսալուսանկարահանումը: Այս տեսադատարանները ցուցարարների բազմության և բանակի հիմնական ցուցիչներից դարձան: Սրանով ոչ միայն ցուցադրվում էր իրականությունը, այլև ցուցարարների բանակի կարևորությունը:

նշաձողն էր սահմանվում՝ Պարտավորեցնելով շարժման աջակիցներին ներկա լինել երեկոյան համրահավաքին, և ուրեմն դրոնային տեսադատկերները բազմամարդ մերկայությունը մոբիլիզացնող նշանակություն ունեցան:

Այսդիտով, մոբիլիզացիոն կառուցվածքները և միջոցները, ինչդեռ մաս բողոքի ու հույզերի գաղափարական շրջանակումը շարժմանը մասնակցելու հանձնառության (հեղափոխական ինքնության) կառուցակցման մերուժը հեղափոխության կայացման կարևոր ղայանմներից էին: Եվ սա հնարավոր էր երեք տարբեր՝ մրցակցող և միաժամանակ փոխլրացնող դիսկուրսների ու յրակտիկանների գործադրմամբ՝ ազգային-տեղական, լիբերալ և ձախական, որոնցից վերջին երկուսը առաջադիմական քաղաք(ացի)ական հասարակության գործունեության, կուտակած, մշակած և վերամշակած գիտելիքի ղայարներից: Որդես օրինակ նշենք, որ դեռ ընթացիկ օրերից հեղափոխությունը սկսեց անվանվել «սիրո և համերաշխության հեղափոխություն»՝ հղելով մի ղաստառի, որ երևացել էր Հանրադատության հրադարակում ամրիլի 25-ին: Այն բավարար նկատելի էր և բեմից ելույթ ունեցողներից մեկը արտասանել էր ղաստառի գրառումը՝ լիովին ընդունելով հեղափոխության այս բնութագիրը: Հաջորդող օրերին այն բազմիցս կրկնվեց՝ հատկադես հեղափոխության առաջնորդի՝ Նիկոլ Փաշինյանի կողմից (եղան մաս վերաձևակերդումներ): Այս ղաստառը, սակայն, ուներ կոնկրետ հեղինակ և ձևավորման միջավայր. մտահղացվել էր ակտիվիստ արտիստների, իրավադաշտղան գործիչների երեկոյան համատեղ ժամանցի ու քննարկումների ընթացքում: Ոչ միայն այս օրինակում, այլև բազմաթիվ այլ դեղքերում շարժման քաղաքական հարթակը բավարար բաց էր վերցնելու և մերքնայնացնելու սեփական ուղեգծին համադատասխան շրջանակավորումները (գաղափարական կառուցվածքները և ձևակերդումները), որոնք ծագում էին հընթացս և/կամ նախամես էին մշակվել:

Որդես աննախադեղ արդյունք՝ իշխանության վերարտադրության դեմ ղայքարը վերափոխվեց մոնոլիտ հանրության ձեղքման և իշխանության կառուցվածքի դեմ ղայքարի, որտեղ վերնախավը տեսանելիորեն անջատվեց/հակադրվեց հասարակությանը/ժողովրդին, և վերանայվեցին դրանց միջև հարաբերդյունների հաստատման սկզբունքները, բացվեցին տմտեսական կառուցվածքում արդարության հաստատման հանրային (թեև ոչ միշտ հստակ) ձևակերդված ղահանջների տեղերը (օրինակ՝ սուղերմարկետների բոյկոտի ակցիաները և աշխատողների իրավունքների հարցի բարձրացումը, մարզային համայնքներից մեկում կառավարող կուսակցության հեկ-ի մասնաբաժմի համայնքային տնօրինման հարցի բարձրացումը և այլն):

Այս մեծ փոփոխությունը կամ հեղափոխությունը, որ ինքնանվանվում է որդես թավշյա, ոչ բոնի, բաց ձեղքերի, ժողովրդական, ժողովրդավարական կամ էլ սիրո և համերաշխության հայկական հեղափոխություն, բացում է Հայաստանի հասարակության կառուցվածքային վերափոխման հնարավորդյուններ, որտեղ բոլոր սոցիալական, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության խմբերը վերադիրքավորման և մոր մարտավարդյունների ընտրության առաջ են

հայտնվել: Հեղափոխությունը իբրև իրադարձություն ակունուլացրեց հանրության տարբեր խմբերի, մասնավորապես քաղաքացիական հասարակության ղայքարի նախորդ փորձերը (եղիգողները) և շարժումը դարձրեց ընդհանուր փորձառություն լայն խմբերի համար՝ ղարտադրելով հեղափոխությունն ընդունելու կամ մերժելու դիրքավորում: Այն հետևաբար եմթադրում է նոր «հանրային ղայնմագրի»՝ համերաշխության հաստատում, որի մշակման և իրագործման հարցում քաղաքացիական հասարակության սղասվող դերակատարումը դեռ առջևում է:

1 Յետազոտությունն իրականացրել է Սոցիոսկոպ հետազոտական ՅԿ թիմը: Աշխատանքի տարբեր փուլերին և դրա հանրայնացմանն աջակցել են Prague Civil Society Center, South Caucasus Regional Office of the Heinrich Boell Foundation և Calouste Gulbenkian Foundation կազմակերպությունները, ինչի համար հայտնում ենք նրանց մեր շնորհակալությունը:

2 Հարցազրույցներ իրականացվել են մարդու իրավունքների դաշտում, կանանց և գենդերային, ինչդեռ նաև բնադատական հիմնահարցերով զբաղվող երևանյան և մարզային ՅԿ ներկայացուցիչների և ամհատ ակտիվիստների հետ: Հարցազրույցներն իրականացվել են նաև հայաստանյան քաղաքացիական հասարակությանն աջակցող մի քանի առանցքային դոմոր կազմակերպությունների ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության տարբեր գործընթացներում ներգրավված և Հայաստանում դրա զարգացման դատմությանը լավատեղյակ առանցքային տեղեկատուների հետ:

Մենք շնորհակալ ենք հարցազրույցներին մասնակցած մեր բոլոր գործընկերներին, ովքեր տրամադրեցին իրենց ժամանակն ու դատմեցին իրենց մտահոգությունների, վախերի, դատկերացումների և գնահատականների մասին՝ հնարավոր դարձնելով այս հետազոտությունը:

3 Jean Cohen, Andrew Arato, *Civil Society and Political Theory* (Cambridge: The MIT Press, 1992), էջ ix:

4 Sidney Tarrow, *Power in Movement: Social Movements and Contentious Politics* (Cambridge: Cambridge University Press, 2011):

5 James M. Jasper, «Emotions and Social Movements: Twenty Years of Theory and Research», *Annual Review of Sociology*, h. 37 (2011), էջ 285-303: DOI: 10.1146/annurev-soc-081309-150015, այց՝ 1.11.2019:

6 Jasper, «Emotions and Social Movements: Twenty Years of Theory and Research», էջ 296; Helena Flam, «Emotions' Map: A Research Agenda», *Emotions and Social Movements* (London and New York: Routledge, 2005), էջ 31:

7 Chantal Mouffe, *The Democratic Paradox* (London: Verso, 2000):

8 Sidney Tarrow, *Power in Movement: Social Movements and Contentious Politics* (Cambridge: Cambridge University Press, 2011):

9 Tarrow, *Power in Movement: Social Movements and Contentious Politics*:

10 2018 թ. փետրվարի 7-ին մի խումբ փաստաբաններ գործադու են հայտարարել՝ իրաժարվելով ՀՀ ղեկավար մարմիններում, դատարաններում, նախաքննության մարմիններում դաշտումություն կամ ներկայացուցչություն իրականացնել: Փաստաբանների բողոքն ուղղված էր Արդարադատության նախարարության ներկայացրած նախագծով սահմանված՝ դատարանի կողմից փաստաբանի և դատախազի նկատմամբ մուզանքի կիրառում նախատեսող իրավակարգավորման դեմ: Համաձայն նախագծի՝ փաստաբանների ու դատախազների նկատմամբ կարող է կիրառվել նաև սանկցիա մինչև 100,000 դրամի չափով: «Դատական տուգանքը կարող է վտանգել փաստաբանի անկախությունը. փաստաբանների հայտարարությունը», *tert.am*, <https://www.tert.am/am/news/2018/02/08/advocates/2609122>, այց՝ 27.09.2018:


11 2018 թ. փետրվարի 1-ին ժամանակի կառավարությունը հաստատել է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր, որ Կառավարության միստերը հիմնականում դոմինակ կլինեն, իսկ որոշ հատվածներ կարող են բաց լինել լրագրողների համար՝ միայն վարչապետի որոշմամբ: Ավելին, համաձայն օրենքի, կառավարության անդամները իրավունք չունեին մանրամասներ ներկայացնել միստից՝ առանց վարչապետի թույլտվության: Օրենքի հեղինակներից մեկը Արդարադատության նախարարությունն էր, որի գործող ղեկավարը՝ Դավիթ Հարությունյանը, ղեկավար էր, որ օրենքը չի հակասում և չի հարվածում ժողովրդավարությանը:

«Օրենքի մոր նախագծով առաջարկվում է Կառավարության միստերը դարձնել դոմինակ», *azatutyun.am*, <https://www.azatutyun.am/a/29011602.html>, այց՝ 27.09.2018:

12 Armine Ishkanian, «Self-Determined Citizens? New Forms of Civic Activism and Citizenship

- in Armenia», *Europe Asia Studies*, h. 67, թիվ 8 (2015), էջ 1203-1227, https://www.researchgate.net/publication/283582462_Ishkanian_Armine_2015_Self-Determined_Citizens_New_Forms_of_Civic_Activism_and_Citizenship_in_Armenia_In, այց՝ 1.11.2019:
- 13 Armine Ishkanian, *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia* (London and New York: Routledge, 2008):
- 14 Տե՛ս, օրինակ՝ Ishkanian, *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia*:
- 15 Տե՛ս, օրինակ՝ Laurence Broers, «After the 'Revolution': Civil Society and the Challenges of Consolidating Democracy in Georgia», *Central Asian Survey*, h. 24, թիվ 3 (2011), էջ 333-350: DOI: 10.1080/02634930500310444, այց՝ 1.11.2019:
- 16 2013 թ. հերթական կեղծված նախագահական ընտրությունները դիտարկած ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) և Եվրախորհրդարանի դիտորդական առաքելությունների ընտրությունների հաջորդ օրը՝ փետրվարի 19-ին, Սարիթ Սրմենիա հյուրանոցում ասուլիս էին իրավիճակը՝ ներկայացնելու իրենց նախնական զեկույցը՝ համաձայն որի ընտրություններն ընդհանուր առմամբ անցել էին ժողովրդավարական չափանիշներին համապատասխան մրցակցային դայնամիկություն: Ասուլիսը ընդհատվեց մի խումբ քաղաքացիական ակտիվիստների ներխուժումով, որով նրանք խստորեն քննադատում էին վերոնշյալ դիտորդական առաքելություններին՝ կեղծված ընտրությունների հանդեպ հանդուրժող վերաբերմունք ցուցաբերելու և ի վերջո այն լեգիտիմացնելու համար: Հայտնի տեքստն ընթերցեց Լենա Նազարյանը, որը հետագայում դարձավ Հայկական հեղափոխությունն առաջնորդած *Քաղաքացիական դայնամիկ* կուսակցության անդամ: Ներկայումս Նազարյանը 6-րդ գումարման ԱԺ դատաբանակազմի անդամ է, իսկ սեղտեմբերի 12-ից արդեն՝ ԱԺ ԵԶ խմբակցության ղեկավարը: «Ակտիվիստները ընդհատեցին դիտորդների ասուլիսը», https://www.youtube.com/watch?v=Wl_i-b6v4Ns, այց՝ 27.09.2018:
- 17 Tarrow, *Power in Movement: Social Movements and Contentious Politics*:
- 18 Արմինե Իշխանյան, *Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնադաշտայնական ակտիվիզմը Հայաստանում* (Երևան: Սոցիոսկոպ ԴԿ, 2013), http://teghut.am/wp-content/uploads/2014/10/Armine-Ishkhanian_arm.pdf, այց՝ 1.11.2019:
- 19 Հայաստանում քաղաքական մոր դրակտիկաների ձևավորման գործում ֆեմինիստական խմբերի ու կին գործիչների ներդրման մասին տե՛ս, օրինակ՝ Նելլի Սարգսյան, «Ֆեմինիստների և ֆեմինիստական գործելաոճերի՝ քաղաքական երևակայության ձևավորմանն ուղղված կարևոր գործը Հայաստանում», <http://socioscope.am/archives/1300>, այց՝ 20.09.2018:
- 20 «The Cambridge Analytica Files», *The Guardian*, <https://www.theguardian.com/news/series/cambridge-analytica-files>, այց՝ 27.09.2018:
- 21 Manuel Castells, *Networks of Outrage and Hope: Social Movements in the Internet Age* (Cambridge: Polity, 2012):
- 22 «Asia Internet Use, Population Data and Facebook Statistics – December 2017», *Internet World Stats*, <https://www.internetworldstats.com/stats3.htm>, այց՝ 27.09.2018:
- 23 Աննա ժամակչյան, «Հայաստանը «ազգային միասնության» թակարդում», *Փոփոխության որոնումներ* (Երևան: Սոցիոսկոպ ԴԿ, 2016), էջ 9-40, <http://socioscope.am/archives/779>, այց՝ 1.11.2019:
- 24 «Սենք զգվում ենք ձեզանից. ակցիա ԱԺ-ի մոտ», *epress.am*, մայիսի 2, 2018, https://www.youtube.com/watch?time_continue=1&v=p-hx5i5eqPk, այց՝ 1.11.2019; «Չխտկվի, համբալ». ՀՀԿ-ականին հիշեցրել են նրա խոսքերը կարոտֆիլի մասին», *epress.am*, մայիսի 2, 2018, <https://www.youtube.com/watch?v=J1f7CZv6yE>, այց՝ 1.11.2019:
- 25 «Սերժը մեր «ոլաղամ» չի, մենք «ոլաղա» չունենք». ոստիկանները բռնության են դիմում», *epress.am*, www.youtube.com/watch?v=mh1btQRy-64, այց՝ 20.04.2018:
- 26 «Օլիգարխիայի վերջը եկել ա». բոլկոտում են ՍՍՍՏ ու Երևան Սիթի, *epress.am*, www.youtube.com/watch?v=InpR6Bu2FZU, այց՝ 20.04.2018:

27 Ուշ երեկոյան ուղիղ սահմանված ժամին՝ 23:00-ին, տան բաց դատուհաններից կանայք, երեխաները, ծերերը, հաշմանդանություն ունեցող անձինք և բոլոր ցանկացողները կաթսաների և շերտփների հարվածներով ճայնային ներկայությամբ էին լցնում իրենց տան բակերը՝ ցուցադրելով հեղափոխությանը իրենց մասնակցությունը: Այս ակցիայի առաջարկն արել էր կանանց իրավունքների և հաշմանդանություն ունեցողների իրավունքների դաշտողանության ջատագով, *Քաղաքացիական դայնամիկ* կուսակցության անդամ, ընդդիմադիր *Ելք* խմբակցության Երևանու ավագանու անդամ, անձամբ սայլակով տեղաշարժվող Չարուհի Բաթոյանը՝ ելույթ ունենալով հանրահավաքներից մեկի ժամանակ: Ակցիայի տեսաձայնագրությունները հետագայում տարածվում էին սոցիալական ցանցերով՝ քննարկելով և համեմատելով այս կան այն թաղամասում ակցիայի իմտենսիվությունը, տևողությունը և երաժշտականությունը:



ՅՈՒՆԻՍ
ԱՆՏՈՆՅԱՆ

«ՕԼԻԳԱՐԽՆՆԵՐԻ» ՎԵՐՋԸ:
ՄԻՆՉ- ՈՒ ՀԵՏ-ՀԵՂԱՓՈԽԱ-
ԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎԸ



ետ-խորհրդային իրականությունը ծնել է մի վերնախավ, որը հայտնի է «օլիգարխներ» հավաքական և տարբեր մոտեցումներ միավորող անվան տակ:¹ Այդ տերմինը իր գիտական և ոչ-գիտական իմաստավորմամբ հայտնի է անտիկ ժամանակներից («քչերի իշխանություն»), և ներկայումս ակտիվորեն կիրառվում է հետ-խորհրդային տարածքում, թեև տարբեր երկրներում այն կարող է ունենալ իմաստային նրբերանգներ: «Օլիգարխը» դարձել է հետ-խորհրդային Հայաստանի քաղաքական և տնտեսական վերնախավի հավաքական անվանումը, անկախ նրանից, թե արդյոք «օլիգարխներից» բոլորը համադատասխանում են այդ բառի տեսական բովանդակությանը, թե ոչ: Այս հոդվածում ես կփորձեմ ներկայացնել Հայաստանում այդ բառերի տեղական սոցիալական և մշակութային իմաստավորման² հիմնական կետերի հանրային կազմալուծման գործընթացը 2018 թ. ապրիլյան հեղափոխությանը անմիջադեպ հաջորդող ժամանակահատվածում (մայիս-հունիս ամիսներին), երբ տեղի էին ունենում հետհեղափոխական առաջին հանրային ընդվզումները օլիգարխների դեմ և նրանց գործունեության ու կենսաձևի հետ կապված առաջին քրեական բացահայտումները: Պետք է շեշտել նաև, որ այս հոդվածը վերջնականացնելու դեպքում (2018 թ. սեպտեմբեր) մշակված գործընթացը թեև դեռ շարունակվում է, սակայն արդեն հիմնականում կազմակերպվում էր մերթիմ քաղաքական և դատական ընթացակարգի շրջանակներում, ներկայացվում դատական էնդոյուսը կերտով, ինչի հետևանքով հանրային դիսկուրսը մնամ շարունակական բացահայտումներին ավելի հանգիստ էր արձագանքում:

ՀԱՅ ՕԼԻԳԱՐԽՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Հետևելով Ուիմթերգի սահմանմանը, որը իր հերթին հենվում էր Կորոլիի, Այգեկի, Լախմանի և այլոց աշխատանքների վրա³ օլիգարխիան հակիրճ կարելի է նկարագրել որպես իր ձեռքերում տնտեսական ռեսուրսներ կենտրոնացրած և դրանք իր անձնական (այլ ոչ թե ինստիտուցիոնալ) շահերին ծառայեցնող, քաղաքական կամ ռազմական իշխանությունը գործարկող վերնախավ: Հայկական «օլիգարխիան» կարող է բնութագրել որպես վերնախավի մեո-ֆեոդալական տեսակ,⁴ որոշ կարևոր բնութագրիչների շնորհիվ: Այդ բնութագրիչները հետևյալ են՝

- Ռեսուրսների կուտակման միջոցներ՝ տնտեսական մոնոպոլիաների, գործողությունների ոլորտների ոչ-ֆորմալ, բանակցային և նեղ մրցակցային բաժանում օլիգարխների միջև «կենտրոնական» իշխանության կողմից.
- Իրենց «կալվածքներում» կառավարման ու վերահսկման անսահման կարողություններ՝ քաղաքական գործընթացների, տարածքների ու համայնքների անձնական կամ միջնորդված վերահսկում բացարձակ ազդեցության ու իշխանության հետ մեկտեղ.
- Օլիգարխիկ կառավարման կլանային բնույթը.

- Իշխանության ու կառիտալների լեգիտիմացման ոչ օրինական, ոչ ֆիզիկական (այսինքն՝ փաստաթղթային), այլ սիմվոլիկ ձևեր, ինչդիպիսին են՝ կրոնը, սովորության իրավունքը կամ կրիմինալ օրենքները, որեստիժային փոխանակումը և անուանական ռազմավարությունները, սատարման ցանցերի ստեղծումը ազգակցական կլանների, ընդարձակված «ընտանիքների», ընկերակցական լայն շրջանի տեսքով և միջոցով, «ենթակաների» հետ հարաբերությունների կարգավորում դատարան-կլիենտ սկզբունքով.
- Յուրահատուկ կենսառձ և «օլիգարխիկ» մշակույթին բնորոշ կենսակերպ, սոցիալական, բարոյական, հաղորդակցական և էսթետիկ «կողերը», որոնց հիմքում ընկած է հարստության, որեստիժի և իշխանության սիմվոլիկ ներկայացման և ցուցադրման ձգտումը:⁵

Օլիգարխ, օլիգարխիա բառերը լայնորեն օգտագործվում է նաև տարբեր ոչ ակադեմիական դիսկուրսներում, տարբեր իմաստավորմամբ ու երանգավորմամբ: Իմաստավորման առաջին և երկրորդ չափումները տնտեսական ու քաղաքական են: Մեկին օլիգարխ կոչելու համար ամենահաճախակի կիրառվող չափանիշը հարստությունն է, որը, իհարկե, հարաբերական է: Անսահմանափակ ու սանձարձակ իշխանության կամ քաղաքական իշխանության լծակների ազատ կիրառման հատկանիշը նույնպես ընկալման կարևոր չափումն է, և, վերջապես, «օլիգարխ» ասելիս մարդիկ հասկանում են նաև որոշակի սոցիոմշակույթային հատկություններ՝ արտաքին տեսքը, վարքագիծը, կենսակերպը, փոխհարաբերությունները, էսթետիկ նախընտրությունները, սոցիալական կառիտալի ձեռքբերման ու օգտագործման առանձնահատկությունները և այլն: Կարելի է ասել, որ օլիգարխիայի մարդաբանական վերլուծությունը իր ուշադրության կենտրոնում է դրսևում հենց այդ չափումները:

Սակայն կարևոր է նշել, որ «օլիգարխ» բնորոշումը որդես անհատական և խմբային ինքնության մաս մեծամասամբ ժխտվում է, իր հանրային հիմնականում բացասական ընկալումների շնորհիվ:⁶ Սամվել Ալեքսանյանի-ԼՖիկի խոսքերով ասած՝ «Ես օլիգարխ չեմ»: Պարադոքսալ կերպով, իրեն օլիգարխ չճանաչելով, նա փորձում է իրեն սահմանազատել օլիգարխներին վերաբերող այն կաղաթարներից, որոնց ստեղծմանը անձամբ նույնպես է՝ լինելով որոշակի վարքագծային ու արժեքային մոդելի օրինակներից մեկը: Չնայած նման «ուրացումներին», այնուամենայնիվ, ենթադրվում է, որ օլիգարխները ունեն խմբային սոլիդարություն, որը արտահայտվում է կուսակցական, ազգակցական, մատրիմոնիալ, ընկերական («շրջադաս»), կրիմինալ և գործնական կառիտի համատեքստում:⁷

ԹԱՎՇՅԱ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԼԻԳԱՐԽԻԱԼ

2018 թ. թավշյա հեղափոխության և դրան հաջորդած իրադարձությունների ընթացքում ու արդյունքում այդ իրողությունները արագորեն սկսեցին փոխվել:⁸

Չեղափոխությունների ընթացքում և արդյունքում տեղի ունեցող հանրային՝ սոցիալական, տնտեսական, մշակութային փոխակերպումների տրամաբանությունը բազմիցս ուսումնասիրվել է տարբեր հեղափոխությունների նյութի հիման վրա:⁹ Դրանց մեջ առանձնահատուկ է դասարանական «հիմ» աշխարհի (կարգի, ռեժիմի) քանդումն և կազմաքանդումն և դարձյալ դասարանական «նոր» աշխարհի (կարգի) կառուցման գաղափարները, ինչպես նաև ի հայտ եկած «նոր» ազգի կառուցման հիմնախնդիրը: Թավշյա հեղափոխության գաղափարական և սոցիալական հիմքը դեռ լիարժեք ուսումնասիրվի, «նորի» հստակ դասակարգը դեռ մշակման մեջ է, բայց «հիմ» կազմաքանդումն գործընթացը սկսվել է իշխանափոխությունից անմիջապես հետո: Եվ այդ գործընթացի առաջին թիրախը դարձավ «հիմ ռեժիմը» թե՛ ֆիզիկապես, թե՛ գաղափարապես մարմնավորող «օլիգարխիա» կոչվող սոցիալական խումբը, որի տնտեսական, քաղաքական ու իմաստային աղակառուցումն ու կազմաքանդումը (դեկոնստրուկցիա) ընկալվում էր նաև որպես հեղափոխության մոտակներից մեկը, ինչի մասին վկայում են ցույցերի ժամանակ «օլիգարխների» դեմ ուղղված դիմադրությունները, կոչերը և ակցիաները:¹⁰ Ինչպես ես դատարանական տնտեսական և անուղղակի՝ մշակութային ու սոցիալական չափումները:

Ուղիղ՝ քաղաքական ու տնտեսական մասը ներառում է այդ իրողությունների բացահայտումն ու քանդումը: Առաջին հերթին դա քաղաքական ու նյութական հսկայական կարողությունների ռեսուրսային բազայի ոչնչացումն է՝ ստվերային իշխանական բուրգերի, մոնոպոլիստական արտոնությունների վերաբերյալ ոչ-ֆորմալ դասարանավորվածությունների, ոչ-ֆորմալ տնտեսական կախվածությունների համակարգի բացահայտումն ու «վնասազերծումը»: Դրա վառ օրինակները կարող են լինել օլիգարխներից դատարանի հանրախառնության, արտադրամասերի, զվարճանքի օբյեկտների հարկման համակարգի (կամ ավելի ճիշտ՝ չհարկման) վերաբերյալ դասարանավորվածություններն ու արտոնությունների հայտնաբերումն ու վերացումը, աղանդատականների ներմուծման մոնոպոլիստների վերացումը, բրգաձև շրջանների, «գրողական» կազմակերպությունների միջոցով ղեկավարվող ոչ-մրցակցային ու ոչ-մոտակա հարմար օգտվելու դրակառուցումներին վերջ տալը: Այս օրերին ակամատես ենք լինում նաև ստվերային իշխանական համակարգերի բացահայտմանը, օրինակ՝ Էջմիածնում Մանվել Գրիգորյանի ընտանիքի կառուցած համակարգը, որը քաղաքում ֆորմալ (տեղական ադմինիստրատիվ ու դատական իշխանության լծակների) և ոչ-ֆորմալ (*Երկրաշառի կամավորների միության*, թիկնադասների, մերձավոր կրիմինալ տարրերի) զինված խմբավորումների միջոցով ստեղծել էր փոքր մեծ-ֆեոդալական բռնապետություն: Այդ գործընթացը կարծես թե շարունակվել է և ամենայն հավանականությամբ տարածվելու է այլ լոկալ «կալվածք-բռնատիրությունների» վրա: Այդ ամենը բերում է օլիգարխիայի տնտեսական հենակների ամհետացմանը:

Չուզահեռաբար տեղի ունեցավ և դեռ տեղի է ունենում օլիգարխիայի քաղա-

քական հիմնասյուների ոչնչացումը՝ *Հանրառայնության կուսակցության* և խաղի կանոնները թելադրող մի քանի հանգուցային անհատների՝ Սերժ Սարգսյանի և նրան առավել մոտ կանգնած ու ազդեցիկ մի քանի քաղաքական գործիչների: Ինչդեռ նշում էին թավշյա հեղափոխությամբ իշխանության եկած նոր առաջնորդները, «խաղի դայնամները փոխվել են, հին դայնամավորվածությունները այլևս գոյություն չունեն»:

Սակայն ինձ նման սոցիալական գիտությունների ներկայացուցիչների համար ոչ թակաս հետաքրքիր ու կարևոր են այլ՝ սոցիալական ու մշակութային հարթակներում տեղի ունեցող գործընթացները: Դա օլիգարխիկ համակարգի սոցիո-մշակութային դատկերի խտացրած ու բացահայտ ներկայացումն է ու դրա շրջանակներում ձևավորված իմաստների, արժեքների և սիմվոլների կազմաքանդումը և քանդումը (deconstruction and destruction): Դա նույնպես ունի մի քանի մարկարդակներ:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՂ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Օլիգարխի իշխանության սիմվոլիկ արժեքը չափվում էր վախի ու շահի կոնցեպտներով: Հեղափոխության առաջին մվաճումներից մեկն էր, փաստորեն, վախի կոնցեպտի արժեզրումը, «վախի դատմեշի» քանդումը, ինչը անմիջապես խոցելի դարձրեց օլիգարխի իշխանությունը և բերեց օլիգարխ-համայնք փոխհարաբերությունների նոր որակի : Դեռ հեղափոխության ընթացքում Գեղարքունիք մարզի Վարդենիկ գյուղում տեղի ունեցած շատ հետաքրքիր միջադեպը դատկերագրողում է այդ միտքը: Փորձելով տեղական «օլիգարխ», ղատգամավոր ու գործարար Հակոբ Հակոբյանին (Լեդի Հակոբ մականվամբ) ստիղել քվեարկել վարչապետության թեկնածու Նիկոլ Փաշինյանի օգտին՝ գյուղացիները արգելափակել են Հակոբյանին ղատկանող ՀԷԿ-ը: Օլիգարխը ստիղված էր գնալ բանակցությունների վարդենիկցիների հետ, որոնք նաև ղատհանջում էին, որ ՀԷԿ-ի եկամտի մասը ուղղվի գյուղի կարիքները հոգալուն: Դա «Ֆեոդալի» դեմ գյուղացիների ընդվզման անհաջող փորձ կլիներ (և իրականում այն որոշ չափով անհաջող էր, քանի որ Լեդի Հակոբը քվեարկեց Նիկոլի դեմ), սակայն հեղափոխության ընդհանուր ֆոնի վրա այդ վախի հաղթահարման առաջին փորձը բերեց վախի վրա հիմնված ստորադաս փոխհարաբերությունների հավասարակշիռ ուժերի բանակցային գործընթացի վերածմանը: Այդ բանակցությունների արդյունքում վարդենիկցիները ստեղծել են հիմնադրամ, ուր փոխանցվելու է ՀԷԿ-ի եկամտի մի մասը և դրա հաշվին արդեն լուծվում է գյուղի փողոցային լուսավորության խնդիրը,¹¹ միաժամանակ բարձրաձայնվում են բնաղատանական խնդիրները: Սա հարաբերությունների լրիվ այլ, գործընկերային մակարդակն է:

Օլիգարխի իշխանության սիմվոլիկ «մերժումը» կարող էինք տեսնել դեռ հեղափոխական կարգախոսների և ղատստանների օրինակով, բայց ավելի կար-

և որ իշխանության սոցիալական ոչնչացման գործընթացի օրինակը տեսնում ենք Էջմիածնում, Մանվել Գրիգորյանի դեմքում: ԱՄԾ-ի բացահայտումների հետ կապված անընդհատ կրկնվող տեսասյուժեների, հարցազրույցների, սոցցանցերում «Մանվելից մի դեմք ես էլ լուստմեմ» ինքնաբերական առաջացած արշավի շրջանակներում կարելի է տեսնել ինչդեպ է տեղի ունենում գեներալ Մանվելի, ամենակարող օլիգարխներից մեկի սոցիալական ոչնչացումը, նրա ամձի «առասույնի» (որին, սակայն, վաղուց ոչ ոք չէր հավատում) հանրային կազմաքանդումը և նրա ամձի աղանախարհայնացումը (dehumanization)՝ նրա ամնարդկային, «գիշատիչ», մանիակալ-հիվանդ բնույթի մասին սահմնկեցուցիչ լուստմեմներում: Հատուկ իմաստավորված կարող է լինել և Մանվելի ամձնական գազանանոցի հետ կապված սյուժեն, որտեղ շեշտվում է գիշատիչների հյուծված, թերզարգացած լինելը: «Մանվելին փչացրին»-ը գողական ժարգոնից ամենատարածված արտահայտություններից մեկն է, որը հաճախ կարելի էր լսել քննարկումների ժամանակ: Մանվելի սյուժեի հետ կապված վերախաղարկվում են «ամոթի», «ղատվի» կոնցեպտները, որոնք ենթադրաբար արժեզրկված էին, իսկ հանցագործ օլիգարխ-գեներալի մերկացման հետ մեկտեղ տեղի է ունենում նրանց վերարժևորումը:

ԻՇԽԱՆՈՒԹԱՆ ԼԵԳԻՏԻՄԱՑՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԻՄՎՈԼԻԿ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Ձևափոխվում են նաև օլիգարխիկ ազդեցության ամուղղակի լծակները, որոնցից ամենանկատելի էր, թերևս, բարեգործությունը: Մինչ-հեղափոխական շրջանում բարեգործությունը օլիգարխների դրական կերտարի կառուցման և ղախողանման հիմնական ռեսուրսն էր: Բարեգործությունը, ի դեմ, ևս որոշ չափով մոնոպոլացված էր, ամեն մի օլիգարխ առավել հայտնի էր որդես ոլորտներից մեկի (սոլորտի կամ սոլորտաձևերի, առողջադասության, կրթության և այլն) բարերար: Հետաքրքիր է, որ դեռ հեղափոխության ընթացքում, լավ չըմբռնելով դրա բնույթը, որոշ օլիգարխներ փորձում էին մեղմել իրավիճակը բարեգործությամբ: Այսպես, իմ ամձնական տեղեկություններով, Սամվել Ալեքսանյանը, «Սիթի» սուպերմարկետների ցանցի բոլորտման ժամանակ փորձեց արագորեն իրականացնել մի բանի բարեգործական ակցիաներ՝ մի բանի օգտատերերին ձրի բուժում ու դեղորայք աղանախարկելով իր բժշկական կենտրոններից մեկում: Սակայն, դրանք ոչ ցանկալի արձագանք ստացան, ոչ էլ որևէ հետևանք ունեցան:

Հեղափոխությունը, շեշտելով օլիգարխիկ կառիտալի և հանրային սեփականության մախման կաղը, փաստորեն արժեզրկեց բարեգործությունը, որը սկսվեց ընկալվել որդես հարկերից խուսափելու ձև: Վերոհիշյալ Վարդենիկի օրինակով կարող ենք տեսնել, թե ինչդեպ այն, ինչը նախկինում կարող էր որդես բարեգործություն դիտարկվել (օլիգարխատական ՀԷԿ-ի եկամուտների հաշվին գյուղի խնդիրների լուծումը), այսօր ընկալվում է որդես գործարարի

կողմից արդարացի դահանջվող փոխհատուցում բնադահողանական ու այլ խախտումների ու գյուղին դատաճառած անհարմարությունների դիմաց:

Յենց այդ դատաճառով 2018-ի հունիսին Ազգային ժողովում քննարկվող բարեգործության մասին օրենքը առաջացրեց լուրջ արձագանք որդես բարեգործ հայտնի օլիգարխներից մեկի *Բարգավաճ Յայաստան* կուսակցության կողմից: Նոր օրենքի շրջանակներում դետությունը դատրաստվում է խիստ վերահսկման տակ առնել բարեգործությունը, որդեսզի այն չօգտագործվի որդես իշխանավորի կերդարը բարելավելու կամ ընտրողների վրա ազդելու լծակ: Բարեգործությունը, այտիստվ, հակադրվում է հարկային դարտականություններին, իսկ բարեգործական կամքն ու անձնական ձգտումը՝ քաղաքացիական դարտքին ու կամքին:

Նախկին իշխանությունների ոչ-Ֆորմալ լեզիտիմացման մեջ կարևոր տեղ է խաղացել կրոնը և, մասնավորադես, Յայ առաքելական եկեղեցին: Եկեղեցու արտոնյալ վիճակը, օլիգարխների ու բարձրաստիճան կղերականության մտերմիկ հարաբերությունները, եկեղեցաշինության բուռն գործընթացը, խաչքավորների ինստիտուտի քաղաքականադես վերաիմաստավորված վերահաստատումը, եկեղեցու կողմից տարբեր կոոուդցիոն գործընթացների թողարկումը (օրինակ՝ նախագահի եղբայր Լևոն Սարգսյանին դատկանող *Փյունիկ* հիմնադրամը, որի վերաբերյալ արդեն հրադարակվում են կոոուդցիոն սխեմաների մեջ ակտիվ մասնակցություն ունենալու մասին կասկածներ) գործել է եկեղեցու հովանավորությամբ, մասնավորադես, նրա գրանցման հասցեն է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:¹² Գագիկ Օառուկյանը ժամանակին իր նախընտրական արշավը զգալիորեն կաոուցել է եկեղեցաշինության իր նախաձեռնությունների շուրջ:¹³ Արդեն իսկ հեղափոխության օրերին եկեղեցական իշխանություններին «մերժելու» կանչեր կային, իսկ 2018 թ. հունիսի սկզբներին սկսած կաթողիկոսի դեմ շարժումը «Նոր Յայաստան, նոր հայրադես» կարգախոսով, որի հիմնական նոդատակն է գահընկեց անել Կաթողիկոս Գարեգին II-ին, փաստորեն, այդ լեզիտիմացման աղբյուրի վերացման ու արժեզրկման փորձ է:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ «ՕԼԻԳԱՐԽԻԿ» ԿԵՐՊՈՐԸ

Նախկին «հարուստ» իշխանությամը՝ իր օլիգարխիկ աոորյայի բուրբ բաղադրամասերով (ադրելակերդի ճոխությամբ, դրեստիժայնության մշակույթով, սոցիալական մեկուսացմամբ, իշխանության «վայելմամբ») այսօր հակադրվում է բուրրովին այլ կերդար՝ «համեստ» իշխանությունը (կենսակերդի ժուժկալությամբ, համեստությամբ, ծաոայության «առաքելությամբ», ժողովրդի հետ մշտական կադով): Դրա հետ կադված մամուլում հայտնվող սյուժեները ևս կազմաքանդում ու արժեզրկում են օլիգարխիկ մշակույթի սկզբունքները: Դրան նաև նոդատեցին Նիկոլ Փաշինյանի և այլոց կողմից «ադաաոասղելականացված» ճոխ աշխատասենյակներն ու նստավայրերը: Վերջին-

ներին զաղտնիությունն ու դրեստիժը «ստորացվեցին» համաժողովրդական հեզմական շռուի մաս կազմելով: Տավուշի մարզում 2018 թ. օգոստոսին տեղի ունեցած ժողովրդի հետ հանդիմանա ժամանակ Փաշինյանը հատուկ շեշտեց, որ. «Այլևս որևէ դաշտոնյա չի հարստանա դետություն և ժողովրդի աղքատացման հաշվին»: Դա կարևոր մեսիջ էր, որը ևս հակադրվում է օլիգարխ իշխանավորի կերպարին:

Նախկին օլիգարխիկ մշակույթի կարևոր կետերից մեկն է նաև դրեստիժային փոխանակման հիմնական սկզբունքը, որը ընկած է օլիգարխիկ համայնքի սոցիալական կայունության և սոլիդարության հիմքում: Փոխադարձ նվիրատվություններ, մատրիմոնիալ փոխանակումներ, փոխադարձ խնջույքների դրակտիկա՝ այդ ամենը կազմաքանդվում ու արժեզրկվում է բոլորովին այլ կադադարների հակադրմամբ՝ աշխատանքային հարաբերությունների, մեդոտիզմի, այսինքն «սամիկ-քավոր» հարաբերությունների ժխտմամբ և այլն: Հետաքրքիր է, որ դրա հետ մեկտեղ արժեզրկվում ու վերանում է և «օլիգարխիկ» համերաշխությունը (սոլիդարությունը): Դա ցույց է տալիս այն արագությունը, որով նախկին ընկերները իրար ուրանում են, և համերաշխ, հավաքված ու կազմակերպված գործողությունները բացակայում են: Շմայս մականունով օլիգարխ-դատազամավորի (Աոաքել Մովսիսյանի) ձերբակալման առթիվ կատակներ էին անգամ հնչում, որ խեղճը չգիտի, թե ում օգնությանը դիմի, ո՛չ նախկին կուսակցական ընկերներն են մեքքին կանգնել, ո՛չ էլ իրավական մարմինները:

Վերջադես, կազմաքանդվում է և քաղաքական վերնախավի օլիգարխիկ «տիդար» համարվող ֆիզիկական կերպարը: Գեր, ճարդոտ մարմիններին ու մշտադես բացակայող, քմաթաթախ հայացքներին հակադրվում են նոր իշխանության նիհար, սդորտային (Փաշինյանի և այլոց, օրինակ՝ ոստիկանադես Օսիոյանի սդորտային հակումները լայն գովազդվում են) կազմվածքները և ինտելեկտուալ հայացքները, օլիգարխների կանանց ճոխ ու թանկարժեք հանդերձանքին և զարդերին՝ առաջին տիկնոջ՝ Աննա Հակոբյանի դարզ ու համեստ ոճը,¹⁴ ազգակցական և դրացիական կադերին հակադրվում են զաղափարական համագործակցության և դրոՖեսիոնալիզմի կադադարները, քաղաքական «արական» մշակույթին՝ գենդերային հավասարության մշակույթը, սովորության իրավունքը՝ օրենքին:


Թվարկված սիմվոլիկ արժեքների փոխակերմվող համակարգը դեռ չի նշանակում, որ տեղի կունենա արմատական ու երկարատև փոխակերմում: Ամենայն հավանականությամբ հետ-հեղափոխական կայունացման հետ մեկտեղ մենք կտեսնենք նաև որոշ դրակտիկաների ու արժեքների մասնակի վերադարձ, սակայն թերևս արդեն այլ քաղաքական իրողությունների շրջանակներում:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՃՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Արդյո՞ք եկել է կան գալու է օլիգարխիայի վերջը: Ե՛վ այո, և՛ ոչ: Այո, այն իմաս-

տով, որ ակնհայտ է տնտեսական ու քաղաքական իշխանության տարանջատումը լիցենզիայի կառավարման մակարդակում: Խոշոր գործարարները արդեն իշխանության ուղղակի լծակներ չունեն, փորձում են գոյատևել մրցակցային դաշտում, և բյուջեն այժմ չի հանդիսանում նրանց հիմնական կերակրատաշտերից մեկը: Մյուս կողմից՝ փոքր համայնքների մակարդակում դեռ կան իրավիճակներ, երբ գործարարները ինչ-որ կերպ ասոցացվում են իշխանության հետ: Ավելին՝ մարդիկ դեռ լատրաստ են ի դեմս տեղական մեծահարուստի և հանուն համայնքային կայուն ֆինանսական ռեսուրս ունենալու զոհաբերել քաղաքական ազատության մի մասը: Սակայն, բոլոր դեղքերում ներկայիս Հայաստանում գոյություն ունեցող խոշոր գործարարների համար արդեն խնդրահարույց է «օլիգարխիայի» հետ ասոցացվելը. հեղափոխական և հետ-հեղափոխական գործընթացների համատեքստում այդ կոնցեպտը արժեզրկվել է: Այդ սոցիալական շերտը ակնհայտորեն ենթարկվում է սոցիո-մշակութային լուրջ փոխակերթումների՝ կարգավիճակի, իշխանության և ազդեցության սահմանների ու մշակութային արժեհամակարգի տեսակետից:

- 1 Սոցիոլոգ Գեորգի Դեյուլույանը նրանց բնութագրում է որպես «նոր կադրիստներ»:
(Georgi Derluguian, *Bourdieu's Secret Admirer in the Caucasus* (London, New-York: Verso, 2004), էջ 155):
- 2 Թե ինչ է կազմում հետ-խորհրդային հայաստանյան «օլիգարխ» հասկացության մշակութային և սոցիալական բովանդակությունը, այդ մասին տե՛ս՝ Yulia Antonyan, «Being an “Oligarch” in the Armenian Way», Yulia Antonyan (խմբ.), *Elites and “Elites”. Transformations of Social Structures in Post-soviet Armenia and Georgia* (Yerevan: 2016), էջ 116-126:
- 3 Jeffrey Winters, *Oligarchy* (N. Y: Cambridge University Press, 2011), էջ 6:
- 4 Օլիգարխների «Ֆեոդալական» տեսակի օրինակները մենք կարող ենք տեսնել 14 դարի Ֆլորենցիայում (Րիչարդ Լախման, *Капиталисты поневоле. Конфликт элит и экономические преобразования в Европе раннего нового времени* (Москва: Территория будущего, 2010), էջ 126-174): Որոշ կարևոր նմանությունների շնորհիվ կարելի է հետաքրքիր գուգահեռներ տանել ֆլորենտական և հայկական իրականությունների միջև:
- 5 Այդ կետերը ավելի մանրամասն ներկայացված են *Elites and “Elites”. Transformations of Social Structures in Post-soviet Armenia and Georgia*, էջ 110-171:
- 6 *Elites and “Elites”. Transformations of Social Structures in Post-soviet Armenia and Georgia*, էջ 112:
- 7 *Elites and “Elites”. Transformations of Social Structures in Post-soviet Armenia and Georgia*, էջ 142-146:
- 8 Թավշյա հեղափոխության ընդհանուր սոցիալ-քաղաքական հակիրճ բնութագրությունը տե՛ս Armine Ishkhanian, «Armenia's Unfinished Revolution», *Current History*, h. 117, թիվ 801 (2018), էջ 271-276:
- 9 Տե՛ս, օրինակ, Эрик Хобсбаум, *Век революции, 1789-1848* (Ростов-на-Дону: Феникс, 1999); նույն հեղինակի՝ *Век капитала, 1848-1875* (Ростов-на-Дону: Феникс, 1999); Ханна Арендт, *О революции* (Москва: Европа, 2011); Ronald Suny, *The Revenge of the Past. Nationalism, Revolution and the Collapse of the Soviet Union* (Stanford: Stanford University Press, 1993) և այլք:
- 10 Օրինակ, «օլիգարխ» ընկալվող քաղաքական կերտարների դիմանկարների ցուցադրական ոտնահարելը կամ «մերժելը» նրանց լիցենզիաներում լիցենզիայի դեմքերի վրա սև գծեր քաշելու ճանադարիով և այլն:
- 11 Տե՛ս այս թեմայով հրատարակված զանազան մամուլ նյութերը՝ <https://www.aravot.am/2018/05/10/956196/>, <https://ecolor.org/hy/news/energy/—/10190/>; <https://ecolor.org/hy/news/energy/—/10116/>, այց՝ 1.11.2019:
- 12 Տե՛ս *Փյունիկ* հիմնադրամին վերաբերող մամուլ համադատասխան հրատարակումները՝ <http://armtimes.com/hy/article/139446>, <http://catcut.net/fv/w>, այց՝ 1.11.2019:
- 13 Yulia Antonyan, «Political Power and Church Construction in Armenia», Alexander Agadjanian, Ansgar Jodicke, Ebert van Der Zverde (խմբ.), *Religion, Nation and Democracy in South Caucasus* (London & New-York: Routledge, 2015), էջ 86-92:
- 14 Սուաչին տիկինը շարունակաբար ենթարկվում է հանրային մամուլակրկիտ վերլուծության, նրան «չի թույլատրվում» դրսևորել որևէ հատկամիջ, որը կարող է հիշեցնել օլիգարխի կամանգ: Օրինակ՝ 2018 թ. սեպտեմբերի իր Փարիզ կատարած այցի լիցենզիայի մասին հարցնելու փոխարեն «հայտարարագրել» իր կատարած բոլոր գնումները, որպեսզի վերջ տա տեղի սատակների: Նա մաս բնադատվեց անձնական վարսահարդար ունենալու համար:



ՅՈՒՆԻԱՆԱ
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ
ԽԱՎԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ՝
ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ



իջին խավը, սովորաբար, դիտարկվում է որդես հասարակության «ողնաշար», որը կատարում է հասարակության կայունացման և ներդաշնակեցման գործառույթները: Հայաստանում միջին խավն ուսումնասիրելու գաղափարը բխեց «Հայաստանում միջին խավ չկա» տարածված թյուր կարծիքից:

Նեովեբերյան մոտեցման համաձայն, միջին խավը հիմնված է կրթության, զբաղվածության և սեփականության ցենզի վրա, որոնք խթանում են մարդկային կադրերի զարգացումը: Տարբեր հետազոտությունների արդյունքների համաձայն ժամանակակից Հայաստանում միջին խավը համադաստասխանում է այս հիմնական բնութագրիչներին և կատարում է իրեն վերագրված գործառույթները, սակայն այն համախմբված չէ և իրազեկ չէ երկրում որոշումների ընդունման գործընթացին իր մասնակցության կարևորության մասին, չի նույնացնում իր առաջադի հեռանկարները երկրի առաջադի հետ, և ամենամահանգստացնողն այն է, որ միջին խավի մեծ մասը ցանկանում է արտագաղթել Հայաստանից:

Միջին խավի տնտեսական կադրերի ձևավորումը չհանգեցրեց մշակութային կադրերի ձևավորմանը, որը կկարողանար համախմբել նրան և խթանել ամբողջ հասարակության զարգացումը: Մշակութային կադրերն այստեղ դիտարկվում է լայն սոցիոլոգիական իմաստով՝ ներառելով սոցիալական արժեքները, նորմալության մոտեցումները, ղեկավարության և երկրի նկատմամբ վերաբերմունքը, սոցիալական փոխազդեցությունը, ինչպես նաև սեփական դերի ընկալումը սոցիալական համակարգի ներքո և վերջինիս զարգացման հեռանկարները, ինքնաներկայացումը և ադրեթիկերի ու ժամանցի կառուցվածքը:

Այն փաստը, որ միջին խավը կարողացել է ձևավորել տնտեսական բազիս, բայց չի համախմբվել, վկայում է տևական անոմիայի մասին, որը լավագույնս նկարագրել է Ռոբերտ Մերտոնը իր անոմիայի հայեցակարգում՝¹ լրամշակելով էմիլ Դյուրկհեյմի անոմիայի տեսությունը:² Եթե Դյուրկհեյմը անոմիա հասկացությունը հիմնականում կադրում է արագ փոփոխվող սոցիալական դրամաներում վարքի նորմատիվ կարգավորման թուլացման հետ, ապա Մերտոնի տեսության համաձայն անոմիան մշակույթի կառուցվածքային աղակալայունացման արդյունք է, որը սոցիալական համակարգում տևական սոցիալ-հոգեբանական լարվածության գործոն է հանդիսանում:

Մեր հասարակության մեջ խոսքը հենց տևական անոմիայի մասին է: Կարելի է ասել՝ արմատավորված անոմիայի: Մշակույթի կառուցվածքային աղակալայունացումը դրամանավորված է արժեքային կողմնորոշումների փոխակերպմամբ: Արժեք-նորմատակները դադարեցվում են մոմիմալ, դեկլարատիվ մակարդակում և չեն դառնում հիմնավորում գործող նորմերի համար: Նորմերն այլևս հիմնավորված չեն արժեքներով: Նորմերի և արժեքների միջև ամհամաձայնեցվածությունը, ամհամադաստասխանությունն ու հակասությունն այնքան բարձր մակարդակի վրա են, որ արժեքային կողմնորոշումների, նորմատակների, գաղափարախոսության, միջոցների և մոտեցումների միջև հավասարակշռություն չի գոյանում:

Դիտարկենք միջին խավի աղակալյունացումը արժեքանորմատիվ դաշտում: Սոցիալական բոլոր ոլորտներում *դեկլարատիվ մակարդակում հայտնի է՝ ինչ էլ տեղտը անել, բայց հայտնի չէ՝ ինչդեմ*: Փատորեն՝ արժեքը չի արտացոլվում նորմի մեջ: Կա արժեք, չկա նորմ: Առաջ բաշելով արժեք և նորմատիվ մակարդակում շեղվելով դրա ղահողանումից, մանիդուլացիայի ենթարկելով նդատակի իրացման տարբեր նորմատիվ եղանակները՝ կամա թե ակամա մանիդուլացիայի են ենթարկվում արժեքի իրացման, ղահողանման և փոխանցման եղանակները: Արդյունքում առաջանում և ամրագրվում են այնդիսի նորմատիվ ղրակտիկաներ,³ որոնք, ըստ տության, չեն նդաստում ի սկզբանե հայտարարված նդատակների իրացմանը: Դրանք մնալով չիրացված՝ ամենկին չեն անեանում ձևավորված լեգիտիմացված և ինքնաբերաբար իրակամացվող գործողությունների վերածված բազմաթիվ նորմատիվ ղրակտիկաների ետևում: Արդյունքում մենք ակամատես ենք դառնում կոգնիտիվ դիսոնանսը⁴ հաղթահարելու դասական օրինակների: Արժեքներն ու նորմերը բերվում են կոնսոնանսի, և ձևավորվում է հետևյալ մանիդուլացիաների շղթան՝

Դեկլարատիվ բոլորի կողմից ընդունված արժեք → Նորմատիվ լուծումների այլընտրանքի ընտրություն: Այլընտրանքների փաստարկված քննարկումը տեղի է ունենում ոչ թե ոացիոնալ դաշտում, այլ իշխանության, ուժի և հեղինակության, եթե ընդհանրադես տեղի է ունենում. լուծումը ղարտադրվում է ավտորիտար եղանակով: Այս փուլում արդեն ընտրության հիմքում դրվում են իրական դրդադատձառները, որոնք սակայն բողարկված են: → Ընտրվում է նորմ, որը որդես կանոն չի ամրադնդում և անգամ հակատում է հայտարարված արժեքին: – > Ընտրված նորմը համարվում է միակ ձիշտը և հնարավորը: Ընտրության իրական մոտիվների մասին հասարակությունը տեղյակ չէ: – > Այս սիմուլացիաների և դիսսիմուլացիաների⁵ արդյունքում ամրադնդվում է կարծրատիդային կատ հայտարարված արժեքի և այդ արժեքին չհամադատասխանող, կամ անգամ հակասող նորմի միջև: – > Այնուհետև դիսկուրսը սովորաբար տեղափոխվում է նորմատիվ դաշտ, որտեղ իրական դրդադատձառները քողարկելու նդատակով, արժեքների որևէ քննարկում, փաստարկում և մեկնաբանություն այլևս տեղի չի ունենում:

Այս ամրադնդված կարծրատիդային կատը դառնում է կայուն մշակութային ղրակտիկա՝ հանգեցնելով մեկ այլ ծայրահեղության՝ *բոլորը գիտեն՝ ինչդեմ, բայց չգիտեն՝ ինչի համար*: Կա նորմ, չկա արժեք: Առաջանում է արժեքով չհիմնավորված նորմերի ամբողջություն: Լինելով բավական դյուրիճ՝ այս ղրակտիկաները տարածվում են հասարակության մեջ՝ անընդհատ լրամշակվելով: Զատկադես խնդրահարույց են՝ սերնդից սերունդ այս ղրակտիկաների փոխանցման ժամանակ տեղի ունեցող փոխակերդումները: Զաջող սերունդը երբեմն չի փնտրում իմաստներ և առաջնորդվելով ղահողանողական մղումներով՝ կիրառում է նույնանման ղրակտիկաներ: Սակայն որոշ դեղբերում նոր սերունդը փնտրում է, բայց չի գտնում արժեքային հիմնավորումներ կամ հանգում է հակասությունների, երբ նորմը չի համադատասխանում արժեքին, մի-

ջոցը չի բխում նոյառակից: Միջոցները խեղաթյուրվում են՝ վտանգելով արժեք-նոյառակների իսկությունն ու լեգիտիմությունը: Ժամանակ առ ժամանակ այս հակասությունը բացահայտվում է, և հասարակությունը սկսում է փնտրել հավասարակշռության նոր ձևաչափ:

Մի փոքր կանգ առնենք հիմնավորման և փաստարկման գործընթացների վրա: Նշված գործընթացների կարևորագույն հարցն է՝ «Ինչո՞ւ: Ինչո՞ւ ենք մենք այսպես վարվում»: Այս հարցի լուծումը հաճախ փնտրում ենք անցյալում, ավանդույթներում, միջերկրում՝ մոռանալով, որ նոյառակները աղաճայում են: Մյուս ուղղամարտությունը այլ մարդկանց փորձի, այլ մշակութային յուրահատկանքների ուսումնասիրությունն է՝ արժեքների բեմադրումը, որը հիմնականում ավարտվում է նմանակամբ և ոչ թե իմաստավորմամբ: Այնինչ արժեքները և դրանց մեկնաբանությունը համդիսանում են նորմալության իմաստավորման հիմք՝ առանց որի նորմալությունը դառնում է շատ հեղինակալի:

Որոշեցի ավելի լայն լինի՝ ինչի մասին է խոսքը և որքան տարածված է երևույթը, վերը նկարագրված շրջայի աշխատանքը ներկայացնենք օրինակներով: Մշակութային դաշտը կազմող բոլոր արժեքները դիտարկել հմարավոր չէ, կանդիդատներն ամենակարևորներին և ամենախնդրահարույցներին:

Բոլորս ուզում ենք *հարուստ* լինել և շատ փող ունենալ: Խոսքը հենց հարստության մասին է որոշեցի արժեք-նոյառակ և ոչ թե ռեսուրսների՝ որոշեցի արժեք-միջոց: Բայց այդ մասին լուռ ենք, տաբու ենք դարձրել այդ թեման, ընդունված չէ այդ մասին բարձրաձայնելը: Արդյունքում խեղաթյուրվում է նորմատիվ վարքը: Հարստանալու ամենալեգիտիմ և օրինական ճանապարհը բարձր աշխատավարձն է: Բայց երբ լուռ ենք իրական նոյառակի մասին, ստիպված ենք նորմատիվ վարքը նույնպես բողոքել: Ասում ենք, որ աշխատավարձի համար չենք աշխատում: Դեկլարատիվ մակարդակում աշխատավարձը կարևոր չէ, գործն է կարևոր: Իրական մոտիվը մնում է հարստանալը, իսկ օրինական նորմատիվ վարքը մերժվում է, արդյունքում խեղաթյուրվում է ևս մեկ արժեք՝ աշխատանքը: Մարդը դադարում է արժևորել իր աշխատանքը, կորցնում է հարգանքը սեփական գործի նկատմամբ: Եվ շրջան շարունակվում է. իրազեկ, արդյունավետ, լույս աշխատողը դառնում է նոստենս՝ ծաղրի արժանի: Իսկ հարստանալու մոտիվը ոչ մի տեղ չի կորչում: Արդյունքում ձևավորվում են նորարարական նորմատիվ յուրահատկանքներ՝ գողություն, կոռուպցիա և այլն: Կոռուպցիայի՝ քայքայման են ենթարկվում առաջին հերթին արժեքները: Տեղի է ունենում *արժեքների կոռուպցիա*:

Նկատածան հաջորդ արժեքը *երեխան* է: Երեխան արժեք է մեր հասարակության մեջ, երեխա ունենալը՝ հայտարարված նոյառակ: Բայց շատ քչերն են մտածում՝ ինչու են երեխա ունենում, և ինչպես է մեծանում վարվել այդ երեխաների հետ նրանց լույս աշխարհի բերելուց հետո: Խոսքը, մասնավորապես, դաստիարակության մեթոդների, ընտանիքում ոչ բռնի փոխհարաբերությունների մասին է: Ունենք օգտագործում են երեխաներին որոշեցի արժեք-միջոց՝ ծերու-

թյունն աղահովելու համար: Երեխաներին դարձնելով գերագույն արժեք՝ ծնողները սկսում են ամեն ինչ ամել և ավելի հաճախ զոհաբերել երեխայի համար՝ մոռանալով գերագույն արժեքին՝ որդես ինքնուրույն ամձ ձևավորելու կարևորությունը: Արդյունքում մեծանում է երեխա, որը ստանում է ամեն ինչ, բայց չի կարող ոչինչ:

Ամուսնանալ առանց սիրելու, ոչ թե ընտանիք ստեղծելու, այլ ճոխ հարսամիք կազմակերպելու համար: Ճոխ հարսամիք՝ վերցնելով վարկեր և չունենալով բնակարան ձեռք բերելու հնարավորություններ: Այս մորմատիվ յղակտիկաները շատ տարածված են, դրանց արժեքային հիմնավորումը կամ չի իմաստավորվում, կամ խեղաթյուրվում է:

Գենդերային փոխհարաբերություններում մույնդես առկա է արժեքների կոռուպցիա: Աղջկան դաստիարակում են հնազանդ, կյանքի բոլոր փուլերում սոցիալական մորմներ մրան տանում են եկամտաբեր աշխատատեղերից խուսափելու տրամագծով: Ընտանիքը, դստեր համար մասնագիտություն ընտրելիս, ընտրում է կանացի մասնագիտություն, աղագա մոր մասնագիտություն, ինչը ենթադրում է քիչ աշխատածամեր՝ ամեն ձևով մախաղատրաստելով կախյալ դերին: Տղամարդուն հրամցվում է ընտանիքի կերակրողի դերը, որը չկատարելու դեղքում, մա գրկվում է իր բոլոր արժանիքներից: Ի վերջո վերանում է *գենդերային փոխհարաբերություններում համերաշխությունը*:

Կրթության ոլորտում արժեքների և մորմների միջև դիսոնանսն էլ ավելի ակնհայտ է: Կրթություն հաճախ ստանում են ոչ թե գիտելիք ու մասնագիտություն ձեռք բերելու համար, այլ՝ դիղլում ստանալու: Այս արժեքի խեղաթյուրման գործում շատ մղաստավոր դեր է կատարում գնահատման համակարգը, որը գիտելիքը չափում է միավորներով և այնքան հաճախ, որ գիտելիքն ու կրթությունն արժեգրկվում են: Ավելի արժեքավոր և կարևոր է դառնում գնահատականը: *Սովորողները տեղյակ չեն, որ սովորելը հաճույք է*:

Կրթության համակարգում մեկ այլ խեղաթյուրում տեղի է ունենում, երբ ուսուցիչը դժգոհում է աշակերտի գիտելիքների ոչ բավարար մակարդակից՝ մոռանալով, որ դա հենց իր՝ ուսուցչի մասնագիտական գործառույթն ու առաքելությունն է՝ հայտնաբերել և լրացնել գիտելիքի բացերը, տրամադրել յակկատող գիտելիքը, փոխանցել ունեցած փորձն ու հմտությունները, որոնց տիրաղետում է՝ դրա համար ձկուն և անհատականացված ձևով օգտագործելով առկա բոլոր ռեսուրսներն ու մոտեցումները:

Կրոն առանց հավատքի իրավիճակը մույնդես շատ տարածված է: Նորմատիվ յղակտիկա է դարձել կնունքը, որը շատ դեղքերում զուտ խնջույքի առիթ է, ոչ թե քրիստոնեական արժեքների փոխանցման ու յակողանման:

Պետության և յետակամության արժեքի վրա առանձնահատուկ ուշադրություն է յետք դարձնել: Այս արժեքը մենք ձեռք ենք բերել՝ կարևորելով անցյալի գրկանքները, բայց չենք իմաստավորել այդ արժեքի կարևորությունը

Գերկայի ու աղազայի համար: Օտար ղեկավարներում աղբյուր դարավոր փորձը ձևավորել է ղեկավարներին օտարվելու բազմաթիվ մշակութային տրակտիկաներ: Պետությունը մնացել է օտար, այն մերը չէ... Արդյունքում՝ միջին խավը շարունակում է արտագաղթել՝ փնտրելով բարեկեցիկ կյանք այլ երկրներում: Մարդն արժևորում է այն, ինչ տրվում է դժվարությամբ, սակայն այս գիտակցումը կաղված Հայկական ղեկավարության հետ չկա, արժեքը կոմունիկացված չէ: *Հայրենասիրությունը* ընկալվում է զուտ թշնամու կերպարին հակադրության մեջ: Արդյունքում առաջանում է թշնամուն կորցնելու վախ:

Պետության և քաղաքացու՝ հատկապես միջին խավի ցրտացումը, փոխհարաբերությունները մեծապես ղայմանավորված են հարկման գործընթացով: Մենք վճարում ենք հարկեր՝ դիմացը ղահանջելով և ստանալով ղաշտոմանված հասարակություն, սոցիալական երաշխիքներ և այլն: «Հարկ -> Պահանջ -> Սոցիալական բարիք» արժեքանորմատիվ շղթան նույնպես կոմունիկացված չէ, այն քողարկված է տարածված «քաղաքացիական հասարակություն» եզրույթի ետևում, որը սակայն սոցիալական գիտակցության մեջ չի կաղվում մշակված արժեքանորմատիվ շղթայի հետ և արժեզրկվում է: Քաղաքացին հաճախ չի գիտակցում, որ հարկային քաղաքականությունը ղայմանավորում է *ղաշտոմանվածության և ազատության* միջև բալանսը: Բարձր հարկերը ենթադրում են սոցիալական ղաշտոմանվածության բարձր մակարդակ, բայց և ազատության սահմանափակում՝ տնտեսական և վարքային առումներով: Ցածր հարկերը սոցիալական ղաշտոմանվածության ցածր մակարդակ են ենթադրում, իսկ ազատության՝ բարձր մակարդակ, բայց և հասարակության կանոնակարգվածության ցածր մակարդակ: Ազատության և ղաշտոմանվածության միջև բալանսն ու կոմորոմիսը աղահովում են հարկերի միջոցով:

Հարկերի մկատմամբ վերաբերմունքը նույնպես արժևորված չէ: Հարկ վճարելու մորմատիվ տրակտիկաները ձևավորված ու կոմունիկացված չեն: Արդյունքում ի հայտ է գալիս հարկեր չվճարելու միջոցով ազատություն ղահողանելու ցանկությունը, ինչպես մաև տարածվում ու արմատավորվում է հասարակական համակարգերը կոռուպցիոն ճանաղարհներով սեփական շահերին հարմարեցնելու մեխանիզմը: Արդյունքում կոռուպցիայի բացասական և քայքայիչ բնույթի վտանգը նույնպես գիտակցված չէ, կոռուպցիան դառնում է լեգիտիմ:

Հարկ է մկատի առնել մաև *լեզուն*: Հայոց լեզուն գերագույն արժեք է, կենսական արժեք՝ մենք չկանք առանց մեր լեզվի: Դարեր շարունակ մեր լեզուն եղել է գաղտնալեզու, մղատակ է ունեցել թաքնվել, ղաշտոմանվել, քողարկվել, չհասկացված լինելու օտարների կողմից: Այսօր լեզվական այդ տրակտիկաների ղահողանումը խոչընդոտում է հասարակության զարգացմանը: Խոսքը մասնավորապես գիտական լեզվում օտարալեզու տերմինների թարգմանության մասին է, որը խոչընդոտում է գիտության զարգացմանը: Գիտական լեզվի մեջ մկատվում է հմարավորիմս անհասկանալի և չհասկացված լինելու միտում, ինչը խիստ հակասում է՝ *գիտությունը* ղետք է բացատրի իմաստներ և ոչ թե քողարկի դրանք մոտեցմանը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ միևնույն արժեքը կարող է կոմունիկացվել տարբեր նորմատիվ լոգոսոփականների միջոցով, և կարիք չկա փնտրել միակ ճիշտ ճանապարհը: Օրինակ՝ ռեսուրսները (բնությունը, սնունդը, օգտակար հանածոները, տնտեսական կառիտալը և այլն) արժեք են բոլոր մշակույթներում անխտիր, բայց յուրաքանչյուր մշակույթ իր ձևով է կոմունիկացնում այն: Գերմանացին ուտում է սեղանին առկա ամբողջ սնունդը՝ ռեսուրսի և ոչ մի փշուր չվատնելու նդատակով: Ճապոնացին օգտագործում է ամհրաժեշտ ռեսուրսները մվազազույն չափով, որոշեզի դրանք սղաովեն հնարավորինս ուշ և ծառայեն հնարավորինս երկար ժամանակ: Հնդիկը մտածում է այն մասին, որ կան մարդիկ, ում այդ ռեսուրսը ավելի ամհրաժեշտ է: Հայը մատուցում է հյուրերին այնտիսի քանակությամբ ուտելիք, որը ներկաներն ի վիճակի չեն ուտել՝ հյուրասիրությունը, առատաձեռնությունը և ռեսուրսների առկայությունը ցուցադրելու նդատակով, իսկ չկերած սննդի եական մի մաս տարզաղես դեն է նետում:

Արժեքը մեկն է, նորմատիվ լոգոսոփականները՝ տարբեր: Բայց կա կարիք փաստարկելու, իմաստավորելու, արժևորելու և կոմունիկացնելու սոցիալական արժեքները՝ արժեքների կոոուղիայից խուսափելու համար: Միջին խավի դերն այս գործընթացում չի կարելի թերագնահատել: Այն մի կողմից՝ հասարակության տարզ մեծամասնությունն է, նրա զանգվածն ու ներկայացվածությունը հասարակության մեջ ավելի մեծ է, քան աղքատների և հարուստների զանգվածը: Մյուս կողմից՝ այն «Հարկ – > Պահանջ – > Սոցիալական բարիք» շղթայի հիմնական սուբյեկտն է: Պահանջատերը հենց միջին խավն է՝ հարկ վճարողը, և ամհրաժեշտ է ընդլայնել սոցիալական երկխոսության շրջանակները «հարուստ-աղքատ» մոդելից «միջին խավ-կառավարություն» մոդելի: Այստեղ ոչ թե հարուստը կթելադրի աղքատին «խաղի կանոնները», այլ միջին խավը կներկայացնի կառավարությանը իր սոցիալական տատվերը:

Նորմերը միշտ ունեն կոնվենցիոնալ բնույթ, և քանի դեռ մենք տայմանավորվում ենք նորմի ընդունելի լինելու վերաբերյալ առանց արժեքային հիմնավորման, կարելի է տայմանավորվել ցանկացած բանի շուրջ, ընդիուղ մինչև ամենածանր հանցագործությունների լեզիտիմացումը, ընդիուղ մինչև բոնությունն ու ազրեսիան «սեր և համերաշխություն» անվանելը:

- 1 Տե՛ս Ռոբերտ Կ. Մերտոն, *Социальная структура и anomия* // *Социология преступности*, Е. Самарский (թրգմ.) (Москва: Прогресс, 1966):
- 2 Տե՛ս Эмиль Дюркгейм, *О разделении общественного труда* (Одесса, тип. Г.М. Левинсона, 1900):
- 3 Նորմատիվ տրակտիկա ասելով՝ նկատի ունենք վարքի կարգավորման և առօրյա հարողակցման ձևավորված նորմերը:
- 4 Տե՛ս Леон Фестингер, *Теория когнитивного диссонанса*, А. Анистратенко, И. Знаешева (թրգմ.) (Э, 2018):
- 5 Տե՛ս Жан Бодрийяр, *Симулякры и симуляция*, А. Канчалова (թրգմ.) (Постум, 2017):



ԱՐՄԵՆ
ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԽԱՅԻԿԱՅԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2018

թվականին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական զարգացումներն իրենց ազդեցությունը թողեցին Հայաստանի քաղաքական համակարգում արխայիկայի դրսևորումների և արդիականության ձգտման խնդիրների վրա: Այս հոդվածում անդրադարձ կկատարվի քաղաքական համակարգի այն հիմնական բաղադրիչներին, որոնք արխայիկ են, ինչդեռ նաև արդիականացման գործընթացներին ու միտումներին: Քաղաքագիտության մեջ արխայիկայի մասին խոսելիս բազմաթիվ հեղինակներ անդրադառնում են առաստիներին ու առաստելական մտածողությանը, ինչը բազմաթիվ տեսանկյուններից արդարացված է և օգնում է շատ երևույթներ ավելի լավ հասկանալ: Այս հոդվածի համար, սակայն, մենք կդիտարկենք արխայիկան իմաստաբանական տեսանկյունից: «Արխայիկա» բառը գալիս է հունարեն *arkhē* բառից, որը նշանակում է «սկիզբ»: Օքսֆորդի բառարանը նշում է, որ այն թարգմանաբար նշանակում է «հիմն» կամ «հմացած», մասնավորապես ոճին առնչվող հարցերում, երբ շեշտվում է, որ որևէ որակստիկա հմացած է: Այս դեմքում այն անվանվում է «արխայիկ»:¹

Քաղաքագիտության տեսանկյունից արխայիկայի դրսևորումներն ու Հայաստանում տեղի ունեցած քաղաքական զարգացումներն իմաստավորելու համար առաջին հերթին ժողովրդի ու շահագրգռված զարձենք ժողովրդական *կառավարման համակարգում* տեղի ունեցած և շարունակվող փոփոխություններին: Հայաստանի կառավարման համակարգի անցումը կիսանախագահականից խորհրդարանականի դասակարգումը չէր և տեղավորվում է մշակված գործընթացների մեջ: Այն մասն է արդիականացման միտման, որը դրսևորվում է հետխորհրդային տարածքի մի մասում: Պատահական համընկնում չէ նաև, որ հետխորհրդային տարածքի այն երկրներում, որտեղ հասարակությունները հարաբերականորեն ավելի բաց են, ինչդեռ նաև առկա են քաղաքացիական հասարակության մեղմացման հանրային քաղաքականության որոշ դրսևորումներ, ժողովրդական կառավարման համակարգը այս կամ այն կերպ անցում է կատարում խորհրդարանական համակարգի (օրինակ՝ Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ղրղզստան): Հայաստանում հետաքրքիր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ *Հանրապետական կուսակցության* կողմից տարիների ընթացքում կառուցված քաղաքական-տնտեսական համակարգը չվերադարձվեց այս անցումը՝ ի ցույց դնելով արխայիկ լինելու ակնհայտ նշաններ:

Այս անցման ու արդիականացման միտումի հայկական օրինակով հատկանշական էր *հասարակության մասնակցայնության աստիճանը*: Հենց այն փաստը, որ *Հանրապետական կուսակցությունը* կառուցում էր բացառման համակարգ, ինքնին արխայիկ էր: Ըստ վերերոշյան տրամաբանության, արդիական է այն, ինչ ուղղորդվում է, կառուցվածքային է ու ոչ անձնավորված: Հայաստանում կառուցված քաղաքական-տնտեսական համակարգը այս սկզբունքների ուղիղ հակառակն էր: Սակայն ժողովրդի մեջ, որ այդ համակարգը ձևավորել էր սեփական ուղղորդվածությամբ: Նշված արդիականության սկզբունքներից բոլորի հիմքում էլ ընկած է հարաբերությունների ֆորմալ բնույթը, մինչդեռ գոյություն ունեցած հա-

ՀԱՅԱՍՏԱՆ 2018 | ԻՐԱՆԻ ԹԵՑՆՈՒՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿՎՈՒՆԵՐ

մակարզը գործում էր ֆորմալ կառուցակարգերից դուրս ու ոչ ֆորմալ միջոցներով՝ հիշեցնելով ֆեոդալական հարաբերության որոշակի տեսակ՝ առանց դրա ֆորմալիզացիայի: Եւրոպականությունն ու իմաստիտուտների ու որակտիկաների ֆորմալացումը դարձան այն հիմնական գործիքները, որոնցով Յայաստանի հասարակությունը սկսեց և ամենայն հավանականությամբ կշարունակի կիրառել դրանք քաղաքական համակարգում դեռևս առկա արխայիկ իմաստիտուտներն ու որակտիկաները հաղթահարելու համար:

Հաջորդ կարևոր հանգամանքը քաղաքական դաշտում *գաղափարախոսությունների* դրսևորումն է ու դրանց ազդեցությունը որակտիկ քաղաքականության վրա: Յայաստանում քաղաքական զարգացման մերկայիս փուլի հետաքրքիր առանձնահատկություններից մեկն էլ ծախական գաղափարական հոսանքի դիսկուրսիվ էլեմենտների և որոշ որակտիկաների կիրառումն է: Այս դրսևորումներն առկա էին հասարակական բննարկումներում, հանրային դիսկուրսում, սակայն չէին դրսևորվում քաղաքական որակտիկայում, քանի որ իշխող *Յանրատետական կուսակցությունը* որդես իր գաղափարախոսություն հռչակել էր ազգային ղահողանողականությունը: Սակայն վերջինիս ձևավորած կառավարությունները որակտիկայում շատ հաճախ իրականացնում էին մեղիբերալ գաղափարախոսությանը բնորոշ քաղաքականություններ (policies) ու ծրագրեր:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Կառավարման ձևի փոփոխություններն ընդհանրադես, դատմական լայն համատեքստում, ունեցել են արդիականության արտացոլման միտումներ: Դժվար է ինքնին միանշանակ գնահատական տալ՝ արդյո՞ք դրական երևույթ է այս կամ այն կառավարման համակարգին անցումը: Սակայն այս հողվածի շրջանակներում հարկ է խնդիրը դիտարկել ոչ թե «դրական-բացասական» դիտանկյունից, այլ արդյո՞ք տվյալ անցումը քայլ է դեղի արդիականացում, թե ոչ:

Մինչև 2015 թ. սահմանադրական փոփոխությունները Յայաստանում եղած համակարգը ֆորմալ առումով կիսանախագահական էր: Սակայն ինչդես բազմաթիվ քաղաքական գործիչների, այնդես էլ էքսդերտների գնահատականներով այն կարելի է բնորոշել որդես «սուդերնախագահական», որտեղ երկրի ղեկավարի ձեռքում կենտրոնացած էր հիմնական գործադիր իշխանությունը, իսկ օրենսդիրը տվյալ դեղքում դարգադես գործադիրի նախաձեռնությունների դակիչն էր: Բայց միննույն ժամանակ անցումը խորիրդարանական համակարգին մեխանիկորեն չի նշանակում իշխանության ադակենտրոնացում կամ գործադիրի ու օրենսդիրի միջև արդյունավետ հակակշիռների ստեղծում: Անցումայնության լավագույն հետադրտողներից Խուան Լինցն իր «Պարլամենտարիզմի արծանիքները» հողվածում նշում է, որ որոշ խորիրդարանական համակարգերում վարչադեստը նույնիսկ ավելի մեծ ազդեցություն ունի, քան նախագահական համակարգերում գործադիրի ղեկավարը՝ նախագահը: Սակայն նույն հողվածում նա նաև շեշտում է, որ նման

դեղքերը սերտորեն կապված են ընտրական համակարգերի հետ. նշված դեղքը ավելի շատ տեղ է գտնում այն երկրներում, որտեղ գործում է մեծամասնական ընտրական համակարգը: Որոշես դրա ցայտուն օրինակ Լիցնը նշում է Մեծ Բրիտանիան, մասնավորապես՝ վարչապետ Մարգարեթ Թեյտչերի օրոք:² Այս տեսանկյունից միայն կառավարման համակարգի փոփոխությունը դժվար է դիտարկել որոշես արդիականացմանն ուղղված քայլ, քանի որ արդյունքում փոփոխված սահմանադրությամբ վարչապետը, ըստ եության, օժտված է նախագահական համակարգերում գործադիրի ղեկավարին բնորոշ լիազորություններով, իսկ այդ ամենն ամրադրված է ռեյտինգային ընտրակարգով, որն իր բնույթով առավել շատ նմանություններ ունի մեծամասնական, քան համասնական ընտրակարգի հետ:

Հարց է առաջանում՝ իսկ այս դարազայում ո՞րն էր այս երևույթի արդիականացման միտումը կամ կա՞ր արդյոք նման միտում ընդհանրապես: Այս դեղքում արդիականացման միտումը կարելի է դիտարկել ոչ թե «մեծ դատարանական ժամանակաշրջանների» համատեքստում, այլ ավելի լոկալ կամ տարածաշրջանային կտրվածքով: Հետխորհրդային տարածքում 2000-ականների վերջերից ուրվագծվում է մի միտում, որն ավելի է ֆրագմենտացնում այս տարածաշրջանը: Այն ժողովրդավարություններում, որտեղ տնտեսությունները հիմնականում կառուցված են բնական ռեսուրսների արդյունահանման և արտահանման վրա, ղեկավարման ուղղաձիգն ավելի է խստանում, ղեկավարման/գործադիրի ղեկավարների անձը դառնում է զրեթե ամփոխարինելի, իսկ հրադարակային/հանրային քաղաքականության թեկուզ փոքր դրսևորումները խստագույնս ճնշվում են (Ադրբեջան, Թուրքմենստան, Ղազախստան): Այս դայմանական տարածաշրջանի այն ղեկավարությունները, որտեղ կան հանրային քաղաքականության որոշակի դրսևորումներ, անցում են կատարում կառավարման խորհրդարանական համակարգի կամ դրա որոշակի տեսակի (Վրաստան, Հայաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ղրղզստան):³ Դա հիմնականում դայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության կենտրոններն այս երկրներում բազմաթիվ են, իսկ կոնսենսուսի կայացումը ինչդեպ էլիտաների տարբեր խմբերի, այնդեպ էլ հասարակության տարբեր խավերի միջև կայանում է (իսկ որոշ դեղքերում չի կայանում) առավել բարդ բանակցությունների միջոցով: Անցումը խորհրդարանական համակարգին, ըստ եության, հաստատութենականացնում է այս գործընթացները: Քաղաքագետ Ռոբերտ Դալը նշված գործընթացը ձևակերտում է որոշես «դոլիարխիայի» կայացում, այսինքն՝ իշխանության/ազդեցության բազմաթիվ կենտրոնների կայացում, որը նույնը չէ, ինչ ժողովրդավարացումը, քանի որ ժողովրդավարությունն, ըստ նրա, իդեալն է, որին ղեկը է ձգտել, մինչդեռ դոլիարխիան ձևավորվում է որոշես արդիականության դրսևորում, ինչը դայմանավորված է նաև քաղաքական միավորների/ղեկությունների տարածական ընդլայնմամբ և գործառույթների շատացմամբ:⁴ Այս տեսանկյունից անցումը խորհրդարանական համակարգին կարելի է դիտարկել որոշես արդիականացման միտում:

ՄԱՍՆԱԿՑԱՅԼՈՒԹՅՈՒՆ

Մասնակցայնությունը ժողովրդավարության կարևոր բաղադրիչ դիտելու ավանդույթը նոր չէ: Այն գալիս է ամտիկ շրջանից, մասնավորապես հունական դոլիխներից, որտեղ քաղաքացիներն, ըստ էության, մասնակցում էին կառավարմանը ժողովրդական ժողովում ուղղակի ներգրավվածության միջոցով: Այս առումով դժվար է ժողովը, որ մասնակցայնությունը արդիականության ցուցիչ է, քանի որ այն առկա էր նույնիսկ դասական ընկալմամբ արխայիկ ժամանակաշրջանում:

Սակայն հարց է ծագում, թե արդյո՞ք նույն տիպի մասնակցայնությունն նկատի ունենք այսօր, ինչը հասկանում էին աթենացիները արխայիկ շրջանում: Այս երկու ընկալումները սկզբունքորեն տարբեր են: «Աթենական ժողովրդավարության մեջ հաղթում էին ներքևից քաղաքական ղայքարի միջոցով, ինչը զարմանալու աստիճան ուղիղ ու մասնակցային էր: Սակայն մեր չափանիշներով այն խիստ սահմանափակված էր և որևէ առնչություն չուներ մարդու իրավունքների ընդհանրական հասկացությունների հետ», – մշում է ներկայացուցչականության գաղափարի հայտնի հետազոտողներից Յաննա Պիտկինը:⁵ Նա նաև շեշտում է, որ հին հույները օտարերկրացիներին, այլ ժողովուրդներին կամ ինչդեպ իրենք էին անվանում «բարբարոսներին», ինչդեպ նաև կանանց ընդհանուր առմամբ դիտարկում էին որդեքաղաքական մասնակցություն ունենալու անկարող անձինք:⁶ Մասնակցությունը դոլիսի կառավարմանը սահմանափակվում էր որոշակի տարիքային, հարստության ու սոցիալական դիրքի, սեռի, մաշկի գույնի ու ծագումնաբանական հատկանիշներով:

Այստիպով, արդիականացման միտումը, որը կարելի է դիտարկել հետագայում ղետության ու հանրային կառավարման հարցերում հետևողականորեն առավել մեծ քանակով բնակչության ընդգրկումն է: Այս տեսանկյունից հիմնարար մշանակություն ունի կանանց ընտրելու իրավունքի տրամադրումը, որը մշանակալիորեն ընդլայնվեց 20-րդ դարում, ինչդեպ նաև սեգրեգացիայի ու խտրականության օրենքների վերացումն ու դրանց դեմ շարժումները, մասնավորապես 1960-ական թթ.:

Մասնակցայնության այն տեսակը, որին անդրադառնում ենք հայաստանյան համատեքստում, զուտ ֆորմալիզացված մասնակցությունը չէ: Քաղաքական մշակույթին առնչվող դասական դարձած իրենց աշխատության մեջ Ալմոնդն ու Վերբան մշում են, որ կայացման գործընթացում գտնվող ժողովրդավարական ղետություններում մասնակցայնության ֆորմալ իմստիտուտները՝ հանընդհանուր ընտրական իրավունքը, քաղաքական կուսակցությունների ու ընտրվող օրենսդիր իշխանության գոյությունը, բավարար ղայմաններ չեն իրական մասնակցություն աղահովելու համար: «Իրականում այդ իմստիտուտները գոյություն ունեն նաև անբողջատիրական մասնակցայնության մոդելներում ևս՝ զուտ ֆորմալ, այլ ոչ թե գործառնական իմաստով: Ժողովրդավարական մասնակցային քաղաքական համակարգում անհրաժեշտ է ունենալ նաև դրանց հետ համադրելի քաղաքական մշակույթ», – մշում են նրանք:⁷

Այս իմաստով Հայաստանում ձևավորված քաղաքական համակարգն աղա-
 հովում էր քաղաքական ուժերի, կուսակցությունների, որոշ հասարակական
 կազմակերպությունների ու լրատվամիջոցների ձևական մասնակցությունը քա-
 ղաքականությանը, սակայն դա որևէ կերպ եական կամ որոշիչ ազդեցություն
 չէր կարող ունենալ քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա:
 Արխայիկայի դրսևորումը Հայաստանի քաղաքական համակարգում հենց այդ՝
 մասնակցայնությունը սահմանափակող մոդելի մեջ էր, երբ հիմնականում
 խնդիրները լուծվում ու հարաբերությունները կարգավորվում են կուլիսներում՝
 առանց հանրային մասնակցության, իսկ առկա մասնակցությունը ձևական էր:
 Խնդիրների լուծումը տեղի էր ունենում ոչ ֆորմալ, ոչ ինստիտուցիոնալ միջոց-
 ներով ու մեթոդներով: Մեկնաբանելով ցանցային քաղաքացիական բողոքի
 շարժումների առաջացումը Հայաստանում՝ քաղաքագետ Ալեքսանդր Իսկան-
 դարյանը 2013 թ. մշում էր, որ Հայաստանում դասական իմաստով ընդդիմա-
 դիր գործունեություն չկա: Տրանսպորտի թանկացման դեմ ցանցային շարժ-
 ման մասին խոսելիս նա նկատում է. «Ներկայումս աշխատելով խորհրդարա-
 նի ներսում՝ որևէ բան փոխել հնարավոր չէ: Հիմա ընդդիմադիր քաղաքական
 գործիչ լինելն ամիմաստ է, քանի որ քաղաքականությունն այլ տեղում է գտն-
 վում, իսկ աշխատելով այլ՝ Հայաստանի համար ոչ ավանդական մեթոդներով
 (նկատի ունի քաղաքացիական շարժումները), հնարավոր է ինչ-որ բանի հաս-
 նել»:⁸ Քաղաքացիական շարժումները դարձան այն կարևորագույն միջոցը,
 որոնցով քաղաքական համակարգի «փակման» շրջանում հանրային տարած-
 քում դրսևորվում էր քաղաքական ակտիվությունը:

Քաղաքականությունն ու քաղաքական մասնակցությունը, ըստ էության, մղվել
 էին մեդիայի և քաղաքացիական հասարակության դաշտ: Արդյունքում մասնակ-
 ցայնությունը ամենալայն ու ընդգրկուն ձևով դրսևորվեց Նիկոլ Փաշինյանի
 հռչակած թավշյա հեղափոխության շրջանում: Մարդկանց մասնակցությունը
 քաղաքական գործընթացին չէր սահմանափակվում գրեթե չդադարող ուղիղ
 եթերներին հետևելով, ինչն իր հերթին մասնակցայնության ձևական կողմ կա-
 րելի է դիտարկել, այլ մարդիկ մասնակցում էին ուղիղ գործողության միջոցով
 (փողոց փակել, հանրահավաքին մասնակցել և այլն): Հայաստանում նոր ձևա-
 վորվող քաղաքական համակարգի առջև առկա հիմնական մարտահրավերնե-
 րից մեկը է և շարունակելու է մնալ քաղաքական ու հանրային նշանակության
 հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացում հնարավորինս լայն
 մասնակցայնության աղահովումը, ինչը թերևս ավելի դյուրին էր փողոցային
 ցույցերի ժամանակ և ավելի բարդ ժետական կառավարման մեջ: Միևնույն ժա-
 մանակ սակայն առանց նման մասնակցայնության աղահովման արդիակա-
 նացման խնդիրը դրվելու է քաղաքական համակարգի առջև, քանի որ տեխ-
 նոլոգիական առաջընթացի լայնացման հասարակությունն ինքնակրթվում ու
 ինքնակազմակերպվում է ավելի արագ, քան քաղաքական համակարգը հասց-
 նում է արձագանքել այդ գործընթացներին:

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1990-ականների վերջերից և 2000-ականների սկզբից եվրոդոլարային շատ երկրներում ընդունված էր համարել, որ կուսակցությունների միջև սուր գաղափարական հակադրությունների ժամանակաշրջանն ավարտվել է, իսկ այժմ և ձախ կուսակցությունները գտել են ղայմանական «ուսկե միջինը»: Կարծես բոլորը համաձայնել էին այն մտքի հետ, որ ղետության այն տեսլականը, որին ձգտում են բոլորը, բարեկեցության ղետությունն էր՝ շուկայական տնտեսության ղախդանամբ ու նույնիսկ դրա արդյունքում: Սակայն հետագա տարիներին և հատկաշես 2008-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ձգնաժամից հետո ակնհայտ դարձավ, որ գաղափարական հակասությունները ոչ ղե մեղմվում են, այլ ընդհակառակը՝ սրվելու միտում ունեն: Տեղեկատվական-տեխնոլոգիական հեղափոխության հետևանքով տնտեսության կառուցվածքի փոփոխության ու ակտիվացած միգրացիոն հոսքերի ղայմաններում ղե՝ աշ, ղե՝ ձախ ծայրահեղական կուսակցությունները Եվրոդոլարային սկսեցին ավելի ու ավելի մեծ հանրային-քաղաքական տարածք զբաղեցնել: Այս միտումը հետագայում դրսևորվեց նաև ԱՄՆ-ում՝ երկկուսակցական համակարգում առկա կուսակցություններում ծայրահեղական ղետերի ակտիվացմամբ: Զարց է առաջանում՝ արդյո՞ք գաղափարական ծայրահեղականացումը կարող էնք համարել արխայիկայի հաղախարում կամ արդիականացում, ղե՞՝ մոր արխայիկայի ձևավորում: Միգուցե այս հարցը ձիշտ լինի եվրոդոլարային կամ ամերիկյան համատեքստում, սակայն Զայաստանի և հետխորիդային տարածքի երկրների համար իրողությունը նշանակալիորեն այլ է:

Մասնավորաշես Զայաստանի մասին խոսելիս հարկ է հաշվի առնել մի քանի հանգամանք: Առաջին, անկախացումից հետո սեփականաշնորհման գործընթացը և անցումը շուկայական տնտեսության դիսկրեդիտացիոն լիբերալիզմի մասին ղատկերացումները: Երկրորդ, 1999-2018 ղվականներին իշխանությունը ղատկանում էր մի քաղաքական ուժի, որն իր գաղափարախոսություն էր հոշակել ազգային-ղախողանողականությունը: «Զայաստանի Զանրաղետական կուսակցությունը ազգային ղախողանողական կուսակցություն է, որի նղատակներն ու գործունեությունը ղխում են Ազգի և Զայրենիքի հավիտենության գաղափարներից: Զայության բնօրրանը Զայկական բարձրավանդակն է, որը Զայոց անփոխարինելի հայրենիքն է: Զայոց գերագույն նղատակը, որ իմաստավորումն է իր գոյության, հարատևումն է Զայրենիքում, հաստատումը իր կենսական ուժի, ստեղծագործ հանձարի ու ազատ կամքի: Այդ նղատակի իրագործման գրավականը Զայ ազգային գաղափարախոսությունն է, որում էական տեղ ունի Գարեգին Նժդեհի ուսմունքը»,– նշված է ԶԶԿ ծրագրի հիմնաղրույթներում:⁹ Իսկ երրորդ կարևոր հանգամանքն էլ այն է, որ 2000-ականների վերջերից հանրային-քաղաքական շարժումների ընթացքում քաղաքական սոցիալիզացիա էր անցնում այն սերունդը, որն, ըստ տության, սոցիալիզմի ու ձախականության հանդեղ շուներ այնղիսի խիստ բացասական վերաբերմունք, ինշղես նրանց ծնողների կամ ղայմանական «1988-ի սերունդը»: Զենց այս ղայմաններում Զայաստանում սկսեց ձևավորվել ձախական դիսկուրսը, որն առաջին հերթին իր արտահայտու-

մը գտավ հանրային տարածքների լոգոտիպից, հանրային ծառայությունների որակի բարելավմանն ուղղած, ինչդեռ նաև բնադաստիարակական շարժումներում: Հանրային ու մեդիա դաշտերում ձախական հոետորաբանությունը ի հայտ էր եկել ավելի վաղ, սակայն նշված ազգային-դաստիարակականության տիրապետումը, դրա զուգակցումը կրոնականության հետ ու վերջինիս լայն ներկայացումը լրատվական դաշտում որոշ չափով արգելափակում էին ձախական հոետորաբանության առավել լայն տարածումը: Դրա առկայությունը, միևնույն ժամանակ, չի նշանակում անհրաժեշտաբար ձախական քաղաքական ուժերի/կուսակցությունների առաջացում:¹⁰ Կարգախոսների ու հոետորաբանության մակարդակում ձախականության դրսևորումներն ակնհայտ էին նաև 2018 թ. ադրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցող քաղաքական գործընթացներում: Արդարության լոգոտիպը հնչեցվում էր հասարակական շրջանակներում, իսկ «հավասարության» ու «սիրո և համերաշխության» կարգախոսները հստակորեն ցուցադրվում էին նաև հանրային տարածքում:

Արդիականության ու արխայիկայի մասին քննարկումն այս կետում հենց հետաքրքրական է նրանով, թե ինչ տիպի գաղափարախոսություն էր այն ազգային-դաստիարակականությունը, որը ներկայացվում էր անցած շուրջ 20 տարիներին: Արխայիկ մոտեցումն ու միտքը գաղափարախոսությանը վերաբերում է որդես առաստել կամ Պիեռ Բուրդյոյի բնորոշմամբ «կոլեկտիվ աշխատանքի չտարբերակված արդյունք», ինչդեռ օրինակ՝ հունական առաստելները:¹¹ Սակայն, արդիականության համատեքստում գաղափարախոսությունը դիտվում է առավել որդես միաժամանակ և՛ ավարտում, և՛ զարգացող աշխարհայացք: Այս համագամանքը ևս եսկան էր ձախական դիսկուրսի լոգոտիպական վերադարձի համար: Ազգի, եկեղեցու գաղափարների միֆականացումը կտրում է դրանք իրականությունից, միաժամանակ Հայաստանում իշխանությունը, գաղափարական մակարդակում մնան միֆեր հոչակելով, կարողում էր բացառող համակարգ՝ որոշումների կայացման մեջ հնարավորին փոքր թվով մարդկանց ներգրավմամբ: Այս ակնհայտ հակասությունը հավելյալ հիմք էր ստեղծում լայն հասարակական անվստահության համար:

Ձախականության այս դրսևորումները չդեռ էր դիտել որդես միայն Հայաստանին բնորոշ երևույթներ: Հետխորհրդային տարածքի այն երկրներում, որտեղ առկա է հանրային քաղաքականություն, որոնց մասին խոսվեց այս հոդվածի սկզբում, մասնավորապես ադրում են մնան փոփոխություններ: Հանրային տարածքների համար լոգոտիպը, բնադաստիարակական շարժումները և այլն բնորոշ են այդ երկրների քաղաքական ընթացքի ներկայիս փուլին: Դա նաև համաշխարհային միտման մաս է: Այս տեսանկյունից կարևոր են ԱՄՆ դեմոկրատական կուսակցության մեջ առավել սոցիալիստական ուղղվածություն ունեցող թեկնածուի՝ Բերնի Սանդերսի նշանակալի հաջողությունները 2016 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, ինչդեռ նաև ձախական կուսակցությունների հաջողությունները մի շարք եվրոպական երկրներում, մասնավորապես՝ Իտալանիայում և Հունաստանում:

ԱՄՓՈՓՈՒՄ


Հողվածի շրջանակներում անդրադարձանք Հայաստանի հանրային-քաղաքական դաշտում տեղի ունեցող խորքային փոփոխություններին, որոնք դրսևորվում են մի քանի մակարդակներում: Նախ րդետության կառավարման համակարգի փոփոխությունն ու դրա շուրջ չդադարող բննարկումները եական են ընդհանուր առմամբ րդետականության հետագա զարգացման առումով, իսկ խորհրդարանական համակարգին անցումը կարելի է դիտարկել որդետս արդիականացման քայլ: Այս դիտարկումը հաշվի է առնում այն հանգամանքը, որ իշխանության կենտրոնների բազմազանության դայմաններում խորհրդարանը կարող է դառնալ այն ինստիտուցիոնալ հարթակը, որտեղ այդ կենտրոնները կդրսևորեն տարբեր հարցերի շուրջ իրենց մոտեցումները: Այս միտումը զուտ հայաստանյան չէ, այլ դրսևորվում է նաև մի շարք հետխորհրդային երկրներում:

Երկրորդ կարևոր հանգամանքը, որ մենք դիտարկում ենք, հանրության մասնակցությունն է քաղաքական կյանքին: Այս առումով կարևորվում է ոչ թե ծևական մասնակցությունը, այլ իրական մասնակցությունն ու ազդեցությունը որոշումների կայացման գործընթացներում, ինչը հիմնականում բացակայում էր անցած տասնամյակներում: Հանրային ավելի լայն շերտերի ներգրավումը րդետական կառավարման մեջ կարելի է դիտարկել որդետս արդիականացման քայլ:

Երրորդ հիմնական դրույթը, որի վրա ուշադրություն է դարծվել, ճախականության դիսկուրսի նշանակալի դրսևորումներն են հանրային-քաղաքական կյանքում: Այն մեծ հաշվով սկսեց դրսևորվել քաղաքացիական շարժումների ժամանակ: Քաղաքական ինստիտուցիոնալացման տեսանկյունից կարող ենք ասել, որ այն թույլ է ինստիտուցիոնալացված: Սակայն այն առնչակցություններ ունի նաև ավելի լայն տարածաշրջանային և նույնիսկ համաշխարհային միտման հետ, որոնք չի կարելի արհամարհել:

Նշված կետերից յուրաքանչյուրն առանծին խորը ուսումնասիրության կարիք ունի, որը կարող է բերել ավելի հետաքրքիր բացահայտումների ու վերլուծությունների, ուստի այս դրույթներն ավելի շատ հրավեր են նոր խոսակցություն սկսելու, քան ամփոփ եզրակացություններ:

- 1 Oxford Dictionaries, «Archaic», <https://en.oxforddictionaries.com/definition/archaic> , այց՝ 18.10.2018:
- 2 Juan Jose Linz, «The Virtues of Parliamentarism», *Journal of Democracy*, h. 1, թիվ 4 (1990), էջ 84-91:
- 3 Ալեքսանդր Իսկանդարյան, «Ընդդիմությունը կանգնած չէ իշխանության «դեմ դիմաց»», <https://www.panorama.am/am/news/2015/12/24/%D4%B1%D5%AC%D5%A5%D6%84%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A4%D6%80-%D4%BB%D5%BD%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/1504383>, այց՝ 18.10.2018:
- 4 Robert A. Dahl, «Polyarchy, Pluralism, and Scale», *Scandinavian Political Studies*, h. 7, թիվ 4 (1984), էջ 225-240:
- 5 Hanna F. Pitkin, «Representation and Democracy: Uneasy Alliance», *Scandinavian Political Studies*, h. 27, թիվ 3 (2004), էջ 335-342:
- 6 Pitkin, «Representation and Democracy: Uneasy Alliance», էջ 337:
- 7 Gabriel Almond, Sidney Verba, *The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations* (Princeton University Press, 2015), էջ 5:
- 8 «Сетевой гражданский протест в Армении может вылиться в хаос или в политику – интервью с политологом», <https://regnum.ru/news/1689755.html>, այց՝ 18.10.2018:
- 9 *ԴԴԿ ծրագիր, Գիմնադրոյթներ*, <http://hkk.am/hy/program/>, այց՝ 18.10.2018:
- 10 «Сетевой гражданский протест в Армении может вылиться в хаос или в политику – интервью с политологом», <https://regnum.ru/news/1689755.html>, այց՝ 18.10.2018:
- 11 Pierre Bourdieu, «Symbolic Power», *Critique of Anthropology*, h. 4, թիվ 13-14 (1979), էջ 77-85:



ՀԱՍՄԻԿ Է.
ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(ՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄ)



Երօրյա աշխարհի յուրահատկություններից են սլացող, հաճախ կտրուկ փոփոխությունները: Սոցիալական, քաղաքական, ինչու ոչ շատ հաճախ նաև ֆիզիկական աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով է առաջանում այն նորաստեղծ իրականությունը, որը լայնաբերական է, մեկնաբանվելու և վերաիմաստավորվելու նոր լայնացումներ է առաջադրում առանձին մարդուն:

Ժամանակակից սոցիոլոգիական մոտեցումներում ավելի և ավելի մեծ ուշադրություն է դարձվում առօրեական մակարդակում տեղի ունեցող գործընթացներին, առաջին հայացքից ասույթն կոչված ոչ կարևոր երևույթներին: Ըստ այդմ, փոխվել է նաև սոցիոլոգիական ուսումնասիրության մեթոդաբանական հենքը՝ հիմնականում զանգվածային, քանակական մեթոդների օգտագործումից անցնելով դեղի որակական, ավելի շատ բացատրողական մեթոդների օգտագործում: Մերօրյա սոցիալական աշխարհի իրամայականները, ըստ Պյոտր Շտոմկայի,¹ նույնպես «Երրորդ» սոցիոլոգիայի ձևավորմանը, որի անկյունաքարը կարելի է համարել մարդու «ազատությունների» և «բազիստենցիայի» ուսումնասիրումը: «Երրորդ սոցիոլոգիան» ավելի մեծ ուշադրություն է դարձնում առօրեական կյանքին, որտեղ մարդն ապրում է մարդկանցով շրջապատված, «համագործակցելով, մրցակցելով, հակամարտելով, սիրելով և ատելով, բայց երբեք առանձնացած չի առօրյայում տիրող անցուդարձից»: Առօրյա կյանքը, կարելի է ասել միակ կյանքն է, որը մարդիկ ունեն՝ և այն ո՛չ լիովին դասակարգված է, ոչ էլ լիովին ազատ: Սոցիալական իրադարձությունների իմաստով, գործող մարդու անձնային ներդրումը և նրա գործողության սոցիալական, իրավիճակային համատեքստը անբաժանելի իրողություններ են: Առօրյա աշխարհում է մարդը ձեռք բերում և փոխանցում այն փորձը, որը հետագայում դառնում է մակրոսոցիալական գործընթացների հիմք: Ուշագրավ է, որ «Երրորդ սոցիոլոգիայի» ձևավորմանը շատ են նույնպես ֆեմինիստական քննադատական մոտեցումները և ֆեմինիստական տեսությունները, քանի որ հենց առօրեական համատեքստում են երևում կանանց ճնշման ու խտրականության փաստերը:²

Առօրյա իրականությունը կյանքի ընթացքի կարևորագույն բաղկացուցիչներից է, որի յուրահատկությունն այն է, որ սովորաբար մեզ ներկայանում է որոշ տրված սոցիալական մի տարածություն, որը սովորական մարդու մակարդակով հազվադեպ է լայնացնում հարցադրումներ և բացատրություններ: Այնուամենայնիվ հենց այս տիրույթում է ստեղծվում ամենօրյա փոխհարաբերությունների մոլորակներ, հավատալիքների, սղասումների և արժեքային կողմնորոշումների մշակութային համատեքստը: Շարունակելով տրամաբանությունը կարելի է ակնարկել այն փաստը, որ սոցիալական իրականությունը ստեղծելը նշանակում է ստեղծել փոխհարաբերությունների նոր սիմվոլիկ դաշտ, որն իր հերթին կարգավորում է փոխհարաբերությունների ֆորմատը և սահմանագծում գործողություններ իրականացնելու մեր ազատությունները:

Մշակութային սղասումների վերաբերյալ գիտելիքը մենք ստանում ենք ծնված օրվամից և առօրյայում վարքային դրսևորումները համադատասխանեցնում ենք այդ գիտելիքին: Առօրեական մակարդակում ստեղծվում են նորմատիվ դաշտի բազմաթիվ հրամայականներ, որոնք կառավարում են մեր կյանքի ընթացքը, և սիմվոլիկ բնույթի բանալիներ են տալիս իրականությունը մեկնաբանելու և իրողություններին գնահատական տալու համար: Սովորաբար սիմվոլիկ բանալիների ծագումնաբանությունը առօրյայում քննարկման չի ենթարկվում:

Այնուամենայնիվ, սղասումները և մեկնաբանությունները դիմամիկ միախաղ են կազմում՝ ներկայացնելով ոչ միայն սոցիալական միջավայրի մշակութային դահանջները, այլ նաև առանձին մարդու ներդրումը այդ կառուցվածքի զարգացման մեջ:

Փաստենք, որ առօրեական կյանքի տիրույթը երկար ժամանակ անուշադրության է մատնվել՝ փոխարինվելով «բարձր», «նշանավոր» քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչու ոչ ղատերազմական-ղատմական իրադարձությունների նկարագրություններով ու մեկնաբանություններով: Սակայն այն կտրուկ փոփոխությունները, որոնք իրենց հետևից բերում են այդ «նշանավոր» իրադարձությունները, առաջին հերթին ազդում են իրողությունների առօրյա մակարդակի ձևափոխման վրա, որտեղ էլ տեղի են ունենում գուցե ղատմական համատեքստի նկարագրությանը չարժանացող, սակայն ամեն մարդու կյանքի ընթացքի և կայացման համար կարևորագույն առօրյա իրադարձությունները: Այս համատեքստում առօրեականությունը միշտ իր մեջ կրում է բանավոր խոսքը՝ հասարակ մարդու մոտեցումները կյանքին, նրանց շփման եզրերը, վարքային դրսևորումները, կարծիքը վարքային դրսևորումների վերաբերյալ: Այստեղ մշակույթը վերացական ղատկերացումներից չի բաղկացած, այն բավականին դիմամիկ է և ներկայանում է որդես գործողությունների և ինտերակցիաների շղթա:

ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախորդ դարավերջը և այս՝ 21-րդ դարը կարելի է բնորոշել որդես տևականորեն փոփոխվող իրականություն, որտեղ ստեղծված իրականությունը նախկինի տրամաբանությանը չի համադատասխանում՝ արվում են հարցադրումներ և ղահանջվում մեկնաբանություններ, որտեղ ղահողանողական իմդուլսի ընթացքը խափանված է, որտեղ կտրուկ փոփոխություններն արդեն զարմանք չեն առաջացնում հասարակ մարդու մոտ, այլ դիտարկվում որդես կյանքի «նորմալ» ընթացք: Այդ «նորմալությունը» անոմիկ վիճակների նախանշաններ են: Մարդու համար ստեղծվում է մի անծանոթ իրականություն, որին դժվար է հարմարվել, դժվար է կյանքի ղլանավորման եզրեր գտնել: Այսդիսի իրողությունների ընթացքը բարդ է ուսումնասիրել մեզ ծանոթ ստուգված ձանադարհով: Այստեղ է, որ նոր հետազոտական ղրակտիկաների կիրառման ղահանջ է ա-

ուաջանում, այնդիսի որակատիկաների, որոնք հնարավորություն կտան տեսնել խորքային իրողությունները ամեն առանձին մարդու և ամբողջ հանրության մակարդակներով:

Բանավոր ղատմությունների մեթոդաբանական մոտեցումը հնարավորություն է տալիս վերլուծել առանձին մարդու փորձի յուրովիությունը հասարակության մշակութային լայն համատեքստում: Այստեղ համեմատվում են առանձին փորձում կարևորված սոցիալական իրականության յուրահատկությունները և ներաշխարհայնացած, շատ ժամանակ կաղաղարված ղատկերացումներն այն մասին, թե «ինչդե՞ս դետք է լինի գործերի դրվածքը»:

Բանավոր ղատմություններ մեթոդի կիրառումը մարդու առօրյա կյանքի՝ սոցիալական, քաղաքական, ինչդես մա ղատմական համատեքստն ըմբռնելու համար այսօր շոշափելի է, քանի որ հնարավորություն է տալիս տեսնել մարդկային գոյության խորքային, իրական ղատկերը՝ ուշադրություն դարձնելով կյանքի դինամիկ փոփոխություններին ու շարժում ընթացքին:

Բանավոր ղատմությունները հնարավոր են դարձնում տեսնել իրողությունը իրադարձությունների բուն մասնակիցների տեսանկյունից, հասկանալ նրանց սղասումները, զգացմունքները, հետևանքների վերաբերյալ կարծիքը : Այսինքն, այս մեթոդով ստացված ղատումները թույլ են տալիս հասկանալ նույնիսկ կուլելկտիվ՝ ամբոխային, զանգվածային գիտակցությամբ ղարուրված առանձին մասնակցի հայեցակետը և իրադարձությունների սեփական վերլուծությունը:

Մեթոդի կարևորագույն առավելություններից է մա ղատմությունների ղահ-ղանումը: Մասնավորաղես, ղատմությունների միջոցով ձայնի տրամադրումը մարդկանց, ում ձայնը՝ աշխարհընկալումները, փորձը անլսելի են հասարակության մեջ, ինչդես օրինակ՝ կանանց ձայնը մասկուլին հասարակության կառուցվածքում: Այս մեթոդի միջոցով է, որ հնարավորություն ունենք հասկանալ, թե ինչդիսի արտահայտումներ են գտնում ընդհանրացված հասարակական կատեգորիաները մասնավոր կյանքի փորձերում:

Անշուշտ, այստեղ հարց կա, թե որքանով են այս ղատումները վավերական (վալիդ): Սակայն եթե մենք ելնում ենք այն դրույթից, որ «մեր իրականությունը մեր ղատկերացումներն են աշխարհի մասին», աղա իմաստվորվում է մեթոդի կիրառման արդյունավետությունը: Ավելին, որոշ դեղքերում ամեմավավերական ղատկերացումները իրողության ում են ստանում:

Մեթոդի հետ կաղված մյուս հակասությունը առանձին մարդու՝ կյանքի ըմբռնման անցողիկ լինելու հանգամանքն է: Այստեղ կարող ենք մշել, որ վերափոխվելու ենթակա են ոչ միայն իրադարձությունների մասին ընկալումները, այլ մա իրականության վերաբերյալ կաղաղարված, ընդունված ղատկերացումները: Բանավոր ղատմությունների վերլուծությունները հնարավորություն են տալիս տեսնել այդ վերափոխումների ղատձառական կաղը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏ

Պոստմոդերնիստական ուղղության մերկայացուցիչները³ քննադատաբար մոտենալով վաղ սոցիոլոգիական մոտեցումներին, հիմնավորում են, որ այն չի ներառում այնպիսի իրականությունների հետազոտում, ինչպիսին են հասարակության ֆրագմենտային կամ հատվածային, լատենտային, թաքցված, անհայտ, արտակարգ իրավիճակների, ռիսկի գործոնների, ժամանակավոր և ինքնաբերական դրսևորումների, գլոբալացման լոկալիզացիայի և այլն ուսումնասիրությունները: Ժամանակակից Հայաստանը, որն աղյուսակ է հասարակության տևականորեն փոփոխվելու և ինքնակողմնորոշվելու գործընթաց, կարիք ունի խորը ուսումնասիրության՝ մասնավորապես Պոստմոդերնիստական մեթոդաբանական մոտեցմամբ: Հարկ է նշել, որ 20-րդ դարի վերջին և 21-րդ դարում Հայաստանում տեղի ունեցած կտրուկ փոփոխությունները կարելի է դասել արհավիրքային փոփոխությունների շարքին: Նշված ժամանակահատվածում տեղի ունեցան կտրուկ փոփոխություններ կյանքի սոցիալական, քաղաքական, տնտեսական և ֆիզիկական տարածքներում:

Մինևույն ժամանակ ակտուալացել է գլոբալացման գործընթացների անընդմեջ զարգացման լոկալիզացիայի առաջնական մակարդակում սիմվոլիկ փոխանակման խնդիրը: Այդ առումով ժամանակակից աշխարհը միտում ունի մշակույթների ներթափանցման: Գլոբալացումը և սրան հետևող բնակչության հոսքը վերափոխատարում են «ուրիշի» գաղափարը և նոր մեկնաբանություններ տալիս ծանոթ սիմվոլներին: Կարևոր է նշել, որ միգրացիոն գործընթացները տարբեր մակարդակներում վերափոխում են սոցիալական տարածքի կոնֆիգուրացիան՝ յուրովի քարտեզավորելով այն: Մեջբերելով⁵ կարելի է ասել, որ միգրացիան հնարավոր է դիտարկել որպես մի ճանապարհ՝ «ճանաչված և անբավարարից» դեղի «չճանաչված և երազածը»: Ճանապարհն անցնելու ուժը մենք ստանում ենք հույսից: Սակայն հույսն ունի տարբերվող մտածողական (մենտալ) տրամաբանություն, և բոլորովին էլ լարտադիր չէ, որ համադաստասխանի այն իրողությամբ, որը սղասում է մեզ այդ ճանապարհի վերջում, այսինքն՝ լարտադիր չէ, որ «երազվածը» իրականության լույսի ներքո ներկայանա հենց որպես ցանկալին: Այն կարող է դիտարկվել որպես վերափոխում կամ փոխակերպում անուղղակի՝ երազված, ցանկալի իրականության փորձից դեղի ուղղակի՝ իրականության հետ բախվելու փորձ: Այս իմաստով, շարունակաբար փոփոխվող հասարակությունը ուսումնասիրելու և հասկանալու համար մենք ղեկավարվում ենք լուսաբանման միջոցով սոցիալական իրականության, մյուս սոցիալական ֆենոմենների վերաբերյալ տարբեր, որոշ դեղքերում իրարամերձ մեկնաբանությունները:

Հայերը՝ որպես լեզու, դժվար են տեղավորվում որոշակի տարածքային սահմաններում: Հայության սոցիալական համակարգը գրեթե զուրկ է աշխարհագրական ստույգ տեղաբաշխումից, հետևաբար կարող է մկարագրվել որպես «համաշխարհային ազգ»: Սա արդիական է հատկապես մերօրյա Հայաստանի միգրացիոն հոսքերի լոկալիզացիայում:⁶ Ռենդալ Հասենն այս առումով հատկանշական մի դի-

տարկում ունի. «Ինչդեռ անցյալում, այնդեռ էլ այսօր, հայերն ամբողջ աշխարհում ձևավորել են յուրահատուկ և զգալիորեն տարբերվող գոյատևման ճանապարհներ՝ ընդունած մշակույթների, երկրների Պարտականությունների և հնարավորությունների համակարգի ներքո»:⁷ Այնուամենայնիվ հայերը տարբեր մշակույթների ազդեցության տակ գտնվելու դրամաներում համադաստասխան դասակարգումներ են ձևավորել առօրեական կյանքի վերաբերյալ:

Միգրացիոն գործընթացների հետևանքով Հայաստանը միգրանտների մեծ հոսքեր է ունեցել, այդ թվում նաև՝ աշխատանքային միգրանտների: Նշենք, որ Հայաստանից դուրս ավելի շատ հայեր են աղրում, քան Հայաստանում: Սա մասնավորապես արդյունք է Առաջին համաշխարհային պատերազմի՝ 1915 թվականի հայերի ցեղասպանության, երբ աշխարհի տարբեր անկյուններում լայնորեն ձևավորվեց հայկական սփյուռքը:⁸

Ազգային ինքնության ձևավորումը մեզանում անցնում է երկաստիճան գործընթաց. լայն իմաստով՝ «հայ», որին հետևում է՝ «որտեղի հայ»: Այսպիսով մերօրյա Հայաստանի սոցիալական իրականությունը բաղկացած է տարբեր մշակութային մոտիվներից, որոնք հակասությունների առիթ են տալիս տարբեր տեղային մշակութային և ազգային ինքնությունների մակարդակով:

Առօրյա մշակութային սիմվոլիկ իրողության մեջ է ձևավորվում մեր ինքնությունը: Փոփոխված իրականությունը միշտ էլ դժվարացնում է սիմվոլների վերակողմորումը: Ավելին, երբ ազգային ինքնության հիմքը մեկն է՝ հայ, ադա սոսունները համադաստասխանում են այդ ամբողջական դասակարգումներին և բախվելով առօրեականության տարբերվող սիմվոլիկ դաշտին՝ նրանք իմաստավորման նոր գործընթաց են դադարեցնում:

Այսպիսով, առօրեականության ուսումնասիրությունը, մասնավորապես բանավոր դաստիարակումների մեթոդի օգտագործմամբ, ավելի մեծ կարևորություն է ստանում փոփոխվող հասարակությունում: Ժամանակակից Հայաստանը, անցնելով կտրուկ փոփոխությունների բազմավեկտորային՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական գործընթաց և միաժամանակ միգրացիոն գործընթացների կիզակետում լինելու փորձ, գտնվում է շատ դեղձերում իրարամերժ, կոնֆլիկտային մշակութային դաշտում: Մշակութային այս տրավմայի դրամաներում իմաստափոխվում, որոշ դեղձերում անհիմաստ են դառնում մշակութայնորեն ընդունված յուրահատուկ «իշխանական» փոխհարաբերությունները, որոնք իրենց հերթին ստեղծում են սոցիալական ինտերակցիաների խառնաշփոթ: Նորաստեղծ իրականության մեջ դադարում է առաջանում մեկնաբանելու եղանակ սիմվոլիկ դաշտը, բացատրել նրանց ծագումնաբանությունը, ուսումնասիրել վերափոխումների տրամաբանությունը՝ տալով դրանց նոր իմաստավորում:

- ¹ Piotr Sztompka, «The Focus on Everyday Life: a New Turn in Sociology», *European Review*, h. 16, թիվ 1 (2008), էջ 23–37, DOI:10.1017/S1062798708000045, այց` 1.11.2019:
- ² St´u Dorothy E. Smith, *The Everyday World as Problematic: A Feminist Sociology* (Toronto: University of Toronto Press, 1988) և Sarah Pink, *Home Truths: Gender, Domestic Objects and Everyday Life* (Oxford: Berg Publishers, 2004):
- ³ Jean Baudrillard, *Simulacra and Simulation*, Sheila F. Glaser (թրգմ.) (Ann Arbor: University of Michigan Press, 1994); Zygmunt Bauman, *Hermeneutics and Social Sciences* (London: Hutchinson, 1978); Zygmunt Bauman, *Modernity and Ambivalence* (Cambridge: Cambridge University Press, 1991); Ulrich Beck, *Risk Society: Towards a New Modernity* (London: Sage, 1992); Anthony Giddens, *The Consequences of Modernity* (Cambridge: Polity Press, 1990):
- ⁴ Մասնավորապես քառսի վերաբերյալ դարգաբանումները կարելի է գտնել Բարտր Մկրտիչյան, *Хаос как системообразующий механизм самоорганизации социума* (Երևան: ԵГУ, 2008) աշխատանքում:
- ⁵ Alfred Schutz, *The Phenomenology of the Social World*, George Walsh, Fredrick Lehnert (թրգմ.) (Evanston, IL: Northwestern University Press, 1967), էջ 163-177:
- ⁶ Artur Mkrtychyan, «Towards the New Armenian Networks: Theoretical Considerations», *Armenians Around the World: Migration and Transnationality*, Artur Mkrtychyan (խմբ.) (Frankfurt am Main: Peter Lang, 2015), էջ 12:
- ⁷ *Immigration and Asylum: From 1900 to the Present*, Matthew J. Gibney and Randall Hansen (խմբ.) (Santa Barbara, CA: ABC-CLIO, 2005), էջ 13:
- ⁸ Hasmik Gevorgyan, «Gender Aspects of Migration Processes in Armenia: an Integrative Approach», *Armenians Around the World: Migration and Transnationality*, Artur Mkrtychyan (խմբ.) (Frankfurt am Main: Peter Lang, 2015), էջ 271-280:




ՀԱՅԱՍՏԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES



հասարակական
դայնամազրի
վերականգնման
ուղիների մասին



ՍՏԵՓԱՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՆԱԽԱՐԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՏՐԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՋԵՏՋԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

-ին ժողովրդական ճնշմամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ստիպված էր վարչապետի տաշտոնից հրաժարական ներկայացնել: Արդյունքում խորհրդարանում մի քանի ձայներ ունեցող *Քաղաքացիական Պայմանագիր* կուսակցության առաջնորդը ընտրվեց վարչապետ: Շատերը դա կոչեցին հեղափոխություն, ոմանք՝ իշխանափոխություն:

Հեղափոխության և իշխանափոխության տարբերությունը հիմնարար է և շատ դեղձերում՝ սուբյեկտիվ, որովհետև նման գիտական սահմանումներ գոյություն չունեն: Նման մի սուբյեկտիվ գնահատական էլ փորձեն ես տալ. եթե հանրությունն իր անցյալը վերաիմաստավորում է, կատարում հետևություններ և դրանց հիման վրա կառուցում առաջադի նախագիծ ու հիմնարար ռեֆորմներ իրականացնում, առաջ դա կարելի է կոչել հեղափոխություն: Հակառակ դեղձում կարելի է լինել, որ հեղափոխություն չի եղել: Եթե ավելի կարճ ձևակերպենք, առաջ հեղափոխությունը ոչ թե տեղի ունեցած փաստի արձանագրումն է, այլ այդ փաստի հիման վրա կատարված ռեֆլեքսիան:

Նորից կրկնեն, եթե քաղաքական միտքը իմաստավորում է 2018-ի աղբիլին Հայաստանում տեղի ունեցած դեղձերը, դրա հիման վրա կատարում է եզրակացություններ, որի շնորհիվ կարդինալ կերպով փոխվում են արժեքային համակարգը, մտածելակերպը, քաղաքական ու կառավարման համակարգերը, առաջ տեղի ունեցածը հնարավոր կլինի անվանել հեղափոխություն, իսկ եթե ոչ՝ տեղի ունեցածն ընդամենը խաղաղ ճանապարհով իրականացված իշխանափոխություն է:

Անցյալի վերաիմաստավորումը և կատարվածի իմաստավորումը ղախանջում է ազատ մտածողություն, հանրային քննարկումներ, բանավեճեր: Սակայն Հայաստանում չի ձևավորվում նման մթնոլորտ: «Հեղափոխականները» հանրությունը բաժանել են «սևերի» ու «սդիտակների», հաղթողների և մերժվածների, ինչը, բնականաբար, ամհնարին է դարձնում հանրային քննարկումների համար բարենդաստ մթնոլորտի ստեղծումը: «Սևերի» բաժանումը ղետք է դատարաններում կատարվի, ինչն անհրաժեշտ է առաջին հերթին առաջայում նման անօրինականությունները չկրկնվելու համար, իսկ քաղաքական հարթությունում տրվում են գնահատականներ: Սակայն այդ բաժանումը մեզ մոտ ոչ թե իրավական հարթությունում է կատարվում, այլ քաղաքական՝ որդես քաղաքական տեխնոլոգիա՝ ընտրությունների ժամանակ համադատասխան հանրային մթնոլորտ ձևավորելու համար:

ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԹԵՉԻՍՆԵՐԻ

Ռուսական հեղափոխության առաջնորդ Վլադիմիր Լենինը 1917 թ. արտասահմանից վերադառնալով Պետրոգրադ (Սանկտ Պետերբուրգ)՝ առաջադրեց իր հայտնի «Աղբիլյան թեզիսները»՝ կոմունիստական հեղափոխության ծրագիրը: Մի քանի ամիս անց տեղի ունեցած բոլշևիկյան հեղափոխության հա-

մար թեզիսները գաղափարական հիմք դարձան: Մինչև Խորհրդային Միության անկումը բարձր դասարանցիներն ու բուհերի ուսանողները դրանք լռելու էին և անգիր իմանային և բնութագրողների ժամանակ բացատրեին դրանց բովանդակությունն ու տարածական նշանակությունը: Թե որքանով էր հաջողված այդ ժողովուրդներին ստանալու նախագիծը, տվյալ դեպքում կարևոր չէ, կարևորն այն է, որ դա աղափարային միտված նախագիծ էր, որին միլիոնավոր մարդիկ, հատկապես սկզբնական շրջանում, հավատում էին:

2018-ի ապրիլին սկսված հայկական հեղափոխության խորհրդանիշը դարձած Լիկոլ Փաշինյանը իշխանության եկավ առանց «ադրիլային թեզիսների», մեզ բոլորին թողնելով «Նոր Հայաստանի» հայեցակարգի հնարավոր բովանդակության որոնման ծանր բեռը: Այսօր հանրության համար մեկ հիմնական հարց կա, որի տատասխանը կարևոր է մեր ընդհանուր աղափարի համար. ինչուիսի՞ք քաղաքական համակարգ է կառուցվելու Հայաստանում:

Հայաստանում հեղափոխությունն անձնավորվել է, ինչն ուղղակիորեն փոխկապակցված է նշված հարցի հետ: Հայաստանի ներկա քաղաքական փուլում, երբ հասարակությունը բաժանված է մերժվածների ու հաղթողների, ավտորիտարիզմն անխուսափելի է: Հետհեղափոխական ժամանակաշրջաններում դա բնորոշ է եղել բոլոր երկրներին:

Ավտորիտար կառավարման ձևը լայնամասշտաբով է հետհեղափոխական շրջանում նոր կարգի անցնելու անորոշություններով: Այսինքն՝ հանրային և ղեկավար կյանքն ավելի շուտ կոնոնակարգվում է ոչ թե օրենքներով, այլ հեղափոխական տրամաբանությամբ, որի կենտրոնում սովորաբար «հեղափոխության առաջնորդներն» են լինում:

Ըստ դասական մոտեցման, հասարակությունն ունի երեք գագաթ՝ երկրի ղեկավար, իշխող դաս և ժողովուրդ: Կա՛մ երկրի ղեկավարը իշխող դասի միջոցով ձևում է ժողովուրդին, կա՛մ ժողովուրդի աջակցությամբ վախի մեջ է ղախում իշխող դասին: Սերժ Սարգսյանի համակարգն առաջին տարբերակն էր, ներկայիս կառավարությունը, կարծես թե, երկրորդ ճանապարհով է շարժվում: Երկու մեթոդներն էլ ավտորիտար համակարգի մեթոդներ են:

Ավտորիտարիզմի այլընտրանքը կայուն ժողովրդավարական համակարգն է, որը հիմնված է օրենքի գերակայության, սեփականության իրավունքի ճանաչման և ղեկավար-հասարակական խորքային ավանդույթների վրա: Այսինքն՝ հնարավորինս նեղացվում է անձերի դերակատարությունը՝ ստեղծելով իշխանության ճյուղերի իրական հավասարակշռություն, միմյանց վերահսկելու մեխանիզմներ և օրինականություն:

Ըստ դասական մոտեցման, ցանկացած հեղափոխություններից հետո անգամ ժողովրդավարական հասարակություններում մեծանում է ավտորիտարիզմի հաստատման հավանականությունը, քանի որ հեղափոխությունները կատարվում են այն ժամանակ, երբ գոյություն ունեցող իրավական համակարգը կամ

չի գործում, կամ էլ չի կարողանում լուծել առկա խնդիրները: Հեղափոխությունները ջարդում են եղած իրավական համակարգերը, և մինչև կձևավորվի նորը, առաջ է գալիս հեղափոխական իշխանություն, որը ղեկավարում է ղայքարի հակահեղափոխության դեմ և ձևակերպի խաղի նոր կանոնները: Որոշես կանոն հեղափոխություններից հետո ձևավորվում են ռեդեմպտիվ համակարգեր, որոնք ողջունվում են հանրության մեծ մասի կողմից:

Ոչ մի բանական մարդ չի կարող ասել, որ նախկին կոռուպցիոներները ղեկավարում են արդարացված և խուսափեն ղատժից, ոչ էլ կարող է ասել, որ տասնյակ տարիներ ղետությունը ղավթած, հանցագործ սխեմաների միջոցով երկիրը սնանկության հասցրած մարդիկ ղետք է հանգիստ շարունակեն իրենց կյանքը: Հայաստանի ժողովուրդը շատ ղանկ գին է վճարել այդ ամենի համար՝ հարյուր հազարավոր արտագաղթածներ, ավելի շատ՝ աղքատության մեջ հայտնված մարդիկ, խեղղած ճակատագրեր, միլիարդավոր դոլարների ղետական ղարտք: Այս շարքը կարելի է երկար ղվարկել: Այդ ամենի հետ հաշտվելն անհնար է, սակայն գոյություն ունի նաև այդդիսի իրավիճակներում հայտնված երկրների ղատմական փորձը, երբ հանուն վեհ հեղափոխական գաղափարների ձևավորվում են ռեդեմպտիվ համակարգեր:

ղետական ղանգվածային հանցագործությունների ժամանակ դժվար է որոշել, ղե ինչի համար են ղատժում, ինչի համար վճարում փոխհատուցում, ինչի համար ներում: Ո՞վ է իրական ղատասխանատուն, իսկ ո՞վ է հանգամանքների բերումով ենթարկվել իրավիճակին, և ո՞վ՝ համակերպվել: Նման դեղքերում առաջանում է «ազգային համաձայնության» խնդիր: Դա դժվարագույն և հավասարակշռված համազգային որոշում է ղահանջում: Այդդիսի ճանաղարհով են անցել Լեհաստանը, Հունգարիան, Արևելյան Գերմանիան, Չիլին, Արգենտինան:

Մեղավորների խումբը, որը ղետք է ղատժվի, կարող են լինել հանցագործ համակարգի քաղաքական ղատասխանատուները, ծանր հանցագործություններ կատարողները, մեր դեղքում՝ բանակում անօրինականություններ կատարողները՝ հաշվի առնելով ղատերազմական սղառնալիքը: Փոխհատուցողները կարող են լինել տնտեսական հանցագործություններ իրականացնողները: Կարող են լինել նաև հատուկ ղատիժներ, օրինակ՝ ղետական ղաշտոններ և քաղաքականությանը ղբաղվելու արգելքներ, որոնք կարող են կիրառվել որոշ մարդկանց հանդեղ, իսկ որոշ կուսակցություններ՝ լուծարվել: Սակայն այստեղ առաջանում է երկու առանցքային հարց՝

- Ո՞վ է որոշում, ղե ով և ինչղես ղետք է ղատժվի.
- Ո՞ր օրենքներով են նման վճիռները կայացվում:

Չի կարելի ղոյլ տալ նաև, որ բռնաճնչիչ համակարգերը գործեն ղստ հեղափոխության տրամաբանության, որովհետև այդդիսի համակարգեր ստեղծելը հեշտ է, իսկ կանգնեցնելը՝ դժվար: Այս ծանրագույն խնդիրը կարող է լուծվել բացառաղես ազգային համաձայնության միջոցով, ինչղես նաև՝ ուղենիչ ունե-

նալով, թե ինչ տեսակ երկիր ենք կառուցելու: Այս առումով՝ առանց «թեզիսների» կամ հայեցակարգի առաջ շարժվել չի լինի: Փորձեն շատ կարճ ձևակերպել, թե անկախության շրջանից սկսած ինչ առանցքային հանրային համաձայնություններ են եղել և այդ համատեքստում ինչը կարող է կազմել մոր հանրային դայնամազրի եությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Առաջին սոցիալական դայնամազրի, որը «կնքվել» է Հայաստանում, ունեցել է բավականին դարձ ձևակերպում. «Ղարաբաղը մերն է»: 1988-ին սկսված շարժման արդյունքում իշխանության եկած մոր էլիտան հանրությանը ընդամենը մեկ խոստում էր տվել՝ Արցախը կազատագրվի: Այլ խոստում չի եղել: Ամբողջ 1991 թ. անկախության հանրաքվեի ժամանակ դրա մախաձեռնողները քարոզարշավի ժամանակ հանրությանը բացատրում էին, որ անկախության հանրաքվեն կոյուրացնի Արցախի ազատագրության հարցը: Բուն անկախության խնդիրը ստորադասվում էր այդ հարցին: Մարդիկ համաձայնվել էին ամբողջ վատ դայնամներում, իրենց որդիներին ուղարկել դատերազմ, օրական 2 ժամ հոսանք ունենալ, ձմռանը սառչել, սակայն այդ «հանրային դայնամազրի» դեպք է անխախտ մնար: Դա գիտակցված ընտրություն էր:

Երբ առաջին մախազահ Լևոն Տեր-Պետրոսյանը 1997-ին հայտարարեց, որ Արցախի հարցում դեպք է գիշումների գնալ, մա կնքեց իր «քաղաքական մահականացում», և մրա մախազահության ժամանակաշրջանը դրանից հետո միայն ամիսներ տևեց: Տեր-Պետրոսյանը խախտել էր հանրային դայնամազրի: Սինչև այսօր մնան տեսակետներ հայտնողները հայտնվում են քաղաքական կյանքի լուսանցքում:

ԵՐԿՐՈՐԴ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ. ԿՐԱԿԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ

1991-ից սկսած Հայաստանում բազմաթիվ քաղաքական սղանություններ են տեղի ունեցել, այդ թվում՝ ԱԺ մախազահի, վարչադեպի, գլխավոր դատախազի, փոխմախարարների, քաղաքական գործիչների: 2008 թ., երբ ընտրությունների արդյունքները վիճարկող բազմաազարանոց հանրահավաքներ էին տեղի ունենում, հնչեցին կրակոցներ, որի արդյունքում գոհվեց 10 մարդ: Դա եղել է 2008-ի մարտի 1-ին: «Մարտի 1» արտահայտությունը հանրային գիտակցության մեջ շատ խորը հետք թողեց, և այդ սղանությունների բացահայտմանն ուղղված բոլոր գործողությունները՝ մախաքնությունը, դառլամենտում այդ դեպքերը հետաքննող հատուկ համձեմաժողովի ստեղծումը, հանրային և խորհրդարանական լուսումները, այդդես էլ չբացահայտեցին սղանություն կատարողներին, կամ էլ իշխանությունն արեց ամեն ինչ, որ դրանք չբացահայտվեն:

2008-ի այդ ընտրությունների արդյունքում Սերժ Սարգսյանը եկավ իշխանության, և նրա նախագահության ողջ ժամանակաշրջանում հանրային հնչողություն ստացած քաղաքական սղանություններ չեն եղել, բայց եղել են քաղաքական հալածանքներ: Քաղաքական սղանությունները լռելյայն դառնում էին տաբու, և հիշարժան է, որ այս տարվա իշխանափոխության ժամանակ Սերժ Սարգսյանի և Նիկոլ Փաշինյանի միջև տեղի ունեցած հրադարակային հանդիման ժամանակ Սարգսյանը Փաշինյանին սղանաց. ««Սարտի 1»-ը ձեզ դաս չեղա՞վ», սակայն վերադառնալով իր նստավայրը, հրաժարական տվեց:

Հեղափոխության ժամանակ ցուցարարները ձեռքերը վեր ղախած ցուցադրում էին, որ իրենք զինված չեն և այդ շարժումն ստացավ իր երկրորդ անունը՝ «բաց ձեռքերի հեղափոխություն»:

Սարտի 1-ի գործով վերսկսված քննությունը կարելի է դիտարկել արդեն այդ տաբուի ամրադնդման գործընթաց: Ցույցերի ժամանակ հանրությանը զնդակահարելը այլևս անթույլատրելի էր: «Տաբուն»՝ քաղաքական ղայքարի ժամանակ կրակել չի կարելի, ղետք է հաստատվի նաև դատավարական ղորոցեսի միջոցով: Թե որքանով արդյունավետ կլինի այդ վերսկսված քննությունը, ցույց կտա ժամանակը, սակայն քաղաքական ղայքարում ուժի կիրառումից հրաժարվելու արգելքը կարևորագույն հանրային ղայմանավորվածության կարող է հանգեցնել:

ՎԼԻՆԻ՞ ԱՐԴՅՈՔ ԵՐՐՈՐԴ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայաստանում տեղի ունեցած հեղափոխության երրորդ հարաձուն ղախանջը սեփականության լեզիտիմության հարցն է: Խոսքը ոչ ղե օրինականության, այլ հենց լեզիտիմության մասին է, այսինքն՝ հանրության վերաբերմունքի մասին է:

1991-ից հետո տեղի «կառիտալի նախնական կուտակման» վայրենի ընթացքը լուրջ հանրային խնդրի է վերածվել: Հայաստանում կոռուղցիան, արիեստական մենաշնորհները, ղետական ունեցվածքի անօրինական սեփականաշնորհումը, ղետական բյուջեի հանդեղ ղոյլ վերահսկողությունը հանրության մեջ՝ միմյանց նկատմամբ անվստահության մթնոլորտի ղատձառ է դարձել: Սոս մեկ միլիոն բնակչություն սոցիալական ղատձառներով լքել է երկիրը, բնակչության մոտ 50 տոկոսը աղքատության եզրը հատել է, ղետական ղարտքը 7 միլիարդ դոլարի շենն անցել է, սակայն Հայաստանում կարելի է տեսնել բազմաթիվ գերթանկարժեք դղակներ, որոնց զգալի մասը ղատկանում է նախկին իշխանությունների ներկայացուցիչներին: Կա հանրային ղախանջ ղատժել և բոնագրավել այդ «անօրինական» ունեցվածքը: Հայաստանի տնտեսությունը լուրջ խնդրի առջև է հայտնվել, ոչ ոք վստահ չէ, ղե արղոք մի օր «հեղափոխական» զանգվածը, տեսնելով ներկայիս իշխանությունների մեղմ ղախվածքը, չի փորձի ինքնուրույն վերականգնել «արղարությունը»:

Բնական է, որ չի կարող զարգանալ այն երկիրը, որտեղ չի գործում սեփականության անձեռնմխելիության սկզբունքը, որը լաշտոդանված է ոչ միայն օրենքով, այլև ճանաչվում է հանրության կողմից:

Սա է այն գլխավոր խնդիրներից մեկը, որը դետք է լուծի ներկայիս իշխանությունը: Արդյո՞ք կկարողանա նոր կառավարությունը լուծել այդ հարցը և «կնքել» մի նոր հանրային դայնամագիր, բաց հարց է:

ԿԱՅՐԱՄ
ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՕՐԱԿԱՐԳԸ



այաստանում 2018 թ. աղբիւ-մայիսյան հեղափոխական շարժման օրակարգը, տիրապետող գաղափարաբանությունն ու դիսկուրսները հասկանալու համար կարևոր է թերևս ուսումնասիրել այդ շարժման ակունքները: Այդ օրակարգի մասին խոսելիս մի կողմից՝ ղեկավար է դարձել, թե ովքեր են եղել այս իրադարձության գլխավոր գործողներն ու սոցիալական ուժերը, մյուս կողմից՝ ոչ ժակաս կարևոր են այն գաղափարաբանությունը, ղատումները, դիսկուրսներն ու լեզուն, որոնք օգտագործվում են հին ու նոր քաղաքական ուժերի կողմից: Նիկոլ Փաշինյանը բազմիցս հայտարարել է, որ երկրորդական է համարում քաղաքական գաղափարախոսությունները և կենտրոնանում է մարտահրավերների՝ կոռուպցիայի վերացման, իրավական ղետության կայացման և շուկայական ազատ մրցակցության աղահովման վրա: Սկզբնական փուլում այս գաղափարախոսական շեղքության մղաստավոր լինելն, այդուհանդերձ, աղագայում կարող է մի շարք վտանգներ առաջ բերել:¹

Ո՞ՐՆ Է ԴԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դույն քաղաքագետ Նիկոս Պուլամձասի սահմանման համաձայն, ղետությունը հասարակությունից անջատ մի բան չէ, այլ «եղած հասարակական ուժերի հարաբերակցության մյութական խտացումն է»:² Այս առումով մախորդ՝ ԴԿ կառավարությունները կարողացել էին ստեղծել տիրապետող ավանդական ղրակտիկաների և լեզվի վրա հենված և արդյունավետ կերղով տեղայնացված մի կուռ համակարգ:

Այն ուներ երկու հենարան. մեկը նեղիբերալ գիծն էր՝ միջազգային կառույցների համար, իսկ մյուսը՝ ազգայնականը, ոազմահայրենասիրականը՝ ստորակա խավերի համար, որղեսգի նրանք չխոչընղոտեին իրենց ունեզրկելու քաղաքական գիծը: Այսինքն, «ազգ-բանակ»-ը որղես տամիք դրված էր նեղիբերալ շենքի վրա: Եվ ահա այս տամիքը շեզքացնելու դեղղում *Քաղաքացիական ղայան-մազրիմ* կարող է մնալ միայն նեղիբերալ կառույցը, որը լայն շերտերի համար կարող է էլ ավելի թույլ լեզիտիմություն ունենալ, եթե չփոխարինվի հասարակական համերաշխություն խթանող մեկ այլ գաղափարի, օրինակ, սոցիալական արղարության գաղափարի վրա հենվող նոր քաղաքականությանը:

Երբեմն մախկիմների բովանղակային նեսուրսն օգտագործելու գայթակղությունը մեծ է: Այստեղ հատկաղես խնղրահարույց է ազգայնական դիսկուրսը, որին հեղափոխության օրերին հակաղրվեց քաղաքացիական ինքնակազմակերղման և համերաշխության դիսկուրսը: Նիկոլ Փաշինյան-ԴԿ եղած բղղր հրաղարակային հարցուղատախանները հատկաղես մղատակ ունեին Փաշինյանին բերել ԴԿ-ական դիսկուրսի, լեզվի, ղրակտիկաների և հոնետրաբանության դաշտ: Փաշինյանը որոշ բացառղություններով խուսափել է դրանից: Ցայտուն օրինակներ են նոր վարչաղետի ընղրղությունից օրեր անց՝ մայիսի 28-ին Սարղարաղատում տեղի ունեցած տոնական միջոցաոման ընթացղուն

նախկինների կազմակերպած համերգի բովանդակության և Նիկոլ Փաշինյանի ելույթի հակադրություններն ու հատման կետերը:

ՀՆԻ ԵՎ ՆՈՐԻ ՍԿՉՐՈՒՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որո՞նք են հմերի և նորերի միջև եղած գլխավոր տարբերությունները: Նոր կառավարությունը որոշակի թերահավատություն ունի նախորդների ազգայնական լոստումնի՝ «ազգ-բանակ» հայեցակարգի նկատմամբ: Որոշես այդ տարբերություններն ընդգծելու փորձ կարելի է ընկալել Արմեն Գրիգորյան-Վիգեն Սարգսյան երկխոսությունը բաց նամակների տեսքով: Բայց այս երկու դիրքորոշումների տարբերությունը հանգում է գլխավորապես ազատ, արդար ընտրությունների, կոռուպցիայի նվազեցման, մարդու իրավունքների դաշտաանության և մրցակցային շուկայի ադահովման հարցերին:

Նոր կառավարությունն, իհարկե, ձգտում է հեռու մնալ նախորդների տնտեսական քաղաքականության շեշտադրումներից: Այդուհանդերձ հավանականությունը մեծ է, որ նոր կառավարությանը Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և մյուս դոնորների կողմից կառաջարկվեն նույն մոտեցումները, որոնք կիրառվում էին ՀՀԿ կառավարությունների օրոք: «Նեոլիբերալ» կոչվող քաղաքականությունը վերաբերում է հենց այս կազմակերպությունների թելադրած օրակարգին: Այն սոսկ լիբերալ չէ, այլ «նեո» նախածանցի իմաստային նշանակության շնորհիվ բնութագրում է միջազգային կառույցների դարտադրած «ադակարգավորման, մասնավորեցման և ազատականացման» քաղաքականությունը, ինչը որոշ չափով կարող է հակասել «ներքևից վերև» ձևակերպվող տեղական օրակարգերին: Դա հատկապես ակնառու է հանքարդյունաբերության ոլորտի և տնտեսության առաջնահերթ ծյուղերի ընտրության հարցերում: Հեղափոխությանն աջակցող քաղաքացիական ակտիվիստների մի ստվար խումբ ներկայացնում են Թեղուտի, Ամուլսարի և մյուս խնդրահարույց հանքային ներդրումները վիճարկող եկոլոգ-ակտիվիստները, որոնց համար Հայաստանի զարգացման տնտեսական մոդելն այլ է: Ըստ այդմ, էթե Հայաստանում տեղի է ունեցել արժեքային հեղափոխություն, ադա օրենքի գերակայության և տնտեսական արդարության ու կանաչ տնտեսության սկզբունքները դեռ է առանց խտրականության գործեն բոլոր տնտեսական սուբյեկտների դեմքում՝ թե՛ ներքին, թե՛ օտարերկրյա:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱ

Այն դատկերացումն, ըստ որի՝ շատ հարցեր լուծվելու են արդեն իսկ իրավական դետության հաստատման և կոռուպցիայի վերացման դայաններում, խիստ լավատեսական է: Իրավական դաշտը որոշես կանոն արտացոլում է եղած արտադրահարաբերությունների ստատուս քվոն: Նաև սա է դատաճառը, որ ՀՀ սահմանադրությունն արդեն երկու անգամ փոփոխության է ենթարկվել՝ անրագրված իրավունքները համադատասխանեցնելով տվյալ դահի ստատուս

քվոյին և դրանք իջեցնելով ավելի ցածր աստիճանի:³ Աշխարհում կան բազմաթիվ իրավական ղեկավարողներ, որոնցում սոցիալական բևեռացումը շարունակում է սրվել, իսկ իրավական և ինստիտուցիոնալ կարգավորումները չեն հանգեցնում ցանկալի արդյունքի: Այդ առումով թերի է նաև տնտեսագետ Դարոն Աջենոլուի տեսությունը, որի խորհրդատվությունից մտադիր էր օգտվել նոր կառավարությունը: Կառավարման առաջնությունացումն առանց համայնքների համար ներդրումային ռեսուրսներ ու նոր համայնքային կազմակերպման ձևեր ստեղծելու, շատ քիչ բան կտա մարզերին: Եվ վերջապես, կրթության անհավասարությունն ամենամեծ մարտահրավերներից մեկն է:

Կարելի է արձանագրել, որ նոր կառավարության համար տնտեսական բարեփոխումների առաջարկներ մշակող տնտեսագետների շրջանում գերիշխում են 1990-ականների ազատ շուկայի դատողությունները, այն դեպքում, երբ ներկայումս դրանք ամբողջ աշխարհում վերանայվում են: Պետք է հասկանալ, թե ինչու է գյուղացիներից յուրաքանչյուրը ցանկանում միայնակ հարստանալ և չմիավորվել իր համագյուղացիների հետ կոլեկտիվ տնտեսության մեջ՝ շարունակելով կախված մնալ խոշոր սեփականատերերի բարի կամքից: Այս առումով, նոր կառավարությունը լիովին ղեկավարվում է փոխի գործող տնտեսական տրամաբանությունը: Ուստի, դարձ է դառնում, որ գործող տնտեսական հարաբերությունների տրամաբանությունն ու փոխիստիպայությունը վերանայելու համար նոր կառավարությունը չի կարող խուսափել գոնե որոշակի գաղափարախոսական հստակեցումներից կամ լայն հասարակական կոալիցիաների մասին քննարկումներից:

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՍԱՍՆԱՎՈՐԻ ՓՈԽՋԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախորդ կառավարությունների գործունեությամբ մասնավոր կառուցված արդեն իսկ զգալիորեն ներթափանցել է այնտիպի ոլորտներ, ինչպիսին են կրթությունը, հանրային ծառայությունները, քաղաքների հանրային տարածքները, առողջապահությունը և այլն: Այդ ներթափանցումն ու աճող ազդեցությունը ղեկավարողների լիակատար գտման և բյուջետային խնայողության դրամացումներում մի շարք խնդիրներ են ստեղծել սոցիալական արդարության և հանրային համերաշխության համար: Ամենացցուն օրինակներից են Կրթության գերազանցության ազգային ծրագիրն ու առողջապահության ոլորտի ղեկավարողների ու առաջնորդողական ծառայությունների բաշխումը: Կառուցված առաջնորդող ուժը շարունակելու է գերիշխող լինել, եթե դրա կողքին չուժեղանան աշխատողների շահերը դաշտում արհմիությունները, ինքնակազմակերպվող քաղաքացիական բազիսային խմբերը, մասնակցային խորհուրդները և քննադատական մտածողություն խթանող նոր կրթական հարթակները: Ավելորդ է մշել, որ առանց քաղաքական ուղեգծի կառավարության գործունեությունը կարող է վերածվել առանձին միջոցառումների շարքի, որտեղ չի լինի ընդհանրական որևէ հայեցակարգ:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻՉ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒԺԵՐՆ ՈՒ ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՐԴՆԵՐԸ

Հայկական հեղափոխությունը, լինելով անցած տասնամյակի (2008-2018) քաղաքացիական շարժման վերելքի բանական և որակական աճի տրամաբանական շարունակությունը, իր մեջ արտացոլում է նաև դրանում մերգրավված քաղաքացիական խմբերի հակազդեցությունը անցած 30 տարիների «մասնավորեցման, ազատականացման և աղակարգավորման» մեղիբերալ կուրսին: *Թեղուտ, Թռչկանի ջրվեժ, Մաշտոցի տուրակ, 100 դրամ, Բանակն իրականում, Դեմ եմ!, Էլեկտրիկ Երևան, Հանուն գիտության զարգացման* և այլ քաղաքացիական նախաձեռնությունների օրակարգերում կարմիր թելի ղես անցնում էր սոցիալական արդարության քաղաքականությունների գաղափարը: Թեղուտի դեռևս ազգային հարստության և բնական ռեսուրսների արդար տնօրինման, մյուս դեռևս՝ հանրային տարածքի ղախողման, հանրային ծառայությունների արդար սակագնի, երկրի դաշտոնությանը տարբեր խավերի հավասար մասնակցության, կենսաթոշակային համակարգի մասնավորեցումը թույլ չտալու, հանրային ոլորտում մասնավորի ունեցած գերշահույթներն արգելելու և հանրային կրթության ոլորտի կրճատումը բացառելու հարցերն էին:

Ովքե՞ր էին 2018 թ. մարտ-ապրիլ ամիսների իրադարձությունների ժամանակ ամենակտիվ դերակատարումն ունեցած սոցիալական ուժերը: Դրանք նախ և առաջ ուսանողների ինքնակազմակերպված խմբերն էին, որոնք այս շարժման մշակութային առանցքն ու ՀՀ-ական քաղաքականության տուժողներն էին, որոնք այնքան էլ կաշկանդված չէին ղետական ու մահաղետական լծակներով: Հեղափոխական այլքի մյուս կարևոր խմբերը բազմազան քաղաքացիական նախաձեռնություններից մնացած բեկորներն էին, որոնք տարբեր թելերով հաղորդակցության մեջ էին մտել Փաշինյանի *Քաղաքացիական տայմանագիր* կուսակցության հետ, բայց նաև եղել էին ինքնաբուխ ակցիաների նախաձեռնողներից: Դրանցում եական տեղ էին գրավում տարբեր ձախական, ֆեմինիստական, սոցիալ-լիբերալ ուղղվածության խմբակներ, իրավադաշտային կազմավորումներ և քննադատական մտավորականներ ու ամհատներ, որոնք, հակադրվելով ավանդական մշակույթին, փողոցային ակցիաների ժամանակ բանեցնում էին այնդիսի տրակտիկաներ, որոնց նդատակը կարծրատիղերն ու հիերարխիկ կառույցները կոտրելն էր: Սրանք մշակութային հեղափոխության առաջամարտիկներն էին:

Ըստ էության, Նիկոլ Փաշինյանի և համախոհների անմնացորդ նվիրվածության հետ միասին հենց վերը նշված մշակութային բաղադրիչն է կարևոր դեր խաղացել շարժման սկզբնական կայծի և բռնկման համար: Բնականաբար մոբիլիզացվել էին նաև միջին խավի զգալի հատվածն ու հատկապես փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները, որոնք այլևս ի վիճակի չէին աշխատել հին ձևով: Բայց չնունանանք, որ հեղափոխությունը հնարավոր դարձրին այն հարյուրհազարավոր մարդկանց զանգվածները, որոնք մարզերից ու Երևանի արվարձաններից միացան շարժմանը Սարգսյանի հրաժարականից հաշված օրեր առաջ: Այդ մարդիկ աղքատության, շահագործման ու իրավազրկման գլխավոր տուժողներն են:

ՏԻՐԱՊԵՏՈՂ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ, ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐՆ ՈՒ ԼԵՉՈՒՆ

Կարևոր է դիտարկել, թե ինչդեպ է ձևակերպվելու նոր կառավարության օրակարգը, որոշե՞ցի իշխանությունը հետ չզլորվի հին քաղաքական կառույցների մեջ: Չմոռանանք, որ տարիների ընթացքում ձևավորվել է տիրապետող գաղափարաբանություն, ըստ որի՝ անհավասարությունը հասարակության ընդունելի վիճակն է: Հայաստանում գերիշխող են համաշխային միտումներն արտացոլող այնպիսի գործընթացներ, ինչդեպիսին են «խստամբերության» կամ «կոշտ խնայողության» դարադիզմը, «նոր սահմանադրականությունը» կամ «կարգադատական մեղիբերալիզմը», որոնցով մեղիբերալիզմը դեռ է ամրագրվի սահմանադրական նորմերի մեջ:⁴ Մյուս կողմից՝ տնտեսական ոլորտը ձերբազատվում է քաղաքական որոշումների և վերահսկողության ազդեցությունից, ինչն արտացոլված է «հետծողովրդավարություն» հասկացության մեջ, երբ տեղի են ունենում արդար ընտրություններ, բայց իրական ժողովրդավարական ազդեցություն ֆինանսական գործող դերակատարների և շուկայի վրա գոյություն չունի:⁵

Գլոբալ համատեքստում առկա է ևս մեկ դիսկուրս՝ սոցիալական արդարության և տնտեսական ժողովրդավարության բննադատական դիսկուրսը: Այն ավելի հրատառ է դառնում ամբողջ աշխարհում ավանդական տնտեսագիտական մոտեցումների ճգնաժամի և բոլոր (անգամ արդյունաբերական) երկրներում խորացող սոցիալական բևեռացման և դրանով թայմանավորված ավտորիտար միտումների աճի համատեքստում: Դիսկուրսների և դատումների փոփոխությունը, թերևս, մեծադեպ կապված է ներքին և արտաքին (ՀԲ, ԱՄՅ, ԵԱՏՄ և այլն) դիմադրությունների հաղթահարման գործընթացի հետ, որի արդյունքում կարող է փոխվել նախկինում ձևավորված և ազատական ու դեմոկրատիկական դիսկուրսներում լեգիտիմացված անհավասարության տիրապետող գաղափարաբանությունը:

ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՆԱՐԱՆԸ

Նոր կառավարող ուժի օրակարգն ու գաղափարական ուղղվածությունը կախված են ձևավորվող նոր քաղաքական հենարանից: Հեղափոխության շարժիչ ուժերն են եղել միջին խավը, ուսանողական, ծախսական և իրավադաշտոյան քաղաքացիական խմբերն ու բննադատական մտածողությամբ շրջանակները, բայց բեկումնային դեր են խաղացել մարզերի գյուղաբնակ աղքատացած բնակչությունն ու երևանի արվարձանների աշխատավորական շերտերը: Վերջիններս չունեն քաղաքական կազմակերպման կառույցներ և կանգնած են «լյումդենացման» վտանգի առաջ:

«Քաղաքական նոր կենտրոն» ձևավորող նոր ուժը դեռ է փորձի կյանքի կոչել Հայկական հեղափոխության գլխավոր լոզունգներից մեկը՝ «սերն ու համերաշխությունը»:⁶ Այլ կերպ՝ կազմել սոցիալական արդարության և համերաշխության վրա հենվող լայն կոալիցիա, որը կմիավորի միջին խավին ու աղքատացած լայն

զանգվածներին մեկ օրակարգի շուրջ: Հենց սա էլ կարող է դառնալ այն միավորող գաղափարախոսությունը, որը թույլ կտա ուղղորդել «ազգ-բանակ»-ի և այլատյացության փոխարեն համախմբվել հանրային կյանքի կառուցման դրական արժեքների՝ անհատի ազատության և հանրային բարիքի արդար տնօրինման գաղափարների շուրջ:

Այսպես կոչված ժողովրդական կուսակցություններն իրենց ներսում ունենում են տարբեր ֆրակցիաներ, որոնք թեև միավորված են հիմնական գաղափարական սկզբունքների շուրջ, բայց և սեփական կուսակցության ներսում ծախս և այլ թևեր են ձևավորում: Շատ կարևոր է, որ այդ թևերը լինեն ոչ թե անձերի շուրջ միավորված, այլ գաղափարական բևեռներ:

Հեղափոխության ընդգրկումն հենարանն ամրադնդելու լավագույն լուծումը կլինի Նիկոլ Փաշինյանի քաղաքական ուժի ներսում քաղաքական երեք հաղորդակից թևերի ձևավորումը: Այստեղ հարկ է նշել, որ խոսքն ամենևին քաղաքական ուղղությունների հարաբերականացման և դրանց՝ հետարդիությանը բնորոշ ընկալման մասին չէ: Դրանք կարող են լինել հետևյալ խմբավորումները՝ լիբերալ թևը՝ կազմված էլք դաշինքի լիբերալ և սոցիալ-լիբերալ մոտեցումներ ունեցող անդամներից, կենտրոնամետ թևը՝ կազմված ղախողանդական դեմոկրատական ուժերից, որոնք միջնորդի ցանցային դեր կարող են ստանձնել և կենտրոնից ծախս գտնվող թևը՝ կազմված լայն զանգվածների սոցիալական օրակարգի առաջ մղող և հեղափոխության ընթացքում դերակատարում ունեցած ծախսական քաղաքացիական խմբերից:

Ահա այս կոնֆիգուրացիայով Նիկոլ Փաշինյանի շուրջ երեք գաղափարական խմբակցությունների միավորման և ընտրությունների գնալու դեպքում մոր կառավարող ուժի համար կադախովի առավել հիմնավոր և երկարաժամկետ լեզվիտիմություն՝ ամրադնդելով հեղափոխության հոչակած համերաշխության ոգին ու արժեքները: Այս տարբերակն, ի տարբերություն հավատարիմ կուսակցականներով և տեխնոկրատ մասնագետներով համալրման գործելաոճի, մի փոքր ավելի աշխատատար և բարդ է: Դրան հակառակ՝ շուկայի ֆետիշացման ու սոսկ իրավական ղետության աղախովման նախադայմանների վրա կենտրոնացումը կարող է էլ ավելի սրել սոցիալական բևեռացումն ու կարծ ժամանակում լրջագույն խնդիրներ ստեղծել:

Վերը նշված երեք թևերից ամենադժվարը վերջին՝ սոցիալական օրակարգով ծախսական թևի կայացումն է: Նման մի քանի փորձեր ձեռնարկվում են այս օրերին: Սակայն Հայաստանում ծախսական խմբերն առանձնանում են տարբեր շեշտադրումներով ու աղախենտրոն գործելակերտով: Դրանց քաղաքական կոնտոլիդացիան բավարար ջանքեր և քաղաքական հասունություն կղախանջի այդ ուժերից: Իհարկե ղարզ չէ նաև՝ արդյո՞ք ընտրությունների գնացող մոր քաղաքական ուժը ղատրաստ է իր մեջ ներառելու այսղիսի բևեռներ, թե կնախընտրի միատարր կուսակցության ձանաղարիը:

ԵԶՐԱՅԱԼԳՈՒՄ

Անդրազգային կամ սփյուռքի կադրերի համար նախատեսվող իրավական ու ինստիտուցիոնալ հիմք ապահովելը կարող է խոշոր ներդրումներ բերել Հայաստան, բայց առանց քաղաքական կուրսի փոփոխության դա երբեք չի հանգեցնի այն սոցիալական բեկումնային վերափոխմանը, ինչը հռչակվել է որդես հեղափոխության նախնականներից մեկը: Ավելին, դա կարող է մոր անհավասարությունների և կոռուպցիոնների դատձառ դառնալ:

Սյուս կողմից՝ հեղափոխական շարժումն ընկալվում է որդես քաղաքացիական ինքնակազմակերպման օրինակ: Այն ունեցել է բազիսային դեմոկրատիայի մի շարք տարրեր՝ արագ մոբիլիզացվող զանգվածներ, ինքնակազմակերպվող բազմազան խմբեր և որոշումների մասնակցային կայացում: Սակայն «ազգայնական» և «նեոլիբերալ» դատումները չհաղթահարելու կամ դրանք կրկին յուրացնելու դեղքում մոր քաղաքական ուժը կարող է կանգնել սոցիալական բևեռացման և անշրդեղի մեծացման արդյունքում մոր սոցիալական դայթյունի սղանալիքի առաջ:

Յների անդեն միասնականության «ազգ-բանակ» դարադիզմի հետ մրցակցում է մորերի քաղաքացիական ինքնակազմակերպման «սոցիալական արդարության» դարադիզմը: Սոցիալական մոր քաղաքականության օրակարգի կիրառական ձևերից կարող են լինել համայնքային կազմակերպման մոր ձևերի խթանումը, կրթության ոլորտում սոցիալական արդարության սկզբունքի իրագործումը, որոշումների կայացման համար հորիզոնական հաղորդակցության և մասնակցության մշակույթի արմատավորումը, տնտեսական ռեսուրսների և քաղաքական իշխանության աղակենտրոնացումը, ինչդես մաս տնտեսական ժողովրդավարության ու հանրային ոլորտի վերարժևորումը:

- 1 Գողվածը գրվել է 2018 թ. սեպտեմբերին և ներառում է մինչ այդ ընկած քաղաքական իրադարձությունների վերլուծությունը: Գողվածի հրատարակումը մեկ տարի անց հնարավորություն է տալիս համեմատության եզրեր գծել դրանում ներկայացված միտումների և այդ փուլին հաջորդած զարգացումների միջև:
- 2 Տե՛ս Nicos Poulantzas, *State, Power, Socialism* (London: Verso, 2014), էջ 145:
- 3 Տե՛ս Սոցիոսկոպ ԳԿ-ի տեսանյութը 2015 թ. սահմանադրական փոփոխությունների մասին: Նյութը հասանելի է այստեղ՝ https://youtu.be/s_jRH0JeQWI, այց՝ 25.09.2018:
- 4 Օրինակ՝ Վրաստանի հարկային մի շարք կարգավորումներ (մասնավորապես համահարթեցված եկամտահարկի սկզբունքը) 2003 թվականից հետո ամրագրվել են Սահմանադրական օրենքի մեջ և ձևակերտվել են որպես անփոփոխելի դրույթներ: Տե՛ս *Organic Law of Georgia on Economic Freedom*, հասանելի է այստեղ՝ <https://matsne.gov.ge/ka/document/download/1405264/0/en/pdf>, այց՝ 25.09.2018:
- 5 «Ընտրություններ առանց ժողովրդավարության. Հայաստանի սահմանադրության փոփոխությունը համաշխարհային կադիտալիզմի համատեքստում. Հրույց Դավիթ Ստեփանյանի և Ինգար Սոթիի միջև», 28 նոյեմբերի 2015 թ.: Նյութը հասանելի է այստեղ՝ <http://diskurs.am/2015/11/649/>, այց՝ 25.09.2018:
- 6 «Համերաշխություն» բառը երբեմն հանրային ելույթներում թյուրիմացաբար կամ դիտավորյալ փոխարինվում է «հանդուրժողականություն» բառով: Հանդուրժելը չմասնակցելու ձևերից մեկն է, այնինչ համերաշխությունը սոցիալական ղատասխանատվություն է ենթադրում:



ԺԱՆՆԱ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ
ՕՐԱԿԱՐԳԸ



րևէ տեքստի մեթոդաբանական դիրքավորումը և անդրադարձման տեսանկյունը սովորաբար տեսանելի է դառնում վերնագրից նույնիսկ այն դեպքում, երբ վերնագիրը, կարծես, ոչինչ չի վկայում:¹ Այստիսով, վերնագիրն ընդունելով իբրև ուղեցույց՝ ստորև շարադրանքը ձևակերպենք վերնագրի բաղադրիչների հիմնավորման միջոցով:

ԻՆՉՈ՞ՒՄ ԳԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Չամերաշխությունը սոցիոլոգիայի գիշերային մոդավանջներից է. այն հղում է սոցիոլոգիայի ինստիտուցիոնալացման սկզբնական փուլին, երբ հասարակության հնարավորության փնտրտուքը անկայուն ու ցնցումատար իրողությունների մերթո՞՞նախ սոցիոլոգիայի կնքահայր Օգյուստ Կոնտին,³ այնուհետ՝ սոցիոլոգիայում գրեթե ազատամարտիկ⁴ էմիլ Դյուրգեյմին տարավ դեռի հասարակության նվազագույն իմտեգրացիայի աստիճանի անհրաժեշտության արքիոմատիկ գաղափարը:⁵

Չվախենաք, – գիտության մերթո իր քաղաքականությունն էր ձևակերպում այդ սոցիոլոգիան, – հասարակությունը հնարավոր է, որովհետև մենք համերաշխ ենք, այլ կերպ ուղղակի գոյության հարց կունենանք: Բոլորս: Որո՞նք տեսակ:

Յոգևորականի ընտանիքում ծնված և հոգևորական դառնալուն ընդդիմացած Դյուրգեյմն⁶ այնուամենայնիվ փոխառեց կրոնականությունը՝ ղափանդանին տեղ տալով հասարակությանը և աստվածային կամքի փոխարեն բարոյականության աղբյուր դիտելով այն՝ որո՞նք ինքնին իր.⁷ «Այն ամենը, ինչը համերաշխության աղբյուր է, բարոյական է, այն ամենը, ինչ ստիղծում է մարդուն հաշվի առնել այլ մարդու, բարոյական է, ամեն ինչ, ինչը ստիղծում է նրան իր վարքը իրացնել այլ կերպ, քան միայն սեփական եզրի նկրտումներն են, բարոյական է, և բարոյականությունը նույնքան ամուր է, որքան ավելի բազմազան ու բազմաթիվ են այդ կառույցը»:⁸

Փակված համարելով հարցը, որ հասարակության գոյության դեպքում համերաշխության գործառնությունը ինքնըստինքյան ենթադրելի է, կախված հասարակության տիղից՝ Դյուրգեյմն համերաշխության երկու ձև էր քննարկում:⁹ Չամերաշխության առաջին ձևը մեխանիկականն է, երբ այն անհատների մասնության հետևանք է. համանման կենսակերպ, կրոն, կրթական միջավայր կիսելու արդյունք: Այս դարագայում համերաշխության բացակայությունը նշանակում է նաև ինքթ քո հետ անհամերաշխություն, քանի որ բոլորը գրեթե նույնն են: Սա ինքնաշխատ համերաշխություն է՝ մեծամասամբ չգիտակցված ու ձևակերպված, բնորոշ այստե կոչված ավանդական և փոքր հասարակություններին: Չամերաշխության երկրորդ ձևը Դյուրգեյմն օրգանական է կոչում՝¹⁰ գտնելով, որ այն զարգանում է ավելի բարդ՝ ժամանակակից հասարակություններում, երբ աշխատանքի շարունակական նեղացող մասնագիտացումը հասարակության անդամներին անխուսափելիորեն դարձնում է ավելի ու ավելի տարբեր: Այս հա-

սարակություններում է, որ անհատները համերաշխության են գալիս փոխառնչությունների հետևանքում. կամայական սոցիալական դրակտիկան կախված է միաժամանակ մի քանի տարբեր մասնագետների աշխատանքից, հետևաբար նրանց հետ համերաշխ լինելը կենսական անհրաժեշտություն է: Դյուրզիեյմի երկու տարբերակումն էլ համերաշխությունը բացասականից մղված է բացատրում. մենք համերաշխ ենք, որովհետև ստիպված ենք համերաշխ լինել՝ սեփական գոյությունն աղահովելու համար:

Այդուհանդերձ՝ ինչո՞ւ համերաշխություն: Սրա համար ղեկը է հասկանալ այն սոցիալ-դատական, քաղաքական իրավիճակը, որ համերաշխությունն իբրև եզր դարձնում էր շրջանառվելու ենթակա:¹¹ Եղբայրության հղացքի տակ զարգացած մոտեցումը, որ այնուհետ դարձել էր քրիստոնեական քաղաքականության գործիք՝ ընտանիքի իշխանական կառույցի անհողողողության դեմ, հասարակության աշխարհիկացմանը զուգընթաց և հատկապես լուսավորականության ընդլայնման հետ եղբայրության վերածնակերդումն էր համերաշխության՝ իբրև համայնքային կառույցի հնարավորություն:¹² Ֆրանսիական հեղափոխությունից հետո համերաշխության հղացքի քաղաքական կիրառության մոր փուլն էր՝ ի դեմս տասնիններորդ դարի առաջին կեսին մշակված և ընդունված նախնական օրենսգրքի և սահմանադրական մշակակություն ունեցող ինը փաստաթղթերի, որոնք համերաշխությունը դարձրեցին քաղաքական տրամասության մաս:¹³ Ընդ որում, համերաշխությունը մերկայացվում էր իբրև կոնկրետ համայնքային դարտավորությունների առկայություն, օրինակ, դրա անդամներից մեկի կողմից դարտքի առկայության դեմքում այդ դարտքի համայնքային մարման դարտավորություն:

Վերառելով համերաշխությունը քաղաքական տրամասությունից և այն կառուցակցելով սեփական գիտության եզրում՝ սոցիոլոգիան վարվեց այնպես, ինչպես հետո բավական հաճախ. քաղաքական հնչել բառը հայեցակարգելով որպես գիտական հնարավորություն՝ օրվա քաղաքականությունը դարձնել գիտական առումով հիմնավորված:

Ինչ-որ առումով սեր և համերաշխություն հռչակած հեղափոխության¹⁴ մերթո իմ կողմից՝ այս թեմային անդրադարձը բողոք է մի կողմից առ Դյուրզիեյմը՝ սոցիոլոգիայի քաղաքական գործիքայնացման առաջին քայլերի մասով, որ դարձավ ավանդույթ, մյուս կողմից՝ փորձ ընդդիմանալ այդ հասկացության այնքան հեշտ գիտականացմանը՝ քաղաքականության օրակարգին անմոռնչ հետևելու փորձառությունից հետո: Հենց այս դատաճառով տեսական իմ հեմարանն էլ ոչ այլ ոք է, քան ռուս վտարանդի աշխարհագրագետ և անարխիստ Պյոտր Կրոտոսկինը:¹⁵ Կրոտոսկինը գրում էր, որ փոխօգնությունն է զարգացման հիմքը:¹⁶ Եթե մարդկության դատմությունը հայացք գցենք, ապա անկարող կլինենք թերագնահատել դրա դերը: Համերաշխությունը դրական հիմք ունի. մարդիկ միմյանց օգնելու և օժանդակելու բնական դատաճառն են, որի իրացման միջոցով էլ զարգանում է հասարակությունը մույնիսկ այն ժամանակներում, երբ թվում է, թե ամեն մեկն աղքատ է իր համար և ղեկավարումն է, որ

դիտի հոգա բոլորի մասին: Ընդ որում, Կրողոտկինը դնում էր սոցիալական և տնտեսական այնպիսի համակարգերի ամիրաժեշտությունը, որոնք կգործեն կամավորական հորիզոնական ցանցերի հիմքով:¹⁷

Այս մոտեցման տարբերությունը երևում է, օրինակ, համերաշխության՝ Սալի Շուլցի դասական համարվող այն սահմանումից, ըստ որի համերաշխությունը միասնության ձև է, որ միջնորդի դեր է կատարում անհատի և հանրայթի միջև՝ դրական ղարտավորությունների համձնառության միջոցով:¹⁸ Այս տրամաբանության մեջ համերաշխությունը միջնորդ է անհատի և հանրայթի միջև: Դրա միջոցով է կառուցվում համակարգը: Ի սկզբանե զգայական հագեցվածություն ունեցող եզրի հայեցակարգումը ձևայնացման-չեզոքացման ուղղությամբ ի ցույց է դնում հաստատված սոցիոլոգիական ավանդույթի ազդեցությունը: Էական է այն հանգամանքը, որ կենտրոնում հայտնվում է համերաշխությունը՝ որդես մոգական, բայց միևնույն ժամանակ աղագայական մի բան, որ միջնորդում է անհատի և հանրայթի հարաբերությունները: Թվում է, թե ամենատեղական բաղադրիչը՝ այդ հարաբերությունները, լինելով առանցքային, հանդես են գալիս կրողի դերում և մնում չբացահայտված: Այս է, որ Կրողոտկինի մոտեցման մեջ շատ ավելի կենդանի արտացոլում ունի՝ իբրև փոխօգնության հիմքով կամավոր հորիզոնական ցանցերի ստեղծում: Ընդ որում, Կրողոտկինը փոխօգնությունը ամոյաման չի զուգորդում զգայականությանը. ղարտադիր չէ սիրով տոգորված լինել առ որևէ մեկը՝ օգնելու համար: Բնական ղահանջը գործառում է գրեթե բնագոյային մակարդակում:

Չամերաշխությունը երկու ղարադոքսալ առնչությունների կիզակետում է.

- Ինչդես հավասարակշռել անհատի ազատության ղահանջը հանրային հարաբերությունների ամիրաժեշտության հետ, որ զգալի խնդիր է դառնում ազատական զաղափարախոսության տարածման կոնտեքստում և,
- Ինչդես հնարավոր դարձնել համերաշխության ներառականությունը, եթե համերաշխության հնարավորությունը ենթադրում է որոշ խմբերի, անհատների բացառում, ում գոյությունն իսկ աղահովում է համերաշխության գործառությունը:

Ինչու սոցիալական. համերաշխության ուսումնասիրությանը նվիրված տարբեր աշխատություններում կարելի է հանդիդել համերաշխության մի շարք տեսակների առանձնացման, որոնց թվում սոցիալականն ընդամենը ձևերից մեկն է: Այս իմաստով կարելի է հիշատակել նույն Սալի Շուլցի՝ 2008 թվականին տղագրված *Քաղաքական համերաշխություն* աշխատությունը,¹⁹ որում հեղինակը տարբերակում է համերաշխության հետևյալ ձևերը.

Սակաբույծ համերաշխություն, որն անբովանդակ է. հղում է համերաշխությանը, սակայն կոչերն իրականության հետ առնչվածություն չունեն կամ առնչվածությունը խնդրահարույց է: Սրա օգտագործման նղատակը զուտ հոնտորաբանությունն է: Չայկական իրականությունից ցայտուն օրինակները

միասնության շուրջդարերն ու ծառատունկերն են,²⁰ տեքստի իմաստով՝ Ցեղասպանության հարյուրամյա տարելիցի առիթով մթամած Ծիծեռնակաբերդի ֆոնին հնչեցված հռչակագիրը:²¹

Քաղաքացիական համերաշխությունը վերաբերում է այն դարտավորություններին, որ դեռությունը կամ հանրայինը դեռ է ունենա իր քաղաքացիներից յուրաքանչյուրի նկատմամբ՝²² հիմնականում նկատի առնելով բարեկեցության դեռությանը և խոցելի խմբերի հանդեպ հանրային քաղաքականությունները. օրինակ՝ որդես գործիք՝ բարեկեցության նվազագույն շեմի սահմանումը, որի առաջնությունը քաղաքացիական համերաշխության խնդիրն է: Սրա օրինակ է Եվրոմիության քաղաքականությունը, որ սահմանում է աշխատողների իրավունքները, առողջադատական և կրթության ոլորտում իրավունքները, սղառողների իրավունքները և այլն:²³ Քաղաքացիական համերաշխության այս ընկալմամբ դարտադիր չէ, որ այն սոցիալադես համերաշխ հասարակության վրա հիմնվի, սա կարող է լինել ազատական գաղափարախոսության կրող հասարակության ներսում խոցելի խմբերի նվազագույն տանելի դրության առաջնական սոցիալական քաղաքականություն, որ ամեննին դարտադիր չէ զուգորդվի սոցիալական համերաշխության դրակտիկաներով:

Քաղաքական համերաշխությունն²⁴ առաջ է գալիս անարդար իրավիճակում անհատների կողմից գիտակցված գործողությունների ընտրության և կուլեկտիվ համախմբված գործողության դիմելու հիմքով: Միասնությունը կոնկրետ իրավիճակի և նդատակի շուրջ է, ոչ թե համանման արժեքային, ավանդութային և այլ հիմքով: Սա ըստ տության ճնշված խմբերի համերաշխությունն է ընդդեմ անարդար իրավիճակի, իրենց ենթարկեցնող խմբերի: Քաղաքական համերաշխությունը դիմադրության համերաշխություն է, որ կարող է վերաճել հեղափոխության, ձևափոխվել և փոխակերտվել դրանից հետո կամ առանց դրա: Քաղաքական համերաշխությունը կարող է վերափոխվել թե՛ քաղաքացիական համերաշխության, երբ որոշ ոլորտային իրավունքներ վերանայվում են՝ իբրև դեռության լրացուցիչ դարտավորության, թե՛ վերածվել սոցիալական համերաշխության, որ հասարակության ներսում համերաշխության՝ կայուն ինստիտուցիաների վերաձևակերտվելու ճանադարին է:²⁵

Սոցիալական համերաշխությունն այս տրամաբանության մեջ սահմանվում է իբրև խմբի ներսում անհատների փոխկախվածության չափում՝ առաջին հերթին նկարագրական և երկրորդ հերթին՝ նորմատիվ տեսանկյունից, իբրև իր մեջ նաև որոշակի դարտավորություններ ներառող համայնքային հարաբերություն: Սրա ենթատեսակ է դիտվում մշակութային համերաշխությունը:²⁶

Կարծում են, որ այս մոտեցումն առավելադես փակում է սոցիալական համերաշխության ըստ տության հասկացման հնարավորությունը՝ մնալով դյուրագեյմյան ձևակերտման տրամաբանության մեջ:

Սոցիալական համերաշխության մասով, ի լրումն արդեն մեջբերված Կրոդոտ-

կինի, կարևոր է մարքսիստական մոտեցման շրջանակներում Կառլ Կաուտսկու կողմից ձևակերտված հետևյալ երկու դրույթների հաշվառումը:²⁷

Հասարակության սոցիալական կառուցվածքի և համերաշխության միջև կառուցիկ դիտարկումը՝ իբրև առանցքային,

Համերաշխության դիտարկումն իբրև քաղաքական ժողովրդավարության հատուկ ձևերի արդյունք:

Այստիպես, սոցիալական համերաշխությունը հասարակության սոցիալական այնպիսի կառուցվածքն է, որում կառուցվածքատեղծ տարրերը հասարակության անդամների կողմից կամավոր և հորիզոնական սկզբունքով գործառուցված սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ ցանցերն են, որոնց համար աղահոսված է անընդհատ գործառույթունն ու զարգացող վերարտադրությունը՝ որոշես քաղաքական ժողովրդավարության հատուկ ձևերի արդյունք:

Ինչու օրակարգը. Սա թերևս ամենակարևոր հարցերից է. ինչո՞ւ է սոցիալական համերաշխության հարցը դիտարկվում իբրև օրակարգային հարց: Այդ օրակարգը ձևավորվել է քաղաքական համերաշխության հիմքով հռչակված հեղափոխության իրացմամբ,²⁸ որն էլ հնարավոր է դարձրել խոսակցությունը սոցիալական համերաշխության մասին: Ուստի, կարիք կա հասկանալ, թե նոր ձևավորված կառավարությունը ինչո՞ւ է առնչվում համերաշխությանը. ինչ-քանով է այդ առնչությունը հղում մակարդակից համերաշխությանը կամ մնում քաղաքական համերաշխության մակարդակում, ծածկվում քաղաքացիական համերաշխությամբ, և որն է սոցիալական համերաշխության վերածվելու դրամերուժը:

Կառավարության ծրագրով առաջնահերթ է համարվում արժեքների ամրագրումը, ինչը հղում է սոցիալական համերաշխության ձևավորման հավակնությանը:²⁹ Օրինակ՝ թվարկվում են մի շարք դրույթներ, որոնցից երկրորդն ուղիղ կերպով հղում է համերաշխությանը՝

*Իրավունքի գերակայության և օրենքի առաջ բոլորի հավասարության վրա հիմնված ազգային միասնությունը և քաղաքացիական համերաշխությունը:*³⁰

Այս դրույթը շփոթեցնող է երկու տարբեր հանրույթների հղմամբ՝ ազգային միասնության, որ ուղղորդում է դեմոկրատիկ հիմքով հանրույթը,³¹ և քաղաքացիական հանրույթի, որը ազգային շրջանակից դուրս իրողություն է: Բացի այդ, անկախ հղվող հանրույթի քաղաքացիական կամ ազգային լիներություն, այդ համերաշխությունը դրվում է միայն ֆորմալ իրավական դաժանների հիմքերի վրա, ինչը գործունակ սոցիալական համերաշխության համար ոչ բավարար հանգամանք է:

Իրավունքի և օրենքի վրա հիմնված ազգային միասնության մթնոլորտը դիտարկվում է նաև իբրև Հայաստանի արտաքին և ներքին անվտանգության ապահով-

ման կարևորագույն նախադասմաններից մեկը:³² Ներքին անվտանգությանն առնչվող բաժնում բերվում են երկու խնդիրներ՝ իրավադատի համակարգի հանդեպ քաղաքացիների վստահության մակարդակի բարձրացումը և ստվերային հանրային կյանքում գերիշխող տեսակի դերում օրինադաշտ, ինտելեկտուալ, ուրիշների նկատմամբ հարգալից վերաբերմունք ունեցող, սեփական և ուրիշների իրավունքները իմացող և հարգող քաղաքացու մտածելակերտի ստացումը: Այս հատվածն ամփոփվում է հետևյալ մտքով. *բռնությունից զերծ հանրության հայեցակարգի միջոցով գնալ հանրային համերաշխության անհատենատ բարձր աստիճանի, բանտերից ազատ արձակել քաղաքական գործունեության հետ առնչվող գործերով բանտերում հայտնված գործիչներին և հասնել հանրային համերաշխության առավել բարձր մակարդակի*:³³ Ցավոք, նույն նախադասության մեջ առավել բարձր հանրային համերաշխության մակարդակին հասնելու դրույթի կրկնությունը ավելի լայն չի դարձնում դրա իրագործման ճանապարհն ու մեթոդը:

Պարադոքսներից մեկի՝ անհատի ազատության և հանրային առնչության հավասարակշռման խնդրի բացակայությունն է, որ համերաշխության անկյան տակ կառավարության տեքստի հիմնական խնդիրներից է: Կառավարության ծրագիրն ակնհայտորեն ենթադրում է երկու առանցքային սուբյեկտ, որոնցից մեկը հենց կառավարությունն է, մյուսը՝ անհատը՝ ազատ, արժանադատիվ և երջանիկ քաղաքացին: Այս հարաբերությունը չի ենթադրում այլ քաղաքական կոլեկտիվ սուբյեկտ, այն մասնատում է հասարակությունը միմյև առանձին քաղաքացու մակարդակ՝ վերջիններիս համախմբման լայնազայում շփոթմունքի մեջ ընկնելով իբրև ժողովուրդ կամ ազգ, որոնք չափից դուրս առաստելական (ոչ չափելի) են՝ երբևէ իրական լինելու համար:

Անարդարությունից ծնված քաղաքական համերաշխությունը սոցիալական համերաշխության վերածվելու հնարավորություն ունի այն դարազայում, երբ այդ անարդար իրավիճակի սահմանումը տրված է այնպես, որ հնարավոր է դարձնում տարբեր խմբերի հանդեպ անարդարությունների ամրագրումը: Կառավարության ծրագրում անարդարության գլխավոր խնդիր է սահմանվում իշխանության ձևավորման գործընթացը, որը տեղի չունենալով ժողովրդի ազատ կամարտահայտման դայնամներում՝ առաջ է բերել անվստահություն և այլ՝ հանրային համերաշխության աստիճանը եականորեն մվազեցնող հանգամանքներ:³⁴ Սակայն այդ սահմանումը լետք է ներառի բոլոր այն հանգամանքները, որոնք վերաբերում են տարբեր խմբերի հանդեպ անարդարություններին, ինչպես՝ կամայք, ազգային և այլ փոքրամասնությունները, սոցիալ-տնտեսական բևեռացմամբ առաջ եկած տարբեր խմբերը: Այլ կերպ ասած՝ սոցիալական համերաշխության օրակարգը չի կարող ձևավորվել իբրև ավելի վստահելի մեխանիզմների սահմանման օրակարգ, այն լետք է ձևավորվի նախ և առաջ իբրև այդ ներառական արդարության գաղափարական օրակարգ, որում մեկ օրում՝ մայիսի 16-ին միաժամանակ տարբեր խմբերի կողմից ընթացող տասնյակից ավելի ցույցերը,³⁵ ինչպիսին են՝ Արարատի ցեմենտի և ոսկու գործարանների, Ազա-

րակի ղղնձամուլիբդենային կոմբինատի և Նաիրիտի աշխատակիցների, կաթի արտադրությամբ զբաղվողների, տաքսիստների, ավտոներկրողների, *Սասնա ծռերի* կողմնակիցների, բարձրագույն ուսումնական հաստատություններում ծագած խնդիրներով շահագրգիռ անձանց, ինչդեռ նաև դրոշմների ու մանկադարձների սնօրենների, Երևանի քաղաքապետարանի և թաղապետարանների գործունեությունից դժգոհ քաղաքացիների, Սևանում եկեղեցական ամառանոցի հողերի ղատկանելության դեմ բողոքողների, զինկոմիսարիատի ծառայողների, և այլն,³⁶ աշակից են սոցիալական համերաշխությամբ և ոչ խոչընդոտող:

Սայիսի 17-ին Լևոն Տեր-Պետրոսյանը հերթական ուղերձը հղեց աղակենտրոն բողոքների առնչությամբ, որն ամբողջությամբ արտացոլում է խնդիրը.

Ցանկացած հեղափոխության համար ամենակարևոր փորձաշրջանը նրա հաղթանակին ամմիջադեռ հաջորդող ժամանակամիջոցն է: Այդ շրջանում է, որ, հաղթանակից ոգևորված, միաձույլ շարժման ակտիվիստներն սկսում են ինքնագործունեություն դրսևորել և փորձում նույն հեղափոխական մեթոդներով լուծել տարիներով կուտակված բազմաթիվ լրկալ խնդիրներ: Ահա այս երևույթն է, որի ականատեսն ենք այսօր: Հանրադեռության համարյա ողջ տարածքում տեղի են ումենում, թեն իրենց ղահանջներում միանգամայն արղարացի, բայց հեղափոխական կենտրոնի կողմից շկարգավորվող բողոքի ցույցեր... Այսօր վախերը վերացել են, և մարդիկ փորձում են այդ խնդիրները լուծել Փաշինյանի կուտ, կարգադահ, առաջնորդի հրահանգները հստակորեն կատարող շարժման մեթոդով: Բայց հաշվի չի առնվում մի կարևորագույն հանգամանք. Փաշինյանն այսօր Հայաստանի վարչադետն է, դետտության գլուխը, որի կարևորագույն դարտավորությունը դետտական մարմինների բնականոն գործունեության աղահովումն է: Ուտտի, թետուգ անկեղծ մղումներով, այդ ինքնագործ ցույցերն ու մանավանդ շենքերի գրավումներն ու փողոցների փակմամբ երթևեկությունը խափանելու դետդերը, վերջին հաշվով, թեն ոչ միտումնավոր, ուղղված են հենց Փաշինյանի դետ: Բացառված չէ, սակայն, որ շարժման ակտիվիստների բողոքի անկեղծ և ինքնաբուխ գործողություններից բացի, որոշ մանակացիաներ հրահրվում են նակ մախկին ոետիմի կողմից, որը, թեն մահանջել է, բայց ամենևին չի կադիտուկացվել: Ցանկացած դետտության կայացվածության գլխավոր շափանիշը նրա կառավարելիությունն է, դետտական մեքենայի անխափան գործունեությունը: Եթե երկրի կառավարելիությունը շադահովվի, ոչ մի դետտություն, անգամ բարեկան, լուրջ չի վերաբերվի այդ երկրի իշխանությանը: Հայաստանում, ահա, ստեղծված է մի բացառիկ վիճակ, երբ դետտական մեքենան կարող է ուղղակի շարղվել, երկիրը մատնելով լիակատար անկառավարելիությանը:³⁷

Կառավարելիությունը միշտ ումի հակառակ երես՝ խմբային մտածողության ձևավորումը, որտեղ մտածելն ամենևին դարտադիր չէ ու ամեն մեկի գործը չէ:

Համերաշխության և խմբային մտածողության եական տարբերությունը յուրաքանչյուր անհատի կողմից գործընթացի գիտակցվածության աստիճանն է, խմբային մտածողությունը հեշտ կառավարելիության միջոց է. մարդիկ դետք չէ, որ մտածեն, նրանց փոխարեն կարելի է մտածել և ծրագրավորել նրանց վարքը, համերաշխությունը դետք է ձևավորի քննադատ կանավոր հանրություններ:

Այս մարդիկ մայիսի 16-ին փողոցներում ձևակերտում էին սոցիալական համերաշխության այն օրակարգը, որը ղեկավարում էր դառնար այդ համերաշխության առաջնահավան արժանապատիվության եղանակ՝ մարդկանց ինքնակազմակերպումն ու ձևավորումը իբրև շահեր ունեցող խմբեր, իբրև սեփական անարդար իրավիճակի սահմանման և դրա դեմ ղայքարի գիտակցման հասած խմբեր: Այս եղանակն է բերելու սոցիալական համերաշխության օրակարգի իրական հաստատմանը: Առաջնորդող գործընթացը համերաշխության հնարավորության միակ ձևն է՝ նշված ներառական արդարության գաղափարական շրջանակում: Կառավարությունը ղեկավարում է գտնի տարբերակ՝ լինել առաջնորդող: Ազատ, արժանապատիվ և երջանիկ լինելու հնարավորությունը ստեղծագործությունն է, ինչը միշտ նշանակում է, որ կառավարության դերը չնչին է և այդքանով հանդերձ՝ հսկայական՝ այդ չնչինը լինելու ղատրաստակամության մեջ:

Սա է սոցիալական համերաշխության իրական օրակարգը:

- 1 Այս խնդրի մասին տե՛ս, օրինակ՝ Michael Bock, «Some Effects of Titles on Building and Recalling Text Structures», *Discourse Processes*, h. 3, թիվ 4, (1980), էջ 301-311:
- 2 Խոսքը, մասնավորապես, 18-րդ դարի վերջում՝ 1789-1799 թթ. Ֆրանսիայում տեղի ունեցած գործընթացների մասին է, որոնք լատինական մեջ հայտնի են Ֆրանսիական մեծ հեղափոխություն անվամբ: Ըստ այդմ, սոցիոլոգիական գիտության ինստիտուցիոնալացման տեսանկյունից առանցքային դեմքերը՝ Օգյուստ Կոնտն ու Էմիլ Դյուրզհեյմը, Ֆրանսիական հասարակության ներկայացուցիչներ էին՝ աստիճանաբար իջած վերոնշյալ հեղափոխությունից հետո:
- 3 Կմբակայր բառի գործածումը լայնամասշտաբով տեղի սոցիոլոգիա եզրի՝ Օգյուստ Կոնտի կողմից առաջադրելու հանգամանքով:
- 4 Ազատամարտիկ եզրի փոխաբերական կիրառությունը լայնամասշտաբով տեղի սոցիոլոգիայի լատինական մեջ հայտնի է իբրև սոցիոլոգիայի հիմնադիր՝ Դյուրզհեյմի սոցիալական փաստերը այլ սոցիալական փաստերով բացատրելու մեթոդաբանական անհրաժեշտությունը: Սրանով Դյուրզհեյմը մեթոդաբանական առումով փորձում էր ձեռքբազատել սոցիոլոգիան այլ գիտությունների չափազանցված ազդեցությունից, որի արդյունքում հասարակական գործընթացները ներկայացվում էին ոչ հասարակական տարբեր գործընթացների համամասնությամբ, ինչպես ֆիզիկական, կենսաբանական և այլն:
- 5 Այս խնդրի մասին տե՛ս, օրինակ՝ Jonathan H. Turner, *Theoretical Sociology 1830 to the Present* (University of California, Riverside: Sage Publications, Inc, 2013), էջ 16-30:
- 6 Այս առնչությամբ տե՛ս, օրինակ՝ Marcel Fournier, *Emile Durkheim: A Biography* (Cambridge: Polity Press, 2012):
- 7 Դյուրզհեյմի՝ հասարակության և բարոյականության փոխանցությունների մասին տե՛ս, օրինակ՝ Emile Durkheim, *On Morality and Society: Selected Writings*, Robert Bellah (խմբ.) (Chicago: University of Chicago Press, 1973), էջ 114-134:
- 8 Emile Durkheim, *The Division of Labor in Society*, George Simpson (թրգմ.) (Illinois: The Free Press of Glencoe, 1960), էջ 39-49, <http://fs2.american.edu/dfagel/www/Class%20Readings/Durkheim/Division%20of%20Labor%20Final%20Version.pdf>, այց՝ 18.10.2019:
- 9 Durkheim, *The Division of Labor in Society*, էջ 111-133:
- 10 Durkheim, *The Division of Labor in Society*, էջ 111-133:
- 11 Տե՛ս, օրինակ՝ Steinar Stjernø, *Solidarity in Europe: The History of an Idea*, (Cambridge: Cambridge University Press, 2004), էջ 26-30, <http://voidnetwork.gr/wp-content/uploads/2016/09/Solidarity-in-Europe.The-History-of-an-idea-by-Steinar-Stjerno.pdf>, այց՝ 18.10.2019:
- 12 Stjernø, *Solidarity in Europe: The History of an Idea*, էջ 26-30:
- 13 J.E.S. Hayward, *The Official Social Philosophy of the French Third Republic: Leon Bourgeois and Solidarism*, *International Review of Social History*, h. 1, թիվ 6 (1961), էջ 19-48:
- 14 Նկատի է առնվում 2018 թ. ադրիլ-մայիսին Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին տրված անվանումը՝ Նիկոլ Փաշինյանի կողմից: Տե՛ս, օրինակ՝ Փաշինյանի ելույթը 2018 թ. մայիսի 8-ին Ազգային ժողովում՝ վարչապետ ընտրվելու կադավրությամբ. «Վերջին մեկ ամսվա քաղաքական գործընթացներին կամանց մասշտաբային մասնակցությունն էր կարեւորագույն գործոններից մեկը, որ մեզ հնարավորություն տվեց Հայաստանում տեղի ունեցող փոփոխություններն անվանել սիրո և համերաշխության հեղափոխություն», «Նիկոլ Փաշինյանի ելույթը Ազգային ժողովում», 8 մայիսի, 2018, <http://hetq.am/arm/news/88606/nikol-pashinyani-elutyty-azgayin-zhoxovum.html>, այց՝ 07.04.2019թ:
- 15 Владимир Ермаков, *Российский анархизм и анархисты: вторая половина XIX-конец XX веков*, (Москва: Издательская координационная группа Нестор, 1996), էջ 65-85:
- 16 Петр Кропоткин, *Взаимопомощь как фактор эволюции* (Москва: Редакция журнала

«Самообразование», 2007), http://www.dragondreaming.org/ru/wp-content/uploads/sites/11/2016/04/Kropotkin_P_A__Vzaimopomosch_kak_faktor_evolyutsi.pdf, այց՝ 07.04.2019:

17 Крoпoткин, *Взаимопомощь как фактор эволюции*:

18 Sally J. Scholz, *Political Solidarity* (University Park, Pennsylvania: The Pennsylvania University Press, 2008), էջ 17:

19 Scholz, *Political Solidarity*, էջ 5-6:

20 Տե՛ս, օրինակ՝ հետևյալ հրապարակումը՝ «Միասնության շուրջդարը գրկեց Արագած լեռը», 28 մայիս, 2005, <https://armenpress.am/arm/news/418093/miasnutyan-shurjaryar-grkec-aragats-lery.html>, այց՝ 1.11.2019, կամ միասնության ծառատունկի մասին այն նախածեղծում և Նիզ-Աղարան միության տեքստը. «Միասնության ծառատունկի անցած ուղին արդեն իսկ հավաստում է ծրագրի գաղափարական ճշմարտացիության: <Միասնության ծառատունկ>-ի շուրջն են համախմբվել ու դեռ ստվարանում են ահել-ջահել, կիմ-տղամարդ, թաշտոնավորներ ու ողջ մի ժողովուրդ»: Կանաչադաշտ Հայաստան. Նիզ-Աղարան ՀՄ հայտարարությունը, <http://nigaparan.am/%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B9%D5%A1%D5%BA%D5%A1%D5%BF-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6/>, այց՝ 1.11.2019:

21 Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հրապարակվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, 29 հունվարի 2015, <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>, այց՝ 1.11.2019:

22 Scholz, *Political Solidarity*, էջ 27:

23 Տե՛ս, օրինակ՝ Malcolm Ross M and Yuri Borgmann-Prebil, *Promoting Solidarity in the European Union* (Oxford: Oxford University Press, 2010):

24 Scholz, *Political Solidarity*, էջ 51:

25 Scholz, *Political Solidarity*:

26 Scholz, *Political Solidarity*:

27 Karl Kautsky, *The Class Struggle (Erfurt Programm)*, William E. Bohn (թրգմ.), (Charles H. Kerr & Co, 1910), էջ 99-112, <https://rowlandpasaribu.files.wordpress.com/2013/09/karl-kautsky-the-class-struggle.pdf>, այց՝ 18.10.2019:

28 Խոսքը տեքստի նախորդող հատվածում հղված 2018 թ. ադրիլ-մայիսին Հայաստանում տեղի ունեցած ու սիրո և համերաշխության հեղափոխություն անվանված գործընթացի մասին է:

29 *ՀՀ կառավարության որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին*, N 581-Ա, 1 հունիսի 2018 թվական, 31 էջ, <http://www.gov.am/files/docs/2782.pdf>, այց՝ 18.10.2019:

30 *ՀՀ կառավարության որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին*, N 581-Ա, էջ 2:

31 Այս տեսանկյունից ակնհայտ է, որ Սփյուռքի առկայությունը հնարավոր չի դարձնում իրավունքի գերակայության և օրենքի առաջ հավասարության դրոյթների տարածումը Սփյուռքի վրա՝ դրանց այլ իրավական և օրենսդրական հարթություններում լինելու և հայաստանյան գործընթացներին միայն մասնակի առնչվածության տալու մասին:

32 *ՀՀ կառավարության որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին*, N 581-Ա, էջ 4:

33 *ՀՀ կառավարության որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին*, N 581-Ա, էջ 10:

34 *ՀՀ կառավարության որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի*

մասին, N 581-Ա, էջ 3:

35 Լևոն Տեր-Պետրոսյան, Պետականությանը սղառնացող իրավիճակ, *ilur.am*, 17 մայիս, 2018, <http://www.ilur.am/news/view/68171.html>, այց` 18.10.2019:

36 Տեր-Պետրոսյան, Պետականությանը սղառնացող իրավիճակ:

37 Տեր-Պետրոսյան, Պետականությանը սղառնացող իրավիճակ:



ԱՂԱՍԻ
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՆՅԱԿԱՍԱՐՈՒԹՅԱՆ
ԴԻՍԿՈՒՐՍԸ ԵՎ
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ
ՅԱՂԹԱՅԱՐՄԱՆ
ՅԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Ետխորհրդային Հայաստանի երեք առաջնային հիմնախնդիրներից մեկը համարվում է աղքատությունը: Այն իր ձևավորման ընթացքում ունեցել է տարբեր փուլեր: Առաջինը, որը բնորոշ էր 1991-1997 թվականներին, կարելի է անվանել տարերային աղքատության շրջան: Այս տարիներին հանրառատությունը հայտնվեց նախկին սոցիալիստական հասարակարգից կառիտալիստականի կտրուկ անցման գործընթացում: Տեղի ունեցավ տնտեսության փլուզում, եներգետիկ ճգնաժամ, ի հայտ եկան մեծ ծավալի գործազրկություն, հիդերինֆլյացիա և մի շարք այլ ճգնաժամային երևույթներ:¹ Այդ տարիներին հանրառատությունը գտնվում էր նաև ղատերազմի մեջ, երկրաշարժի հետևանքները դեռ թարմ էին և աղետի գոտին գտնվում էր ծայրահեղ անմխիթար վիճակում, Ադրբեջանից բռնագաղթել էր մոտ չորս հարյուր հազար փախստական: Արդեն 1997-1998 թվականներին աղքատությունը ձևավորման տարերային փուլից սկսեց մտնել կառուցվածքային փուլ: Այսինքն, եթե առաջին փուլում մարդիկ հաճախ հայտնվում էին գոյատևման խնդրի առջև և դա կարող էր տեղի ունենալ համարյա բոլորի հետ, կաղված երկրում տիրող ընդհանուր իրավիճակի հետ, ադա արդեն 1997-1998 թվականներից հետո ի հայտ եկան աղքատության մեջ շարունակաբար ադողող ընտանիքներ, որոնք բնութագրվում էին որդես հասարակության մեջ առավել ցածր սոցիալական կարգավիճակ ունեցողներ, և նրանք քիչ հավանականություն ունեին այդ իրավիճակից դուրս գալու: Հետագա տարիների հետագոտությունները ցույց տվեցին, որ այդ ընտանիքներից շատերը հայտնվել են երկարատև և վերարտադրվող աղքատության մեջ, որոնց մոտ այն մի սերնդից մյուսին անցնելու հատկություն ունի: Հասարակությունում նման իրավիճակի ձևավորումը հանգեցրեց այն բանին, որ արդեն 2000 թվականից սկսեց մշակվել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր՝ ԱՀՌԾ,² որը գործարկվեց 2004 թվականից և նդաստեց չորս տարվա մեջ աղքատությունը 56.1%-ից մինչև 26.5 %-ի նվազեցնելու:³ Ցավոք, իրականացվող ծրագիրը երկարատև ու կայուն արդյունքներ չկարողացավ ձևավորել ու 2008 թվականի վերջին սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը առաջին հերթին բացասաբար անդրադարձավ հենց աղքատության ցուցանիշների վրա: Ընդամենը երկու տարում աղքատության ծավալները հասան չուրջ 35%-ի: Հետագա տարիներին այս խնդիրը մի տեսակ անտեսված վիճակում էր: Այն նորից հայտնվեց հանրային օրակարգում 2016-2017 թվականներին, երբ աղքատության շարունակաբար խորացման խնդրի չուրջ սկսեցին մտահոգություններ հայտնվել մամուլում: Ըստ ղաշտոնական վիճակագրության՝ մինչև 2016 թվականը աղքատության ծավալները Հայաստանում ոչ միայն չեն նվազել, այլև գերազանցել են 2008 թվականի տվյալները՝ կազմելով 29.8%: Եվ միայն 2017-2018 թվականներին այն նվազեցվեց մինչև 25.0%:⁴ Ինչդեռ վիճակագրական տվյալները, այնդես էլ իմ իրականացրած որակական հետազոտության տվյալները թույլ են տալիս ասել, որ աղքատության բնութագրական կողմերից մեկն այն է, որ այն վերարտադրվում է թե՛ համահասարակական և թե՛ ընտանեկան մակարդակներում: Այսինքն, չուրջ տաս տարում ոչ միայն հնարավոր չի եղել տակնորեն կրճատել աղքատությունը և այն միշտ մնացել է նույն

մակարդակում ողջ հասարակության մասշտաբով, այլև հասարակությունում ի հայտ են եկել ընտանիքներ, որոնց համար աղքատությունը դարձել է ամրելակերո՝ դառնալով մի սերնդից մյուսը փոխանցվող երևույթ: Վերջին տարիներին իմ իրականացրած հետազոտությունները թույլ են տալիս ասել, որ դրա հիմնական ղատածառները միայն ֆինանսատնտեսական բնույթի չեն և համալիր բնույթ ունեն: Իսկ նյութական աղքատությունը հետևանք է շատ ընտանիքներում ձևավորված *հնարավորությունների աղքատության*: Նկատենք, որ *հնարավորությունների տեսությունը* ներկայումս աղքատության հիմնախնդրի հետազոտություններում կարևորվողներից է:⁵ Այն սերտորեն կաղված է նաև *կարողությունների աղքատության* հիմնախնդրին:⁶ Հնարավորությունների աղքատությունը ուղեկցվում է բազմաթիվ զրկանքներով: Աղքատ ընտանիքները զրկված են որակյալ կրթական, առողջադահական ծառայություններ ստանալու հնարավորությունից, ինչը հանգեցնում է նաև այդ ընտանիքում ամողղ մարդկանց *կարողությունների աղքատության*: Այդ ընտանիքների երեխաները զրկված են որակյալ կրթություն ստանալու հնարավորությունից և ավելի քիչ շանս ունեն բացահայտելու ու զարգացնելու իրենց ունակությունները, իսկ հետագայում այն վեր ածելու մշակութային և սոցիալական այնոիսի կաոիտալի, ինչը նրանց թույլ կտա դիրքավորվել այս կան այն մասնագիտական դաշտում, ձևավորել շահեկան կարգավիճակ ու մասնակցել փոխանակային գործընթացներին և վերջադես այդ ամենի արդյունքում դուրս գալ աղքատության վիճակից: Փոխանակային գործընթացներից օտարվածությունը թույլ չի տալիս նաև ձևավորել հավելյալ արժեք և աճողական ձևով զարգանալ:

Աղքատության հաղթահարման ոլորտում նման անմխիթար վիճակը և դրա ծավալների շարունակական վերարտադրությունը հասարակական ու ընտանեկան մակարդակներում առաջին հերթին դայմանավորված է դետական քաղաքականության թերություններով:

Քաղաքականության անհաշողության հիմնական ղատածառը աղքատության հիմնախնդրի շուրջ կառավարությունում առկա մեկնաբանություններն ու մոտեցումներն են: Պետական քաղաքականության մեջ աղքատությունը դիտվում է գլխավորադես որդես ֆինանսատնտեսական բնույթի խնդիր, նյութական կարիքների բավարարման անկարողություն: Իսկ դրա լուծումները սահմանվում են սոցիալական մղաստանների քաղաքականության ոլորտում: Չնայած այն բանին, որ ՀՀ կառավորությունում վերջին տարիներին շրջանառվում է *բազմաշալի աղքատություն* եզրը և վիճակագրական կոմիտեի վերլուծություններում արտացոլում են գտնում նաև այս տեսանկյունից խնդրի վերլուծություններ, սակայն քաղաքականության իրականացման ոլորտում աղքատությունը երբևիցե չի դիտվել որդես բազմաբաղադրիչ երևույթ, ինչի հիմքում բացի նյութական զրկանքներից՝ ընկած են նաև մի շարք այլ տիոի զրկանքներ: Սասնավորադես այնոիսիները, որոնք կաղվում են *մարդկային զարգացման ցուցիչների* հետ,⁷ ինչոիսին են կրթության շարունակականությունն ու որակը, առողջադահական որակյալ ծառայությունների մատչելիությունը և կյանքի տևողությունը, կյանքի

որակի հետ կապված կարիքների բավարարումը, առողջ սոցիալական ու էկոլոգիական միջավայրը և այլն: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է մեր կառավարությանը տարիներ շարունակ խորթ եղել բազմաչափ աղքատության մոտեցումը և ինչո՞ւ է աղքատության հաղթահարումը կառավել սոցիալական նյութափոխանակման միջոցով աղքատության դաշտոնական շեմի հաղթահարման հետ: Նկատենք նաև, որ աղքատության հաղթահարումը նյութական աղքատության և դրա շեմի հաղթահարման հետ կապելը բերել է այն վիճակին, որ իրականում ոչ թե ջանքեր են գործադրվել աղքատության, այլ դրա ցուցանիշների հաղթահարման համար: Պարզաբանենք, թե ինչ նկատի ունենք: Աղքատության շեմը Հայաստանում հաշվվում է ըստ ստորև ներկայացվող չափորոշիչների:

Աղքատ դաշտոնադրված համարվում են նրանք, ում սղառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է *աղքատության վերին ընդհանուր գծից*: Աղքատության վերին ընդհանուր գիծը կազմում է ամսեկան 41698 ՀՀ դրամ կամ մոտավորապես 87 ԱՄՆ դոլար: *Շատ աղքատ* են համարվում նրանք, ում մեկ շնչի հաշվով սղառումը ցածր է եղել աղքատության ստորին գծից, որը կազմում է ամսեկան 34234 ՀՀ դրամ: Ծայրահեղ աղքատ կամ թերսնված են համարվում նրանք, ում մեկ չափահաս անձի հաշվով սղառումը ցածր է աղքատության դարձնային գծից, որը կազմում է 24109 ՀՀ դրամ:⁸

Երբ խոսքը գնում է աղքատության կրճատման մասին, դա նշանակում է որ կրճատվել է ամսեկան 41698 դրամից ցածր եկամուտ ունեցողների թիվը: Սակայն, ակնհայտ է, որ նշված շեմի հաղթահարումը մարդուն չի կարող թույլ տալ ադրել ոչ աղքատ կամ համեմատաբար միջին կյանքով: Այդ գումարով հնարավոր չէ ծմռան ամիսներին ջեռուցել բնակարանը, օգտվել առողջապահական ամիրածեշտ ծառայություններից և բավարարել այլ առաջնային կարիքների նվազագույնը: Վերջին հաշվով, այդ գումարով դարձապես անհնար է գոյատևել, և մարդը կարող է մահանալ ցրտից, թերսնումից ու հիվանդություններից: Այսինքն, խոսել այն մասին, որ աղքատությունը կրճատվել է ըստ աղքատության սահմանված շեմի, չի արտացոլում իրականությունը և տարիներ շարունակ եղել է ղետական մակարդակով իրականացվող մանիպուլյացիա: Հասկանալի է, որ աղքատության կրճատման վերաբերյալ ղետական վիճակագրական տվյալները ներկայացնում են ոչ թե աղքատության կրճատման իրական դասերը, այլ վերաբերում են ղետականորեն սահմանված աղքատության ցուցանիշների կրճատմանը: Այսինքն, Հայաստանում աղքատության և աղքատության ցուցանիշների կրճատումը դրանք նույն բանը չեն, և տարիներ շարունակ կառավարությունը զբաղվելով աղքատության ցուցանիշների կրճատմանն ուղղված գործունեությամբ՝ իրականում անտեսել ու արհամարել է աղքատների հիմնական դիրքերն ու կարիքները և իր գործը չի համարել աղքատների շահերն արտացոլող իրական քաղաքականությունների մշակումն ու իրականացումը:

Հենվելով 2017⁹ և 2018¹⁰ թվականներին իմ իրականացրած որակական հետազոտությունների տվյալների վրա՝ կարող եմ ասել, որ կառավարության կողմից աղքատների շահերի անտեսմանն ուղղված մեծ մասն մանիպուլյատիվ ու

ոչ շահագրգիռ քաղաքականության հիմքում ընկած են եղել երևույթներ, որոնք իրականում դուրս են սոցիա-տնտեսական քաղաքականությունների դաշտից: Խոսքը վերաբերում է աղքատության ու անհավասարության խոսույթների հարթությանը, որոնք որոշիչ դեր են խաղում կառավարության սոցիալական ու տնտեսական քաղաքականությունների ղայմանավորման մեջ:

Աղքատությանը վերաբերող հիմնական խոսույթները մի քանիսն են: Դրանք, մի կողմից՝ ղայմանավորում են հասարակության մեջ աղքատների հանդեպ վերաբերմունքի ու ընկալումների ձևավորումը, մյուս կողմից՝ ղետական քաղաքականության առանձնահատկությունները և կառավարության քաղաքականության հանդեպ հասարակության վերաբերմունքը:

Չետագոտությունը ցույց է տալիս, որ աղքատության ու աղքատներին վերաբերող խոսույթներում առավել տարածվածներից է այն, որ աղքատ լինելը համարվում է ամոթ: Նկատենք, որ սա միայն հայաստանյան երևույթ չէ և բնորոշ է նույնիսկ զարգացման ու բարեկեցության բարձր մակարդակ ունեցող հասարակություններին: Չետագոտությունները ցույց են տալիս, որ աղքատությունը ամոթ համարելը հաճախ խոչընդոտում է աղքատության հաղթահարմանը:¹¹ Չատկանշական է, որ աղքատությունը ամոթ է համարվում ինչդեռ աղքատների, այնդեռ էլ ոչ աղքատների կողմից: Չետաքրքիր է, որ այս խոսույթը ձևավորվում է հարուստ վերնախավերում, որոնք լուրջ ազդեցություն ունեն կառավարությունների ու քաղաքականությունների մշակման գործընթացների վրա: Չատկանշական է նաև, որ նրանց կողմից ձևավորվող այս խոսույթը տարածվում և ընօրինակվում է նաև աղքատ խավերի կողմից, ինչը բացասաբար է ազդում աղքատության հաղթահարման վրա:

Ինչդեռ մշվեց, Չայաստանում աղքատությունը ամոթ համարելու մասին խոսույթը նույնդեռ բավական տարածվածներից է: Այն ձևավորում է այնդիսի որակատիկաներ, որոնք ազդում են աղքատության հաղթահարման քաղաքականության վրա: Առավել տարածվածներից է *աղքատության քողակումը*: Չաճախ այն իրականացվում է հասարակայնորեն ներկայանալի ատորիքուտները կեղծելու ճանադարհով: Չետագոտության նյութերում հաճախ են հանդիդում նկարագրություններ, երբ աղքատները, չնայած իրենց աղքատությանը, հաճախ գումար ձեռք բերելու դեդքում այն ուղղում են ոչ թե իրենց առաջնային կարիքների բավարարմանը, այլ մշանային դեր ունեցող իրեր ձեռք բերելուն: Դա կարող է լինել ներկայանալի հագուստը, կահկարասին, տոնական հանդիսություններին մասնակցությունն ու կազմակերդումը: Նման փաստեր արձանագրվել են նաև այլ հետագոտություններում:¹² Դրա դատճառով մարդիկ իրականացնում են ոչ ոսցիոնալ գործողություններ, ինչն ավելի է խորացնում աղքատությունը: Լինում են դեդքեր, երբ առաջնային նվազագույն կարիքների բավարարման սուր անհրաճեշտություն ունեցող ընտանիքները վարկեր են վերցնում աղքատության քողարկման նդատակով թիչ թե շատ ներկայանալի փափուկ կահույք կամ մեծ էկրանով հեռուստացույց գնելու համար, քանի որ հարևանների ու բարեկամների կողմից աղքատ չհամարվելու համար դա հա-

մարվում է ցուցչային: Հատկապես գյուղերում և մարզային քաղաքներում ներկայումս շատ տարածված է աղքատ չհամարվելու համար մեծ էկրանով հեռուստացույց ունենալը: Մեկ այլ նման ցուցիչ է համարվում դեռահասության տարիքն անցած երեխաներին թանկարժեք հեռախոսներ գնելը:

Հետազոտությունները փաստում են, որ նրանք, ովքեր չեն բողարկում իրենց աղքատությունը, վտանգված են էլ ավելի աղքատանալու:¹³ Աղքատությունը բողարկելու դատաճանաչումը է նաև խտրական վերաբերմունքի արժանանալու և միջավայրի կողմից մեկուսացման ենթարկվելու վախը:¹⁴ Աղքատությունը բողարկելու դրակտիկաները հաճախ ուղեկցվում են «քչով բավարարվելու» դրակտիկայով: Հատկանշական է, որ այս դրակտիկայի հիմքում ընկած խոսույթը բնորոշ է ինչդեպ աղքատներին, այնպես էլ հասարակության ոչ աղքատ խավերին: Տարածված մտայնություն կա, որ եթե մարդն աղքատ է, ադադեպ է վարժվի որոշակի զրկանքների դայանոսներում աղբյուր: Ասենք, օրինակ՝ անբնական է համարվում, երբ աղքատ ընտանիքի ծնողները ձգտում են երեխային որակյալ կրթօջախ տանել, կազմակերպել նրա ժամանցը, ձգտել որակյալ սննդի ու առողջադասական ծառայության, հանգստի, դաստիարակության կենտրոնի ջեռուցման ու ընդհանրապես կյանքի որակի բարձրացման: Այս առումով հատկանշական է ԱԺ նախորդ գումարման մի շարք դատազամավորների դատազոտություններն այն մասին, որ աղքատները միևնույն է որակյալ աղբյուրներ չեն սղառում, ուստի որակյալ աղբյուրների թանկացումը չի կարող բացասաբար ազդել աղքատների վրա: Աղքատների հանդեպ հասարակական այս մոտեցումը ցավոք սրտի առաջացնում է սերնդեսերունդ աղքատության փոխանցման վտանգ, բանի որ «քչով բավարարվելու» և «գոյատևման» ռազմավարությունը մարդկանց մոտ թուլացնում են աղքատության վիճակից դուրս գալու նդատակադրումները:¹⁵ Քչով բավարարվելու դրակտիկաներն ուղեկցող մեկ այլ դրակտիկա է դատազմունքների ինքնական սահմանափակումը: Շատերի մոտ արմատավորված է այն մտածողությունը, որ անձի զարգացման, ժամանցի և հարմարավետության հետ կադված դատազմունքները աղքատների համար չեն և այդ մասին նույնիսկ չեն էլ մտածում:¹⁶

Աղքատությունը ամոթ համարելու խոսույթին և այն բողարկելու դրակտիկաներին զուգահեռ բավական տարածված է սեփական աղքատ վիճակի ոչ համարժեք նկարագրությունը: Հաճախ նույնիսկ առաջնային նվազագույն կարիքների դատազմունքները ոչ միարժեքորեն բավարարող ընտանիքների ներկայացուցիչները իրենց վիճակը գնահատում են «միջին» կամ «նորմալ»: Առաջին հայացքից անմեղ թվացող այս երևույթը, սակայն, աղքատության քաղաքականությունների մշակման վրա խիստ բացասաբար ազդող գործոն է: Մարդիկ, ովքեր իրականում աղքատ են, սակայն իրենց վիճակը նկարագրում են «միջին» կամ «նորմալ», բավականաչափ քննադատական և դատազմեկոտ չեն կատավարության հանդեպ և ցուցաբերում են առավելադեպ կրավորական և համակերպվողական վարքագիծ: Իսկ սա հանգեցնում է այն բանին, որ կատավարության ծրագրերն ավելի քիչ են ուղղվում աղքատ խավերի շահերի ադատարկմանը և ավելի շատ ծառայում են հարուստներին:

«Աղքատ լինելն ամոթ է» խոսույթը դրոշմ կանոն ուղեկցվում է հարուստ լինելու օրինակելիության մասին խոսույթով: Աղքատն ալարկոտ է, հարուստն՝ աշխատասեր, աղքատն անշնորհք է, հարուստը՝ շնորհքով, աղքատն անխելք է, հարուստը՝ խելքով և այլն: Հատկանշական է, որ այս արտահայտությունները տարածված են ոչ միայն հարուստների, այլև աղքատների մեջ: Այս խոսույթի առանձնահատկություններից է նաև այն, որ վերջինս արդարացնում է հարստանալու ցանկացած ճանապարհ, այդ թվում և աղքատներին շահագործելու, էլ ավելի աղքատացնելու, կոռուպցիայի ու չարաշահումների և այլ զարտուղի և անօրինական ուղիները: Հատկանշական է, որ այս խոսույթը շատ տարածված էր հատկապես մինչև թավշյա հեղափոխությունը, երբ քաղաքական էլիտաները իրենք հենց այդ խոսույթի կրողն ու տարածողն էին: Ներկայիս էլիտաները ակնհայտորեն դատադարտում են զարտուղի ճանապարհներով հարստանալու նախկինում տարածված որակտիկաները և խոսույթը: Սակայն, հասարակության ոչ բոլոր շերտերին է, որ այն փոխանցվել է, և հասարակության շատ միջավայրերում դեռևս արձատավորված է ամեն գնով հարստանալու արդարացումը, դա շնորհք անվանելն ու հարգանքի արժանացնելը: Այս դարագայում ստացվում է այնպես, որ չքավոր ու աղքատ խավերը վերարտադրում են աղքատների հաշվին հարստանալու, հանրային շահը մասնավոր բարեկեցությանը ստորադասելու և ունևոր խավերի կողմից աղքատությունը նորմալիզացնող խոսույթները: Աղքատ ու կարիքավոր խավերի կողմից այս խոսույթի ընդօրինակումը և տարածումը նդաստում է, որ նրանք արդարացնեն իրենց աղքատ ու կախյալ վիճակում դասելու որակտիկաները: Ստացվում է այնպես, որ աղքատների մի զգալի մասը, ընդօրինակելով աղքատության նորմալիզացնող խոսույթները, իրենց վիճակը «միջին» կամ «նորմալ» բնութագրելով և խուսափելով իրենց աղքատ համարել, արդարացնում է հարուստների անօրինական հարստացման և իրենց շարունակաբար աղքատության մեջ դասելու որակտիկաները և դրանք ծնող խոսույթները:

Աղքատության խնդրի շուրջ տարածված մեկ այլ խոսույթ էլ, որը վերը բերվածների հետ խիստ փոխկադակցված է, վերաբերում է այն մտքին, որ աղքատներն իրենք են մեղավոր իրենց աղքատության համար: Ի դեպ, այս խոսույթը տարածված էր ինչպես թավշյա հեղափոխությունից առաջ, այնպես էլ՝ հետո: Այն, որ հետազոտական նյութերը թույլ են տալիս ասել, որ հաճախ աղքատ ընտանիքներից շատերի մոտ իրոք նկատելի են մտածելակերպի հետ կապված խնդիրներ, որոնք նրանց մղում են կարճաժամկետ մտածողության և որ նրանց բնորոշ է առաջադի հանդեպ անորոշության զգացումը, նախաձեռնողականության թակասը, ուրիշից օգնություն ստանալու հակվածությունը, դժվար է ժխտել: Սակայն, դա բավարար դատժառ չէ աղքատներին մեղավոր համարելու սեփական աղքատության համար: Փաստն այն է, որ մարդիկ աղքատացել են գլխավորապես հարուստների ու խոշոր ձեռներեցիների շահերը դաշտդանող կառավարության վարած քաղաքականության հետևանքով: Տևականորեն աղքատության մեջ գտնվելը այդ խավերի մարդկանցից շատերի մոտ հանգեցրել է իրականության ոչ համարժեք ընկալումների, գիտելիքի ու տեղեկատվության աստիճանի անկման, ինքնուրույն նդատակներ դնելու անկարողության, դասանջմունքների

ճեղագցման և վերջապես աղքատությունը ինքնուրույն հաղթահարելու անընդունակության:


Աղքատության մեջ աղքատներին մեղադրելու խնդրի վրա ուշադրություն դարձնելը կարևոր է, բանի որ կարող է մոլաստել աղքատության ոլորտում վարվող քաղաքականությունների փոփոխմանը: Եթե մեղավոր են համարվում աղքատները, առաջ քաղաքականության հիմնական շեշտադրումը սովորաբար դրվում է գլխավորապես սոցիալական մոլաստների քաղաքականության վրա: Սակայն, եթե աղքատության հաղթահարման մեջ հիմնական դերատասխանատուն համարվում է կառավարությունը, այլ ոչ թե ինքն աղքատը, առաջ այդ դեղորայքը հնարավորությունն ավելի մեծ է, որ կառավարության քաղաքականության մեջ տեղի ունենան փոփոխություններ՝ հոգուտ կարիքավոր և աղքատ խավերի շահերի հաշվառման: Դա կարող է հանգեցնել նույնիսկ աղքատության հաղթահարման ռազմավարության արմատական փոփոխության ու մեծացնել սոցիալական քաղաքականության մեջ արդարության ու հավասարության գաղափարների արտացոլվածության աստիճանը:

Աղքատության հաղթահարման քաղաքականությունների վրա ազդող խոսույթներից է նաև անհավասարությունը բնական համարող խոսույթը: Անհավասարության մասին խոսույթը հայաստանում ձևավորվեց ու տարածում ստացավ հենց անկախության առաջին իսկ տարիներին: Այն ձևավորվեց որպես իշխանական խոսույթ, ի հաստատումն այն ունեցվածքային բևեռացման, որը ձևավորվում էր իշխանությանը մոտ կանգնած և դրամից դիստանցավորված հասարակական շրջանակների միջև: Ի սկզբանե դա շատ խորթ էր հետսովետական մեր հասարակության համար, սակայն ժամանակի ընթացքում խորացավ և դարձավ առօրյա մի բան: Այս խոսույթի առանձնահատկությունը նույնպես այն է, որ համարվելով բնական բան, նորմալիզացնում է ունեցվածքային առունով հասարակության տարբեր կարողություններ ունեցող շերտերի միջև խորացող բևեռացումը ու բթացնում հասարակության աղքատ խավերի զգոնությունն ու դաժանելիությունը: Համարելով իր նկատմամբ կիրառվող խտրական ու անհավասար վերաբերմունքը բնական՝ այս խավերը ավելի հանդուրժող են դառնում իրենց անհավասար վիճակի հանդեպ:

Ամփոփելով այս հոդվածը կարելի է ասել, որ հասարակության մեջ տարածված աղքատության և անհավասարության վերաբերյալ խոսույթները մոլաստում են աղքատության ու անհավասարության նորմալիզացմանը՝ հենց աղքատ ու կարիքավոր խավերի մեջ խորացնելով նրանց հանդուրժողականության աստիճանը «հարուստամետ» կառավարության քաղաքականության հանդեպ: Ինչ վերաբերում է թավշյա հեղափոխությանը հաջորդած մեկ տարվան, առաջ այստեղ դեռևս չի նկատվում կառավարության կողմից մոլաստակա դրված քաղաքականություն՝ ուղղված ինչպես խոսույթների փոփոխությանը, այնպես էլ քաղաքական դրակտիկաներին: Ավելին, նոր կառավարության գործունեության ընթացքում մի բանի անգամ նկատվել է աղքատներին աղքատության մեղավորներ համարելու խոսույթը: Կառավարության քաղա-

քականությունը նույնպես ավելի շատ հակված է սղասարկելու բիզնես շահերը, քան սոցիալական: Գլխավոր դրական փոփոխությունն այն է, որ ներկայիս կառավարությունը քննադատական վերաբերմունք ունի ամեն գնով հարստանալու և դա նորմալիզացնող դիսկուրսների հանդեպ, ինչը բազմիցս հնչեցվել է վարչապետի և կառավարության մի շարք այլ ներկայացուցիչների կողմից: Սա հուսադրող է այնքանով, որ հարստացման գործընթացները ստվերայինից կարող են տեղափոխվել օրինական հարաբերությունների դաշտ: Դրա շնորհիվ կառավարության քաղաքականությունների «հարուստամետ» բնույթը կարող է դառնալ վերահսկելի, ինչն էլ իր հերթին կարող է մեծացնել քաղաքացիական հասարակության կողմից կառավարության քաղաքականություններին սոցիալական բնույթ հաղորդելուն ուղղված ճնշումները:

- 1 Геворк А. Погосян, *Армянское общество в трансформации* (Ереван: Институт философии и прав НАН РА, 2003), էջ 250-269:
- 2 *Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր* (Երևան: Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն, 2003):
- 3 *Կայուն զարգացման ծրագիր* (Երևան: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների միասարկություն, 2007), էջ 42-43:
- 4 *Հայաստանի վիճակագրական տարեգիրք* (Երևան: ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2018), էջ 110:
- 5 St ́u Robert K. Merton, *Social Theory and Social Structure* (New York: Free Press, 1957):
- 6 St ́u Sabina Alkire, «Choosing Dimensions: The Capability Approach and Multidimensional Poverty», CPRC Working Paper, h. 88, էջ 1-25:
- 7 *Human Development Report 2016: Human Development for Everyone* (New York: UNDP 2016), էջ 1-10:
- 8 *Աղքատությունը դասակարգող Հայաստանում 2008-2015 թթ.* (Երևան: ՀՀ վիճակագրական կոմիտե, 2016), էջ 35-42, http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf, այց՝ 24.06.2019:
- 9 Հետազոտությունն իրականացվել է ԱՄՆ Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայկական հետազոտությունների ինստիտուտի (Institute of Armenian Studies, University of Southern California-USA) կողմից շնորհված «Աղքատությունը, ամհավասարությունը և առօրեականությունը Հայաստանում» հետազոտական դրամաշնորհի շրջանակներում իրականացված ուսումնասիրության շրջանակներում:
- 10 Աղասի Չ. Թադևոսյան, *Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում* (Երևան: Բաց հասարակության հիմնադրամ, 2018), <http://www.osf.am/wp-content/uploads/2018/12/%D4%B1%D5%B2%D6%84%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%A8-%D6%87-%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BB%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD...pdf>, այց՝ 26.06.2019:
- 11 St ́u *Poverty and Shame: Global Experiences*, Elaine Chase, Grace Bantebya-Ky-omuhendo (խմբ.) (Oxford: Oxford University Press, 2019):
- 12 Հոփսիմեն Պիկիչյան, «Երբեք սահման ոչ աղքատից աղքատ. հայացք ներսից և դրսից», *Պատմություններ աղքատության մասին*, գիրք 1 (Երևան: Հազարաշեն, 2001), էջ 388-392:
- 13 Elizabeth Gomart, «No Way Back: Social Exclusion among the Poorest in Armenia», *When Things Fall Apart. Qualitative Studies of Poverty in the Former Soviet Union*, Nora Dudwick, Elizabeth Gomart, Alexandre Marc, Kathleen Kuehnast (խմբ.) (Washington: The World Bank, 2002), էջ 124:
- 14 Համլետ Պետրոսյան, «Աղքատության ընկալում և վերաբերմունք», *Պատմություններ աղքատության մասին*, գիրք 1 (Երևան: Հազարաշեն, 2001), էջ 370-383:
- 15 Nora Dudwick, «When the Lights Went Out: Poverty in Armenia», *When Things Fall Apart. Qualitative Studies of Poverty in the Former Soviet Union*, էջ 187:
- 16 Հրանուշ Խառատյան, «Աղքատության միջավայրը Հայաստանում», *Պատմություններ աղքատության մասին*, գիրք 2 (Երևան: Հազարաշեն, 2007), էջ 520-521:



ՀԱՄԱՁԱՍՊ
ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ԿՐԿԻՆ ՓՈՐՁԵ՞ՆՔ



նվիճելի է, որ ցանկացած երկրում ժողովրդավարության համախմբումը՝ կոն-սոլիդացիան, դարձադառնալիս չի կարող տեղի ունենալ առանց մրցակցային բազմակուսակցական համակարգի կայացման: Խոսքը միայն ավանդական ժողովրդավարություններում առկա այնպիսի համակարգի մասին չէ, որին բնորոշ է երկու կամ ավել թվով կուսակցությունների շարունակաբար մրցակցությունը և ընտրությունների արդյունքում հերթափոխով իշխանության ստանձնումը: Նման իրավիճակը հազվադեպ երևույթ է մոր ժողովրդավարություններում (նկատի ունեն Յարավային, Կենտրոնական և Արևելյան Եվրոպա), որտեղ կուսակցությունների կազմը դասական կայուն է, իսկ թիվը՝ ավելի մեծ, սակայն կրկին առկա է որոշակի խաղի կանոններով ընտրական մրցակցություն, և հենց այս մրցակցության արդյունքում է տեղի ունենում իշխանափոխությունը:

Հայաստանում, սակայն, կուսակցությունների միջև ընտրական մրցակցության արդյունքում իշխանության փոփոխություն երբեք տեղի չի ունեցել: Հետևաբար Հայաստանի անցած երեք տասնամյակների դատմությունը նաև կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման և այդ մոլատակի ձախողման դատմություն է:

Այդ դատմության սկզբում՝ 1980-ականների վերջին և 1990-ական թվականների սկզբներին, երբ տեղի ունեցավ Հայաստանի առաջին ազատականացումը և հնարավորություն ստեղծվեց միակուսակցական համակարգից անցում կատարել բազմակուսակցական, առկա էին որոշակի քաղաքական շրջանակներ, որ նախկին կոմունիստական (միակուսակցական) համակարգով թայմանավորված մտավախություններից ելնելով՝ կասկածի տակ էին դնում կուսակցությունների գոյության անհրաժեշտությունը: Նման տրամադրությունները քիչ ավելի ուժեղ էին հասարակական որոշակի շրջանակներում՝ կրկին կոմունիստական տոտալիտար փորձի ինտեգրացիայից ելնելով, իսկ առանձին դեղքերում նաև «ագային միասնությունը» չվճարելու ոչ դասական տոտալիտար հիմնավորմամբ:

Սակայն բարեբախտաբար բազմակուսակցականությունը ոչ միայն տեղ գտավ Սահմանադրությունում, այլ նաև իրականություն դարձավ թե՛ նորաստեղծ կուսակցությունների, թե՛ Հայաստանում գործունեություն (վեր)սկսած այսուրեք կոչված ավանդական կուսակցությունների միջոցով: Այդուհանդերձ մեկից ավելի կուսակցությունների գործունեությունը դեռ բավարար չէ մրցակցային բազմակուսակցական համակարգի, կուսակցությունների՝ բավարար ինստիտուցիոնալացման և քաղաքական համակարգում նրանց հիմնական գործառույթները իրականացնելու համար: Իսկ այդ գործառույթները շատ դարձ են և արտացոլված են անգամ դասագրքերում՝ հասարակական խմբերի շահերի վերհանում, ազդեցացում ու համադրում, այդ խմբերի և այլոց շահերի շուրջ բանակցում՝ հանրային քաղաքականություն կերտելու մոլատակով:

Մրցակցային և ոչ նույնիսկ բազմակուսակցական համակարգի կարևորությունը գիտակցվել է նաև քաղաքական շրջանակներում, քանի որ կուսակցական համակարգի անրադնդման կարևորությունը քաղաքական դիսկուրսի կենտրոնում

Ե եղել առնվազն վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ կարևորվելով թե՛ իշխանության և թե ընդդիմության կողմից: Բազմաթիվ ֆորմալ կարգավորումներ են ընդունվել և փոփոխվել այս ընթացքում: Կուսակցությունների բնույթի վրա ունեցած ազդեցության տեսակետից դրանցից ամենակարևորը թերևս աստիճանական, իսկ առանձին փուլերում՝ դանդաղած, սակայն ի վերջո տեղի ունեցած անցումն է 1990 թ. 100 տոկոս մեծամասնական համակարգից դեռի 100 տոկոս համամասնական ընտրակարգ: Համամասնականության սկզբունքով ձևավորվող խորհրդարանի մասին դրույթը Ֆիքսվեց 2015 թ. սահմանադրական փոփոխություններով և իրականացվեց 2017 թ. ընտրությունների ընթացքում՝ ի հարկե իմ և շատերի համոզմամբ համամասնականության սկզբունքի նենգափոխմամբ: Նույն 2015 թ. սահմանադրական փոփոխությունները, որոնք մեծացրեցին օրենսդիր մարմնի, կուսակցությունների և խմբակցությունների դերը, եադես սահմանափակեցին ոչ կուսակցական թեկնածուների մասնակցությունը ոչ միայն համադետական ընտրություններին, այլ նաև ամենամեծ երեք համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններում:

Սակայն քաղաքական շրջանակներում կուսակցությունների դերի մեծացման, դրանց ինստիտուցիոնալացման շուրջ կոնսենսուսի առկայությունը, ինչդես նաև որոշ ֆորմալ ինստիտուտների ներդրումը այդդես էլ չեն կարողացել մեծացնել կուսակցությունների նկատմամբ հասարակական վստահության աստիճանը. հանրային կարծիքի հարցումները տասնամյակներ շարունակ փաստում են, որ կուսակցությունների վստահության մակարդակը խիստ ցածր է: Հանուն արդարության ավելացնեն, որ վստահության այդ դակասը համակարգային բնույթ է կրում և գրեթե նույն համամասնությամբ գործում է նաև քաղաքական այլ ինստիտուտների նկատմամբ:

Վերադառնամ և քիչ ավելի մանրամասն փաստերով դիմնավորեն այն դնդումը, թե երեք տասնամյակների ընթացքում տեղի ունեցած իշխանության փոփոխություններից և ոչ մեկը մեծ հաշվով տեղի չի ունեցել կուսակցությունների միջև ծավալված ընտրական մրցակցության դայմաններում: 1990 թ. խորհրդարանական ընտրությունները կարելի է կոչել ՀՀ հիմնադիր ընտրություններ: Դրանց արդյունքում կոմունիստական կուսակցությունը զիջեց իր գերիշխող դիրքը և ի վերջո հանձնեց իշխանությունը: Սակայն դա տեղի ունեցավ ոչ թե կուսակցությունների միջև մրցակցության դայմաններում, այլ՝ մեկ կուսակցության ու թեկուզ և բավական կազմակերպված ու քիչ թե շատ միասնական, բայց հասարակական շարժում ներկայացնող անհատների միջև մրցակցության դայմաններում: Ի դեռ, դրանք միակ ընտրություններն էին, որ իրականացվեցին բացառադես մեծամասնական ընտրակարգով: Նոր իշխող կուսակցության կամ ավելի ճիշտ կուսակցությունների ստեղծումն ու կայացումը մեծադես տեղի ունեցան արդեն ընտրություններից հետո՝ 1990-ական թթ. առաջին կեսին:

Իշխանության փոխանցման երկրորդ դրվազը, որը տեղի ունեցավ 1997 թ. վերջին և 1998 թ. սկզբին, կադված էր արդեն ինստուցիոնալացված և իշխող կուսակցության վերածված հասարակական շարժման առաջնորդների միջև Ե-

ղած քաղաքական տարածայնությունների հետ: Այն արտահայտվեց նաև կուսակցությունների միջև եղած կոալիցիայի հենքի վրա ստեղծված ղախվածություններով: Դրան հաջորդած տասնամյակը անկուսակցական և իրեն կուսակցություններից վեր դասող նախագահի ժամանակահատվածն էր, որի ընթացքում նախագահի հենարանը խորհրդարանում մեկից ավելի կուսակցություններն էին, իսկ առանձին դրվագներում՝ նաև անհատները: Նախագահին աջակցող կուսակցությունների կազմը (տարբեր համադրություններով՝ ԲՀԿ, ՀԲԴ, ՕԵԿ, ՄԱԿ, ԲՀԿ), գաղափարախոսական հենքի խայտաբղետությունը (ազգայնականից մինչև ազատական, իսկ առանձին դրվագներում նաև կոմունիստներ և խոշոր կաթիլախոսներ), դրանց միջև համագործակցության ձևը (առանձին օրենքների և խնդիրների շուրջ համաձայնության գալուց մինչև ֆորմալ երկարաժամկետ կոալիցիոն համագործակցություն) շարունակաբար փոխվել են, սակայն կայուն է եղել մեկ բան՝ նախագահը կարողացել է բավական աջակցություն ունենալ խորհրդարանում: Այս հանգամանքը կարևոր է հաշվի առնել, երբ ավելի ուշ կքննարկեն կայուն մեծամասնության ղախվածը, որը տեղ է գտել 2015 թ. Սահմանադրությունում:

Չնայած անկուսակցական նախագահի, նրա կառավարման տասնամյակը և հատկապես դրա երկրորդ կեսը (2003 թվականից սկսած) կուսակցությունների կամ ավելի ճիշտ՝ իշխող կուսակցությունների կոնսոլիդացման փուլ էր, երբ մի կողմից՝ աստիճանաբար սահմանափակվեց քաղաքականապես ազդեցիկ անկուսակցական քաղաքական գործիչների գործունեության հնարավորությունը (մերայալ ֆորմալ կարգավորումների միջոցով), մյուս կողմից՝ կուսակցական լինելը դարձավ ոչ ֆորմալ նախադրյալ՝ քաղաքական գործունեություն ծավալելու և հատկապես գործադիրի մասը լինելու համար: Սրա արդյունքում ստեղծվեցին ինչպես անհատ գործիչների քաղաքական հավակնությունները առաջ մղող նոր կուսակցություններ (ԲՀԿ, 2004 թ.), այնպես էլ գոյություն ունեցողները ընդլայնեցին իրենց կազմը՝ արդեն նշված անհատների զգալի մասը կուսակցականացնելու միջոցով (հատկապես ԲՀԿ-ն՝ մի քանի ակիբներով՝ 2007, 2008, 2016 և այլն): Ի լրումն, խոշոր կուսակցությունները նաև ավելացրեցին իրենց ներկայությունը տեղերում և բավական բարդ կազմակերպված հիերարխիկ կուսակցական ցանց ստեղծեցին (հատկապես ԲՀԿ-ն)՝ հաճախ հիմնվելով ղեկավարող իշխանության մաս լինելով ղայնամավորված առավելությունների օգտագործման վրա:

Ցանկանում են ընդգծել, որ դիտարկումն բացառապես իշխանության մաս կազմող կուսակցությունների մասին է, մինչդեռ Հայաստանի գոյության ամբողջ ընթացքում ղախվածությունում հայտնված տասնյակ ընդդիմադիր կուսակցությունների ղարազայուն միակ ընդհանրությունը այն է եղել, որ վերջիններս այդպես էլ չեն կարողացել մեկ-երկու ընտրական շրջափուլից ավել հայտնվել խորհրդարանում (օրինակ ԱԺՄ, *Հանրապետություն* կուսակցություն, *ժառանգություն* և այլն): Ընդ որում, այս դիտարկումը ճիշտ է նաև այն կուսակցություն-

ների դեղքում (*Կոմունիստական* կուսակցություն, ԳՅՇ, ՕԵԿ), ովքեր գիշել են իրենց դիրքերը իշխանությունում և ընդդիմություն դառնալուն հաջորդող ընտրություններից հետո նախ ունեցել մարզինալ ներկայացվածություն խորհրդարանում, իսկ ևս մեկ ընտրական շրջափուլ անց դադարել են քաղաքական դերակատար լինել անգամ խորհրդարանից դուրս:

Վերադառնալով իշխանության փոխանցման խնդրին. երրորդ և ամենաթարմ դրվագը (այնքան թարմ, որ դժվար է ամբողջությամբ դրա ազդեցությունը գնահատել) տեղի ունեցավ 2018 թ. ադրիլ-մայիսին, երբ մոտ երկու տասնամյակ ինտենսիվ կուսակցաշինությամբ զբաղված, վերջին մեկ տասնամյակում գերիշխող (այսինքն՝ խորհրդարանում մեծամասնություն ունեցող և ընտրություններում մրցակցությունից դուրս համարվող) և այդ գերիշխող դիրքը ամեն տեսակ ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներով ամրապնդած կուսակցությունը ստիպված եղավ շատ կարճ ժամանակում նախ գործադիր իշխանությունը գիշել, ապա նաև դադարեց մեծամասնություն լինել օրենսդիրում՝ չնայած իր իսկ կողմից ստեղծված ֆորմալ երաշխիքների՝ նույն օրենսդիրում կայուն մեծամասնության երաշխավորման սահմանադրական լիցենզիա: Այս անգամ ևս իշխանության փոխանցումը տեղի ունեցավ ոչ թե ընտրությունների ժամանակներում, այլ հասարակական լայն շարժման ճնշման ներքո: Իսկ իշխանությունը ստանձնած քաղաքական միավորը՝ *Քաղաքացիական դաշինություն*, մի կուսակցություն է, որը խիստ սահմանափակ ներկայություն ուներ օրենսդիրում, և այնտեղ էր հայտնվել՝ կուսակցական դաշինք կազմելով երկու այլ կուսակցությունների հետ: Չնայած ընդամենը 3 տարվա ժառանգություն ունեցող այս կուսակցությունը ստեղծման առաջին օրվանից նմանապես էր դրել լիազորված լինել իշխանությունը ստանձնելուն և մշտապես աշխատել էր այդ ուղղությամբ (հիշենք ՔԴ-ի կողմից շրջանառված «Ինստիտուցիոնալ ընդդիմություն», «ստվերային կառավարություն» և այլ թեգեր) թե՛ կադրային հենքի, թե՛ կուսակցական ենթակառուցվածքի՝ ներառյալ խորհրդարանական ներկայացվածության և միգրացիոն նաև ծրագրային առումով, այնքան էլ լիազորված չէր իշխանությունը ստանձնելուն: ՔԴ ղեկավար կազմը երկրի կառավարումը ստանձնելուն զուգահեռ ղեկը է կարողանա արագորեն վերափոխել նաև կուսակցությունը:

Վերը շարադրված ժառանգական էքսկուրսի հիմնական նպատակը Զայաստանում կուսակցական համակարգի չկայացվածությունը և կուսակցությունների հիմնական գործառույթ իրականացնելու դժվարությունները ցույց տալն էր: Զոդվածի բուն նպատակներից դուրս է մի շարք խիստ կարևոր հարցերի քննարկումը, ինչդիպի են կուսակցությունների ներքին ժողովրդավարության կամ գաղափարախոսությունների հետ կապված առկա խզումներ թե՛ բնակչության ընտրական վարքում, թե՛ կուսակցությունների՝ հանրային քաղաքականության իրականացման ընթացքում, ինչդիպի նաև կանգ չեն առնում որոշ առանձին դեղքերի (օրինակ ԳՅԴ) քննարկման վրա: Այս հոդվածի նպատակներից դուրս է նաև ոչ ֆորմալ լիազորվածների հանգամանալից քննարկումը, քանի որ դրանք քիչ ուսումնասիրված և փաստաթղթավորված են:

ՖՈՐՄԱԼ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս մասում կներկայացնեն այսօր առկա մի շարք ֆորմալ կարգավորումներն ու դրանց հետ կապված խնդիրները և միգուցե նաև դրանց լուծումները՝ հույս ունենալով, որ սա առիթ կհանդիսանա արտահայտված մտքերի շուրջ քննարկման ծավալմանը, հատկապես, որ 2018 թ. մայիսից հետո գուցե կարճ, բայց իրական հնարավորություն է ստեղծվել ևս մեկ անգամ փորձել նոր որակի կուսակցական համակարգ ստեղծել:

Գերիշխող կուսակցական համակարգի կառուցման գործընթացը, որ հատկապես տեղի ունեցավ վերջին տասնամյակի ընթացքում, իրականացվեց ոչ միայն ոչ ֆորմալ մեխանիզմների միջոցով (օրինակ՝ ղեկավարական լծակները կուսակցական մոնատակներով օգտագործելը), բայց նաև ֆորմալ կարգավորումների միջոցով: Նման կարգավորումներով հատկապես հարուստ էր 2015 թ. փոփոխված Սահմանադրությունը և 2016 թ. ընդունված Ընտրական օրենսգիրքը:

Ներառական քաղաքական իմաստիտուտներ ունենալու և համամասնական ընտրակարգի տրամաբանության ադապտման տեսակետից խիստ խնդրահարույց է կայուն խորհրդարանական մեծամասնություն ադապտելու սահմանադրական ղախանջը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 89, 3-րդ մաս), և դրա հիման վրա *Ընտրական օրենսգրքում* տեղ գտած կարգավորումը (ՀՀ ԸՕ, հոդված 96), որով եսկանորեն հեշտացվում է մեկ ուժի կողմից խորհրդարանում մանդատների 54 տոկոս ստանալը: Իսկ ի՞նչ մեխանիզմներով է փորձ արվել ադապտել այս արդյունքը՝ երաշխավորելով «հաղթողը ստանում է ամեն ինչ» տրամաբանություն համամասնական ընտրակարգ ունեցող համակարգի ղայմաններում: Պետք է հիշել այն փաստը, որ ՀՀ ղախանջի ընթացքում որևէ կուսակցություն չի կարողացել ձայների մեծամասնություն ադապտել համամասնական ընտրությունների ընթացքում՝ ներառյալ 2017 թ. ապրիլին, երբ ՀՀԿ-ն ձայների ամենամեծ համամասնություն է ստացել (մոտ 49 տոկոս):

Եվ այսպես, ընտրական օրենսգիրքը (ԸՕ) նախատեսում է, որ եթե կուսակցություններից որևէ մեկը չի ադապտվում խորհրդարանի տեղերի 54 տոկոսը, առաջ այսպես կոչված բոնուսային համակարգի միջոցով մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը ստացած ուժը ստանում է լրացուցիչ այնքան տեղ, որ ունենա 54 տոկոսը: Այն դարագայում, երբ որևէ կուսակցություն չի կարողանում մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը ստանալ, խորհրդարանում հայտնված կուսակցություններին ընդամենը 6 օր է տրամադրվում՝ կռալիցիա կազմելու համար: Պարզ մեծամասնություն ունեցող կռալիցիա կազմելու դեմքում նույնպես կիրառվում է բոնուս՝ տեղերի 54 տոկոս ադապտելու համար: Իսկ այն դարագայում, եթե կռալիցիա չի կազմվում, նշանակվում է համադեմոկրատական քվեարկության երկրորդ փուլ՝ առաջին փուլում ամենաշատ ձայն հավաքած երկու կուսակցությունների միջև:

Մեկ կուսակցության կայուն մեծամասնությունը ադապտելու այս արհեստական

կարգավորմամբ չեզոքացվում է այլ կուսակցությունների հետ հաշվի նստելու, դրանց հետ համագործակցության անհրաժեշտությունը՝ բնորոշ համամասնական ընտրակարգին և դրա հետ ասոցացվող կոնսենսուալ կամ համաձայնողական քաղաքական համակարգերին: Մինչդեռ գործող ԸՕ կարգավորումը իր փիլիսոփայությամբ ավելի մոտ է մեծամասնական համակարգին՝ «հաղթողը ստանում է ամեն ինչ» տրամաբանությամբ: Կայուն մեծամասնություն ունենալու նպատակահարմարությունը շատ է քննարկվել սահմանադրական փոփոխությունների փուլում, և հեղինակները լուրջում էին, որ սա կառավարելիության ճգնաժամից խուսափելու երաշխիք է՝ հղում կատարելով Իտալիայի օրինակին: Ու թեև Իտալիան դասագրքային օրինակ է գործադիր մարմնի անկայունության առումով, սակայն այնտեղ այս համակարգը այդպես էլ չներդրվեց՝ սահմանադրական դատարանում մասնակիորեն ոչ սահմանադրական համարվելու և հանրաքվեում չընդունվելու լուրջ առաջադրություն: Վերադառնալով Հայաստան՝ փաստենք, որ 1990-1991 թթ., 1997-1998 թթ., 2003-2004 թթ. և միգուցե նաև 2018 թ. մայիս-հունիսի զարգացումները ցույց տվեցին, որ անգամ, երբ գործադիր իշխանությունը չի ունեցել հորմալ մեծամասնություն խորհրդարանում, կարողացել է արդյունավետորեն անցկացնել իր քաղաքականությունը՝ առանձին դեմքերում նաև որոշակի փոխզիջումներ անելու ճանապարհով:

Կայուն մեծամասնության սահմանադրական, բայց այս պահի դրությամբ արդեն իսկ չիրականացվող դրույթի հետ կապված լավ նորությունն այն է, որ դրա մի մասը՝ կայուն մեծամասնությանը երկրորդ փուլի կամ բռնուների միջոցով երաշխավորող կարգավորումները, քաղաքական լայն համաձայնության դեմքում (դատազանավորների ձայներ 2/3-րդ) ևս հնարավոր է փոփոխել մինչև նոր ընտրությունների կազմակերպում, քանի որ այն սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասով բացառապես հանրաքվեով փոփոխվող կազմավորումների թվում չէ: Ուստի, հնարավոր է փոփոխել ԱԺ 2/3 ձայների քվեարկության միջոցով:

Հընթացս նշեն, որ վերը քննարկված ու քննադատված «բռնուսային» կարգավորումը նախատեսված է նաև Հայաստանի երեք խոշորագույն քաղաքների ավագանու ընտրությունների համար, ինչը նույնպես վերանայման ենթակա կարող է լինել ԸՕ փոփոխություններում՝ հատկապես, որ այդ դարազայում բռնուներ կարող են ստանալ անգամ 40 տոկոս և ավել ստացած ուժերը: Քննարկման առարկա էլ է լինի նաև տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու բացառապես կուսակցականների համար նախատեսելու նպատակահարմարությունը:

Երկրորդ խնդրահարույց, հետևաբար նաև փոփոխման ենթակա դրույթը այսպես կոչված «ոչտիմգային» ընտրակարգն է (ԸՕ, հոդված 95), որն ունի քննարկման արժանի երկու կետ: Առաջին՝ խաղի կանոնները այնպես են մախազծված, որ անհամամասնորեն նպաստում են ավելի մեծ ռեսուրսներ ունեցող կուսակցությունների ԱԺ-ում հայտնվելուն: Դրա հիմնական լուրջ առաջադրությունն է ինչև նրա միջև միջակցության խրախուսումն է.13 ընտրական տարածքներից յուրաքանչյուրում մինչև վեցական

թեկնածուներ ղայքարում են միմյանց միջև: Այս դայմաններում յուրաքանչյուր քվեի համար ղայքարելու և առավելագույն քվեներ հավաքելու դրդադատճանրը շատ ավելի մեծ են, քան մախկին մեծամասնական ընտրակարգի ժամանակ, երբ 41 ընտրական տարածքներից յուրաքանչյուրում որդես կանոն գերիշխող կուսակցությունից առաջադրվում էր մեկ հիմնական թեկնածու: Վերջինիս ընտրվելու համար բավարար էր ընդամենը մրցակիցներից ավելի շատ քվե ադահովել, իսկ հաճախ իրական մրցակիցներ առկա չէին:

«Ռեյտինգային» ընտրակարգի հետ կադված հաջորդ խնդրահարույց հանգամանքն այն է, որ ներկուսակցական մրցակցության արդյունքում ռեյտինգային թեկնածուի օգտին ստացված յուրաքանչյուր քվե ինքնաբերաբար լրացուցիչ հաշվարկվում է տվյալ կուսակցության օգտին՝ ըստ տության կրկնադատկելով դրա հաշվին գրանցված քվեների թիվը: Հաշվի առնելով 2017 թ. դրակտիկան՝ կարելի է ասել, որ մի ստվար ընտրագանգված իր քաղաքական քվեն տվել է անհատ թեկնածուի և ոչ թե այդ թեկնածուի հետևում կանգնած կուսակցության ծրագրին կան կուսակցական ցուցակին՝ հաճախ չգիտակցելով անգամ, որ իր ընտրական տարածքում առաջադրված անհատին տված քվեն է որոշելու մաս Հայաստանի ղեկավարի հարցը:

Վերը նկարագրածը ցույց է տալիս, որ «ռեյտինգային» հանակարգը եադես հեշտացնում է ֆինանսական, մարդկային և վարչարարական լծակ ունեցող կուսակցության/ների գերակշռող դիրքի ադահովագրումը և սահմանափակում դակաս ռեսուրսներ ունեցող կուսակցության հնարավորությունները: Ընտրակարգի խրթին լինելը և քաղաքացիներին բավարար մատչելի կերդով չներկայացնելը նույնդես չի նդաստում ներառական քաղաքական հանակարգի կայացմանը:

Խնդրահարույց է մաս ԸՕ հողված 97-ի 1-ին մասը, որը սահմանափակում է խորիրդարանում հայտնված ուժերի թիվը, որոնք կարող են կրալիցիա կազմել: Այս անսովոր սահմանափակումը, որ որևէ այլ երկրում առկա չէ, կարծում են, որ ներառվել է ԸՕ՝ զուտ 2017 թ. խորիրդարանական ընտրությունների ժամանակ եղած քաղաքական/կուսակցական նդատակահարմարությունից ելնելով: Ընդամենը մեկ տարի անց ակնհայտ է, որ այս սահմանափակումը հանդիսանում է եական արհեստական խոշընդոտ լայն կան ազգային համաձայնության կրալիցիա և կառավարություն կազմելու համար՝ հնարավորություն չտալով հենց թեկուզ ներկայումս ստեղծված կան ադագա այլ ներքին կան արտաքին ճգնաժամ հաղթահարելու համար ադահովել քաղաքական մեծ թվով ուժերի համախմբում:

Ակնհայտ է, որ կրալիցիայի անդմաների թվի սահմանափակումը դարգադես դեն է գնում համամասնականության սկզբունքի տրամաբանությանը և եադես նվազեցնում է առավել ներառական քաղաքական գործընթացի հնարավորությունը: Համամասնական ընտրակարգը դարգադես դահանջում է, որ խորիրդարանում հայտնված և հասարակության տարբեր հատվածներ համամասնորեն ներկայացնող ուժերը համաձայնության գան միմյանց միջև, եթե անգամ նման ուժերի թիվը շատ մեծ է:

Ոչ միայն ԸՕ-ն, բայց նաև կուսակցությունների մասին օրենքով կարգավորվող կարևորագույն դրույթ է նաև կուսակցությունների և քարոզարշավների ֆինանսավորումը, որը նույնպես ենթակա է վերանայման:

Առաջինի հետ կապված ղեկը է փաստել, որ Հայաստանում այդպես էլ չեն ձևավորվել այնպիսի կուսակցություններ, որոնք կարող են իրենց մրցակցությունը ադապտելու համար բավարար միջոցներ հավաքագրել՝ հիմնվելով մեծաթիվ համակիրների փոքրաքանակ ներդրումների վրա (ամդամավճարների վրա հիմնված զանգվածային կուսակցություններ): Սրա հետևանքով լուրջ ընտրական արդյունք գրանցելու հավակնություն ունեցող ցանկացած կուսակցություն ամօրինի կամ կիսամիջակամ ձևով օգտագործել է կամ ղեկավարում միջոցները, կամ էլ հենվել է մեծ կադրեր ունեցող անհատների միջոցների վրա: Սրա հետ կապված, կարծում են, որ ղեկը է վերանայվի կուսակցությունների ֆինանսավորման կարգավորումը՝ ետք մեծացնելով հանրային միջոցներով կուսակցությունների ֆինանսավորման համամասնությունը՝ ընդ որում խրախուսելով հատկապես դաշնամետական ներկայություն կամ առնվազն մասն հնարավորություն ունեցող կուսակցություններին:

Երկրորդը՝ քարոզարշավի ֆինանսավորման եղանակով կարգավորումների ուժեղացումն է և հատկապես դրանց դատաժ իրականացումը: Օրինակ՝ ամենավերջին 2017 թ. խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում հրադարարկված, բայց այդպես էլ իրավասու մարմինների կողմից դատաժ չքննված և ընթացք չստացած փաստերը բավարար կարող են լինել ընդհուպ մինչև ամենամեծ արդյունք գրանցած երկու կուսակցությունների՝ քվեարկությունից առաջ որդես թեկնածու գրանցումից զրկելու համար:

Որդես ամփոփում նշեն, որ ԸՕ գոյություն ունեցող կարգավորումների մի մասը (կայուն մեծամասնություն օրենսդիր մարմնում, այսպես կոչված բոնուսային տեղերի հատկացում, կալիցիա կազմելու հնարավորություն ունեցող կուսակցությունների թվի սահմանափակում) հատուկ ստեղծվել էին հենց մեկ կուսակցության գերիշխանությունը ադապտելու համար: Այս՝ բացառապես Հայաստանում հանդիմող կարգավորումների համադրությունը որոշ առումով ծառայեցվեց նեղ քաղաքական-կուսակցական մոտակների՝ ադապտելով գերիշխող կուսակցության բավարար ներկայություն խորհրդարանում: Սակայն դա տեղի ունեցավ ներկայացուցչական ժողովրդավարության հիմնարար կանոնների հաշվին, և այդ արհեստական կարգավորումները հնարավորություն չստեղծեցին հասարակական տրամադրությունները դատաժ կերպով ներկայացնելու օրենսդիր մարմնում, ինչն իր հերթին մոտատեց քաղաքական ձգնաժամի առաջացմանը, եթե չասենք, որ դրա հիմնադատաձառը հանդիսացավ: Այսպես կոչված «թավշյա հեղափոխությունը» եկավ ադապտելու առկա խզումը: Այդ նույն հեղափոխությունը, կարծում են, բացառիկ հնարավորություն է ստեղծել գոյություն ունեցող ֆորմալ խաղի կանոնները այնպես փոխել, որ իրական դառնա մրցակցային բազմակուսակցական համակարգի ստեղծումը՝ ներառյալ հավասար, իսկ առանձին դեղ-

քերում նաև միջին և փոքր կուսակցություններին խրախուսող ղայմանների առաջնություն, իրադեպ համամասնական ընտրակարգի և օրենսդիրում կուսակցությունների միջև համագործակցություն խրախուսող խաղի կանոնների միջոցով:



ՀԱՅԱՍՏԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES



Կրթություն և
գիտություն



ՍԵՐՈՔ
ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



երջին տասնամյակներին աշխարհում եաղես բարելավվել է կրթության հասանելիությունը: Տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ գիտելիքն ավելի մատչելի է դարձել: Մեծացել են նաև կրթությունից մարդկանց ակնկալիքները: Բայց Հայաստանում հանրակրթության վիճակը գոհացուցիչ չէ, թեև ավելի քան 20 տարի է հանրակրթության ոլորտում իրականացվում են բարեփոխումներ:

Այսօր Հայաստանում կրթության երգիստենցիալ ճգնաժամ է: Կրթությունը արժեզրկվել է: Հասկանալի չէ կրթության դերն ու իմաստը նոր իրողությունների ղայմաններում: Իմաստի կորուստը բերում է սովորելու ձգտման նվազման: Իսկ եթե նվազում է սովորելու ձգտումը, աղա կրթությունը կարող է փոխվել միայն վերահմաստավորման ճանաղարհով:

Ստեղծված իրավիճակում կարևոր է հասկանալ, թե ի՞նչ է կրթությունը, ինչո՞ւ սի՞ խնդիրների է բախվում այն: Ժամանակին Կարլ Մարքսն ասում էր. «Մինչև այժմ փիլիսոփաները փորձել են բացատրել աշխարհը, բայց խնդիրը՝ այն փոխելն է»: Մեր օրերի սլովենացի փիլիսոփա Սլավոյ Ժիժեկը վերաձևակերտում է Մարքսի խոսքերը. «Բոլորը խոսում են աշխարհը փոխելու մասին, բայց խնդիրը՝ այն հասկանալն է»: Իսկաղես շատ է խոսվում կրթությունը փոխելու մասին, բայց շատ ավելի քիչ ուշադրությունն է դարձվում խնդիրները հասկանալուն:

Կրթության ոլորտի փոփոխություններն այնքան շատ են, որ մարդիկ ղարզաղես չեն հասցնում հասկանալ դրանց անհրաժեշտությունը: Դրա փոխարեն ուշադրությունից դուրս են մնում այնոիսի կարևոր հարցեր, ինչո՞ւ սի են՝ փոփոխություններին ղատրաստվելը, փոփոխությունների մասին խորքային գիտելիքներ ունենալը:

Անդրաղանանք Հայաստանի հանրակրթության ոլորտում իրականացված մի շարք փոփոխությունների:

ԱՆՑՈՒՄ ՆՈՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Անկախության առաջին տարիներին հստակ էր, որ Հայաստանը անցում է կատարում կաղիտալիստական համակարգի: Այդ տարիներին կաղիտալիստական աշխարհում տարածված էր կառավարման մի մողել, որը հայտնի է Նոր հանրային կառավարում (New Public Management) անունով: Այս մոտեցումը մեծ տարածում ստացավ արևմտյան մի շարք երկրների կրթական համակարգերում: «Նոր հանրային կառավարման գաղափարախոսությունը ի հայտ եկավ Անգլիայում 1980-ականներին՝ Մարգարեթ Թետչերի իշխանության տարիներին: ԽՍՀՄ փլուզումից և Սաղղղատերազմի ավարտից հետո գերիշխող դարձավ այն տեսակետը, որ սոցիալական խնդիրների կոլեկտիվիստական լուծումներն անարղյունավետ են»:¹ Մի շարք գիտնականների, մասնավորաղես՝ Ջոն Չաբի և Թերի Սոի ջանքերով Նոր հանրային կառավարման մողելը ներդրվեց նաև կրթության ոլորտում: Այդ մողելը ենթաղորում

եր մասնավոր կառավարման մոտեցումների ներդրումն ունենալու համակարգում, կրթության համակարգի կառավարման առաջնությունացում, ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի կիրառում: Չիլիի, Շվեդիայի, Անգլիայի փորձը ցույց տվեց, որ կառավարման այս մոդելը որդեգրած կրթական համակարգերը հաջողության չհասան:

ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄ

Մյուս խնդիրն այն է, որ անկախության տարիներին կրթության ոլորտում մենք գերազանցապես «ներկրել ենք» բարեփոխումներ՝ ոչինչ չանելով մեր կրթական մոդելը ստեղծելու ուղղությամբ: Երբ տարիներ առաջ սկսեցին խոսել ֆինանսական կրթական համակարգի առաջընթացի մասին, կրթության ֆինլանդացի մասնագետները խորհուրդ էին տալիս չկրկնել իրենց փորձը: Բարեփոխումներ «ներկրելու» դատարանով Հայաստանի կրթական համակարգում ձևավորվել է երկակի օտերացիոն համակարգ: Համակարգերից մեկը կրթության բացորոշ ծրագրի վրա է հիմնվում, որի համաձայն Հայաստանի կրթության համակարգը կառավարվում է ժողովրդավարական մոտեցումներով, խրախուսվում է ինքնուրույն, քննադատական մտածողության զարգացումը: Կա նաև քողարկված օտերացիոն համակարգ, որի գործառնության սկզբունքները որևէ փաստաթղթում նշված չեն, բայց այդ համակարգը շատ ավելի ազդեցիկ է, քան բացորոշ համակարգը: Օրինակ՝ բացորոշ օտերացիոն համակարգով ենթադրվում էր, որ դպրոցների, բուհերի և այլ ուսումնական հաստատությունների ղեկավարները լիարժեք է ընտրվեն հոգաբարձուների խորհուրդների կողմից: Բայց քողարկված օտերացիոն համակարգով նախօրոք որոշվում էր, թե ով լիարժեք է «ընտրվի» ղեկավար լիարժեքում: Կամ՝ բացորոշ ասում ենք, որ լիարժեք է զարգացնել քննադատական մտածողությունը, բայց քողարկված ձևով դասավանդում ենք միակողմանի մտածողություն:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտում գերիշխող է եղել իրավիճակային մտածողությունը: Մինչդեռ անցումային փուլում գտնվող երկրի համար կարևոր են առաջադասետ, ռազմավարական մտածելակերպն ու գործելակերպը: Մեր կրթական համակարգի մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ վերջին տարիներին կրթության ոլորտում չի ընդունվել ռազմավարական որևէ փաստաթուղթ: Ընդունվել են կառավարության ընթացիկ ծրագրեր, առանձին փոքր նշանակության փաստաթղթեր: Բայց համակարգային նշանակություն ունեցող որևէ փաստաթուղթ չի ընդունվել: 19 տարի առաջ Հայաստանի ԿԳ նախարարությունը որոշեց ունենալ Կրթության զարգացման լիարժեք ծրագիր: 19 տարիներից 9-ի ընթացքում Հայաստանը չի ունեցել այդ ծրագիրը, ինչը օրենքի խախտում է: Առաջին ծրագիրը գործել է 2001-2005 թվականներին: Այնուհետև 6 տարի նախարար-

րությունը չէր կարողանում ծրագիրը հասցնել հաստատման փուլ: 2011-2015 թվականներին գործեց 2-րդ ծրագիրը: 2015 թվականից առ այսօր ընդունված չէ 3-րդ ծրագիրը: Հայաստանի նման երկրին օդի նման անհրաժեշտ են ուսումնական փաստաթղթերը, որոնք մշակված են բարձր մասնակցայնության և մերառականության սկզբունքների հիման վրա: Ի տարբերություն զարգացած երկրների, որոնք հիմնականում կողմնորոշվել են իրենց կրթական տեսլականի հարցում, Հայաստանում անորոշություն է տիրում: Տարիներ շարունակ իրականացվել են բարեփոխումներ, որոնք կրել են հատվածական բնույթ, որոնք եղել են ոչ թե խորքային քննարկումների, լուրջ նախադասարարական աշխատանքների, այլ նախարարների ցանկությունների կամ որևէ երկրի փորձը կրկնօրինակելու արդյունք:

ԿԱՐՃԱԺԱՄԱԿԵՏ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտում գերիշխել են կարճաժամկետ մտածողության վրա հիմնված մոտեցումները: Օրինակ՝ դոկորցների համատարած «հանրադատականացումը» և մերգրավումը բաղաբական ընտրությունների գործընթացին: Վերջինս բացասաբար է ազդել մանկավարժների և տնօրենների հանրային ընկալումների վրա: Հայաստանի նախորդ իշխանությունը բազմադեմ էր: Թիմում կային ինչդեպես ինտելեկտուալներ, այնդեպ էլ կրթական ցածր ցենզ ունեցող մարդիկ, «տեղական հեղինակություններ»: Իշխանությունը գործադրում էր կեղծման ինչդեպես կոշտ, այնդեպ էլ փափուկ մեխանիզմներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծնողները որոշակի կախվածություն ունեն մանկավարժներից և տնօրեններից՝ կրթական համակարգը մերքաշվեց կուսակցականացման և ընտրությունների գործընթացում: Կարճաժամկետ մտածողության վրա հիմնված մյուս խնդիրն այն էր, որ կրթության համակարգը ծառայեցվեց սոցիալական խնդիրները մեղմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում կար գործազրկության խնդիր, կրթական համակարգը դարձավ մարդկանց աշխատանքի տեղավորման թույլ օղակ, ինչի արդյունքում եադեա տուժեց համակարգի յոդոֆեսիոնալիզմը:

ԿՐԹԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՊՐԻՆՏ

Բարեփոխումների գործընթացում կրթությունը դիտարկվել է որդեա սորինա: «Երեք ամսում գրել կրթության զարգացման ծրագիր», «Մեկ ամսում մշակել հայեցակարգ», «Հինգ տարվա ընթացքում ունենալ որակադեա այլ կրթական համակարգ»: Այսդիսի գործելակերդով ամհնար է կրթության ոլորտում հասնել հաջողության: Իրականում կրթությունը մարաթոն է: Սորինատային մոտեցման դարագայում ամեն ինչ մնում է մակերեսի վրա: Մարդիկ չեն հասցնում յուրացնել, հասկանալ և չեն դառնում այդ փոփոխությունների կրողն ու իրագործողը: Ակնհայտ է, որ Կրթության և գիտության նախարարությունը չի կա-

րող շուրջ 37 հազար ուսուցչի անճնօրյա ռեժիմով հսկել: Միակ լուծումն այն է, որ այս մարդիկ դառնան այդ փոփոխությունների կրողը: Բայց սորիճնայիճ մոտեցման դեղոթուն մարդիկ մույնիսկ չեն հասցմուն հասկանալ, թե իճչու է արվուն այս կամ այն բարեփոխունը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԽԱՆԻՍՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Կրթության կառավարման գործընթացուն համակարգը դիտվել է որոթես մեխանիկական համակարգ, որը գործուն է գծայիճ տրամաբանությանբ: Օրինակ՝ ենթադրվուն էր, որ առանճնացված ավագ դղորոցների համակարգի մերղրման արղյունթուն աշակերտներն այլևս չեն դիմի կրկնուսույցների: Մասնագետները մտածուն էին, որ եթե դղորոցուն շաբաթական 8 ժամ մաթեմատիկա առարկայի դաս լինի, աղա աշակերտը կբավարարվի դղորոցուն ստացած գիտելիթներով: Բայց խնղիրն այն է, որ կրկնուսույցի մոտ գնալու ողատճաղը միայն դասածամերի ողականը չէր: Կան բազմաթիվ այլ գործոճներ: Օրինակ՝ կրկնուսույցն ավելի ողահանչկոտ է և հետևողական, կրկնուսույցը հաշվի է առունուն սովորողի զարգացման անհատական տեմղը, կրկնուսույցը աշխատուն է արղյունթի վրա և այլն:

Մեխանիստական մտածելակերղի մյուս դրսևորունն էլ այն է, որ մենթ փորճել ենթ համակարգը զարգացնել հիճնականուն փաստաթղթեր մշակելու ճանաղարիով: Մշակվել են փաստաթղթերի նախագծեր, որոնթ քննարկվել են և հաստատվել: Աղա այդ փաստաթղթերն ուղարկվել են դղորոցներ գործածության համար: Եղել է ենթադրղյուն, որ մարդիկ կկարղան այդ փաստաթղթերը, նրանց մոտ կառաջանան դրական տնոցիաներ և մտթեր, որոնթ էլ մարղկանց կմղեն գործղղղյունների փոփոխղյան: Բայց կրթղյունն իր բնղյթով մեխանիստական չէ: Դետևաբար, գծայիճ տրամաբանղյունն այստեղ չի գործուն: Կրթղյան ողորտուն հաճախ չնախատեսված հետևանթները կարող են ավելի շատ լինել, քան ողլանավորված հետևանթները: Դայտմի մի ողատմղյուն կա: Երբ անգլիացիները նվաճել են Դնղկաստանը, տարածթներից մեկուն շատ օճեր են եղել: Օճերի թիվը ողկասացնելու համար անգլիացիները որոշել են յուրաբանչյուր սղանված օճի դիմաց տեղացիներին վճարել 5 ԱՄճ դղլար: 5 տարի անց ողարգվել է, որ օճերի թիվը տարածթուն ավելացել է, քանի որ հնղիկները որոշել են իրենց համար եկամուտներ աղահղվելու նողատակով օճեր բազմացնել:

ՈՒՂՈՒԿՑԻՈՆԻՉՍԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Կրթղյան մեջ ռեղուկցիոճիստական մոտեցունը տարածվեց այն բանից հետո, երբ որոշվեց դասավանղել այն բովանղակղյունը, որը հեշտ է ստուգել: Կրթղյան բովանղակղյունը հանգեցվեց (հենց այս իմաստն ուճի ռեղուկ-

ցիոնիզմը) միայն ստուգվող բովանդակությամբ: Արդյունքում կրթական ծրագրերից դուրս են մնում բազմաթիվ կարևոր բաներ, որոնք չափելի չեն: Իսկ քննությունների ժամանակ մենք գնահատում ենք ոչ թե կարևոր գիտելիքը, այլ այն, ինչը հեշտ է ստուգել:

Կրթական ռեդուկցիոնիզմը մաս հանգեցնում է դրոյոցական առարկաների աստիճանակարգման, ինչի արդյունքում որոշ առարկաներ դիտարկվում են որդես առաջնային, մյուսները որդես երկրորդական: Օրինակ՝ Հայոց լեզուն, Հայոց Պատմությունը, Սաթեմատիկան դիտարկվում են որդես առաջնային առարկաներ, իսկ Հասարակագիտությունը, Արվեստը, Գրականությունը՝ որդես երկրորդական:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Կրթության բարեփոխումներին մեծադես խանգարել են մակերեսային, երբեմն ոչ դրոֆեսիոնալ մոտեցումները: Ի տարբերություն բժշկության և իրավաբանության, որտեղ հիմնականում աշխատում են մասնագիտական կրթություն ունեցող մարդիկ, Հայաստանում կրթական հարցերով զբաղվում են շատերը: Օրինակ՝ կրթության ոլորտում աշխատում են մարդիկ, ովքեր երբևէ չեն դասավանդել կամ ունեն դասավանդման ձախողված փորձ: Եթե մարդն ավարտել է դրոյոց ու համալսարան, ունի դրոյոց հաճախող երեխաներ, նախադասության մեջ օգտագործում է այնդիսի մոդայիկ բառեր, ինչդիսին են՝ կրթության որակը, վերջնարդյունքը, հաշվետվողականությունը, ժողովրդավարությունը, ադա համարվում է, որ այդ մարդը կարող է զբաղվել կրթության հարցերով: Սա բերում է մրան, որ կրթական հարցերն ընկալվում ու քննարկվում են մակերեսային մակարդակում: Հաճախ սեփական երեխայի կամ հարևանի երեխայի կրթական կենսափորձն ընդհանրացվում է և դիտարկվում որդես համակարգային խնդիր: Միմզդե կրթության ոլորտը դասհանջում է մասնագիտական լուրջ դատարաստվածություն, միջառարկայական գիտելիքներ, քանի որ կրթության մեջ կան գաղափարական, մշակութային, տնտեսական, իրավական, հոգեբանական, սոցիալական մրբություններ: Առանց դրանք հասկանալու, անհնար է կրթական խնդիրները լուծել: Ավելին, աշխարհում կրթության ճգնաժամն այնքան է խորացել, որ մակերեսային դատկերացումներով լուծումներ առաջարկելը լուրջ չի ընդունվում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ, ԱՐՁԱԳԱՆՔՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ Է

Քաղաքականություն մշակելիս հաճախ կրթությունը դիտարկվում է որդես ստատիկ համակարգ: Միմզդե կրթությունը մի համակարգ է, որը կոչված է լինելու բարդ արձագանքող համակարգ: Սա մի համակարգ է, որտեղ առկա է հարաբերությունների բարդ կծիկ: Երկրորդ, կրթության ոլորտում մենք գործ ունենք ոչ թե անշունչ առարկաների, այլ մարդկանց հետ, ովքեր ունեն արձա-

զանքելու կարողություն: Երբ դու ուզում ես մի բան փոխել հասարակական կյանքում, մարդկանց մոտ առաջանում է համաձայնության կամ անհամաձայնության արձագանք: Դա կարող է արտահայտվել ինչդեպ բացահայտ, այնդեպ էլ քողարկված: Հայաստանում, ցավոք, այդ արձագանքը հազվադեպ է լինում բացահայտ ու հրատարակային: Հայաստանում մարդկանց մեծ մասի արձագանքը սովորաբար քողարկված է: Դա թյուր տղավորություն է ստեղծում կառավարիչների մոտ, ովքեր մտածում են, որ ամեն ինչ լավ է և մարդիկ ընդունում են փոփոխությունները: Այս առումով, քողարկված դիմադրությունը կրթական բարեփոխումների լուրջ խոչընդոտ է: Մեզ հաճախ թվում է, թե կրթական բարեփոխումը մի բան է, որը դեպք է «ցանել ու աղոթել» (անգլերեն՝ spray and pray), որդեսզի արդյունք լինի: Մինչդեռ անհրաժեշտ է ամենօրյա աշխատանք՝ բարեփոխումների հաջողությունն ապահովելու համար:

Այսօր, կրթական բարեփոխումներ իրականացնելիս, մենք դեպք է շատ ավելի երկար ու խորը մտածենք: Պատրաստի դատասխանները կամ այլ երկրների փորձը ներկրելը բավարար չէ: Ինչդեպ ասում էր 20-րդ դարի փիլիսոփա Հաննա Արենդտը. «Ճգնաժամը աղետ է դառնում այն դեպքում, երբ մենք դատրաստի դատասխաններով, այսինքն՝ նախադաշարմունքներով ենք արձագանքում: Այդպիսի մոտեցումը ոչ միայն սրում է ճգնաժամը, այլև մեզ զրկում է ճգնաժամի ընձեռած իրականի փորձից և մտածելու հնարավորությունից»:²

¹ Dennis Shirley, *The New Imperatives of Educational Change: Achievement with Integrity* (New York: Routledge, 2016), էջ 32:

² Ханна Арендт, *Между прошлым и будущим. Восемь упражнений в политической мысли* (Москва: Института Гайдара, 2014), էջ 261:



ԱՏՈՄ
ՄԽԻԹԱՐՅԱՆ


ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ
ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ
ԱՊԱՅՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ



արձրագույն մասնագիտական կրթության երրորդ աստիճանում որակի և մրցունակության հիմնախնդիրները ղեկավարելու և դիտարկելու այն շահառուների տեսանկյունից, որոնք ղեկավարվում են ցուցաբերում դոկտորանտուրայի (ՀՀ-ում առայժմ դեռ «աստիճանտուրա») վերջնարդյունքների նկատմամբ: Որակի ապահովումը դոկտորանտուրայում նմանակահարմար է քննարկել գիտահետազոտական գործունեության վերջնարդյունքները սոցիալոգների տեսանկյունից, որոնք ուղղակի և անզան անուղղակի շահառուներ են: Դոկտորանտուրայի ավարտին նշանակալից վերջնարդյունք է մտավոր (ինտելեկտուալ) կադրերի ձևավորումը: Կրթության այս փուլի շրջանավարտը հստակ առանձնանում է նորարարական առաջարկներ ներկայացնելու կարողություններով, գիտական առաջընթաց ապահովող նորությունների առաջադրման հմտություններով, մոր գաղափարների գիտագործնական ներդրումների ունակություններով:

Բնականաբար, դոկտորանտուրայի շրջանավարտն ունենալով մասն կարողություններ՝ բարձր վարձատրության է հավակնում աշխատաշուկայում: Սակայն, եթե շրջանավարտ դոկտորանտը նմանատիպ է գիտական նորությունների ձևավորմանը, ապա դրանով ընդարձակվում է դոկտորանտուրայի շահառուների շրջանակը՝ ընդգրկելով ոչ միայն անհատ հետազոտողներին, այլև համալսարաններին, տնտեսության ոլորտի գործատուներին, ղեկավարներին, որոնք դոկտորանտուրայից բխող վերջնարդյունքները ի վերջո ուղղորդում են դեպի երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացը:

Սեր իրականությունում աստիճանտուրայի վերջնարդյունքները հիմնականում նմանատիպ են մտավոր կադրերի ձևավորմանը, որը արձանագրվում է ատենախոսությունների ղեկավարություններով և աստիճանտներին գիտական աստիճաններ շնորհելով: Փաստորեն երկրում գործող գիտության շուկայի ղեկավարվելու այնքան էլ նմանատիպ ղեկավարներ չի ստեղծում գիտական նորությունների ներդրման համար, ինչի հետևանքով հաճախ խզվում է «նորություն – գիտագործնական ներդրում – սոցիալ-տնտեսական առաջընթաց» կադր (Գծադրակեր 1):



Չալցբուրգյան 10 սկզբունքներ

Գծադրակեր 1. Մրցունակ դոկտորանտուրայի առանցքային բաղադրիչները¹

Եվ քանի որ հանրադատությունում ներկայումս աստիճանատուրան հիմնականում թիրախավորում է մտավոր կառուցվածքի ձևավորումը, ուստի շարժառիթային լծակները հիմնականում մասնավոր բնույթ են կրում, և հետագոտությունը կազմակերպվում է դիմորդի/աստիճանտի կրթավճարով: Իսկ ղեկավարությունը այս դեպքում, որդես շահառու հանդես գալով, փորձում է ինչ-որ կերպ երկրորդ աստիճանտի մտավոր կառուցվածքի վերարտադրությունը՝ աստիճանտուրային հասկացմելով ղեկավարների չափաբաժիններ:

Փաստորեն, աստիճանտուրան մեր երկրում ավելի շատ հասցեագրվում է անհատի աշխատանքային առաջխաղացման աճին, ուստի մենք դեռևս առավել կիրառելի ենք դարձնում գալցբուրգյան² առաջին սկզբունքը, համաձայն որի՝ «Գիտահետազոտական ուսուցման հիմնական բաղադրիչը գիտելիքների կատարելագործումն է, որն ավելի ու ավելի է բավարարելու աշխատանքային շուկայի ղահանջները»: Լման ղարագայում դոկտորանտուրայի մուտքի և ելքի որակի աղահովման չափանիշները փոքր-ինչ այլ են, քանի որ «ընդունելություն – հետազոտություն – վերջնարդյունք» շղթան առավելադես միտված է գիտական աստիճանաշնորհմանը:

Այնինչ, դոկտորանտուրան առավելադես երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացին հասցեագրելու դեպքում է գիտության շուկայի ակտիվացմանը զուգընթաց գալցբուրգյան մյուս սկզբունքների կիրառումը դառնում հրատաղ, քանի որ «ընդունելություն – հետազոտություն – վերջնարդյունք» շղթան այլ որակներ է ղահանջում: Մասնավորադես, դոկտորանտուրա դիմորդների ընտրության առաջնահերթություններից է դառնում վերջինիս կարողությունները ոչ միայն նորանուծություններ անելու, այլև դրանց գիտագործմական ներդրումների գծով: Այս դեպքում ընդունելության շարժառիթային շրջանակն ընդլայնվում է՝ ընդգրկելով ոչ միայն դիմորդի, այլև գիտական ծրագրերի ղեկավարի և գիտական ծրագրի ղատվիրատուի շահերը:


Բնականաբար, գիտության ակտիվ շուկայի ղարագայում փոխվում է նաև դոկտորանտուրայի ֆինանսավորման կառուցվածքը, որտեղ իրենց ուրույն տեղն են գրավում տարբեր գիտական հիմնադրամներից տրվող դրամաշնորհները, գործարար շրջանակների հետ կնքվող ղայմանագրերը և այլն (Գծաղատկեր 1): Բնականաբար, այդ ղարագայում, փոխվում են նաև դոկտորանտուրայի վերջնարդյունքներին ներկայացվող որակական ղահանջները, երբ հետազոտության նորույթներն իրենց գիտագործմական ներդրումներն են ստանում, իսկ ձևավորվող մտավոր կառուցվածքն օգտագործվում է առավել արդյունավետ որակի մշակույթի ձևավորման համար՝ շահառուների լայն ընդգրկմամբ:

Բարձրագույն կրթության ոլորտում որակի աղահովման գործընթացի միջագային և հայրենական փորձը վկայում է, որ արդեն առաջնահերթ է համարվում ոչ թե վերահսկողության և նույնիսկ որակի կառավարման հիմնախնդիրը, այլ գիտակրթական ծառայությունների մատուցման շուրջ որակի մշակույթի ձևավորումը: Գիտահետազոտական ուսուցման որակի աղահովումը չի կարող արդյունավետ իրականացվել փակ համակարգի ղայմաններում՝ ներգրավելով միայն բուհական անձնակազմի ներուժը:

Դոկտորանտուրայում գիտակրթական որակի աղահովմամբ շահագրգիռ են ոչ միայն կրթական ծառայություններ մատուցողները (համալսարանները),

այլև այդ ծառայություններից օգտվողները՝ գիտահետազոտական կառույցները, գործատուները, ինչդեռ նաև ղեկավարները: Հետևաբար, որակի առաժնային վերահսկողական, կառավարման գործառնություններից աստիճանաբար վերադասվում և մտնում է գիտահետազոտական ուսուցման ծառայությունների որակի մշակույթի հարթություն: Գիտակրթական ծառայությունների որակի առաժնային մշակույթը ձևավորվում է հետևյալ ազդակներով և ուղղություններով. -> որակի առաժնային «վերևից» ներազդեցություն, երբ կրթական ծառայությունների որակը վերահսկվում և գնահատվում է ղեկավարների լիազորված մարմինների կողմից -> որակի առաժնային «ներքևից» ներազդեցություն, երբ կրթական ծառայությունների որակը կառավարվում է ներքուհական ուժերով՝ ներգրավելով դոկտորանտներին, դոկտորներին, վարչակազմին -> որակի առաժնային «հարակից» ներազդեցություն, երբ գիտակրթական ծառայությունների որակով շահագրգռված՝ մատուցվող կրթական ծառայությունների արդյունքները վերլուծում են գործատուները, հասարակական կազմակերպությունները և նույնիսկ գործընկեր բուհերը:

Գծադասվեր 2-ում ներկայացված է կրթության որակի մշակույթի ձևավորման միջավայրը (շրջանագծի մակերեսը), որին մոտաստում են տարբեր ուղղություններից եկող ազդակներ: Որակի առաժնային «վերևից» ներազդեցությունը իրականացնում են ղեկավարների կողմից լիազորված գործակալությունները, որոնք սահմանված գործառնություններով գնահատում են համալսարանական գործունեության ներքին անհրաժեշտ որակի առաժնային գործուն (չենթային դասընթացներ, գրադարաններ, լաբորատորիաներ, կրթական չափորոշիչների, ուսումնական ղյուղանների, դոկտորանտաստիստական անձնակազմի առկայություն և այլն): Պետությունը շահագրգիռ է գիտակրթական ծառայությունների մատուցման դաստիարակության որակի առաժնային մասը, քանի որ այն մոտաստում է մտավոր կադրերի ձևավորմանը, հասարակության սոցիալ-տնտեսական մակարդակի աճին: Ուստի ղեկավարների կողմից իրականացվում է անգամ բուհերում ձևավորվող ատենախոսությունների որակի մոնիտորինգ:



